



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՎԱ ՄԻՋՎԱԿԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Implemented by  
**giz**  
Deutsche Gesellschaft  
für Internationale  
Cooperation (GIZ) GmbH



# «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ԱՆՀՐԱԺԵԾՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

## «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 2024-2029 թթ.

### ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Rev.01



## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ **ռազմավարական էկոլոգիական գնահատումը** (այսուհետ՝ ՌԷԳ) հիմնադրությամբ փաստաթղթի նախագծի դրույթների գործողության հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցությունների որոշման և գնահատման գործընթացն է, որը ներառում է ՌԷԳ հաշվետվության շրջանակի որոշակիացումը և դրույթները, ՌԷԳ հաշվետվության նախապատրաստումը, շահագրգիռ հանրության մասնակցության և մասնագիտական խորհրդակցությունների անցկացման ապահովումը, հիմնադրությամբ փաստաթղթում ՌԷԳ հաշվետվության դրույթների, հանրության մասնակցության և խորհրդակցությունների արդյունքների հաշվի առնելը: Վերոնշյալի համատեքստում, **հիմնադրությամբ փաստաթուղթը**՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթուղթն է (ռազմավարություն, հայեցակարգ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, պլան, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) կամ փաստաթղթի փոփոխությունն է, հաստատված Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների այլ իրավական ակտերով:

Սույն ՌԷԳ առարկան է հանդիսանում «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի 2024 թվականի տարբերակը, որի մշակման իրավական պահանջը ամրագրված է Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքով, համաձայն որի կառավարման պլանը նկարագրվում է որպես տվյալ տարածքի զարգացման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործունեությունը կարգավորող պաշտոնական փաստաթուղթ: «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի նախորդ տարբերակը մշակվել է 2004-2006 թվականների ընթացքում և հաստատվել է 2007 թվականի հունվարի 18-ի ՀՀ Կառավարության «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» №205-Ն որոշմամբ:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման ընթացքում հանրային մասնակցությունը գործընթացին ապահովելու նպատակով իրականացվել են՝

- 9 հանդիպումներ առկա խնդիրների և լուծումների, ինչպես նաև ակնկալիքների վերաբերյալ կարծիքների փոխանակման, առաջարկությունների հավաքագրման, ինչպես նաև արդյունքների քննարկման նպատակով,
- 10 աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ «Սևան» ԱԳ և Գեղարքունիքի մարզի Սևանա լճին հարևանող Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ համայնքերի միջև սահմանային խնդիրների վերաբերյալ:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանի ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին հարցը քննարկվել է 2023 թվականի նոյեմբերի 23-ին տեղի ունեցած «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի անհրաժեշտ վերլուծության և մշակման իրականացում» ծրագրի երկրորդ խորհրդակցական ընդլայնված աշխատաժողով՝ քննարկման ժամանակ (տես **Հավելված 4-ը**): Միջոցառմանը ներկա են եղել 42 մասնակիցներ, այդ թվում Շրջակա միջավայրի նախարարությունից, Ջրային կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ համայնքերի ներկայացուցիչներ, ոլորտի մասնագիտացված կազմակերպություններ և փարձագետներ:

Կառավարման պլանով «Սևան» ազգային պարկի համար սահմանված են տեսական և ութ երկարաժամկետ ռազմավարական նպատակներ, որոնց իրագործման համար մշակված են յոթ ծրագրեր: Դրանք են՝

- 1) Վարչական ծրագիրը,
- 2) Պահպանության ծրագիրը,

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- 3) Ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման ծրագիրը,
- 4) Հետազոտությունների և կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագիրը,
- 5) Այցելությունների կազմակերպման ծրագիրը,
- 6) Էկոլոգիական կրթության, հանրային մասնակցության և հաղորդակցության ծրագիրը,
- 7) Ֆինանսական և մարքեթինգային ծրագիրը:

Նշված բոլոր 7 ծրագրերը մանրամասն վերլուծվել են ռազմավարական էկոլոգիական գնահատման ընթացքում, արդյունքները ներկայացված են սույն ՌԷԳ հաշվետվության մեջ, իսկ ազդեցությունները շրջակա ու սոցիալ-տնտեսական միջավայրերի և հանրության առողջության վրա ամփոփվել **Աղյուսակ 14**-ում: Ընդհանուր առմամբ, նշված ծրագրերը ունեն բնապահպանական (ֆիզիկական և կենսաբանական բաղադրիչներ) և սոցիալական դրական ուղղվածություն, ինչը իր հերթին հանգեցնում են նաև հանրային առողջության վրա դրական ազդեցությունների:

ՌԷԳ ընթացքում գնահատվել են նաև ազգային պարկի կառավարման պլանով նախատեսված ծրագրերին զուգընթաց Սևանա լճի տարածաշրջանային ազդեցության գոտում՝ Գեղարքունիքի մարզում հանքաարդյունաբերության, հանրության սպասարկման և գյուղատնտեսության ոլորտների ձեռնարկությունների գումարային ազդեցությունները: Մշակված է նաև «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի իրականացման և «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի կառավարման արդյունավետության մշտադիտարկման ծրագիրը:

ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի №2294-Ն որաշման Հավելված 1-ի Գլուխ 5-ի համաձայն, «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի կառավարման արդյունավետության մշտադիտարկման ծրագրով նախատեսված մշտադիտարկման արդյունքները և հիմնադրությային փաստաթղթի/ ՌԷԳ հաշվետվության տվյալները ենթարկվում են համեմատական վերլուծության, որի արդյունքում կազմվում է հետնախագծային վերլուծության ծրագիր: Այդ վերլուծությունը պետք է կատարվի տարեկան կտրվածքով, իսկ յուրաքանչյուր տարվա մինչև մարտի առաջին տասնօրյակը մշտադիտարկման (մոնիթորինգի) և հետնախագծային վերլուծության արդյունքները հրապարակվում են նախաձեռնողի՝ շրջակա միջավայրի նախարարության կայքում:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	7
1.1	Տեղեկություններ նախաձեռնողի մասին .....	7
1.2	«Սևան» ազգային պարկի կառավարման պլանի նախապատմությունը .....	8
1.3	ՌԷԳ նպատակը և խնդիրները .....	9
1.4	ՌԷԳ մեթոդաբանությունը, շրջանակի որոշման և հիմնական գնահատման փուլերը .....	9
2.	ԿԻՐԱՌԵԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ .....	10
2.1	Կիրառելի միջազգային համաձայնագրերը և կոնվենցիաները.....	10
2.2	Ազգային օրենսդրական շրջանակը.....	12
3.	«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ .....	17
3.1	«Սևան» ազգային պարկի կառավարման պլանի իրավական հենքը .....	17
3.2	Ազգային պարկի կառավարման պլանի կառուցվածքը.....	17
3.3	Ազգային պարկի տեսլականը, ռազմավարական նպատակները և կառավարման խնդիրները .....	18
3.3.1	Սևանա լճի առաջարկվող ազգային տեսլականը .....	18
3.3.2	Ազգային պարկի տեսլականը .....	18
3.3.3	Ազգային պարկի ռազմավարական նպատակները և կառավարման խնդիրները .....	18
3.4	Շահագրգիռ կողմերը .....	19
4.	«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ .....	26
4.1	Աշխարհագրական դիրքը և սահմանները .....	26
4.2	«Սևան» ազգային պարկի արտաքին սահմանների նկարագրությունը.....	27
4.3	«Սևան» ազգային պարկի առկա և առաջարկվող տարածքագործառնական գոտիները և գոտիավորման հիմքերը .....	28
4.4	Ֆիզիկական միջավայրը.....	29
4.4.1	Կլիմայական պայմանները.....	29
4.4.2	Ջրագրությունը .....	33
4.4.3	Հողային տիպերը և լանդշաֆտները.....	34
4.5	Մթնոլորտային օդը.....	35
4.6	Կենսաբանական միջավայրը.....	35
4.6.1	Էկոհամակարգերը, բնակմիջավայրերը և կենսաբազմազանությունը .....	35
4.6.2	Ֆլորա .....	38
4.6.3	Ֆաունա.....	41
4.7	Պատմամշակութային ժառանգությունը.....	45
5.	ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ .....	47
5.1	Մարզի ընդհանուր նկարագրությունը .....	47
5.2	Մարզի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակը .....	48
5.3	Մարզի համայնքներն ու բնակավայրերը .....	49
5.4	Ազգաբնակչությունը և ժողովրդագրական նկարագիրը .....	50
5.5	Գյուղատնտեսությունն և ձկնաբուծությունը.....	50
5.6	Արդյունաբերությունը .....	51
5.7	Զբոսաշրջությունը .....	51
5.8	Կենսառեսուրսների օգտագործումը.....	52
6.	ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ .....	52
6.1	Ընդհանուր դրույթներ.....	52

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

6.2	Ռազմավարական նպատակների իրագործման ծրագրերի ազդեցությունների գնահատումը	52
6.2.1	Վարչական ծրագիր.....	53
6.2.2	Պահպանության ծրագիր.....	55
6.2.3	Ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման ծրագիր .....	64
6.2.4	Հետազոտությունների և կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագիր.....	67
6.2.5	Այցելությունների կազմակերպման ծրագիր .....	69
6.2.6	Էկոլոգիական կրթության, հանրային մասնակցության և հաղորդակցության ծրագիր.....	72
6.2.7	Ֆինանսական և մարքեթինգային ծրագիր .....	73
7.	ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ.....	76
8.	ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	76
8.1	Կառավարման պլանի կապը այլ հիմնադրույթային և ռազմավարական փաստաթղթերի հետ	76
8.2	Ազդեցությունը հանրության առողջության վրա.....	78
8.3	Ազդեցությունը բնության և պատմամշակութային հուշարձանների վրա .....	78
8.4	Ազգային պարկի կառավարման պլանի իրագործման գումարային ազդեցությունը և ազդեցությունների անդրահամայնային բնույթը.....	79
8.5	Ազգային պարկի կառավարման պլանի իրագործման ազդեցությունների շրջանակները և ազդեցությունների ամփոփումը.....	80
9.	ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՊՈՒԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ .....	85
Հավելված 1.	Էկոլոգիական մշտադիտարկման ծրագիր.....	95
Հավելված 2.	Սևանի ավազանի էկոհամակարգերը և բնակմիջավայրերը .....	109
Հավելված 3.	«Սևան» ազգային պարկի հիմնական գոտիների ու դրանց կազմում գտնվող առանձին հատվածների նկարագիրը .....	118
Հավելված 4 .....		128
Հավելված 5 .....		140
Հավելված 6 .....		141
Հավելված 7 .....		146
Հավելված 8 .....		148

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՊ	- Ազգային Պարկ
ԱՊՀ	- Անկախ Պետությունների Համագործակցություն
ԲՀՊՏ	- Բնության Հատուկ Պահպանվող Տարածք
ԲՊՄՄ	- Բնության Պահպանության Միջազգային Միության
ԳԱԱ	- Գիտությունների Ազգային Ակադեմիա
ԷՀԾ	- Էկոհամակարգային Ծառայություն
ԾՄՆ	- Ծրջակա Միջավայրի Նախարարություն
ՀԷԿ	- Հիդրոէլեկտրակայան
ՀՀ	- Հայաստանի Հանրապետություն
ԿԳՄՄՆ	- Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի Նախարարություն
ՄԱԿ	- Միացյալ Ազգերի Կազմակերպություն
ՄԱԶԾ	- Միացյալ Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագիր
ՆԳՆ	- Ներքին Գործերի Նախարարություն
ՊՈԱԿ	- Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն
ՏԿԵՆ	- Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն
ՍԱՊ	- «Սևան» ազգային պարկ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### 1.1 Տեղեկություններ նախաձեռնողի մասին

1.1	Նախաձեռնող՝	Հայաստանի Հանրապետության (ՀՀ) շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ
	Հասցե	ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
	Հեռախոս	+374 11 818559
	Էլ. հասցե	minenv@env.am
	Կայք	www.env.am
1.2	Պատվիրատու՝	Միացյալ Ազգերի Կազմակերպության Չարգացման Ծրագիր (ՄԱԶԾ)
	Հասցե	ՀՀ, ք. Երևան, 0010, Պ. Ադամյան փող. 14
	Հեռախոս	+374 60 530000
	Էլ. հասցե	registry.am@undp.org
	Կայք	www.undp.org
1.3	Ռազմավարական Էկոլոգիական Գնահատման հաշվետվության մշակող՝	«Սևանա լճի շրջակա միջավայրի պաշտպանություն»՝ EU4Sevan ՄԱԶԾ ծրագիր
	Հասցե	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Սևան Ազգային Պարկ» ՊՈԱԿ
	Հեռախոս	ՀՀ, ք. Երևան, 0010, Պետրոս Ադամյան 14
	Կայք	060 530000
	Կոնտակտային տվյալներ	<a href="https://www.undp.org/armenia">https://www.undp.org/armenia</a>
		Աստղիկ Դանիելյան, EU4Sevan ՄԱԶԾ ծրագրի ղեկավար
		055 530019
		<a href="mailto:Astghik.danielyan@undp.org">Astghik.danielyan@undp.org</a>
		Արտակ Տեր-Թորոսյան, բնապահպանության հարցերով փորձագետ
		091 497128
		<a href="mailto:Artak.ter-torosyan@atms.am">Artak.ter-torosyan@atms.am</a>

**1.2 «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի նախապատմությունը**

«Սևան» ազգային պարկը (այսուհետ՝ Ազգային պարկ կամ ԱՊ) հիմնադրվել է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության (ՍՍՀ) Կոմունիստական Կուսակցության (Կոմկուս) Կենտրոնական Կոմիտեի (Կենտկոմ) և Մինիստրների խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի №125 որոշմամբ<sup>1</sup> «Բնական ռեսուրսների պահպանման, ռացիոնալ օգտագործման և վերարտադրման, օրինակելի հանգստի ու ճանաչողական տուրիզմի կազմակերպման պատմության և կուլտուրայի հուշարձանների ու ազգագրական և ճարտարապետական-պատմական արժեք ներկայացնող շինությունների պահպանման ու պրոպագանդման նպատակով Սևանի ափագանի տերիտորիայում ստեղծել «Սևան» ազգային զբոսայգի»:

Ազգային պարկը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան հատվածում՝ Գեղարքունիքի մարզում: Շրջապատված է Գեղամա, Վարդենիսի, Սևանի, Փամբակի և Արեգունու լեռնաշղթաներով ու ընդգրկում է լճի ջրային հայելին և ափամերձ տարածքի ջրից ազատված գրունտները, հիմնականում մինչև շուրջլճյա ավտոճանապարհը:

Մինչև 1997թ.-ը «Սևան» ազգային պարկի տարածքում գտնվող անտառային ֆոնդի հողերը տնօրինում էին Սևանի, Նորատուսի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի անտառտնտեսությունները: Վերջիններս ՀՀ բնապահպանության նախարարի 1997թ.-ի №114 հրամանով լուծարվել են (բացի Ճամբարակի անտառտնտեսությունից) և դրանց գույքը, ինչպես նաև համապատասխան տարածքները փոխանցվել են «Սևան» ազգային պարկի հաշվեկշռին: ՀՀ բնապահպանության նախարարի 1998թ.-ի №91 հրամանով Ազգային պարկին են հանձնվել նաև Սևանա լճի հանգստյան գոտու առափնյա տարածքները և գույքը:

ՀՀ կառավարության 2002թ.-ի մայիսի 30-ի №927-Ն որոշմամբ «Սևան» ազգային պարկ պետական հիմնարկը վերակազմակերպվել է «Սևան» ազգային պարկ» Պետական Ոչ Առևտրային Կազմակերպության (ՊՈԱԿ), որի գործունեության առարկան և նպատակը «Սևան» ԱՊ տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

Ազգային պարկի տարածքի նկարագիրը հետևյալն է՝

Տարածքը	Մակերեսը (հազ. հա)	Բաշխվածությունը՝ ըստ համայնքների
Ջրային մակերես	124.7	
Ցամաքային մակերես	22.6	Տարածքն ընդգրկում է Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ համայնքներից հատվածներ
<b>Ընդամենը</b>	<b>147.3</b>	

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանի նախորդ տարբերակը մշակվել է 2004-2006 թվականների ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության<sup>2</sup> Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում՝ Գորբալ էկոլոգիական հիմնադրամի տրամադրած դրամաշնորհային միջոցներով և հաստատվել է 2007 թվականի հունվարի 18-ի ՀՀ Կառավարության «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» №205-Ն որոշմամբ<sup>3</sup>: Քննվող կառավարման պլանը միտված է փոխարինել վերոնշյալ փաստաթուղթը:

<sup>1</sup> <https://www.irtek.am/views/act.aspx?aid=6530>

<sup>2</sup>Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենքում 08.05.19թ.-ին կատարված փոփոխության համաձայն վերանվանվել է որպես շրջակա միջավայրի նախարարություն

<sup>3</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=31830>



### 1.3 ՌԷԳ նպատակը և խնդիրները

Ռազմավարական Էկոլոգիական Գնահատման (ՌԷԳ) նպատակն է հիմնադրությային փաստաթղթեր մշակելիս ապահովել բնապահպանական և սոցիալական (ներառյալ առողջապահական) գործոնների համակողմանի գույքագրումը և ներառումը ռազմավարական որոշումների կայացման գործընթացում:

ՌԷԳ-ի խնդիրներն են հիմնադրությային փաստաթղթեր մշակելիս համալիր դիտարկել դրանց դրույթների գործողությունների հետևանքով հավանական էական ազդեցությունները և մշակման գործընթացում դիտարկվող ողջամիտ այլընտրանքները՝ առանցքային բնապահպանական խնդիրների տեսանկյունից և բացասական հետևանքներից խուսափելու կամ մեղմելու և դրական ազդեցությունները առավելագույնի հասցնելու նպատակով, հիմնված շահագրգիռ կողմերի կարծիքների վրա, ի պաշտպանություն Էկոլոգիապես հիմնավորված և կայուն զարգացմանը:

ՌԷԳ գործընթացը տեղեկացնում է ռազմավարական փաստաթղթի պլանավորողներին, որոշումներ ընդունողներին և ազդակիր հանրությանը ռազմավարական որոշումների կայունության վերաբերյալ և դյուրացնում է լավագույն այլընտրանքների որոնման և ժողովրդավարական որոշումների կայացման գործընթացները:

### 1.4 ՌԷԳ մեթոդաբանությունը, շրջանակի որոշման և հիմնական գնահատման փուլերը

Անդրսահմանային ենթատեսքտում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիայի ռազմավարական Էկոլոգիական գնահատման մասին արձանագրությունը (այսուհետ՝ ՌԷԳ արձանագրություն) ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 25.10.2010թ.-ին<sup>4</sup>:

ՌԷԳ արձանագրությունը պարտավորեցնում է կողմերին իրականացնել իրենց պլանների և ծրագրերի բնապահպանական գնահատումները դրանց կազմավորման ամենավաղ փուլերում: Այն սահմանում է շրջակա միջավայրի ռազմավարական գնահատումը որպես «շրջակա միջավայրի վրա հավանական ազդեցությունների գնահատում, ներառյալ հանրային առողջության հետ կապված ազդեցությունները, որը ներառում է ՌԷԳ հաշվետվության շրջանակի որոշումը և մշակումը, հանրային մասնակցության և խորհրդակցությունների ապահովումը և պլանում կամ ծրագրում<sup>5</sup> ՌԷԳ հաշվետվության և հանրային խորհրդակցությունների արդյունքների ներառումը» (Հոդված 2.6):

Ընդհանուր առմամբ, ՌԷԳ-ը մեխանիզմ է, որը թույլ է տալիս պետությանը ընտրել այնպիսի տարբերակներ երկրի տնտեսական զարգացման համար, որոնք բարենպաստ են հանրային առողջության և շրջակա միջավայրի տեսանկյունից:

ՌԷԳ իրականացման ընթացակարգը և ՌԷԳ հաշվետվության բավանդակությունը սահմանված են ՀՀ կառավարության 21.12.2023թ.-ի Ռազմավարական Էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական Էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին №2294-Ն որոշմամբ, համաձայն որի ՌԷԳ-ը իրականացվում է երեք փուլով՝

- ՌԷԳ շրջանակի որոշում,
- ՌԷԳ հաշվետվության կազմում,
- ՌԷԳ արդյունքների հաշվի առնելը հիմնադրությային փաստաթղթում:

ՌԷԳ հաշվետվության շրջանակի որոշման փուլում իրականացվում են հետևյալը՝

- 1) «Սևան» ԱԳ կառավարման պլանի համառոտ նկարագիրը,

<sup>4</sup><https://www.irtek.am/views/act.aspx?tid=56701&sc=p10#p10>

<sup>5</sup>Խոսքը գնում է ՌԷԳ առարկա հանդիսացող պլանի կամ ծրագրի մասին

- 2) Շրջակա միջավայրի և սոցիալ-տնտեսական ելակետային վիճակը՝ հաշվի առնելով փոփոխությունների առկա և հնարավոր ապագա միտումները, բացահայտելով այդ փոփոխություններին հանգեցրած հիմնական պատճառները (գործոնները),
- 3) «Սևան» ԱՊ կառավարման պլանի կապը գործող կառավարության ծրագրերի, ռազմավարությունների հետ և Պլանում որոշակի ռազմավարական նպատակներ հետագայում ներառելու կամ ՌԷԳ հաշվետվության մեջ դրանց հաշվի առնելու անհրաժեշտությունը,
- 4) Շրջանակի մատրիցան՝ թիրախների/խնդիրների ցանկով, որոնք պետք է վերլուծվեն/գնահատվեն ՌԷԳ ընթացքում,
- 5) Թիրախային վերլուծություն՝ կառավարման պլանի սահմանված նպատակների և թիրախների ազդեցության գնահատումը շրջակա միջավայրի և հանրային առողջության բաղադրիչների վրա՝ հաշվի առնելով առկա ռազմավարական փաստաթղթերի նպատակները,
- 6) Խորհրդակցությունների համար շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ցանկի սահմանումը:

ՌԷԳ հաշվետվության շրջանակի որոշումից ստացված և վերլուծված տվյալները օգտագործվել են գնահատման փուլում և ներկայացվել են ՌԷԳ հաշվետվության մեջ, որը ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվել է լիազոր մարմին՝ Շրջակա միջավայրի նախարարություն՝ պետական փորձաքննության:

## **2. ԿԻՐԱՌԵԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

«Սևան» ազգային պարկի, որպես բնության հատուկ պահպանվող տարածքի, գործունեությանն առնչվող ՀՀ կողմից վավերացված միջազգային համաձայնագրերը և կոնվենցիաները, ինչպես նաև ազգային օրենսդրական շրջանակը ներկայացված է ստորև: Նշված նորմատիվաիրավական կարգավորումները և պահանջները կիրառելի են նաև «Սևան» ԱՊ-ի կառավարման պլանի ՌԷԳ գործընթացում:

### **2.1 Կիրառելի միջազգային համաձայնագրերը և կոնվենցիաները**

**Աղյուսակ 1-**ում ներկայացված են «Սևան» ազգային պարկի գործունեությանը կիրառելի միջազգային համաձայնագրերը և կոնվենցիաները:

**Աղյուսակ 1. Կիրառելի միջազգային համաձայնագրերը և կոնվենցիաները**

<b>№</b>	<b>Անվանումը / նկարագիրը</b>	<b>Ուժի է մեջ է</b>	<b>Վավերացվել է ՀՀ կողմից</b>
1	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.) <sup>6</sup> <i>Կենսաբանական բազմազանության պահպանում, դրա բաղադրիչների կայուն շահագործում և զենետիկական պաշարների օգտագործման հետ կապված արդար և հավասար հիմունքներով օգուտների ստացում:</i>	1993թ.	1993թ.
2	«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն, 1979թ.) <sup>7</sup> <i>Նպատակն է ապահովել վայրի ֆյուրայի ու ֆաունայի և նրանց բնական միջավայրերի պահպանությունը՝ առանձնակիորեն կարևորելով այն տեսակները և բնական միջավայրերը, որոնց պահպանման համար</i>	1982թ.	2008թ.

<sup>6</sup><https://www.cbd.int/convention>

<sup>7</sup><https://www.coe.int/en/web/bern-convention>

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

№	Անվանումը / նկարագիրը	Ուժի է մեջ է	Վավերացվել է ՀՀ կողմից
	<i>անհրաժեշտ է համագործակցություն մի քանի պետությունների կողմից, ինչպես նաև՝ խթանել նման համագործակցությունը:</i>		
3	«Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն, 1979թ.) <sup>8</sup> <i>Նպատակն է հատուկ ուշադրություն դարձնել այն միգրացվող տեսակներին, որոնց պահպանման կարգավիճակը անբարենպաստ է, և ձեռնարկել անհատական կամ համաձայնեցված՝ համապատասխան և անհրաժեշտ քայլեր աղյուսի տեսակների և դրանց բնակավայրերի պահպանման համար:</i>	1983թ.	2010թ.
4	«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես՝ որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար, 1971թ.) <sup>9</sup> <i>Տեղական, տարածաշրջանային և ազգային գործողությունների և միջազգային համագործակցության միջոցով բոլոր գերնահանային տարածքների պահպանում և խելամիտ օգտագործում՝ որպես ներդրում ամբողջ աշխարհում կայուն զարգացման հասնելու գործում:</i>	1975թ.	1993թ.
5	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.) <sup>10</sup> <i>Մթնոլորտում ջերմոցային գազերի պարունակության այնպիսի մակարդակի ապահովումն է, որը կբացառի վտանգավոր մարդածին ներգործությունը կլիմայական համակարգի վրա:</i>	1994թ.	1993թ.
6	«Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (Վաշինգտոն, 1973, լրամշակվել է 1979թ. Բոնն) <sup>11</sup>	1975թ.	2009թ.
7	«Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիա» (Ֆլորենցիա, 2000թ.) <i>Նպատակներն են՝ խթանել լանդշաֆտի պահպանության, կառավարման և պրանսկոնսերվացիայի գործընթացը և կազմակերպել լանդշաֆտի հարցերով եվրոպական համագործակցությունը:</i>	2000թ.	2004թ.
8	«ՄԱԿ-ի անապատացման դեմ պայքարի կոնվենցիա» (Փարիզ, 1994) <i>Նպատակը անապատացման դեմ պայքարն է ու երաշտի հետևանքների նվազեցումն այն երկրներում, որոնք ենթարկվում են լուրջ երաշտի և/կամ անապատացման, կայուն զարգացման ապահովմանն ուղղված համալիր մոտեցման շրջանակներում ծավալվող միջազգային համագործակցության և ընկերակցության մասին համաձայնագրերի միջոցով:</i>	1994թ.	1997թ.
9	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս, 1998թ.) <sup>12</sup> <i>Կոնվենցիայի նպատակն է աջակցել մարդու առողջության իրավունքի պաշտպանությանը, նրա առողջության և բարեկեցության համար</i>	2001թ.	2001թ.

<sup>8</sup><https://www.waddensea-worldheritage.org/un-convention-conservation-migratory-species-wild-animals>

<sup>9</sup>[https://www.ramsar.org/sites/default/files/documents/library/scan\\_certified\\_e.pdf](https://www.ramsar.org/sites/default/files/documents/library/scan_certified_e.pdf)

<sup>10</sup>[https://treaties.un.org/doc/source/recenttexts/unfccc\\_eng.pdf](https://treaties.un.org/doc/source/recenttexts/unfccc_eng.pdf)

<sup>11</sup><https://cites.org/eng/disc/text.php>

<sup>12</sup><https://unece.org/environment-policy/public-participation/aarhus-convention/text>

№	Անվանումը / նկարագիրը	Ուժի է մեջ է	Վավերացվել է ՀՀ կողմից
	<i>բարենպաստ միջավայրի սպահովմանը, տեղեկատվության մատչելիությանը, որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցությանը և շրջակա միջավայրի հարցերում արդարադատության մատչելիությանը:</i>		
10	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև, 2003թ.) <sup>13</sup>	2010թ.	2010թ.
11	«Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիա» (Էսպո, 1991թ.)	1991թ.	1997թ.

**2.2 Ազգային օրենսդրական շրջանակը**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական կարգավորումները և պահանջները սահմանված են 21.06.2014թ.-ին ընդունված և 03.05.2023թ.-ին խմբագրված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ներառյալ ռազմավարական էկոլոգիական և անդրսահմանային ազդեցության գնահատման ընթացակարգերը:

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքը<sup>14</sup>**

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ԾՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- **Հիմնադրության փաստաթուղթը՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ,
- **Նախատեսվող գործունեությունը՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն **ռազմավարական էկոլոգիական գնահատումը՝** հիմնադրությամբ փաստաթղթի նախագծի դրույթների գործողության հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցությունների որոշման և գնահատման գործընթաց է, որը ներառում է ՌԷԳ հաշվետվության շրջանակի որոշակիացումը և դրույթները, ՌԷԳ հաշվետվության նախապատրաստումը, շահագրգիռ հանրության մասնակցության և մասնագիտական խորհրդակցությունների անցկացման ապահովումը, հիմնադրությամբ փաստաթղթում ՌԷԳ հաշվետվության դրույթների, հանրության մասնակցության և խորհրդակցությունների արդյունքների հաշվի առնելը:

ՌԷԳ-ի և փորձաքննության գործընթացները, դրանց ներկայացվող պահանջները, ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերի տեսակները ներկայացված են Օրենքի Գ-լուխ 5-ում: Մասնավորապես 21-րդ հոդվածի համաձայն, ՌԷԳ-ի ենթակա են սոցիալ-տնտեսական զարգացման, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի,

<sup>13</sup><https://unece.org/fileadmin/DAM/env/eia/documents/legaltexts/protocolenglish.pdf>

<sup>14</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=178468>

կապի, գյուղատնտեսության, զբոսաշրջության, տարածքային զարգացման, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, ռեկրեացիայի, անտառատնտեսության, ձկնաբուծության, թափոնների գործածության, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրությային փաստաթղթերի նախագծերը, որոնք Օրենքի 12-րդ հոդվածում թվարկված նախատեսվող գործունեությունների տեսակների կամ "Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին" կոնվենցիայի ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված նախագծերի իրականացման հիմքեր են պարունակում:

ՌԷԳ-ի ենթակա են բոլոր հիմնադրությային փաստաթղթերի նախագծերը և դրանց այն փոփոխությունները, որոնք հնարավոր ազդեցություն կունենան բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքների, պատմամշակութային հուշարձանների վրա: ՌԷԳ-ի և փորձաքննության ենթակա լինելը որոշում է լիազոր մարմինը՝ նախաձեռնողի հետ համատեղ խորհրդակցությունների արդյունքով:

Հիմնադրությային փաստաթղթի՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության չափանիշները սահմանվում են **«ՀՀ կառավարության 21.12.2023թ.-ի Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին №2294-Ն որոշմամբ»<sup>15</sup>:**

Ըստ Օրենքի 22-րդ հոդվածի, Հիմնադրությային փաստաթղթի նախագծի ՌԷԳ-ը և փորձաքննությունն իրականացվում են մինչև հիմնադրությային փաստաթղթի ընդունումը: ՌԷԳ-ի իրականացման փուլերն են՝ 1) ՌԷԳ շրջանակի որոշումը, 2) ՌԷԳ հաշվետվության կազմումը և 3) ՌԷԳ արդյունքների հաշվի առնելը հիմնադրությային փաստաթղթում: Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն, ՌԷԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվում է ՌԷԳ հաշվետվությունն ուղեկցող գրությամբ լիազոր մարմին ներկայացնելու օրվանից մինչև 80 աշխատանքային օրվա ընթացքում (բացառությամբ անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրությային փաստաթղթերի), որի արդյունքում լիազոր մարմինը նախաձեռնողին է տրամադրում պետական փորձաքննական եզրակացություն:

Հիմնադրությային փաստաթղթի նախագծի և ռազմավարական էկոլոգիական գնահատման կամ նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում հանրության իրազեկման և հանրային լուսմանի ծանուցման բովանդակության, հանրային լուսմանի ընթացակարգի, ՌԷԳ կամ ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգի և ժամկետների սահմանման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են **«ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի Հանրության իրազեկման և հանրային լուսմանի ծանուցման բովանդակությունը, հանրային լուսմանի ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին №1325-Ն որոշմամբ»<sup>16</sup>:**

**Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին «Օրենք»<sup>17</sup>** (2006թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին

<sup>15</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docID=187701>

<sup>16</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=188071>

<sup>17</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187301>

օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները՝ ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, միջազգային և հանրապետական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ըստ ՀՀ կառավարության հաստատած՝ բնության հատուկ պահպանվող տարածքների կանոնադրությունների և կառավարման պլանների, որտեղ **կառավարման պլանը**՝ տվյալ տարածքի զարգացման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործունեությունը կարգավորող պաշտոնական փաստաթուղթն է:

**Սևանա լճի մասին ՀՀ օրենքը**<sup>18</sup> (2001թ.) կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի հատուկ պահպանվող տարածքների ռեժիմները և գոտիների սահմանները, ինչպես նաև Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում տնտեսական գործունեության իրականացման կարգը սահմանում է կառավարությունը: Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, Սևանա լճի անմիջական և ոչ անմիջական էկոլոգիական գոտիների սահմաններում, ըստ տարածքի գործառնական բնույթի, տարանջատվում են հետևյալ ենթագոտիները. ա) հատուկ պահպանվող տարածքներ՝ բնապահպանական և բնօգտագործման արգելոցային ռեժիմով, բ) սահմանափակ (նպատակային) օգտագործման տարածքներ՝ բնապահպանական և բնօգտագործման արգելավայրային ռեժիմով և գ) տնտեսավարման ազատ ռեժիմով տարածքներ՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված բնօգտագործման նորմերով:

Օրենքի 6-րդ հոդվածը՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման, նրա ջրհավաք ավազանում տնտեսական և այլ գործունեության կարգավորման նպատակով, սահմանում է կենտրոնական, անմիջական ազդեցության և ոչ անմիջական ազդեցության էկոլոգիական գոտիներ: Էկոլոգիական յուրաքանչյուր գոտու համար ՀՀ կառավարությունը սահմանում է Սևանա լճի էկոհամակարգի բնօգտագործման և բնական միջավայրի պահպանության համապատասխան ռեժիմ:

**Քուսական աշխարհի մասին**<sup>19</sup> (1999թ.) և **Կենդանական աշխարհի մասին**<sup>20</sup> (2000թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

**ՀՀ Հողային օրենսգիրքը**<sup>21</sup> (2001թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական

<sup>18</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140529>

<sup>19</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176439>

<sup>20</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176441>

<sup>21</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=172330>

ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

**ՀՀ ջրային օրենսգրքի**<sup>22</sup> (2002թ.) հիմնական նպատակն է սահմանել երկրի ջրային ռեսուրսների պաշտպանության իրավական հիմքերը, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բավարարել քաղաքացիների և տնտեսական ոլորտների ջրային կարիքները և պահպանել ջրային ռեսուրսները ապագա սերունդների համար: Օրենսգրքը կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

**Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին ՀՀ օրենքի**<sup>23</sup> (2005թ.) նպատակը ներկայում և ապագայում մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է:

**Ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենքի**<sup>24</sup> (2006թ.) կարգավորում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները՝ ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները,

**ՀՀ անտառային օրենսգրքի**<sup>25</sup> (2005թ.) կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

**Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքի**<sup>26</sup> (1994թ., խմբագրվել է 2022թ.-ին) կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը: Մթնոլորտային օդի որակի նկատմամբ պահանջները սահմանված են ՀՀ կառավարության **Բնակավայրերում մթնոլորտային օդի աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին №160-Ն որոշմամբ**<sup>27</sup>:

**Թափոնների մասին ՀՀ օրենքի**<sup>28</sup> (2004թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

<sup>22</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=186737>

<sup>23</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1784>

<sup>24</sup><https://www.irtek.am/views/act.aspx?aid=150170> և <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=103132>

<sup>25</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187800>

<sup>26</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=187759>

<sup>27</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docID=86441>

<sup>28</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=170574>

ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին №71-Ն<sup>29</sup> և ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին №72-Ն<sup>30</sup> ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի №1059-Ա որոշում<sup>31</sup>:

Բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 30.08.2007թ.-ի №1044-Ն որոշում<sup>32</sup>:

Բուսական աշխարհի մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 22.01.2009թ.-ի №120-Ն որոշում<sup>33</sup>:

Կենդանական աշխարհի մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 22.01.2009թ.-ի №121-Ն որոշում<sup>34</sup>:

Բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի վարման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 20.03.2008թ.-ի №259-Ն որոշում<sup>35</sup>:

«Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին ՀՀ կառավարության 18.12.2008թ.-ի №1563-Ն որոշում<sup>36</sup>:

«Սևան» ազգային պարկ պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության 30.05.2002թ.-ի №927-Ն որոշում<sup>37</sup> սահմանված «Սևան» ԱՊ ՊՈԱԿ-ի կանոնադրական գործառույթներից են.

- Ապահովել Սևանա լճում ու դրա ավազանում ջրային ու ցամաքային բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանությունը, կազմակերպել և իրականացնել դրանց գիտական ուսումնասիրությունները,
- Կազմակերպել և իրականացնել բնական էկոհամակարգերի ու դրանց առանձին բաղադրիչների բուսական ու կենդանական աշխարհի հաշվառումը և նախապատրաստել կադաստրի վարման համար անհրաժեշտ նյութերը,
- Իրականացնել էկոլոգիական դիտանց, վարել բնության տարեգրություն, կազմակերպել բնության թանգարանի գործունեությունը,
- Կանխարգելել մարդու գործունեության հետևանքով ազգային պարկի բնական էկոհամակարգի հավասարակշռությունը խախտող գործընթացները և իրականացնել խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ,
- Կազմակերպել զբոսաշրջություն,
- Իրավասության սահմաններում իրականացնել բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումներ:

<sup>29</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56347>  
<sup>30</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56348>  
<sup>31</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166>  
<sup>32</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=135783>  
<sup>33</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=135714>  
<sup>34</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=135718>  
<sup>35</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=42951>  
<sup>36</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=73451>  
<sup>37</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143456>



«Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիների բնակավայրերում և բնակավայրերից դուրս օբյեկտների շահագործումից առաջացող կեղտաջրերի մաքրման մասին» ՀՀ կառավարության 23.03.2006թ.-ի №397-Ն որոշում<sup>38</sup>:

«Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագիծը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 11.12.2003թ.-ի №1787-Ն որոշում<sup>39</sup>:

«Սևան» ազգային պարկի 1908.0 մետր բացարձակ նիշից ցածր տարածքներում հողամասերի վարձակառության և կառուցապատման իրավունքի տրամադրման առանձնահատկությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 12-ի թիվ 927-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 13.05.2004թ.-ի №766-Ն որոշում<sup>40</sup>:

«Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2001թ.-ի №286 որոշում<sup>41</sup>:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի №967-Ն որոշումները<sup>42</sup>:

### 3. «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

#### 3.1 «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի իրավական հենքը

«Սևան» ԱՊ-ի կառավարման պլանի մշակման իրավական պահանջը ամրագրված է Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքով (2006թ.)<sup>43</sup>, համաձայն որի կառավարման պլանը նկարագրվում է որպես տվյալ տարածքի զարգացման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործունեությունը կարգավորող պաշտոնական փաստաթուղթ: Բնության հատուկ պահպանվող տարածքի (ԲՀՊՏ) կառավարման պլանը կազմվում է լիազորված պետական մարմնի հաստատած մեթոդական ցուցումների համաձայն:

#### 3.2 Ազգային պարկի կառավարման պլանի կառուցվածքը

Կառավարման պլանի կառուցվածքը սահմանված է Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով և ներառում է՝

- ա) ԲՀՊՏ-ի մասին հիմնական տեղեկատվությունը, այդ թվում՝ էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների (ներառյալ՝ դրանց պաշարների, վիճակի և սպառնացող վտանգների) նկարագրությունը և անցած ժամանակաշրջանում դրանց փոփոխությունների գնահատականն ու զարգացման հեռանկարները.
- բ) ԲՀՊՏ-ի գոտիավորման, սահմանների, կենսաբանական բազմազանության, այդ թվում՝ կենսաբանական պաշարների տեղաբաշխման, հողօգտագործման և այլ թեմատիկ քարտեզներն ու հատակագծերը.
- գ) ԲՀՊՏ-ի սոցիալ-տնտեսական և բնօգտագործման առանձնահատկությունները.
- դ) ԲՀՊՏ-ի պահպանությանը և օգտագործմանը մասնակցող շահագրգիռ կողմերը.

<sup>38</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=23342>

<sup>39</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=84570>

<sup>40</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=45855>

<sup>41</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=181499>

<sup>42</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=157090>

<sup>43</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=187301>

- ե) ԲՀՊՏ-ի մոնիթորինգի տվյալների հիման վրա մարդածին բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանը (վերացմանը) ուղղված գործողությունների ամենամյա պլանը և ժամանակացույցը.
- զ) ԲՀՊՏ-ի պահպանության, դրանում գիտահետազոտական ուսումնասիրության և այլ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ծախսերը և ֆինանսավորման աղբյուրները:

### 3.3 Ազգային պարկի տեսլականը, ռազմավարական նպատակները և կառավարման խնդիրները

#### 3.3.1 Սևանա լճի առաջարկվող ազգային տեսլականը

Սևանա լիճը բարձրագույն արժեք է Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի համար:

**Սևանա լիճն առողջ, կայուն էկոհամակարգ է և ռազմավարական ռեսուրս, որի գիտահեն և արդիական, ներառական կառավարման համար բաղադրիչներ են լճի ջրհավաք ավազանի համայնքների բարեկեցությունը և Հայաստանի Հանրապետության անվտանգային, տնտեսական և սոցիալական առաջնահերթությունները<sup>44</sup>:**

#### 3.3.2 Ազգային պարկի տեսլականը

Հենվելով Սևանա լճի տեսլականի վրա, նաև առաջնորդվելով որդեգրված մեթոդաբանությամբ (Open Standards for the Nature Conservation)<sup>45</sup>՝ աշխատանքային խմբի կողմից մշակվել է «Սևան» ազգային պարկի ռազմավարությունը: Այն բաղկացած է «Սևան» ազգային պարկի տեսլականից, երկարաժամկետ ռազմավարական նպատակներից, կառավարման խնդիրներից:

Նշված ռազմավարությունը 2023 թվականի մայիսի 26-ին քննարկվել է «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման մասնագիտական խորհրդատվական ժամանակավոր աշխատանքային խորհրդի նիստում:

Տեսլականը ցույց է տալիս ազգային պարկի ցանկալի վիճակը, որին լիարժեքորեն կամ անգամ մասնակի հասնելը երկարաժամկետ նպատակ է:

«Սևան» ԱՊ տեսլականը ձևակերպվել է հետևյալ կերպ՝

**«Սևան» ազգային պարկը կայուն կառավարման համակարգ ունեցող բնության հատուկ պահպանվող տարածք է, որն ապահովում է բնության և սոցիալ-մշակութային արժեքների պահպանությունը, այդ թվում նաև բնական ռեսուրսների կայուն ու ինտեգրված օգտագործման նպատակով՝ ներդաշնակ ձևով միահյուսված տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը: «Սևան» ազգային պարկի սահմաններում ջրային և ցամաքային էկոհամակարգերը, կենսաբազմազանությունը գտնվում են առավելապես կենսունակ վիճակում, որտեղ նվազագույնի է հասցված մարդկային բացասական ներգործությունը:**

#### 3.3.3 Ազգային պարկի ռազմավարական նպատակները և կառավարման խնդիրները

##### 3.3.3.1 Երկարաժամկետ ռազմավարական նպատակներ

Երկարաժամկետ ռազմավարական նպատակները ցույց են տալիս գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունները, որոնք պետք է համահունչ լինեն տեսլականին: Երկարաժամկետ ռազմավարական խնդիրները տրամաբանորեն փոխկապակցված են մի շարք հարակից ոլորտների

<sup>44</sup>ՄԱԶԾ Ֆինանսավորմամբ՝ «Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» (EU4Sevan) ծրագրի շրջանակներում «Ընդվայգ քրնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից մշակված «Սևանա լճի երկարաժամկետ ազգային տեսլականի» համաձայն

ռազմավարական նպատակների հետ (այդ թվում ջրային ռեսուրսների, անտառների կայուն կառավարում, կլիմայի փոփոխության հարմարվողականություն, համայնքային կայուն զարգացում և այլն):

Տեսլականից բխող երկարաժամկետ ռազմավարական նպատակներ են սահմանվել.

**Նպատակ 1**

Ապահովել, որ «Սևան» ազգային պարկի առաջնային և այլ նպատակները համահունչ լինեն պահպանվող տարածքների միջազգային չափորոշիչներին (օրինակ՝ IUCN ctg. II, որն առավել նման է Ազգային պարկի կարգավիճակին),

**Նպատակ 2**

30×30 նախաձեռնության համաձայն՝ մեծացնել արգելավայրային, արգելոցային գոտին,

**Նպատակ 3**

Ապահովել տարածքի հարմարվողականությունը ապագա էական միտումներին, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, ջրի մակարդակի բարձրացումը և մարդածին ազդեցությունները: Ապահովել տարածքի կառավարման համակարգի ճկունությունը,

**Նպատակ 4**

Պահպանել կամ բարելավել ԱՊ-ի թիրախային բնական և ձևափոխված ցամաքային և ջրային էկոհամակարգերի վիճակը,

**Նպատակ 5**

Պահպանել բնական ռեսուրսները՝ թույլատրելով դրանց կայուն օգտագործումը,

**Նպատակ 6**

Նպաստել և կարգավորել ռեկրեացիան և բնությանը համահունչ այցելությունների ձևերը, որոնք նպաստում են տեղական տնտեսության զարգացմանը,

**Նպատակ 7**

Նպաստել իրագրության բարձրացմանը, էկո-կրթություն իրականացնել և բարելավել շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցությունը,

**Նպատակ 8**

Հասնել ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ֆինանսական կայունության:

**3.3.3.2 Կառավարման խնդիրներ**

Դրանք կառավարման պլանի գործունեության հիմնասյուներն են՝ արտահայտելով կանոնադրական հիմնական ուղղություններով առկա հանգամանքները, որոնք ենթակա են փոփոխության/բարելավման կառավարման պլանի գործունեության ընթացքում հասնելու սպասելի արդյունքների: Ազգային պարկի գործունեության հիմնական ուղղությունները կառավարման պլանում խմբավորված են հիմնական ծրագրերի մեջ, որոնցից բխում է գործողությունների պլանը:

Միջնաժամկետ և կարճաժամկետ խնդիրների և դրանց լուծման ուղիների բնորոշումը գերակշիռ մասով ուղղված է ԱՊ-ի արժեքները վտանգող սպառնալիքների վերացմանը կամ մեղմմանը:

**3.4 Ծահագրգիռ կողմերը**

«Սևան» ազգային պարկի գործունեության շահագրգիռ կողմերը և դրանց ազդեցությունների շրջանակը նկարագրված է **Աղյուսակ 2**-ում:

**Աղյուսակ 2. Ծահագրգիռ կողմերը և դրանց ազդեցությունների շրջանակները**

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ճահագրգիռ կողմը	Նկարագիրը	Ազդեցության ոլորտը՝ ՍԱԳ-ի ԿՊ-ի մշակման և իրագործման ընթացքում
«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական կազմակերպություն է:	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը:
ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	ՀՀ շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների բնական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականություն մշակող և իրականացնող գործադիր իշխանության հանրապետական մարմին:	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը գործում է ՀՀ ԾՄՆ գերատեսչական ենթակայության ներքո:
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը ԾՄՆ-ի կազմում գործող՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է: Հիմնարկի գործունեության հիմնական նպատակը ՀՀ շրջակա միջավայրի ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումն է:	<p>Հիմնարկը պատասխանատու է ՀՀ բյուջեի և/կամ ՀՀ-ին տրամադրվող միջոցների հաշվին մշակված ծրագրերը և աշխատանքների իրականացման համար հետևյալ ոլորտներում.</p> <ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերարտադրության բնագավառի պետական ծրագրերի իրականացման ապահովումը.</li> <li>• բնական ռեսուրսների կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի և պետական պատվերի իրականացումը.</li> <li>• շրջակա միջավայրի ոլորտում նախապատրաստական և ներդրումային միջազգային ծրագրերի իրականացումը:</li> </ul> <p>Հենվելով վերոգրյալի վրա՝ սույն ԿՊ-ն պետք է հետազայում հիմք ծառայի Հիմնարկի կողմից ներկայացրած ծրագրերի իրականացման ու կանոնադրությանը համահունչ այլ գործունեություն իրականացման համար:</p>
Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով	Համալիր և տարեկան ծրագրերի (հաշվետվությունների), ինչպես նաև դրանց իրականացումն ապահովող լիազորված մարմինների մշակած փաստաթղթերի անկախ և մասնագիտական փորձաքննության նպատակով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ ԳԱԱ) կառուցվածքում ստեղծվում է	Սևանա լճի ջրհավաք ավազանում, այդ թվում ՍԱԳ տարածքում նախաձեռնվող ծրագրերի (հաշվետվությունների), ինչպես նաև դրանց իրականացումն ապահովող փաստաթղթերի նախնական և ամփոփիչ փորձաքննության իրականացում և եզրակացության տրամադրում:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ճահագրգիռ կողմը	Նկարագիրը	Ազդեցության ոլորտը՝ ՍԱԳ-ի ԿՊ-ի մշակման և իրագործման ընթացքում
	ստորաբաժանում՝ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով:	
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության	Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված ոլորտներում մշակում է տնտեսական քաղաքականությունը, ապահովում դրա իրականացումը և արդյունքների գնահատումը:	Ձկնաբուծություն, քաղաքականություն ձկնաբուծության համար: Արարատյան դաշտի ռոտզումն արվում է Սևանի ջրով, շահագրգիռ է շատ ջուր բաց թողնել, որ գյուղատնտեսությունը չտուժի: Հրազդան ՀԷԿ կասկադով էլ. հոսանքի արտադրություն, Գյուղատնտեսության ինտենսիֆիկացիա՝ աջակցող ծրագրեր, Բոլոր նշված հիմնախնդիրներին անդրադարձ է արված «Սևան» ԱՊ-ի ԿՊ-ում, որպես «Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի հիմնական գործառնությունների բաղկացուցիչ մաս:
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառում:	Նախարարության ազդեցությունը դրսևորվում է մի շարք ոլորտային հարցերում, դրանց թվում են նախ և առաջ տեղական ինքնակառավարման մարմինների գործառնություններին վերաբերվող հարցեր, որոնք մասնակցություն ունեն ԱՊ-ի կառավարման գործընթացին: Բացի դրանից՝ կարևոր նշանակություն ունի էներգետիկ ենթակառուցվածքների քաղաքականության մշակման առումով: «Սևան» ԱՊ-ի ԿՊ-ով նախատեսվող գոտիավորումը, ռեժիմների սահմանումը ԱՊ-ի ողջ տարածքով մեկ և հարող գոտիների համար կառավարման այլ գործիքակազմների հետ ուղղակիորեն ազդում են հարակից համայնքների կենսագործունեության վրա՝ այսպիսով ենթադրելով որոշակի փոխգործակցություն: Հաջող փոխգործակցությունը ենթադրվում է, որ պետք է սկսվի նախ և առաջ ՏԿԵՆ և ՇՄՆ մակարդակով:
Գեղարքունիքի մարզպետարան	Իրագործում է կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:	Իրեն վերապահված իրավասության սահմաններում մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականություն է իրականացնում բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում:
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե	Զբոսաշրջության կոմիտեն Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության ենթակա մարմին է, որը մշակում է զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականությունը և ապահովում դրա իրականացումը:	Կոմիտեն զբոսաշրջային պետական քաղաքականության մասով պատասխանատու լինելուն զուգընթաց նաև Սևանին առնչվող զբոսաշրջային քաղաքականությունը ՀՀ-ի ընդհանուր զբոսաշրջային առաջնահերթությունների և հիմնախնդիրների համատեքստում դիտարկելու փորձագիտական ռեսուրս ունի, միաժամանակ այն կարող է դեռևս մշակման փուլում իրատեսական գնահատական տալ առաջարկվող տարբերակների իրականացման խոչընդոտների և պետության պոտենցիալ ներգրավվածության մասով:
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Զրային կոմիտեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Կոմիտեի իրավասությունների շրջանակում է խմելու և ռոտզումն ջուր մատակարարող, ջրահե-

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ճահագրգիռ կողմը	Նկարագիրը	Ազդեցության ոլորտը՝ ՍԱԳ-ի ԿՊ-ի մշակման և իրագործման ընթացքում
կառուցվածքների նախարարության ջրային կոմիտե	վածքների նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման ու օգտագործման բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը:	ռացում իրականացնող, ջրային ոլորտում առևտրային գործունեություն ծավալող ընկերություններում պետական բաժնեմասերի կառավարումը, Կոմիտեն է համակարգում Սևան ջրային համակարգի պահպանման և տեխնիկական վիճակի բարելավման ու նորոգման նպատակով ՀՀ ջրտնտեսությունների ենթակայությամբ գործող հիմնարկները/նախագծերը/վարկային ծրագրերը:
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:	Նախարարության համապատասխան կառույցները իրականացնում են պատմամշակութային ժառանգության պահպանության և հաշվառման գործառնություններ, որոնք տեղակայված են «Սևան» ԱՊ-ի սահմաններում: ԿԳՄՍ նախարարության հետ ենթադրվում է շահերի հատում նաև ՍԱԳ-ի կրթաճանաչողական բաղադրիչների մշակման հարցում:
ՀՀ ներքին գործերի նախարարություն (փրկարար ծառայություն)	Ներքին գործերի նախարարությունը քաղաքացիական, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցման և տեխնիկական անվտանգության պետական նյութական պահուստի պաշարների ձևավորման և սպասարկման ոլորտում պետական քաղաքականություն մշակող և իրականացնող գործադիր իշխանության հանրապետական մարմին:	Ներքին գործերի նախարարությունը կարևոր դերակատարություն կարող է ունենալ առաջին հերթին հակահրդեհային անվտանգության և ռեկրեացիոն գոտիներում անվտանգության ապահովմանն առնչող բաղադրիչների մասով:
ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը կառավարությանը ենթակա վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառնություններ իրականացնող պետական մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության և ընդերքի բնագավառներում՝ հանդես գալով ՀՀ անունից:	Կարևոր դերակատարում ունի կենսաբազմազանության և անտառային էկոհամակարգերի պահպանության գործում՝ վերահսկելով ՍԱԳ-ի գործունեությունը և տեսուչների միջոցով հայտնաբերելու խախտումները ՍԱԳ-ի տարածքում ու հարակից բնակավայրերում:
Կադաստրի կոմիտե	Կադաստրի կոմիտեն վարում է անշարժ գույքի պետական ռեգիստրը, երկրատարածական տվյալների համակարգերը, աջակցում անշարժ գույքի շուկայի զարգացմանը, հողային պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:	Մինչ օրս առկա են սահմանների անճշտություններ ՍԱԳ-ի և հարակից համայնքների միջև: Դրանց խնդիրների վերահանումը և սահմանների վերջնական գրանցումը կատարվում է Կադաստրի կոմիտեի կողմից, հետևապես կարևոր է Կադաստրի կոմիտեի դերակատարումը նաև ԿՊ մշակման գործընթացում՝ վերահանելու խնդիրները:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ճահագրգիռ կողմը	Նկարագիրը	Ազդեցության ոլորտը՝ ՍԱԳ-ի ԿՊ-ի մշակման և իրագործման ընթացքում
Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոն	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը («Էկոկենտրոն» ՊՈԱԿ) իրականացնում է կիրառական և հիմնարար միջառարկայական հետազոտություններ էկոլոգիայի, շրջակա միջավայրի պահպանության, սննդի անվտանգության, գյուղատնտեսության բնագավառներում՝ նորագույն հեռագնման և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:	Կենտրոնի կողմից իրականացրած հետազոտությունները կարևոր են կառավարման ոլորտում փաստահեն որոշումներ կայացնելու և առկա ռիսկերը արդյունավետ կանխատեսելու, մեղմելու/չեզոքացնելու համար:
ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը ստեղծվել է Կենդանաբանության ինստիտուտի և ՀՀ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի միաձուլման հիման վրա, ինստիտուտներից յուրաքանչյուրը հանդիսանում է կենտրոնի հիմնական օղակը և ինքնուրույն իրականացնում է հիմնարար գիտահետազոտական գործունեություն:	Կենտրոնը կարևոր դերակատարություն ունի ՀՀ-ում ջրային էկոհամակարգերի ուսումնասիրության, կենսառեսուրսների գնահատման, դրանց պահպանման, վերականգման և արդյունավետ օգտագործման առաջարկների մշակման գործում:
ՀՀ ԳԱԱ «Ա. Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	Խոշոր գիտական հաստատություն, որը հետազոտություններ է իրականացնում հանրապետության ֆլորայի, բուսական ծածկույթի, էվոլյուցիոն կարգաբանության, բույսերի ֆիզիոլոգիայի, ինչպես նաև բուսաբանական այգիներում (Երևանի, Վանաձորի և Սևանի) բույսերի ներմուծման ու կլիմայավարժեցման ուղղություններով:	Ինստիտուտը կարևոր փորձագիտական աղբյուր է ՍԱԳ-ի ֆլորայի, բուսական ծածկույթի վերաբերյալ հետազոտությունների տեսանկյունից:
«Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամ / «Սևան ակվա» ՓԲԸ	Հիմնադրամը ստեղծվել է Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման և պահպանման նպատակով:	Հիմնադրամի կանոնադրական նպատակներն են Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնումը և Սևանա լճի հիմնախնդիրների լուծումը:
ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացնում է շրջակա միջավայրի բաղադրիչների և հիդրոօդերևութաբանական տարրերի դիտարկումներ, վիճակի գնահատման համար բավարար տվյալների ստեղծում, դրանց գրանցում, վերլուծում, տրամադրում և պահպանում:	Սևանա լճի ավազանում օդերևութաբանական կայանների բաշխվածություն, հիդրոլոգիական ռեժիմի կազմում, ջրի որակի հետազոտություններ, հիդրոկենսաբանական մոնիթորինգի իրականացում, քիմիական նյութերի և թափոնների հետազոտություններ, որոնք կարևոր ելակետային տվյալներ են ՍԱԳ-ի ԿՊ-ի թե՛ մշակման փուլում և թե՛ հետագայում դրա իրագործման ժամանակ առավել գիտահեն որոշումների կայացման գործում:
Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցի	Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցը գիշերօթիկ կրթական	Որպես ՍԱԳ-ի տարածքում գտնվող կարևոր հոգևոր, կրթամշակութային կառույց՝ այն կարող

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ճահագրգիռ կողմը	Նկարագիրը	Ազդեցության ոլորտը՝ ՍԱՊ-ի ԿՊ-ի մշակման և իրագործման ընթացքում
ցի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Վազգե- նյան հոգևոր դպրանոց	հաստատություն է քառամյա առ- կա (ստացիոնար ) ուսուցմամբ:	Է Էական դերակատարում ունենալ ՍԱՊ-ի գոր- ծունեության շրջանակում որոշումների կայաց- ման հարցում:
Տեղական ինքնակա- ռավարման մարմին- ներ. Սևան, Վարդե- նիս, Գավառ, Մարտու- նի Ճամբարակ խոշո- րացված համայնքներ	Իրականացնում են համայնքի ի- րավունքների, օրինական շահերի և սեփականության՝ օրենքով սահ- մանված կարգով պաշտպանու- թյունը:	Ի շարս այլ գործառույթների՝ օրենքով սահման- ված կարգով կարող են իրականացնել համայնքի սահմանների փոփոխություններ՝ հանրային շա- հերից ելնելով, համայնքի կարծիքը: Հաշվի առնելով, որ ՍԱՊ-ի տարածքը բաշխված է հենց 5 համայնքների վարչական սահմաննե- րում, մի շարք կանոնադրական գործառույթնե- րով անհրաժեշտություն կամ որոշումների կա- յացման համաձայնեցման, որի լավագույն մոդելը համայնքների ներկայացուցիչների ընդգրկումն է ՍԱՊ-ի խորհրդակցական մարմնում՝ կառավար- ման խորհրդում: Բազմաթիվ հարցերում առկա են շահերի համադրումներ ու համադրումներ համայնքների և ՍԱՊ-ի միջև, որոնք ենթակա են քննարկման:
Հասարակական կազ- մակերպություններ, ո- րոնք գործում են Գե- դարքունիքի մարզում («Տարածքային գար- գացման և հետազո- տությունների կենտ- րոն» ՀԿ, «ԲԼԵՁԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ, ««Սևան» երիտասար- դական ակումբ» ՀԿ, «- Համայնքի զարկերակ» ՀԿ, «Արեգունի» ՍՉՀԿ, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ)	ՍԱՊ-ին առնչվող տիրույթներում իրականացնում են բնապահպա- նական, սոցիալական, մշակու- թային ծրագրեր, որոնք անմիջա- կան կամ միջնորդավորված ձևով առնչվում են Սևանա լճին:	Կարևոր օժանդակ դեր ունեն ֆինանսական և այլ ռեսուրսների ներգրավման, միջազգային լա- վագույն փորձի ուսումնասիրության / տեղայ- նացման գործընթացում: Լավ են ճանաչում ՍԱՊ-ին առնչվող համայնքները (աշխարհագրա- կան և մարդկային) և անկախ ոլորտային մաս- նագիտացումից, կարող են Էական գործ իրակա- նացնել տարբեր ոլորտային խնդիրների համա- տեքստում Սևանի ազգային պարկի առաջնա- հերթությունների վերաբերյալ հանրային իրա- գեկման մակարդակը բարձրացնելու և տեղաբ- նակներին մոբիլիզացնելու ուղղությամբ:
Հասարակական բնա- պահպանական կա- ռույցներ/քաղաքացիա- կան նախաձեռնու- թյուններ, որոնք գոր- ծունեությունը չի սահ- մանափակվում Գե- դարքունիքի մարզով	ՀՀ-ում գործող տարբեր կառույց- ներ ու նախաձեռնող խմբեր կան, որոնց գործունեությունը ուղղակի կամ միջնորդավորված առնչվում է Սևանա լճի հիմնախնդիրներին:	Կարևոր օժանդակ դեր ունեն ֆինանսական և այլ ռեսուրսների ներգրավման, միջազգային լա- վագույն փորձի ուսումնասիրության / տեղայ- նացման գործընթացում, ինչպես նաև կարող են Սևանին առնչվող խնդիրները դիտարկել երկրի ընդհանուր բնապահպանական հարցերի համա- տեքստում:
Միջազգային կազմա- կերպություններ	ՀՀ-ում գործող միջազգային կա- ռույցների մի մասը տրամադրում է ֆինանսական աջակցություն/ փորձագիտական խորհրդատվու- թյուն Հայաստանում շրջակա մի- ջավայրի պահպանն ուղղված ծրագրերի համար:	Առավել արդյունավետ կարող են լինել ՍԱՊ-ի կարգավիճակ ունեցող կառույցների կառավար- ման միջազգային փորձառության վերաբերյալ խորհրդատվության, առկա և հնարավոր ֆինան- սական ռեսուրսներ վերաբերյալ տեղեկություն- ների հավաքագրման, պոտենցիալ ֆինանսական ներդրումներ առավել նպատակային և թիրա- խային դարձնելու նպատակով:



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


Ճահագրգիռ կողմը	Նկարագիրը	Ազդեցության ոլորտը՝ ՍԱՊ-ի ԿՊ-ի մշակման և իրագործման ընթացքում
Մասնավոր հատված - առկա կամ հնարավոր ներդրողներ	ՀՀ-ում գործող փոքր, միջին և խոշոր ձեռնարկատերեր:	Ձեռնարկատիրական գործունեություն / ներդրումներ են իրականացնում կամ կարող են իրականացնել «Սևան» ազգային պարկի կամ հարակից գոտիներում, հետևապես շահագրգիռ են ու առավելապես զգայուն ռեժիմի ցանկացած փոփոխությամբ:
Անհատ հոգստագործողներ	Սևանա լճի հարակից համայնքներում գյուղատնտեսական գործունեություն ծավալող (հողագործություն, անասնապահություն) անձանց/տնտեսությունները, որոնք ուղիղ կամ միջնորդավորված ազդեցություն ունեն Սևանի վրա և/կամ ազդեցություն են կրում Սևանա լճի վիճակից:	ՍԱՊ-ի ԿՊ-ի մշակման գործընթացում կարևոր կլինի նրանց անմիջական մասնակցությունը փաստեր, ոչ մասնագիտական տվյալներ հավաքագրելու և նրանց հետ հնարավոր հաղորդակցական ռիսկերը քարտեզագրելու և մեղմելու նպատակով:
Զբոսաշրջային ընկերություններ և զբոսաշրջիկներ	Սևանա լիճը Հայաստանի զբոսաշրջային հիմնական ուղղություններից է ինչպես հայաստանցիների, այնպես էլ արտերկրից ժամանած զբոսաշրջիկների համար:	ՍԱՊ-ի ԿՊ-ի կառավարման համատեքստում զբոսաշրջության առաջնահերթությունները սահմանելու, հիմնական խնդիրները և ռեսուրսները քարտեզագրելու, որոշ լուծումների շուրջ համաձայնություն ձեռք բերելու նպատակով տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման տեսանկյունից:
Օրինական կամ ապօրինի շինությունների սեփականատերեր	Սևանա լճի ավամերձ տարածքներում տեղակայված շինությունների սեփականատերերը այդ տարածքների կառավարման մեխանիզմների փոփոխության հիմնական շահառուներից են:	Հաշվի առնելով ՍԱՊ-ի կառավարման պլանի մշակման ընթացքում ՍԱՊ-ի սահմանների, բնապահպանական կարևորություն ներկայացնող տարածքների հնարավոր փոփոխությունները, այս խումբը կարող է հայտնվել առաջնային ազդեցության գոտում: ՍԱՊ-ի ԿՊ-ի մշակման գործընթացում կարևոր կլինի նրանց անմիջական մասնակցությունը փաստեր, ոչ մասնագիտական տվյալներ հավաքագրելու և նրանց հետ հնարավոր հաղորդակցական ռիսկերը քարտեզագրելու և մեղմելու նպատակով:
Ձկնորսներ, որսորդներ, բույսերի հավաքչությամբ զբաղվողներ	Որսորդներն ու ձկնորսները, հավաքչությամբ զբաղվողները Սևանա լճի և հարակից տարածքի կենդանական ու բուսական ռեսուրսների ակտիվ սպառող են: Ձկնորսությունն ու որսորդությունը հաճախ ժամանցի կազմակերպման ձևից բացի նաև սոցիալական հարցեր լուծելու հնարավորություն է հազարավոր մարդկանց համար: Բույսերի հավաքչությունը՝ մասնավորապես չիչիանի հավաքը առանձին խմբերի համար ևս հիմնական թեև սեզոնային աշխատանք է:	ՍԱՊ-ի ԿՊ-ի մշակման գործընթացում կարևոր կլինի նրանց անմիջական մասնակցությունը կենսափորձով հաստատված փաստեր, ոչ մասնագիտական տվյալներ հավաքագրելու և նրանց հետ հնարավոր հաղորդակցական ռիսկերը քարտեզագրելու և մեղմելու նպատակով:

#### 4. «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

##### 4.1 Աշխարհագրական դիրքը և սահմանները

Ազգային պարկը գտնվում է ՀՀ հյուսիս-արևելյան հատվածում: Այն տարածվում է հարավից՝ 40°06'36", հյուսիսից՝ 40°38'15" հյուսիսային լայնությունների և արևմուտքից՝ 44°55'39", արևելքից՝ 45°55'25" արևելյան երկայնությունների միջև:

Նկար 1. «Սևան» ազգային պարկի տեղադիրքը և սահմանները



Շրջապատված է Գեղամա, Փամբակի, Արեգունի, Սևանի, Արևելյան Սևանի և Վարդենիսի լեռներով: Ազգային պարկի տարածքի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք է և կազմում է 93 կմ: ՀՀ վարչատարածքային բաժանման տեսանկյունից այն գտնվում է Գեղարքունիքի մարզի կենտրոնական հատվածում՝ Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ բազմաբնակավայր համայնքների վարչական սահմաններում (**Աղյուսակ 3**):

Ազգային պարկի առաջարկվող տարածքը կազմված է իրարից գատ 91 ցամաքային տարածքներից (ներառյալ ցամաքի խորքում ընկած ջրային, ջրահանային տարածքները) և Սևանա լճի տարածքից, որոնց ընդհանուր սահմանագիծը կազմում է 1041 կմ, որից միայն 244 կմ-ը լճի ափագիծն է: Ազգային պարկի տարածքը հիմնականում սահմանակցում է համայնքային սեփականության գյուղատնտեսական հողերին, մասամբ նաև մասնավոր սեփականության հողերին, իսկ Արեգունի լեռների Ցիցսար լեռնագագաթի հատվածում սահմանակցում է «Իլիջան» ազգային պարկի տարածքին, որի հետ ունի 4.2 կմ երկարությամբ սահմանագիծ:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Աղյուսակ 3. Համայնքների և բնակավայրերի ցանկը, որոնց վարչական սահմաններում է գտնվում ազգային պարկի առաջարկվող տարածքը**

Համայնք (5)	Բնակավայր (49)
Սևան (5)	Սևան, Լճաշեն, Ծովագյուղ, Նորաշեն, Չկալովկա
Գավառ (8)	Գավառ, Բերդկունք, Գեղարքունիք, Լճափ, Ծովագարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս
Մարտունի (13)	Մարտունի, Աստղածոր, Արծվանիստ, Երանոս, Չոլաքար, Լիճք, Ծակքար, Ծովինար, Ձորագյուղ, Ներքին Գետաշեն, Վաղաշեն, Վարդաձոր, Վարդենիկ
Վարդենիս (16)	Վարդենիս, Ավազան, Արեգունի, Գեղամասար, Դարանակ, Լճավան, Ծովակ, Կախակն, Կարճաղբյուր, Կուրթ, Կուլտական, Նորակերտ, Սոթք, Տորֆավան, Տրետուր, Փամբակ
Ճամբարակ (7)	Աղբերք, Արտանիշ, Դրախտիկ, Ծափաթաղ, Կալավան, Ծողակաթ, Զիլ

**4.2 «Սևան» ազգային պարկի արտաքին սահմանների նկարագրությունը**

«Սևան» ազգային պարկի տարածքի սահմանների վերանայման, ճշգրտման և սահմանագծման համար հիմք են հանդիսացել 2007-2011 թվականների «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի քարտեզները, Գեղարքունիքի մարզի Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ խոշորացված համայնքների հողային ֆոնդի ու սեփականության սուբյեկտների կադաստրային քարտեզները, կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակից ստացված քարտեզագրական տեղեկատվությունը, ՀՀ կառավարության 11.02.2010թ.-ի №123-Ն որոշման համաձայն կազմված՝ մինչև 1905.0 բացարձակ նիշը Մ1:1000 քարտեզագրական նյութերը:

Վերոնշյալ տեղեկությունը մշակվել և վերլուծվել է աշխարհագրական տեղեկատվական համակարգերի միջոցով, օգտագործվել են բարձր լուծաչափի արբանյակային նկարներ և խոշորամասշտաբ տեղագրական քարտեզներ: Իրականացվել են դաշտային դիտարկումներ, հավաքագրվել տարածական օբյեկտների տեղադիրքի ու հատկությունների վերաբերյալ տվյալներ և ստեղծվել է տարածական տվյալների բազա: Բացի վերոնշյալից՝ իրականացվել են նաև ազգային պարկի կենսաբազմազանության ուսումնասիրություններ, որի հիման վրա քարտեզագրվել են պարկում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների աճելավայրերն ու ապրելավայրերը, որոնք ևս հիմք են ծառայել սահմանների վերանայման աշխատանքներում:

Հավաքագրված տարաբնույթ տարածական տվյալների համադրման միջոցով վերանայվել են ազգային պարկի սահմանները և որպես առաջարկ ներկայացվել է շահագրգիռ կողմերին, մասնավորապես «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ին և համապատասխան համայնքներին: Առաջարկվող սահմանների վերաբերյալ քարտեզագրական տեղեկատվությունը ներկայացված է **Հավելված 6**-ում: Աշխատանքային քննարկումների արդյունքում ազգային պարկի առաջարկվող սահմանների վերաբերյալ համայնքների կողմից արձանագրված համաձայնությունները և անհամաձայնությունները ամփոփված են **Աղյուսակ 4**-ում: Անհամաձայնություններն ենթակա են հետագա քննարկման և համաձայնեցման՝ Ծրջակա միջավայրի նախարարության, «Սևան» ազգային պարկի, հարևան համայնքների, Գեղարքունիքի մարզպետարանի և Պետական կադաստրի ներկայացուցիչների միջև:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Աղյուսակ 4. «Սևան» ԱՊ-ի կառավարման պլանով առաջարկվող սահմանները ներառյալ առկա սահմանաձայնությունները «Սևան» ԱՊ-ի և համայնքների առաջարկների միջև**

Համայնքի անվանումը	«Սևան» ԱՊ-ի տարածքը համաձայն կառավարման պլանի առաջարկի	«Սևան» ԱՊ-ի տարածքը համաձայն համայնքի առաջարկի	«Սևան» ԱՊ-ի կառավարման պլանով առաջարկվող տարածքներ, որոնք համընկնում են համայնքների առաջարկների հետ	Սահմանաձայնությունները	
				«Սևան» ԱՊ-ի կառավարման պլանով առաջարկվող տարածքներ, որոնք չեն համընկնում համայնքների առաջարկների հետ	Այլ նշանակության տարածքներ, որոնք չեն համընկնում «Սևան» ԱՊ-ի կառավարման պլանով առաջարկվող տարածքների հետ
Ճամբարակ	7203.55	5241.34	5240.34	1963.21	1.0
Վարդենիս	5770.07	2367.53	2342.53	3427.54	25.0
Մարտունի	4543.47	4195.61	4188.70	354.77	6.91
Գավառ	4095.77	3834.50	3833.93	261.84	0.57
Սևան	2965.45	2331.30	2315.80	649.65	15.50
<b>Ընդամենը</b>	<b>24578.31</b>	<b>17970.28</b>	<b>17921.30</b>	<b>6657.01</b>	<b>48.98</b>

**4.3 «Սևան» ազգային պարկի առկա և առաջարկվող տարածքագործառնական գոտիները և գոտիավորման հիմքերը**

Համաձայն Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի՝ ազգային պարկում առանձնացվում են հետևյալ տարածքագործառնական գոտիները՝

- Արգելոցային,
- Արգելավայրային,
- Տնտեսական,
- Ռեկրեացիոն:

Պայմանավորված պահպանության ռեժիմի առանձնահատկություններով՝ յուրաքանչյուր գոտի ունի մարդածին գործունեության տարբեր սահմանափակումներ ու կարգավորումներ:

«Սևան» ԱՊ տարածքագործառնական գոտիների՝ մասնավորապես արգելոցային և արգելավայրային գոտիների առանձնացման հիմքում ընկած է ազգային պարկի կենսաբազմազանության հետազոտությունների արդյունքների վրա հիմնված քարտեզագրումը՝ մասնավորապես ՀՀ Կարմիր գրքում գրանցված և ազգային պարկի տարածքում հանդիպող բույսերի և կենդանիների արեալների, բազմազանության ու տեսակների կուտակման վայրերի քարտեզագրումը:

Ռեկրեացիոն գոտու առանձնացման համար առաջնային դեր է տրվել հանգստի և զբոսաշրջության հետ կապված տարածքների առկայությունը, իսկ տնտեսական գոտու դեպքում՝ առկա և պլանավորվող տնտեսական գործունեությունը, որը սակայն չպետք է վնասի էկոհամակարգերի ամբողջականությանն ու կենսունակությանը: Նշենք, որ համաձայն Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) կողմից մշակված տարբեր կատեգորիաների պահպանվող տարածքների կառավարման ուղեցույցի երկրորդ կատեգորիայի՝ «ազգային պարկ»-ի պարագայում էկոհամակարգերի պահպանությունը համատեղվում է կրթության, ռեկրեացիայի և այցելությունների, ինչպես նաև տեղաբնակների և համայնքների կենսագործունեության կարիքների հետ: Սակայն ԲՊՄՄ չափորոշիչներով ազգային պարկի տարածքի 75%-ի գործառնական նշանակությունը պետք է ուղղված լինի կենսաբազմազանության պահպանության առաջնային նպատակին, որը ապահովվում է արգելոցային և արգելավայրային գոտիների միջոցով:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2007-2011 թթ.-րի Կառավարման պլանով սահմանված և սույն Կառավարման պլանով առաջարկվող «Սևան» ազգային պարկի տարածքագործառնական գոտիները ամփոփված են **Աղյուսակ 5**-ում:

**Աղյուսակ 5. 2007-2011 թթ.-րի և սույն Կառավարման պլանով «Սևան» ազգային պարկի տարածքագործառնական գոտիները**

№	Տարածքագործառնական գոտի	Մակերես, հա	
		2007-2011 թթ. ԿՊ	Առաջարկվող ԿՊ
1	ՍԱՊ-ի տարածք (Սևանա լճի հայելու հետ միասին)	147343	152478.31
1.1	առանց լճի հայելու	22585	24578.31
2	Պահպանման գոտու տարածք	342920	338192.11
3	Արգելոցային գոտու տարածք	15370	16244.62
3.1	ցամաքային	7170	9536.51
3.2	ջրային	8200	6708.11
4	Արգելավայրային գոտու տարածք (2 արգելավայր)	2652	6833.1
4.1	ցամաքային	2359	5729.9
4.2	ջրային	293	1103.2
5	Ռեկրեացիոն գոտու տարածք	4573	3658.59
6	Տնտեսական գոտու տարածք	11266	5557.51

«Սևան» ազգային պարկի հիմնական գոտիների ու դրանց կազմում գտնվող առանձին հատվածների նկարագիրը բերված է **Հավելված 3**-ում:

**4.4 Ֆիզիկական միջավայրը**

**4.4.1 Կլիմայական պայմանները**

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ այժի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Ամենաաննպաստ կլիմայական պայմանները դիտվում են լճի արևմտյան ափին, որտեղ օդի ջերմաստիճանը կարող է իջնել մինչև  $-36^{\circ}\text{C}$ : Լճի հակադիր՝ Արեգունու ափին ձմեռը համեմատաբար մեղմ է, նվազագույն ջերմաստիճանը հասնում է  $-25^{\circ}\text{C}$ -ի: Բարձրադիր շրջաններում  $0^{\circ}\text{C}$ -ից բարձր օրերի թիվը հասնում է 200-ի, ցածրադիր գոտիներում՝ 260 օր: Առավելագույն ջերմաստիճանը գրանցվում է հուլիս-օգոստոս ամիսներին ( $28^{\circ}\text{C}$ ), նվազագույնը՝ հունվար-փետրվարին: Տարվա միջին ջերմաստիճանը տատանվում է  $5-6^{\circ}\text{C}$ -ի միջև:

Օդի ջերմաստիճանը, ինչպես նաև հարաբերական խոնավությունը, քամու արագությունը և կրկնվելիությունը, մթնոլորտային տեղումների քանակը, ներառյալ ձնածածկույթի բնութագիրը, համարվում են կլիմայի կարևորագույն ցուցանիշները: Սևանա լճին հարևանող Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ բնակավայրերում, ինչպես նաև Սևանի լճային հատվածում վերը թվարկված կլիմայական ցուցանիշները, վերցված ՀՀԾՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»<sup>45</sup> շինարարական նորմերից, ամփոփված են **Աղյուսակներ 6-10**-ում:

Ներկայումս, գլոբալ կլիմայի փոփոխության ժամանակաշրջանում, չափազանց կարևոր է հաշվի առնել կլիմայի փոփոխության, իսկ Սևանա լճի պարագայում նաև էական է ավազանի գետերի ջրային հոսքի փոփոխությունների կանխատեսումները:

<sup>45</sup><https://www.arlis.am/Annexes/7/2024>

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Աղյուսակ 6. Օդի միջին ջերմաստիճանը**

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Սևան լճային	-5.3	-5	-1.7	4	8.7	12.9	16.1	16.3	13.1	8.2	2.4	-2.7	5.6	-32.5	32.9
Սևան քաղաք	-8.2	-7.4	-3.3	3.5	8.8	12.1	15.7	15.7	12.2	6.4	0.6	-5.5	4.2	-33.0	32
Շորժա	-4.6	-4.6	-1.7	4.4	9.4	13.2	16.6	16.9	13.7	8.5	3.1	-1.9	6.1	-32	34
Վարդենիս	-8.3	-6.8	-2.7	4.1	9.5	12.9	16.3	16.1	12.2	6.7	0.9	-5.1	4.7	-29	30
Գավառ	-7.3	-6.2	-2.0	4.2	9.1	12.8	15.9	15.9	12.2	6.9	0.7	-4.6	4.8	-33.0	34.1
Մարտունի	-5.2	-4.9	-1.3	5.0	9.8	13.4	16.4	16.3	13.2	8.4	2.5	-2.6	5.9	-31.7	33.6
Ճամբարակ	-5.1	-4.5	-1.6	4.4	9.0	11.9	14.5	14.3	11.1	6.5	1.9	-2.8	5.0	-28	33

Ինչպես երևում է **Աղյուսակ 6**-ից, բացարձակ նվազագույն և բացարձակ առավելագույն ջերմաստիճանները դիտվում են Գավառ բնակավայրում, համապատասխանաբար -33.0°C և 34.1°C: Սևան քաղաքում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը նույնպես հասնում է -33.0°C: Օդի միջին ջերմաստիճանի տեսանկյունից, Սևանա լճին հարևանող բոլոր բնակավայրերում այն գրեթե համընկնում է, տատանվում է 4.2°C-ից (Սևան քաղաք) մինչև 6.1°C (Շորժա գյուղ):

**Աղյուսակ 7. Օդի հարաբերական խոնավությունը**

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
Սևան լճային	74	74	73	72	73	73	74	72	71	69	70	73	72	74	65	72	63
Սևան քաղաք	81	80	77	72	73	72	70	68	65	69	76	82	74	81	75	70	53
Շորժա	68	69	67	63	65	64	63	63	60	62	66	68	65	68	63	63	49
Գավառ	73	72	71	68	69	70	71	69	68	69	71	73	70	73	62	71	53
Մարտունի	68	69	68	66	67	70	73	71	66	64	65	66	68	68	61	73	54
Ճամբարակ	68	69	71	69	75	78	80	80	76	74	70	69	73	68	64	80	67

**Աղյուսակ 7**-ում բերված տվյալների համաձայն, օդի հարաբերական խոնավության միջին ամենաբարձր ցուցանիշը դիտվում է Սևան քաղաքում և Ճամբարակ գյուղում, համապատասխանաբար 74% և 73%, իսկ ամենացածրը՝ Շորժայում՝ 65%:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Աղյուսակ 8. Մթնոլորտային տեղումները**

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն մմ												Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			Տարեկան
Սևան լճային	18	24	38	64	89	78	54	37	33	47	31	18	531	129	402
	22	23	37	30	43	41	43	52	37	36	31	16	52		
Սևան քաղաք	25	30	40	65	103	79	50	40	37	51	38	25	583	158	425
	21	26	26	52	46	45	43	74	44	59	50	26	74		
Շորժա	12	15	23	42	69	65	49	37	33	40	26	15	426	91	335
	12	22	24	38	38	43	44	66	43	38	40	18	66		
Վարդենիս	43	53	62	69	88	65	47	36	28	48	47	53	639	258	381
	38	42	42	36	43	69	42	42	28	41	45	47	69		
Գավառ	18	20	34	47	72	73	63	46	38	37	28	18	494	118	376
	33	38	52	40	54	56	69	60	74	49	42	44	74		
Մարտունի	27	31	47	59	74	69	46	31	32	43	38	25	522	168	354
	51	34	40	46	41	69	65	43	59	49	84	41	84		
Ճամբարակ	22	27	41	57	97	94	65	46	43	52	41	23	608	154	454
	17	24	29	48	63	46	61	46	51	45	76	28	76		

Տարեկան ամենաշատ մթնոլորտային տեղումները գրանցվել են Վարդենիս քաղաքում (639 մմ), իսկ ամենաքիչը՝ Շորժայում (426 մմ): Օրական առավելագույնը դիտվել է Մարտունի քաղաքում՝ նոյեմբեր ամսին (84 մմ):

**Աղյուսակ 9. Ջյան ծածկույթը**

Բնակավայրի անվանումը	Ջյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ջյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Սևան լճային	71	121	-	-
Սևան քաղաք	93	136	252	114
Շորժա	41	77	68	41
Գավառ	37	96	99	108
Մարտունի	75	103	151	114
Ճամբարակ	72	109	99	88

Տարվա ամենաշատ ձնածածկույթով օրերի քանակը դիտվում է Սևան քաղաքում (136 օր), իսկ ամենաքիչ օրերը՝ Շորժայում (77 օր): Ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը նույնպես դիտվել է Սևան քաղաքում, կազմելով 93 սմ: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը ձևավորվում է դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Աղյուսակ 10. Քամու ցուցանիշները**

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնեկիությունը, %								Միջին արագությունը, մ/վ	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների	
		Միջին արագությունը, մ/վ														Միջին արագությունը, %
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան							
Սևան քաղաք	Հուն.	3	2	2	2	1	7	58	25	13	4.2	Արլ	3.2	Արմ	5.4	
		4.1	4.0	3.3	2.7	2.9	5.3	5.4	3.7							
	Ապր.	5	9	23	8	4	16	28	7	20	3.3					
		3.9	3.7	3.2	2.5	3.8	6.3	5.5	3.4							
	Հուլ.	18	35	31	6	3	2	3	2	17	3.1					
		4.7	4.1	3.2	2.7	2.1	2.5	3.1	2.8							
	Հոկտ.	7	5	7	3	4	15	45	14	33	2.7					
		4.0	3.8	2.7	2.2	2.3	5.3	4.3	2.7							
Գավառ	Հուն.	15	6	13	9	14	15	20	8	52	2.1	Արլ	1.1	Արմ	2.0	
		1.2	1.1	1.1	2.6	1.9	2.2	2.0	1.8							
	Ապր.	18	8	20	9	10	11	18	6	63	2.2					
		1.5	1.5	1.3	2.2	2.9	2.5	2.3	1.5							
	Հուլ.	35	15	20	7	5	4	6	8	56	1.6					
		1.4	1.2	1.1	1.3	1.5	1.0	1.0	1.2							
	Հոկտ.	21	9	14	6	8	10	23	9	54	1.7					
		1.2	1.1	1.0	1.3	1.4	1.5	1.6	1.4							
Մարտունի	Հուն.	5	1	1	2	49	37	3	2	85	3.7	Հվ	1.7	Հվ. Արմ	4.0	
		1.7	1.7	1.6	2.2	3.6	4.0	2.4	2.2							
	Ապր.	11	5	3	2	40	30	5	4	78	2.9					
		1.9	2.0	1.7	2.2	3.4	3.8	2.4	2.0							
	Հուլ.	30	12	4	1	20	17	5	11	71	1.6					
		2.0	2.1	1.8	1.5	1.7	1.9	1.8	2.0							
	Հոկտ.	9	5	2	2	40	35	4	3	83	2.5					
		1.8	1.7	1.6	1.7	2.6	3.1	2.3	1.9							
Ճամբարակ	Հուն.	3	4	5	5	7	40	29	7	74	4.2	Հս. Արլ	-	Հվ. Արմ	-	
		-	-	-	-	-	-	-	-							
	Ապր.	5	13	12	6	9	32	17	6	70	3.0					
		-	-	-	-	-	-	-	-							
	Հուլ.	4	40	35	9	4	3	2	3	61	1.6					
		-	-	-	-	-	-	-	-							
	Հոկտ.	5	17	16	9	6	23	16	8	63	2.2					
		-	-	-	-	-	-	-	-							



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կլիմայի փոփոխության 4-րդ ազգային հաղորդագրությունում (2020թ.) բերված է Սևանա լճի ջրային հաշվեկշիռի փոփոխությունների կանխատեսումը մինչև 2100 թվական (**Աղյուսակ 11**), ինչպես նաև ջերմաստիճանի և տեղումների քանակի փոփոխությունը տարբեր բարձունքային գոտիներում՝ ըստ տարվա եղանակների (**Աղյուսակ 12**):

**Աղյուսակ 11. Սևանա լճի ջրային հաշվեկշիռի փոփոխությունների կանխատեսումը**

Տարի	Տեղումներ		Գոլորշիացում		Մակերեսային հոսք	
	մլն.մ <sup>3</sup>	շեղում	մլն.մ <sup>3</sup>	շեղում	մլն.մ <sup>3</sup>	շեղում
1961-1990	457	-	1076	-	758	-2030
2030	449	-1.7%	1158	+7.6%	665	-12.2%
2070	445	-2.6%	1192	+9.7%	559	-26.3%
2100	436	-4.6%	1268	+17.8%	449	-40.7%

**Աղյուսակ 12. Ջերմաստիճանի (T) և տեղումների քանակի (P) փոփոխությունը ծ.մ. 2000-2500 մ բարձրության վրա՝ ըստ տարվա եղանակների**

Տարվա ժամանակը	1961-1990		2011-2040		2041-2070		2071-2100	
	T, °C	P, մմ	T, °C	P, մմ	T, °C	P, մմ	T, °C	P, մմ
Ձմեռ	-7.7	127	-6.2	123	-4.9	106	-3.4	105
Գարուն	2.2	235	3.8	221	4.6	203	6.1	219
Ամառ	13.5	165	15.5	145	16.9	144	19.5	146
Աշուն	5.0	133	6.8	151	8.2	152	9.6	134

Սևանա լճի ավազանում սպասվում է ջերմաստիճանի բարձրացում և տեղումների քանակի նվազեցում, որն էլ անբարենապաստ ազդեցություն է թողնելու լճի ջրային հաշվեկշիռի վրա: Բոլոր այս կանխատեսումները համաձայն Սևանա լճի մասին օրենքի (ՀՕ-190, 15.05.2001) պետք է հաշվի առնել Սևանա լճի ջրօգտագործման, ինչպես նաև օգտագործման միջոցառումների պլանավորման համար:

**4.4.2 Ջրագրությունը**

«Սևան» ազգային պարկի սահմաններում է գտնվում Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճը՝ Սևանը, որի ծավալը 38.1640 կմ<sup>3</sup> է (2022թ. միջին տարեկան), մակերեսը՝ 1278.415 կմ<sup>2</sup> (2022թ. միջին տարեկան), լճի 1900 մ մակարդակի դեպքում<sup>46</sup>: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ<sup>3</sup>), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ<sup>3</sup>): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ափի շրջագիծը մոտ 230 կմ:

Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ<sup>2</sup> (լճի ողջ ջրհավաք ավազանի մակերեսի 76.2 %), իսկ միջավազանային տարածությունը՝ 696.0 կմ<sup>2</sup> (լճի ողջ ջրհավաք ավազանի մակերեսի 23.8%-ը):

Լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը, որի բնական հոսքը մինչև լճի մակարդակի իջեցումը եղել է 110 մլն մ<sup>3</sup>: Այսօր այս գետը վերածվել է ջրանցքների և ջրատարների մի համակարգի, որով հոսում է Սևանա լճից ոռոգման և էներգետիկայի նպատակներով վերցված ջուրը:

<sup>46</sup>Աղբյուրը՝ <https://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/annual-2022-1.pdf>

Կլիմայի փոփոխության ազգային 3-րդ հաղորդագրությունում (2015թ.) բերված է մինչև 2100 թվական Սևանա լճի ավազանի գետերի հոսքի նվազման կանխատեսումը (**Աղյուսակ 13**):

**Աղյուսակ 13. Ըստ A2 սցենարի Սևանա լիճ ներհոսքերի կանխատեսումը (մլն. մ<sup>3</sup>)**

1961-1990	2030	2070	2100
787.00	734.00	673.00	595.00

Ինչպես տեսնում ենք, կանխատեսվում է Սևանա լիճ թափվող բնական ջրերի զգալի նվազեցում, ինչը, բնականաբար, պետք է հաշվի առնել «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի և Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման պլանների նախապատրաստման ժամանակ:

**4.4.3 Հողային տիպերը և լանդշաֆտները**

«Սևան» ազգային պարկի ավազանում հատվածի ռելիեֆը (լճի արևելյան մասում 1916 մ) ավազանային է և հարթ: Ափերը հիմնականում մեղմաթեք են, տեղ-տեղ զառիթափ՝ 3-8 մ բարձրությամբ (օրինակ՝ Վարդենիկ-Արծվանիստ, Արտանիշ թերակղզու արևմտյան հատվածների ավերը): Պարկի Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի Գիհի-կաղնուտային ռելիեֆային հատվածը, ինչպես նաև Սևան և Արտանիշ թերակղզիները ունեն բլրապատ, ժայռոտ և կտրտված ռելիեֆ: Սևանա թերակղզու արևելյան մասը մի ժայռապատ բարձունք է, որի ամենաբարձր կետը հասնում է 1982.3 մ բարձրության:

Արտանիշ թերակղզու կենտրոնական և արևելյան մասը, 1915-2460.8 մ բարձրությունների միջև, պատված են լեռնազանգվածով (բացառությամբ նրա արևմտյան մասի, որը հարթ է): Առավելագույն բարձրությունը Աղաթափա գագաթն է՝ 2460.8 մ բարձրությամբ, որը գտնվում է թերակղզու կենտրոնական մասում: Արտանիշի թերակղզու կենտրոնական մասից լեռնաբազուկները ձգվում են ճառագայթաձև: Այստեղ մշտական հոսող գետեր չկան՝ ատոկա են միայն ժամանակավոր հոսող փոքրիկ գետակներ են:

«Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիեֆային հատվածը հիմնականում ընկած է 1950-ից 2500 մ բարձրությունների միջև: Ռելիեֆը իրենից ներկայացնում է ուժեղ կտրտված լեռնային լանդշաֆտ, թեք ժայռոտ լանջերով, տարբեր խորության և լայնության ձորերով ու ձորակներով: Խոր ձորերով հոսում են մշտական գետերը՝ Դարանակ, Փամբակ, Ծամպիր, Ծափաթաղ և Զիլ:

«Սևան» ազգային պարկի տարածքն ընդգրկում է Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի և այլ գետերի գետաբերանային հատվածները, որտեղ լճի մակարդակի իջեցման և գետերի էրոզիայի բազիսի իջեցման հետևանքով առաջացել են 10-6 մ խորությամբ ձորակներ:

«Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, թերի զարգացած ավազակոպճային և սապրոբելիտային տափաստանացված: Չգալի տարածք են զբաղեցնում թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը: «Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիեֆային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում հանդես են գալիս լեռնատափաստանային չոր, իսկ 2400 մ և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

Լճի հատակից ազատված շուրջ 25 հազ. հա տարածքը գյուղատնտեսական տեսակետից համարվում է ոչ լիարժեք հողատարածք: Այդ տարածքներում վերջին 50-60 տարիների ընթացքում կատարվել են անտառապատման լայնածավալ միջոցառումներ՝ հիմնվել է շուրջ 13 հազ. հա անտառ: Այս միջոցառման շնորհիվ ոչ միայն ամրակայվել են ավազանի շարժուն գրունտները, այլև նվազեցվել է ավազանի

լանդշաֆտների էրոզիոն տարբեր նյութերի ազատ մուտքը Սևանա լիճ, այսինքն՝ կանխվել է լճի աղտոտումն այդ նյութերով:

Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացումը հանգեցնում է մեծ տարածքների ջրածածկման, ինչի արդյունքում էլ ավելանում է ջրի աղտոտվածությունը օրգանական նյութերով և նիտրատներով:

Սևանա լիճ թափվող գետերի մեծ մասը աղտոտված են նաև կոյուղաջրերով, որոնցում էապես բարձր է թուլյատրեկից ֆոսֆորի տոկոսը: Գյուղատնտեսական գործունեության արդյունքում գետերը աղտոտված են նաև ազոտով:

**4.5 Մթնոլորտային օդը**

Քանի որ, Գեղարքունիքի մարզի բնակավայրերում «Հ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մթնոլորտային օդի մշտադիտարկում չի իրականացվում, որպես Սևան, Մարտունի, Գավառ, Վարդենիս և Ճամբարակ բնակավայրերում մթնոլորտային օդի աղտոտվածության ցուցանիշներ ընդունվել են «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկությունները<sup>47</sup> (**Աղյուսակ 14**):

**Աղյուսակ 14. Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները**

Բնակավայրը (բնակչության քանակը)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ <sup>3</sup> )			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO <sub>2</sub> )	Ազոտի երկօքսիդ (NO <sub>2</sub> )	Ածխածնի օքսիդ (CO)
Սևան, Մարտունի, Գավառ, Վարդենիս (բնակչությունը 10,000-50,000 մարդ)	0.095	0.006	0.033	1.1
Ճամբարակ (բնակչությունը <10,000 մարդ)	0.071	0.006	0.023	0.8

**4.6 Կենսաբանական միջավայրը**

**4.6.1 Էկոհամակարգերը, բնակմիջավայրերը և կենսաբազմազանությունը**

Սևանա լճի ավազանի բնակմիջավայրերի/էկոհամակարգերի նկարագրությունը ըստ բնակմիջավայրերի EUNIS դասակարգման (Файвущ, Алексанян, 2016, <https://www.eea.europa.eu/data-and-maps/data/eunis-habitat-classification-1>), բերված է **Հավելված 2**-ում, իսկ աշխարհագրական տեղաբաշխման վերաբերյալ քարտեզագրական տեղեկատվությունը՝ **Հավելված 7**-ում:

**С. Ներցամաքային մակերեսային ջրեր**

C1 - Մակերևութային կանգնած ջրեր

- C1.2 - Մշտական մեզոտրոֆ լճեր, լճակներ և ավազաններ
- C1.21 - Մեզոտրոֆ ջրային մարմինների բենթոսային համակեցություններ
- C1.22 - Մեզոտրոֆ ջրային մարմինների ազատ լողացող բուսականություն
- C1.23 - Մեզոտրոֆ ջրային մարմինների արմատավորված սուզվող բուսականություն

C2 - Մակերևութային հոսող ջրեր

- C2.1 - Աղբյուրներ, աղբյուրների առվակներ և գեյզերներ

<sup>47</sup><https://meteomonitoring.am/page/1591>

- C2.2 - Մշտական ոչ մակընթացային, արագ, փոթորկալից ջրահոսքեր
- C2.3 - Մշտական ոչ մակընթացային, հարթ հոսող ջրահոսքեր
- C2.5 - Ժամանակավոր հոսող ջրեր

C3 - Ներքին մակերևութային ջրային մարմինների ափամերձ գոտի

#### **D - ճահիճներ և գերխոնավ բնակմիջավայրեր**

D2 - Հովտային, աղքատ և անցումային ճահիճներ

- D2.2 - Աղքատ և փափուկ ջրով ճահիճներ
- D2.3 - Անցումային և ցնցող ճահիճներ

#### **E. Խոտային բնակմիջավայրեր (բուսական ծածկույթում գերակշռում են խոտաբույսերը, մամուռները և քարաքոսերը)**

E1 - Չոր խոտային բնակմիջավայրեր

- E1.2 - բազմազյա կրային խոտային բնակմիջավայրեր և հիմնական տափաստաններ
- E1.22 - Չորային ենթամայրցամաքային տափաստանային բնակմիջավայրեր
- E1.2E - Իրանա-Անատոլիական տափաստաններ
- E1.C - Ուտելու համար ոչ պիտանի, ոչ զարնանային խոտային բուսականությամբ ծածկված չոր միջերկրածովյան տարածքներ

E2 - խոնավ խոտային բնակմիջավայրեր

- E2.1 - Մշտական մեզոտրոֆ արոտավայրեր և արածեցված մարգագետիններ
- E2.3 - Լեռնային խոտհարքներ
- E2.8 - միամյա խոտաբույսերի տրորվազ մեզոֆիլ խոտային բնակմիջավայրեր

E4 - Ալպյան և մերձալպյան խոտային բնակմիջավայրեր

- E4.1 - Բուսականությամբ ձնապատ հատված
- E4.3 - Ալպյան և մերձալպյան թթվային խոտային բնակմիջավայրեր

#### **F. Թփային բուսականություն և տունդրա**

F2 - Արկտիկական, ալպյան և ենթալպյան թփուտներ

- F2.2 - Մշտադալար ալպյան և ենթալպյան բացատներ և թփուտներ
- F2.23 - Հարավային Պալեարկտիկական լեռնային ցածրանոց գիհու մացառուտներ
- F2.3 - Մերձալպյան լայնատերև թփուտներ

F3 - Բարեխառն և միջերկրածովյան-լեռնային թփուտներ

- F3.1 - Բարեխառն գոտու թփուտներ և մացառուտներ

F7 - Փշոտ միջերկրածովյան մացառուտներ (ֆրիգանա, Erinacea ցեղի տեսակների մացառուտներ, հարակից ափամերձ ժայռերի բուսականություն)

- F7.4 - Բարձրիկանման մացառուտներ

F9 - Գետային և ջրաճահճային թփուտներ

- F9.1 - Գետային թփուտներ

#### **G. Անտառներ և անտառապատված տարածքներ**

G1 - Լայնատերև տերևաթափ անտառ

- G1.1 - Լաստենու, կեչու, բարդու կամ ուռենու գերակշռությամբ ափամերձ անտառներ

- G1.A - Մեզո և էուտրոֆ կաղնու, բոխու, թխկու, սոսու, լորենու, թեղու և հարակից այլ տեսակների անտառներ
- G1.A1 - Կաղնե-հացե-բոխային անտառներ էուտրոֆ և մեզոտրոֆ հողերում
- G1.A1D - Հայկական կաղնու անտառներ

G3 - Ասեղնատերև անտառներ

- G3.9 - Cupressaceae և Taxaceae ընտանիքների ներկայացուցիչների գերակշռությամբ ասեղնատերև անտառներ
- G3.F - Խիստ արհեստական փշատերև տնկարկներ

**H. Բուսականությամբ չձաձկված կամ հազվադեպ բուսականությամբ ձաձկված ներմայրցամաքային բնակմիջավայրեր**

H2 - Զարացրոններ

H3 - Ներցամաքային ժայռեր և ժայռային մերկացումներ

**I. Պարբերաբար կամ վերջին ժամանակներս որպես գյուղատնտեսական հողեր օգտագործվող հողեր, ինչպես նաև տնամերձ տարածքներ**

I1 - Վարելահողեր և բանջարանոցներ

- I1.1 - Ինտենսիվ չխառնված մշակաբույսերի/մոնոկուլտուրաների վարելահողեր
- I1.3 - չխառնված մշակաբույսերի/մոնոկուլտուրաների վարելահողեր, որոնց համար կիրառվում է ցածր ինտենսիվության ագրոտեխնիկական մեթոդներ
- I1.5 - մերկ վարելահողեր, հողակույտեր կամ նոր լքված վարելահողեր

I2 - Այգիների և պուրակների մշակովի տարածքներ

- I2.1 - Մեծամասշտաբ դեկորատիվ այգիների տարածքներ
- I2.2 - Փոքրամասշտաբ դեկորատիվ և տնամերձ այգիների տարածքներ

**J. Բնակավայրեր, շինություններ, արտադրական կառույցներ, տրասնպորտային ցանց, թափոնների լցակույտեր**

J1 - Զաղաքների, ավանների և գյուղերի շինություններ

J2 - Ցածր խտության շենքեր

J3 - Արդյունահանող արդյունաբերական տեղամասեր

J4 - Տրանսպորտային ցանցեր և կոշտ մակերեսով այլ կառուցված տարածքներ

J5 - Խիստ արհեստական տեխնածին ջրեր և հարակից կառույցներ

J6 - Թափոնների կուտակումներ:

Սևանա լճի ավազանում հանդիպում են Հայաստանի համար հազվագյուտ մի շարք էկոհամակարգեր: Մասնավորապես այստեղ հանդիպում են.

**C1.2322 - *Groenlandia densa* տեսակի գերակշռությամբ համակեցություններ**

Այս էկոհամակարգը հանդիպում է միայն Սևանա լճի ծանծաղ և Արգիճի գետի հանգիստ հոսքով հատվածներում: Այս էկոհամակարգում *Groenlandia densa* տեսակին ուղեկցող տեսակներ են սովորական ջրային այնպիսի բույսեր, ինչպիսին են՝ *Bolboschoenus maritimus*, *Carex acutiformis*, *Cyperus fuscus*, *Eleocharis palustris*, *Myriophyllum spicatum*, *Utricularia vulgaris*, *Potamogeton pectinatus*, *P. natans*, *Lemna trisulca*, *Ranunculus divaricatus*, *Sparganium emersum* և այլն: Ներկայումս էկոհամակարգը Սևանա լճի ավազանում տարածքներից գրեթե վերացել է, որը պայմանավորված է ջրի մակարդակի տատանմամբ և արհեստական փոփոխմամբ: Արգիճի գետի հանգիստ հոսքով հատվածներում էկոհամակարգի համար սպառնալիք կարող է հանդիսանալ փոքր ՀԷԿ-ի կառուցման հետևանքով ջրային ռեժիմի փոփոխությունը:

**C3.291 - Carex acuta տեսակի գերակշռությամբ ջրամբարները շրջապատող համակեցություններ**

Հայաստանում այս էկոհամակարգը բավականին լայն տարածում ունի (Վերին Ախուրյանի, Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, Արեգունու, Դարեղեգիսի, Հյուսիսային Չանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում), սակայն ամենուր զբաղեցնում է շատ փոքր տարածքներ՝ մինչև 1 հա մակերեսով: Հիմնական սպառնալիքներն են կլիմայի փոփոխության հետևանքով բնակմիջավայրի ջրային ռեժիմի փոփոխությունները, երաշտները և անասունների ջրատեղերը:

**D4.1R - Lagotis stolonifera տեսակի գերակշռությամբ գերխոնավ տարածքներ**

Այս էկոհամակարգերը զբաղեցնում են ոչ մեծ տարածքներ միջին և վերին լեռնային գոտու գերխոնավ վայրերում՝ սովորաբար գետերին և աղբյուրներին մոտ, ձնից նոր ազատված տարածքներում: Հիմնական սպառնալիքն է կլիմայի փոփոխության հետևանքով բնակմիջավայրի ջրային ռեժիմի փոփոխությունները:

**D5.2191 - Carex vulpina տեսակի գերակշռությամբ ճմաթմբային համակեցություններ**

Հայաստանում շատ հազվագյուտ էկոհամակարգ է: Էկոհամակարգում բավականին շատ հանդիպում է *Thalictrum flavum* հազվագյուտ տեսակը: Հիմնական սպառնալիքն է կլիմայի փոփոխության հետևանքով բնակմիջավայրի ջրային ռեժիմի փոփոխությունները:

**F2.2A4 - Մերձալպյան և ալպյան գոտու Vaccinium myrtillus տեսակի գերակշռությամբ մարգագետինները Հայաստանում**

Հայաստանում բավականին հազվագյուտ էկոհամակարգ է, որի հատվածները հանդիպում են հանրապետության հյուսիսային շրջաններում, ինչպես նաև Սևանա լիճը շրջապատող լեռնաշղթաների ոչ շատ թեք լանջերին՝ զբաղեցնելով բավականին մեծ տարածքներ: *Vaccinium myrtillus* տեսակին սովորաբար ուղեկցում է *Daphne glomerata* տեսակը: Գեղամա լեռնաշղթայում երբեմն ուղեկցում է *Empetrum hermaphroditum* տեսակը: Սովորաբար համակեցություններում հանդիպում են հետևյալ մարգագետնային տեսակները՝ *Festuca pratensis*, *F. woronowii*, *Betonica macrantha*, *Bromopsis variegata*, *Inula glandulosa*, *Tanacetum coccineum*, *Scabiosa caucasica*: Հիմնական սպառնալիքներն են կլիմայի փոփոխությունը և ինտենսիվ արածեցումը:

**F7.4I25 - Acantholimon ցեղի խոշոր ներկայացուցիչների գերակշռությամբ համակեցություններ**

Այս հազվագյուտ էկոհամակարգերը հանդիպում են միջին և վերին լեռնային գոտիներում: Էկոհամակարգը ներկայացված է հատվածավորված՝ առանձին հատվածները զբաղեցնում են 1-2 հա տարածք: Համակեցությունում գերակշռում են *Acantholimon bracteatum* կամ *A. takhtadjanii* տեսակները: Համակեցության կազմում հանդիպում են հետևյալ տեսակները՝ *Trifolium pratense*, *Lotus corniculatus*, *Primula macrocalyx*, *Rubus idaeus*, *Prangos ferulacea*, *Allium rotundum*, *Galium aparine*, *Hordeum violaceum*, *Lathyrus pratense*: Հիմնական սպառնալիքներն են հողերի յուրացումը գյուղատնտեսական և ավտոճանապարհների ընդլայնման նպատակներով:

**4.6.2 Ֆլորա**

Համաձայն Սևանա լճի ավազանի ֆլորայի վերաբերյալ թարմացված և ճշգրտված տվյալների այստեղ հանդիպում է անոթավոր բույսերի 1716 տեսակ, սակայն ազգային պարկի տարածքում հանդիպող անոթավոր բույսերի թիվը 1056-ն է: 2005 թվականից հետո ազգային պարկի տարածքում հայտնաբերվել են մի շարք նոր բուսատեսակներ և անգամ նոր ընտանիք (Ruppiaceae): Բուսական և կենդանական աշխարհի ամբողջական տեսակների ցանկը տրված է **Հավելված 2**-ում, իսկ ՀՀ Կարմիր գրքում գրանցված ողնաշարավոր և անողնաշար կենդանիների ապրելավայրերի ու բազմազանության, ինչպես նաև բույսերի և սնկերի աճելավայրերի ու բազմազանության վերաբերյալ համապատասխան քարտեզագրական տեղեկատվությունը՝ **Հավելված 8**-ում:

«Սևան» ազգային պարկի տարածքում հանդիպում են ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված 16 բուսատեսակ՝

- Կուժկոտրուկ վոլգայի (*Adonis wolgensis*) - CR<sup>48</sup>
- Վառվրուկ հայաստանյան (*Alyssum hajastanum*) - EN
- Գազ Սուևկաչովի (*Astragalus sukaczewii*) - VU
- Գազ չորասեր (*Astragalus xerophylus*) - VU
- Ճակնդեղ խոշորարմատ (*Beta macrorhiza*) - VU
- Եգնակող Սոսնովսկու (*Bupleurum sosnowskyi*) - VU
- Խոզանավուշ Ֆյոդորովի (*Cousinia fedorovii*) - EN
- Վիշապագլուխ ավստրիական (*Dracocephalum austriacum*) - EN
- Միբեխ սիբեխանման (*Falcaria falcarioides*) - CR
- Գրենլանդիա խիտ (*Groenlandia densa*) - EN
- Կղմուխ անցողուն (*Inula acaulis*) - EN
- Հիրիկ նրբագեղ (*Iris elegantissima*) - EN
- Լոջուն սևանի (*Isatis sevangensis*) - CR
- Ջրաերեքնուկ եռատերև (*Menyanthes trifoliata*) - VU
- Անողնուցուկ Գրոսհեյմի (*Puccinellia grossheimiana*) - EN
- Արոսենի հայաստանյան (*Sorbus hajastana*) – VU:

Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Ծուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի, որոնց զգալի մասը հանդիպում է ազգային պարկի տարածքում:

«Սևան» ազգային պարկի և դրա բուֆերային գոտու տարածքից հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ), որոնցից 180-ը պատկանում են ազարիկալ սնկերին, 55-ը՝ աֆիլոֆորայիններին, իսկ 32-ը՝ գաստերոմիցետներին: Նշված մակրոմիցետներից 6-ը ընդգրկված են ՀՀ Բույսերի Կարմիր գրքում

- Շամպինյոն աղյուսակաձև (*Agaricus tabularis*) - EN
- Հելվելա սև (*Helvella atra*) - VU
- Ոգնասունկ բուստանման (*Hericium coralloides*) - VU
- Մուտինուս շնային (*Mutinus caninus*) - EN
- Միրիոստոմա ծակոտկեն (*Myriostoma coliforme*) - CR
- Սարկոսոմա գնդաձև (*Sarcosoma globosum*) - CR:

#### 4.6.2.1 Մսկեր

Մակրոսկոպիկ սնկերի բազմազանության հատուկ ուսումնասիրությունների և գրական ու հեռաբարիումային տվյալների մշակման արդյունքում «Սևան» ԱՊ տարածքից հայտնաբերվել է սնկերի 218 տեսակ, որոնցից 10-ը պատկանում են պայուսակավոր սնկերին (բաժին Ascomycota): Մնացած 208 տեսակներն ընդգրկված են բազիդիակավոր սնկերի բաժնում (բաժին Basidiomycota, ենթաբաժին Agaricomycotina), որոնցից 144-ը պատկանում է ազարիկայիններին (Agaricomycetes), 43-ը՝ աֆիլոֆորայիններին (Aphyllphorales s.l.) և 21-ը՝ գաստերոմիցետներին (Gasteromycetes):

Հետազոտված տարածքում ամենամեծ տարածվածությունն ունեն *Tricholomataceae* ընտանիքին պատկանող սնկատեսակները՝ թվով 46 տեսակ, որոնք ընդգրկված են 15 ցեղերի մեջ:

<sup>48</sup>EN - վտանգված տեսակ, VU - խոցելի տեսակ, CR - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ

Տարածվածությամբ երկրորդ ընտանիքը՝ *Cortinariaceae*-ն է, որը ներկայացված է 15 տեսակով, ընդգրկված 4 ցեղերի մեջ:

Արգելոցում աֆիոֆորային սնկերից ամենամեծ տեսակային կազմով ներկայացված է *Poriaceae* ընտանիքը, որն ընդգրկում է 20 սնկատեսակ, 15 ցեղից: Գրեթե բոլոր աֆիոֆորային սնկերի ցեղերը ներկայացված են 1-3 տեսակներով, բացառություն են կազմում բնափայտ քայքայող սնկերի *Polyporus* ցեղի 7 տեսակները և *Trametes* ցեղի 5 տեսակները:

Գաստերոմիցետների դասին պատկանող ամենամեծ տարածվածությունն ունեն *Lycoperdaceae* ընտանիքին պատկանող սնկատեսակները՝ թվով 12 տեսակ, որոնք ընդգրկված են 3 ցեղերի մեջ: Այստեղ կարելի է առանձնացնել *Bovista* ցեղը, որը ներկայացված է 4 տեսակներով, մյուս ցեղերը պարունակում են 1-2 տեսակ:

Ուսումնասիրվող տարածքից հայտնաբերված սնկերի մեջ կան շուրջ 100 ուսույթի տեսակներ, որոնցից առավելապես տարածված են և վաճառվում են շուկաներում հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկլիկ (*Lactarius deliciosus*), կոճղասունկ մարգագետնային (*Marasmius oreades*), շամպինիոն սովորական (*Agaricus campestris*), շամպինիոն դաշտային (*Agaricus arvensis*), գոմաղբասունկ սպիտակ/փրչոտ (*Coprinus comatus*), շարքասնկերից (*Tricholomataceae*)՝ լեպիստա աշնանային (*Lepista nebularis*), շարքասունկ հողամոխրագույն (*Tricholoma terreum*):

Նշված մակրոմիցետներից 6-ն ընդգրկված են ՀՀ բույսերի Կարմիր գրքի Սնկերի բաժնում: Ընդ որում, *Agaricus tabularis*-ը պատկանում է վտանգված (EN), *Agaricus xanthodermus*-ը՝ *անհետացնան եզրին գտնվող* (NT), *Helvella atra*-ն և *Hericium coralloides*-ը՝ *խցելի* (VU), *Myriostoma coliforme*-ն և *Sarcosoma globosum*-ը՝ կրիտիկական վիճակում գտնվող (CR) կատեգորիաներին:

Ցավոք, այս տարվա արշավների ընթացքում չհաջողվեց հայտնաբերել որոշ կարմիրգրքային սնկատեսակներ (բացառությամբ *Agaricus xanthodermus* տեսակի) և անհրաժեշտ է կատարել հետագա ուսումնասիրություններ և մոնիթորինգ, ինչը հնարավորություն կտա գնահատելու կարմիրգրքային տեսակների պոպուլյացիաների վիճակը:

#### 4.6.2.2 Քարաքոսեր

Քարաքոսերը սնկերի և ջրիմուռների և/կամ ցիանոբակտերիաների բարդ համակեցություն են, որոնք համաձայն վերջին հետազոտությունների նաև կարևոր դեր ունեն բակտերիաների, վիրուսների ու խմորասնկերի առկայությունը: Ներկայումս Հայաստանից հայտնի են 619 տեսակի քարաքոս, որոնցից 219 տեսակը էպիֆիտային:

«Սևան» ազգային պարկի և Սևանա լճի ջրահավաք ավազանի տարածքի քարաքոսերի առաջին նպատակային հետազոտություններ են իրականացվել 1980-90 թվականներին Ա. Արրահամյանի (1984, 1996) կողմից, որից բացի՝ քարաքոսերի բազմազանության ուսումնասիրություններ իրականացվել են նաև մի շարք այլ հետազոտողների կողմից:

Առկա գրականության վերլուծության և դաշտային հետազոտությունների արդյունքում «Սևան» ազգային պարկի և պահպանման գոտում՝ Սևանա լճի ջրահավաք ավազանում հայտնաբերվել է 227 տեսակ քարաքոս, որոնց ճնշող մեծամասնությունն էպիֆիտային են: Տարածքում անտառային էկոհամակարգերի սակավության պատճառով էպիֆիտային քարաքոսերի բազմազանությունը մեծ չէ: Ազգային պարկի և պահպանման գոտում էնդեմիկ տեսակներ չեն հայտնաբերվել:

Ազգային պարկում տարածված ամենախոշոր ցեղն է *Lecanora* (15 տեսակ), որին հետևում են *Caloplaca* (14 տեսակ), *Cladonia* (11 տեսակ) և *Peltigera* (11 տեսակ) ցեղերը: Առանձնակի հետաքրքրություն ունի *Lecania ephedrae* Elenkin տեսակը, որը ՀՀ տարածքից հայտնի է միայն



Արտանիշի թերակղզուց: Անհրաժեշտ է իրականացնել հավելյալ հետազոտություններ տեսակի տարածվածությունը ուսումնասիրելու նպատակով:

Քարաքոսերին սպառնացող հիմնական վտանգներն են ապօրինի ծառահատումները, ենթակառուցվածքների զարգացման և կլիմայի փոփոխության արդյունքում կենսամիջավայրերի դեգրադացիան և կորուստը:

### 4.6.3 Ֆաունա

#### 4.6.3.1 Անողնաշարներ

##### Փափկամարմիններ

«Սևան» ազգային պարկի տարածքներում հաշվարկվում են փափկամարմինների (Mollusca) 20 ընտանիքի պատկանող 37 տեսակներ, որոնցից 6-ը գրանցված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում՝

- Տրոշելի խխունջ (*Bithynia troscheli* Paasch, 1842) - CR
- Լճային խխունջ (*Acroloxus lacustris* Linnaeus, 1758) - CR
- Կատարավոր խխունջ (*Planorbis carinatus* O.F. Muller, 1774) - CR
- Սայիտակ խխունջ (*Gyraulus albus* O.F. Muller, 1774) - EN
- Հարթ խխունջ (*Gyraulus laevis* Alder, 1838) - EN
- Բուլղարական խխունջ (*Orculella bulgarica* P.Hesse, 1915) - CR:

##### Միջատներ

«Սևան» ազգային պարկի տարածքում գրանցված են *Coleoptera* կարգի 238 տեսակ և *Lepidoptera* կարգի 21 տեսակ: «Սևան» ազգային պարկի տարածքում հանդիպող 4 կարգի պատկանող 21 տեսակ գրանցված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում՝

##### **Ուղղաթևեր (Orthoptera)**

- Մորեխի հայկական (*Gomphocerus armeniacus* Uvarov, 1931) - VU
- Հաստաձորիկ լայնացած (*Bradyporus dilatatus* Stål, 1875) - EN
- Մոդցապոչ անդրկովկասյան (*Poecilimon geoktshaicus* Stshelkovnikov, 1910) - EN
- Սագա տափաստանային (*Saga pedo* Pallas, 1771) - CR:

##### **Կարծրաթևեր (Coleoptera)**

- Սևանյան գնայուկ (*Dyschirius sevanensis* Khnzorian, 1962) - EN
- Թամբակուրծք թարախահան (*Mylabris sedilithorax* Sumakov, 1924) - EN
- Կիսափայլ երկարաբեղիկ (*Dorcadion semilucens* Kraatz, 1873) - EN
- Մոխրագույն երկարաբեղիկ (*Dorcadion cineriferum* Suvorov, 1909) - EN:

##### **Թևիուկաթևեր (Lepidoptera)**

- Ապոլոն (*Parnassius apollo kashtshenkoi* Sheljuzhko, 1908) - VU
- Ավրորինա դեղնաթիթեռ (*Colias aurorina* Herrich-Schaffer, 1850) - VU
- Բրենթիս Ինո (*Brenthis ino schmitzi* Wagener, 1983) - VU
- Արիոն կապտաթիթեռ (*Maculinea arion zara* Jachontov, 1935) - VU
- Մթնշաղային կապտաթիթեռ (*Maculinea nausithous* Bergstrasser, 1779) - VU
- Նինայի կապտաթիթեռ (*Agrodiaetus niniae* Forster, 1956) - EN
- Թուրքական կապտաթիթեռ (*Agrodiaetus turcicus* Koçak, 1977) - EN:

##### **Թաղանթաթևեր (Hymenoptera)**

- Մոխրագույն մեղու (*Anthophora cinerea* Frieze, 1919) - VU
- Ամրակազմ մեղու (*Anthophora robusta* Klug, 1845) - VU
- Երկարալեզու մեղու (*Tetralonia macroglossa* Illiger, 1806) - EN

Իշամեղու մարգագետնային (*Bombus pratorum* Linnaeus, 1761) - VU  
Իշամեղու ձնափայլ (*Bombus niveatus* Kriechbaumer, 1870) - VU  
Պորչինսկու իշամեղու (*Bombus portshinskii* Radoszkowsky, 1884) - VU  
Իշամեղու դաղեստանյան (*Bombus daghestanicus* Radoszkowsky, 1888) - VU:

#### Խեցգետիններ

Երկարաչանջ խեցգետինը (*Pontastacus leptodactylus*) Սևանա լճում հայտնաբերվել է 80-ական թվականների վերջին՝ պատահական ներմուծման շնորհիվ: Լին լցվող գետերում խեցգետին չի հանդիպում, սակայն հանդիպում է Սևանից սկիզբ առնող Հրազդան գետավազանում՝ համեմատաբար մեծ կուտակումներ առաջացնելով Հրազդան ջրատարում, Աղբյուրակի ջրամբարում և Երևանյան լճում: Երկարաչանջ խեցգետինը, ի տարբերություն այլ տեսակների, չի ձմեռում:

#### **4.6.3.2 Ողնաշարավորներ**

##### Ձկներ

Սևանա լճի ավազանում հանդիպում է ձկների 9 տեսակ, որոնցից 1-ը ներկայացված է 4 ենթատեսակով: ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված է 3 տեսակ:

##### **Սևանի իշխան (*Salmo ischchan* Kessler 1877)**

Այս տեսակի բոլոր 4 ենթատեսակները ընդգրկված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում: Ձմեռային իշխան (*Salmo ischchan ischchan*) - EX, Բոջակ (*Salmo ischchan danilewskii* Iakowlev 1888) - EX, Գեղարքունի (*Salmo ischchan gegarkuni* Kessler 1877) - CR, Ամառային իշխան (*Salmo ischchan aestivalis* Fortunatov 1926) - CR:

##### **Սևանի կոդակ (*Capoeta capoeta sevangi* De Filippi 1865) - VU**

##### **Սևանի քեղաձուկ (*Barbus goktschaicus* Kessler 1877) - VU:**

##### Երկկենցաղներ

«Սևան» ազգային պարկի տարածքում և նրա բուֆերային գոտում հանդիպում են 4 տեսակի երկկենցաղներ՝ լճագորտ (*Pelophylax ridibundus*), փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*), կանաչ դողոշ (*Bufo viridis*) և արևելյան ծառագորտ (*Hyla orientalis*): Այս տեսակները հազվագյուտ չեն և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված չեն:

##### Մողուններ

Սևանա լճի ավազանում հանդիպում են մողեսների 12 տեսակ, որից 4-ն ընդգրկված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում՝

Սպիտակափոր ժայռային մողես (*Darevskia unisexualis*) - VU

Ռոստոմբեկովի ժայռային մողես (*Darevskia rostombekowi*) - EN

Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ (*Eremias arguta transcaucasica*) - CR

Փոքրասիական մողես (*Parvilacerta parva*) - CR:

##### Օձեր

Սևանա լճի ավազանում հանդիպում է օձերի 6 տեսակ, որից 1-ն ընդգրկված է ՀՀ կենդանիների կարմիր գրքում՝

Լեռնատափաստանային իժ (*Vipera erivanensis*) - VU:

##### Թռչուններ

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են թռչունների 275 տեսակներ, որոնք պատկանում են 55 ընտանիքներին: 5 թռչնատեսակ առաջին անգամ այս տարածքներում գրանցվել են նախորդ կառավարման պլանի պատրաստումից՝ 2005 թվականից հետո:

Միևնույն ժամանակ 7 թռչնատեսակներ 2005 թվականից հետո չեն գրանցվել կամ չի նկատվել դրանց ներկայությունը Սևանա լճի ավազանի տարածքում, հետևաբար դրանք չեն կարող ընդգրկվել ներկայիս օրնիտոֆաունայի կազմում:

Առաջարկվում է հատուկ ուշադրություն դարձվի ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված թռչնատեսակներին (Աղայան, Քալաշյան, 2010)՝

- Թշնան կարապ (*Cygnus olor*) - VU
- Փոքր կարապ (*Cygnus columbianus*) - VU
- Ճչան կարապ (*Cygnus cygnus*) - VU
- Սպիտակաճակատ սագ (*Anser albifrons*) - VU
- Ծվվան սագ (*Anser erythropus*) - VU
- Մոխրագույն սագ (*Anser anser*) - VU
- Կարմրախածի սագ (*Branta ruficollis*) - VU
- Լայնակտուց բադ (*Spatula clypeata*) - VU
- Մարմարյա մրտիմն (*Marmaronetta angustirostris*) - EN
- Սպիտակաաչք սուզաբադ (*Aythya nyroca*) - VU
- Կովկասյան մայրեհավ (*Lyrurus mlokosiewiczzi*) - VU
- Մոխրաայտ սուզակ (*Podiceps grisegena*) - VU
- Մեծ ձկնկուլ (*Phalacrocorax carbo*) - VU
- Փոքր ձկնկուլ (*Microcarbo pygmeus*) - VU
- Վարդագույն հավալուսն (*Pelecanus onocrotalus*) - VU
- Գանգրափետուր հավալուսն (*Pelecanus crispus*) - EN
- Սև արագիլ (*Ciconia nigra*) - VU
- Քաջահավ (*Plegadis falcinellus*) - VU
- Տարգալակտուց (*Platalea leucorodia*) - EN
- Սպիտակապոչ արծիվ (*Haliaeetus albicilla*) - EN
- Գառնանգղ (*Gypaetus barbatus*) - VU
- Գիշանգղ (*Neophron percnopterus*) - EN
- Սպիտակագլուխ անգղ (*Gyps fulvus*) - VU
- Սև անգղ (*Aegypius monachus*) - EN
- Օճակեր արծիվ (*Circaetus gallicus*) - VU
- Տափաստանային մկնաճուռակ (*Circus macrourus*) - EN
- Մարգագետնային մկնաճուռակ (*Circus pygargus*) - VU
- Ցախաբլորաորս (*Accipiter gentilis*) - VU
- Եվրոպական ճնճղաճուռակ (*Accipiter brevipes*) - VU
- Փոքր ենթաարծիվ (*Clanga pomarina*) - VU
- Մեծ ենթաարծիվ (*Clanga clanga*) - VU
- Տափաստանային արծիվ (*Aquila nipalensis*) - VU
- Գերեզմանաարծիվ (*Aquila heliaca*) - VU
- Քարարծիվ (*Aquila chrysaetos*) - VU
- Գանճ արծիվ (*Hieraaetus pennatus*) - VU
- Ջրարծիվ (*Pandion haliaetus*) - VU
- Տափաստանային հողմավար բազե (*Falco naumanni*) - VU
- Կարմրատո բազե (*Falco vespertinus*) - VU
- Բալոբան (*Falco cherrug*) - EN
- Մապսան (*Falco peregrinus*) - VU
- Մարգահավ (*Crex crex*) - VU

Մոխրագույն կռունկ (*Grus grus*) - EN  
Գեղանի կռունկ (*Anthropoides virgo*) - VU  
Կոցար կաչաղակ (*Haematopus ostralegus*) - VU  
Ոտնացուպիկ (*Himantopus himantopus*) - VU  
Բզակտուց (*Recurvirostra avosetta*) - VU  
Տափաստանային ծիծառակոցար (*Glareola normanni*) - VU  
Մարգագետնային ծիծառակոցար (*Glareola pratincola*) - VU  
Ծովային քարադր (*Charadrius alexandrinus*) - VU  
Կրկնակոցար (*Gallinago media*) - VU  
Մեծ իլիկակոցար (*Limosa limosa*) - VU  
Մեծ արորիկ (*Numenius arquata*) - VU  
Հայկական որոր (*Larus armenicus*) - VU  
Որորակտուց ջրածիծառ (*Gelochelidon nilotica*) - VU  
Սայիտակապտ ջրածիծառ (*Chlidonias hybridus*) - VU  
Բվեճ (*Bubo bubo*) - VU  
Կանաչ մեղվակեր (*Merops persicus*) - VU  
Ներկարար (*Coracias garrulus*) - VU  
Հնդկական եղեգնաթռչնակ (*Acrocephalus agricola*) - EN  
Իսպանական ճնճողուկ (*Passer hispaniolensis*) – VU:

Բացի վերը նշված տեսակներից՝ ուշադրության են արժանի նաև այն տեսակները, որոնք ընդգրկված են ԲՊՄՄ-ի կարմիր ցուցակում, սակայն ընդգրկված չեն ՀՀ կենդանիների կարմիր գրքում՝

Կարմրագլուխ սուգարադ (*Aythya ferina*) - VU  
Սովորական կիվիվ (*Vanellus vanellus*) - NT  
Սովորական տատրակ (*Streptopelia turtur*) - VU:

Այստեղ պետք է նշել նաև այն տեսակները, որոնք ընդգրկված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում տվյալների անբավարարություն կատեգորիայում (DD): Այս տեսակների համար անհրաժեշտ է պարզել պոպուլյացիաների վիճակը:

Տուրպան (*Melanitta fusca*)  
Սովորական ֆլամինգո (*Phoenicopterus roseus*)  
Աղավնաբազե (*Falco columbarius*)  
Միջերկրածովյան բազե (*Falco biarmicus*)  
Մոխրագուլի սուլթանական հավ (*Porphyrio poliocephalus*)  
Կիսասայիտակավիզ ճանճորս (*Ficedula semitorquata*).

#### Կաթնասուններ

Սևանա լճի ավազանում գրանցված է կաթնասունների 67 տեսակ, որոնք են 6 կարգի և 21 ընտանիքի: Սրանցից 12-ը գրանցված են ՀՀ կենդանիների կարմիր գրքի CR, EN, VU կատեգորիաներում, իսկ ևս 1 տեսակ DD կատեգորիայում:

Հայկական մկնիկ (*Sicista armenica* Sokolov & Baskevich, 1988) - EN  
Հնդկական մացառախոզ/վայրենակերպ (*Hystrix indica* Kerr, 1972) - VU  
Շեկովնիկովի ջրային սրնչակ (*Neomys teres* Miller, 1908) - EN  
Թզուկային սայիտակատամ (*Suncus etruscus* (Savi, 1822) - VU  
Լայնականջ ծալքաշուրթ չղջիկ (*Tadarida teniotis* (Rafinesque, 1814) - DD  
Գունատ երկարաթև (*Miniopterus pallidus* Thomas, 1907) - VU  
Գորշ ականջեղ չղջիկ (*Plecotus auritus* (Linnaeus, 1758) - VU

- Հայկական գիշերաչղջիկ (*Myotis hajastanicus* Argyropulo 1939) - CR
- Ջրասամույր (*Lutra lutra* (Linnaeus, 1758) - EN
- Խայտաքիս (*Vormela peregusna* (Güldenstädt, 1770) - VU
- Անտառային կատու (*Felis silvestris* Schreber, 1777) - VU
- Գորշ արջ (*Ursus arctos* Linnaeus, 1758) - VU
- Բեզոարյան այծ (*Capra aegagrus* Erxleben, 1777) - VU
- Ազնվացեղ եղջերու (*Cervus elaphus* Linnaeus, 1758):

**4.7 Պատմամշակութային ժառանգությունը**

ՀՀ Կառավարության 09.01.2003թ.-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» №80-Ն որոշման<sup>49</sup> համաձայն (ընդհանուր առմամբ Գեղարքունիքի մարզում հաշվառված են 5270 հուշարձաններ), ինչպես նաև դաշտային ուսումնասիրությունների արդյունքում «Սևան» ազգային պարկի տարածքում նույնականացված պատմամշակութային հուշարձանները և հիշարժան այցելավայրերը ընդհանրացված են **Աղյուսակ 15**-ում: Գեղարքունիքի մարզի նշանակալի պատմամշակութային հուշարձանների տեղադիրքերը ներկայացված է **Հավելված 5**-ում:

**Աղյուսակ 15. Պատմամշակութային հուշարձանների և հիշարժան այցելավայրերի ցանկը**

№	Հուշարձանի / այցելավայրի անվանումը	Գտնվելու վայրը
<b>ԱՄՐՈՑՆԵՐ</b>		
1.	Լճաշեն, մ.թ.ա. III-I հազ.	Լճաշեն գյուղից 1,5 կմ հվ-ան
2.	Ծովաբերդ, մ.թ.ա. II-I հազ.	Վարդաձոր գյուղից 3 կմ ամ
3.	Թեյշերախնի, մ.թ.ա. I հազ, մ.թ.ա. VIII-VI դդ.	Ծովինար գյուղի հս-ան
4.	Յոթ աղբյուր, մ.թ.ա. I հազ.	Նորատուս գյուղի մեջ
5.	Ալբերդ, մ.թ.ա. I հազ - մ.թ. I հազ.	Գեղամասար գյուղի ամ
6.	Նաղարախան, մ.թ.ա. II-I հազ.	Զոլաքար գյուղից 30 կմ ամ
7.	Ջոջ կող, մ.թ.ա. II-I հազ.	Գեղհովիտ գյուղի հվ-ան
8.	Վիզոն, մ.թ.ա. II-I հազ.	Նորաշեն գյուղից 7 կմ հվ-ան
9.	Սալիտակ (Աշոտ Երկաթ), մ.թ.ա. II-I հազ.	Բերդկունք գյուղի հս-ան
10.	Բերդի գլուխ, մ.թ.ա. II-I հազ.	Գավառ քաղաքի հս-ան
11.	Քարե ձի, մ.թ.ա. II-I հազ.	Մադինա գյուղից 6 կմ հվ-ամ
12.	Քարե դուռ, մ.թ.ա. II հազ.	Կարճաղբյուր գյուղի հվ-ան
13.	Դաշտաձոր, մ.թ.ա. II հազ.	Մարտունի քաղաքից 4 կմ հվ-ան
<b>ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ</b>		
14.	Կարմիր Եղջի, (Գետիկի հին վանք) IX - XII դդ.	Մարտունի գյուղ
15.	Հայրավանք, (Այրիվանք) IX - XIII դդ.	Հայրավանք գյուղ
16.	Մաքենիս (Մաքենյաց) IX - XVII դդ.	Մաքենիս գյուղ
17.	Շողագավանք, V - XVII դդ.	Զորագյուղ գյուղ
18.	Սևանավանք, IX դ.	Սևանի թերակղզի
19.	Վանեվան, X - XIV դդ.	Արծվանիստ գյուղ
<b>ԵԿԵՂԵՑԻՆԵՐ</b>		
20.	Կոթավանք, IX - X դդ.	Ներքին Գետաշեն գյուղ

<sup>49</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=37837>

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

№	Հուշարձանի / այցելավայրի անվանումը	Գտնվելու վայրը
21.	Իշխանավանք, XIII դդ.	Վարդենիկ գյուղ
22.	Ծաղկավանք, IX - X դդ.	Վարդենիկ գյուղ
23.	Գանձավանք, IX - X դդ.	Լճաշեն գյուղ
24.	Սբ. Թադեոս առաքյալ, VII դ.	Դդմաշեն գյուղ
25.	Սբ. Հռիփսիմե, VII դ.	Լճաշեն գյուղ
26.	Սբ. Աստվածածին, IV - V դդ.	Գանձակ գյուղ
27.	Սբ. Աստվածածին, VII - XIX դդ.	Գավառ քաղաք
28.	Սբ. Աստվածածին, XX դդ.	Վարդենիս գյուղ
29.	Սբ. Հովհաննես, XXI դ.	Մաղինա գյուղ
30.	Սբ. Գրիգոր, XI դ.	Ճամբարակ գյուղ
31.	Սբ. Գրիգոր, X - XIII դդ.	Նորատուս գյուղ
32.	Սբ. Գևորգ, XV - XVI դդ.	Գեղահովիտ գյուղ
33.	Սբ. Սարգիս, VII - XIX դդ.	Ծաղկունք գյուղ
<b>ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ</b>		
34.	Նորատուսի, XIII - XVII դդ.	Նորատուս գյուղ
<b>ԱՅԼ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐ</b>		
35.	Ջիլի քարայր	Ջիլ գյուղ
36.	Գեղամասարի ջրվեժ	Գեղամասար գյուղ
37.	Սևանի բուսաբանական այգի	Սևան քաղաք
38.	«Գիհու նոսրանտառային» արգելավայր	Արեգունու և Սևանի լեռնաշղթաների հարավային լանջեր
39.	Զոլաքարի խաչքար	Զոլաքար գյուղ
40.	Կալավանի վերին պալեոլիթի բնակատեղի	Կալավան գյուղ
41.	Սևասարի ժայռապատկերներ	Մարտունու շրջանի Սևասար լեռան լանջ
42.	Լճաշենի սեպագիր արձանագրություններ	Լճաշեն գյուղ
43.	Ժայռափոր արձանագրություն Ռուսա թագավորի մ.թ.ա. 735-714թթ. գործունեության մասին	Արփա-Սևան ջրատար թունելի մոտ, Մարտունի քաղաք
<b>ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ</b>		
44.	Հրաչյա Բունիաթյանի անվան պատկերասրահ	Գավառ քաղաք
45.	Գավառի պետական համալսարանի պատմագիտական թանգարան	Գավառ քաղաք
46.	Գեղարքունիքի երկրագիտական թանգարան	Գավառ քաղաք
47.	ՀՀ ազգային պատկերասրահի Մարտունու մասնաճյուղ	Մարտունի քաղաք
48.	«Սևան» ԱՊ բնապահպատմական թանգարան	Սևան քաղաք

**Նկար 3. Գեղարքունիքի մարզի պատմաշուքային վարչատարածքային բաժանումը**

## 5. ՏԱՐԱԾԱԾՐՉԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

### 5.1 Մարզի ընդհանուր նկարագրությունը

Գեղարքունիքի մարզը տարածքի մեծությամբ ՀՀ ամենամեծ մարզն է (ՀՀ տարածքի 18%-ը), որի մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: Այն սահմանակից է հյուսիսում՝ Տավուշի, արևմուտքում՝ Կոտայքի և Արարատի, հարավում՝ Վայոց ձորի մարզերին, արևելքում՝ Ադրբեջանի Հանրապետությանը: Մարզում է գտնվում Հայկական լեռնաշխարհի երեք խոշորագույն լճերից մեկը՝ Սևանա լիճը: Այն զբաղեցնում է մարզի ամբողջ տարածքի շուրջ 1/4-ը:

Մարզ մուտք գործող գլխավոր ճանապարհներն են՝ Երևան-Սևան-Վրաստանի սահման միջպետական, Ճամբարակ-Բերդ, Մարտունի-Եղեգնաձոր մայրուղիները և Երևան-Սևան-Սոթք երկաթուղին:

Գեղարքունիքի մարզը կազմավորվել է 1995 թ.: Այն զբաղեցնում է 5,348 քառ.կմ տարածք՝ մոտավոր 227,800 բնակչությամբ (համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի 2022 թ. տվյալների): Մարզը ներառում է Գավառ, Ճամբարակ, Սևան, Մարտունի և Վարդենիս խոշորացված համայնքները:

Մարզի գլխավոր լեռնագանգվածներն են Գեղամա, Արեգունի, Սևանի, Արևելյան Սևանի և Վարդենիսի լեռնաշղթաները:


Օգտակար հանածոներից արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), բնական շինանյութերի, հանքային ջրերի (Լիճք) և այլ պաշարները:

Մարզը հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունի քաղցրահամ ջրի պաշարներով, ինչպես նաև սիգ ձկան կենսապաշարներով:

Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքի<sup>50</sup> համաձայն, Գեղարքունիքի մարզը կազմավորվում է 98 բնակավայրերից (5-ը քաղաքային, 93-ը գյուղական) բաղկացած 5 բազմաբնակավայր համայնքներից (**Նկար 3**):

#### **Նկար 3. Գեղարքունիքի մարզի վարչատարածքային բաժանումը**

<sup>50</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=165211>



## 5.2 Մարզի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակը

2023 թ. հունվարի դրությամբ Գեղարքունիքում գործում է 31 արտադրական ձեռնարկություններ, որոնցից մարզի տնտեսության մեջ էական տեսակարար կշիռ ունեն «Գեո Պրո Մայինինգ», «Աքվատիկ», «Մևանի հացի գործարան», «Հրանտ Կարապետյան», «Էկոկաթ» և մի շարք այլ արտադրական ձեռնարկություններ:

Մարզում առկա է աշխատատեղերի խնդիրը: Արտագնա աշխատանքի են մեկնում ավելի քան 35000 մարդ (<http://gegharkunik.mtad.am/files/docs/3592.pdf>), որոնք սեզոնային աշխատանք են իրականացնում Ռուսաստանի Դաշնությունում և ԱՊՀ այլ երկրներում՝ հիմնականում շինարարության ոլորտում:

Արդյունաբերության զարգացող ճյուղ է հանքարդյունաբերությունը, որի մեջ մեծ է Սոթքի ոսկու հանքավայրի դերն ու նշանակությունը: Բացի դրանից՝ մարզի այլ բնակավայրերում



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

արդյունահանվում է նաև որոշակի քանակի շինանյութ՝ ավազ, բազալտ, կրաքար: Տորֆի առատ պաշարներ կան Վարդենիսի տարածաշրջանում:

Կարճադրյուր և Լիճք գյուղերում արդեն կառուցվել ու գործում են գերժամանակակից սարքավորումներով հագեցած ձկնարուծարաններ: Սևանա լճում սկզբնավորվել է ցանցավանդակային ձկնարուծությունը (տես նաև **Բաժին 6.5**-ը):

Մարզում զարգացած է նաև գյուղատնտեսությունը:

Գեղարքունիքի մարզում գործում է մեկ պետական համալսարան, միջնակարգ մասնագիտական 8 հաստատություն, 3 բժշկական կենտրոն, 39 առողջապահական հաստատություն, 125 հանրակրթական դպրոց (<http://gegharkunik.mtad.am/files/docs/3592.pdf>):

Աղքատության մակարդակը 2020թ. կազմել է 48.1 %, որից ծայրահեղ աղքատությունը կազմել է 1.9%:

**5.3 Մարզի համայնքներն ու բնակավայրերը**

Ստորև բերված **Աղյուսակ 16**-ում ներկայացված է մարզի խոշորացված համայնքները և բնակավայրերը:

**Աղյուսակ 16. Մարզի խոշորացված համայնքները և բնակավայրերը**

Խոշորացված համայնքները	Բնակավայրերը	Բնակավայրերի քանակը
Գավառ համայնք	Քաղաք- Գավառ Գյուղեր-Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովագարդ, Կարմիր, Հայրավանք, Նորատուս, Սարուխան	12
Ճամբարակ համայնք	Քաղաք - Ճամբարակ Գյուղեր - Այգուտ, Անտառամեջ, Արծվաշեն Բարեպատ, Գետիկ, Դպրաբակ, Թթուջուր Կալավան, Ձորավանք, Ճապկուտ, Մարտունի, Վահան, Ծողակաթ, Արտանիշ, Աղբերք, Դրախտիկ, Ծափաթաղ, Ջիլ	19
Մարտունի համայնք	Քաղաք - Մարտունի Գյուղեր - Աստղաձոր, Արծվանիստ, Գեղիովիտ Երանոս, Չոլաքար, Լեռնակերտ, Լիճք Ծակքար, Ծովասար, Ծովինար, Ձորագյուղ Մաղինա, Ներքին Գետաշեն, Նշխարք, Վաղաշեն, Վարդաձոր, Վարդենիկ, Վերին Գետաշեն	19
Սևան համայնք	Քաղաք - Սևան Գյուղեր - Գագարին, Գեղամավան, Դոմաշեն Զովարեր, Լճաշեն, Ծաղկունք, Ծովագյուղ Նորաշեն, Չկալովկա, Սեմյոնովկա, Վարսեր	12
Վարդենիս համայնք	Քաղաք - Վարդենիս Գյուղեր - Ագատ, Ախալբաձոր, Ակունք, Այրք, Ավագան Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Գեղամասար, Գեղաքար, Դարանակ, Զատիվեր, Լճավան, Կութ, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կախակն, Կարճաղբյուր, Կուտական, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Ներքին Ծորժա, Նորաբակ Նորակերտ, Ծատջրեք, Ծատվան, Չաղացաձոր Սոթք, Վանեվան, Վերին Ծորժա, Տորֆավան, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ	36

**5.4 Ազգաբնակչությունը և ժողովրդագրական նկարագիրը**

**Աղյուսակ 17. Մարզի ազգաբնակչության թիվը՝ ըստ քաղաքային և գյուղական բնակչության**

Բնակչություն	2017	2018	2019	2020	2021
Քաղաքային բնակչություն (հազ. մարդ)	68.4	67.7	67.0	66.6	66.2
Գյուղական բնակչություն (հազ. մարդ)	162.3	162	161.3	161.1	161.1
<b>Ընդամենը (հազ. մարդ)</b>	<b>230.7</b>	<b>229.7</b>	<b>228.3</b>	<b>227.7</b>	<b>227.3</b>

Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, արդյունաբերությունը, առևտուրը, ձկնորսությունը, պետական և հանրային ծառայություններն ու արտագնա աշխատանքը:

Չբաղվածության ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը, որի հիմնական ճյուղերը կազմում են անասնապահական մթերքների, մեղրի արտադրությունը, ինչպես նաև կարտոֆիլի, կաղամբի, հացահատիկի և բանջարաբոստանային մշակաբույսերի ամեցումը:

Մարզի տարածքում գործում է մոտ 40,000 միջին, մանր և խոշոր գյուղացիական տնտեսություններ, 42 բնակավայրերում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներ:

Ըստ մարդկային ներուժի զարգացման ինդեքսի, որն իրենից ներկայացնում է մարզի կրթական մակարդակի, կյանքի սպասվող տևողության և մեկ անձին ընկնող տարեկանի եկամուտների համախառն ցուցանիշը, ըստ զարգացվածության մակարդակի՝ 2017թ. Գեղարքունիքի մարզն ամենացածրն էր հանրապետությունում:

Ստորև բերված գծապատկերում ներկայացվում է մարզի ազգաբնակչության կառուցվածքը՝ ըստ սեռատարիքային կազմի:

**5.5 Գյուղատնտեսությունն և ձկնաբուծությունը**

Ելնելով ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունից՝ Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության ոլորտի առաջնահերթ գերակայություններ են սահմանվել՝

- Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը,
- Գիտելիքահենք գյուղատնտեսության խթանումը:

Այլ առաջնահերթությունների թվում նշվել են հետևյալ միջոցառումները,

- Գյուղատնտեսության տեխնիկական արդիականացումը,
- Հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը,
- Մշակովի դարձնել գյուղատնտեսական հողատեսքերի շուրջ 60%-ը,
- Արգիճի և Աստղածոր գետերի վրա կառուցել ջրամբարներ,
- Խթանել նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը,
- Խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմների ներդրումը:

Ոլորտի թույլ կողմերն են ավանդական գյուղատնտեսության դոմինանտ լինելը, գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածությունը և շուրջ 50%-ի չօգտագործումը:

Համայնքներում առկա խնդիրներից է մասնավորապես հեռագնա արտոնների հասանելիությունը և դրանց օգտագործումը: Խնդիրն ավելի արդիական է դարձել 2020թ.-ի 44-օրյա պատերազմից հետո:

«Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր» ծրագրի շրջանակում «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամը 2014թ.-ին ստեղծել է «Սևանի իշխան» ՓԲԸ-ն: Ընկերության հիմնական գործառույթն է «Սևան Ակվա» ՓԲԸ-ի արտադրած իշխանի ամառային և գեղարքունի ենթատեսակների ապրանքային ձկան վերամշակումն ու իրացումը: Լավագույն տեխնիկայով զինված վերամշակման գործարանն արտադրում է ձկնամթերքի լայն տեսականի՝ թարմ պաղեցված ձկից մինչև ձկան ֆիլե և պահածոներ:

«Սևանի իշխան» ՓԲԸ-ն իր գործունեությամբ նպաստում է Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնմանը և լճի էկոհամակարգի բարելավմանը: Բացի դրանից՝ ընկերությունը միտված է մի շարք հանրօգուտ նպատակների իրականացման. էնդեմիկ ձկնատեսակների՝ գեղարքունի և ամառային իշխանի ենթատեսակների պահպանում, երկրի տնտեսական աճի խթանում՝ ձկնաբուծության և ձկնարտադրության ամբողջական արժեչղթայի կազմակերպմամբ:

## 5.6 Արդյունաբերությունը

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության ու գործազրկության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է:

2022 թվականին նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝

- «ԳեոՊրոՄայնինգ» ՄՊԸ-ի կողմից 27 մշտական աշխատատեղիի ստեղծում,
- Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրում վտանգավոր թափոնների այրման կայանի կառուցում՝ 10 մշտական աշխատատեղիի ստեղծմամբ:
- Սևան համայնքում կոմպրեսորային կայանների արտադրության հիմնում՝ 60 մշտական աշխատատեղիի ստեղծմամբ:

## 5.7 Չբուսաշրջությունը

ՀՀ Գեղարքունիքի մարզն ունի զբոսաշրջության ոլորտի համար բացառիկ հնարավորություններ՝ այն ամենապահանջված այցելավայրերից մեկը դարձնող Սևանա լճի շնորհիվ, որն իր ավիամերձ գոտու հնարավորություններով, ենթակառուցվածքներով, բնության և մշակույթի հարուստ ժառանգությամբ առանցքային նշանակություն ունի Հայաստանի զբոսաշրջության ոլորտի բազմազանեցման համար:

Լճի շրջակայքում առկա են բազմաթիվ հյուրանոցներ, զբոսաշրջային տարաբնույթ հանգրվաններ, հանգստյան գոտիներ, լողափեր, ճանապարհային ցանց և ներքին փոխադրումների համար Երևան-Սևան-Վարդենիս գնացքը: Այստեղով է անցնում Իրանից դեպի Սևծովյան ավազանի երկրներ տանող ամենակարճ ճանապարհը. Սևան-Մարտունի-Գետափ և Սևան-Դիլիջան երթուղիները համարվում են տարանցիկ գոտիներ: Մարզում միջպետական և հանրապետական նշանակության գրեթե բոլոր ճանապարհները բարեկարգ են:

Լիճն իր եզակի էկոհամակարգով էականորեն ազդում է ոչ միայն մարզի բնապահպանական հավասարակշռության, այլև տնտեսության վրա: «Սևան» ԱՊ տարածքում գործում են մի շարք հանրային լողափեր:

Մարզում տնտեսության կայունության վրա զբոսաշրջության ոլորտը վերջին շրջանում ցանկալի արդյունքներ է արձանագրում, և տեսանելի է ներդրումների ակտիվացում: Նաև նկատվում է զբոսաշրջության սոցիալական արդյունքի մուլտիպլիկատիվ ազդեցությունը հարակից ոլորտների վրա՝ խթանելով հյուրընկալման հետ առնչվող առևտրի, սննդի արտադրության ծավալների մեծացումը:

## 5.8 Կենսառեսուրսների օգտագործումը

Մարզը հարուստ է նաև կենդանական և բուսական աշխարհի բազմազանությամբ: Վայրի պտուղներից առավել արժեքավոր են մասուրը, չիչխանը, որոնք լայնորեն կիրառվում են ինչպես սննդի արդյունաբերության, այնպես էլ բժշկության մեջ: Տասնյակ հազարավոր այլախական մարգագետիններ հարուստ են ուտելի բանջարեղենների բազմաթիվ տեսակներով, հյութալի անասնակերով, ինչպես նաև շատ տեսակների արժեքավոր դեղաբույսերով:

Պետք է նկատել, որ «Սևան» ազգային պարկի տարածքում և դրանից դուրս ստացվող կենսառեսուրսներից չիչխանը, ինչպես նաև տարբեր դեղաբույսեր, ուտելի բույսեր և սնկեր մեծամասամբ չեն հաշվառվել ու ներկայում չեն հաշվառվում: Հարկ է նշել, որ չիչխանի հավաքման և վաճառքի ծավալները տարեցտարի մեծանում են:

Կենսառեսուրսների օգտագործման տեսակետից մեծ կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում ձկան ու խեցգետնի պաշարների հաշվառումը և կայուն օգտագործումը, որում մեծ դերակատարություն ունի «Սևան» ազգային պարկը: Արդյունագործական ձկնորսության կազմակերպման մեջ ազգային պարկին ընձեռված է ինչպես վերահսկողական գործառնություններ, այնպես էլ վերջերս տրվել է նաև հնարավորություն կազմակերպելու ձկան որսն իր կողմից ներգրավված ձկնորսների միջոցով: Մասնավորապես՝ 2022թ. ՇՄՆ հետ կնքվել է պայմանագիր, ըստ որի՝ «Սևան» ԱՊ-ին նույնպես վերապահվել է իրավասություն՝ պայմանագրեր կնքել ձկնորսների հետ, որոնք իրականացնում են որսը: Ըստ այդ պայմանագրի՝ «Սևան» ԱՊ-ի չափաբաժինն ընդհանուր արդյունագործական ձկնորսության մեջ կազմել է 221 տ, ինչը կազմում է ընդհանուր թույլատրելի որսի չափաքանակի (300տ) մոտ 74%-ը: Այս գործառնությունը հնարավորություն է տվել ազգային պարկին վերահսկողական գործառնություններն արդյունավետ իրականացնելու հետ մեկտեղ գեներացնել նաև որոշակի քանակի շահույթ՝ նշված պայմանագրերից: Այսպես, սույն պայմանագրերի շրջանակում «Սևան» ԱՊ ՊՈԱԿ-ն ապահովել է 26.2 մլն. դրամի հասույթ, որից շահույթը կազմել է 6.4 մլն. դրամ:

## 6. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

### 6.1 Ընդհանուր դրույթներ

«Սևան» ԱՊ կառավարման պլանի ռազմավարական էկոլոգիական գնահատման փուլում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ավանդական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, այլ հիմնականում կենտրոնանալ Կառավարման պլանով սահմանված 8 ռազմավարական նպատակների իրագործմանը միտված ծրագրերի իրականացման արդյունքում ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վրա: Ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները ներկայումս կարող են գնահատվել միայն շրջանակային մակարդակով, քանի որ գնահատման առարկան իրենից ներկայացնում է հիմնադրույթային փաստաթուղթ:

### 6.2 Ռազմավարական նպատակների իրագործման ծրագրերի ազդեցությունների գնահատումը

Ռազմավարական նպատակների իրականացման նպատակով «Սևան» ԱՊ-ի կառավարման պլանով նախատեսվում է հետևյալ 7 ծրագրերի իրագործումը:

- 1) Վարչական ծրագիր,
- 2) Պահպանության ծրագիր,
- 3) Ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման ծրագիր,
- 4) Հետազոտությունների և կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագիր,
- 5) Այցելությունների կազմակերպման ծրագիր,

- 6) Էկոլոգիական կրթության, հանրային մասնակցության և հաղորդակցության ծրագիր,
- 7) Ֆինանսական և մարքեթինգային ծրագիր:

Նախատեսված ծրագրերի թիրախները/խնդիրները, էությունը, բաղադրիչները և իրագործման ազդեցությունները ամփոփված են ստորև **Բաժիններ 6.2.1-6.2.7**-ում:

### 6.2.1 Վարչական ծրագիր

Ծրագիրը միտված է 2-րդ, 3-րդ, 6-րդ և 7-րդ ռազմավարական նպատակների (տես **Բաժին 3.3.3**-ը) իրագործմանը:

Վարչական ծրագրի նպատակն է բարելավել և զարգացնել վարչակազմի կարողությունները ու աշխատանքային պայմանները և հասնելը կանոնադրական գործառնությունների առավել արդյունավետ կատարմանը:

Ծրագրի խնդիրներն են.

- 1) Մինչ 2025 թվականը ՊՈԱԿ-ը հաստատել է առաջարկվող նոր կառուցվածքն ու հաստիքացուցակը, որտեղ ավելացել են առնվազն նոր հաստիքներ՝ ներառյալ կառավարման արդյունավետության և կենսաբազմազանության մշտադիտարկման մասնագետներ, Էկոտուրիզմի, ֆոնդհայթհայթման, համայնքների հետ կապի և հաղորդակցության մասնագետներ և այլն,
- 2) Մինչ 2026 թվականն աշխատակազմի առնվազն 30 տոկոսը մասնակցել է անձնակազմի մասնագիտական վերապատրաստման դասընթացի կամ փորձի փոխանակման առնվազն մեկ դասընթացի/ծրագրի,
- 3) Մինչ 2029 թվականը կառավարման արդյունավետության գնահատման գործիքի (METT) կիրառման արդյունքում բազային տվյալների համեմատությամբ գրանցվել է 20 տոկոս աճ,
- 4) Մինչև 2029 թվականը կառավարման պլանի ծրագրերի և գործողությունների պլանի տարեկան մշտադիտարկման հաշվետվություններն առկա են և հաստատված են ՍԱՊ կառավարման խորհրդի և ՀՀ ՇՄՆ կողմից,
- 5) Մինչև 2027 թվականը իրականացվել են ՅՈՒՆԵՍԿՕ կենսոլորտային պահպանավայր ճանաչմանն ուղղված իրագործելիության գնահատում:

### Ծրագրի էությունը

Հաշվի առնելով ՀՀ Էկոպարեկային ծառայության ստեղծման հանգամանքը, վարչական ծրագրով նախատեսվում է Ազգային պարկի վարչակազմի կառուցվածքում իրականացնել փոփոխություններ, առաջարկելով նաև հետևյալ նոր հաստիքները՝

- Տնօրենի տեղակալ գիտության գծով,
- Մասնագետ՝ Իրավաբանական և պայմանագրային բաժնում,
- Ծուկայավարման և ֆոնդհայթհայթման մասնագետներ՝ Ֆինանսատնտեսական բաժնում,
- Բաժնի պետ և տնկարանի վարիչ՝ տնտեսական բաժնում,
- Տարածքների համակարգողներ («Սևան», «Նորատուս», «Մարտունի», «Վարդենիս», «Արտանիշ»), կառավարման արդյունավետության/կենսաբազմազանության մշտադիտարկման մասնագետներ (այդ թվում՝ «Սևան» մասնաճյուղ - 4, «Նորատուս» մասնաճյուղ - 4, «Մարտունի» մասնաճյուղ - 8, «Վարդենիս» մասնաճյուղ - 8, «Արտանիշ» մասնաճյուղ - 4), բուսաբան, կենդանաբան, բույսերի պաշտպանության մասնագետ, Էկոտուրիզմի մասնագետ, ուղեկցորդ, այցելուների կենտրոնի սպասարկման աշխատակից, հաղորդակցության գլխավոր մասնագետ, սոցիալական ցանցերի մասնագետ, Էկոկրթության մասնագետ, համայնքների հետ աշխատանքների պատասխանատու՝ Գիտության և մշտադիտարկման, Էկոտուրիզմի և այցելությունների կառավարման, Էկոկրթության և հանրային հաղորդակցության բաժին:

**Ծրագրով նախատեսված հիմնական միջոցառումները և դրանց ազդեցությունը**

**1. Աշխատակազմի մասնագիտական կարողությունների հզորացման միջոցառումներ և ատեստավորում**

Աշխատակազմի արդյունավետության և կարողությունների բարելավման նպատակով առաջարկվում է ներդնել ՊՈԱԿ-ի աշխատակազմի մասնագիտական վերապատրաստման տարեկան ծրագիր: Այս ծրագրով նախատեսված է մինչև 2026թ. ապահովել առնվազն 30% աշխատակիցների մասնագիտական վերապատրաստում:

Առաջարկվում է մինչև 2027թ. մշակել և ներդնել մասնագիտացված աշխատակազմի ատեստավորման կարգ, ինչը հնարավորություն կտա բացահայտելու առկա բացերը և խրախուսել մասնագիտական աճը, մրցունակությունը, ինչպես նաև ատեստացիայի արդյունքների հիման վրա խրախուսել դրական արդյունք արձանագրած մասնագետներին:

**2. Ներքին կարգավորումների մշակում**

Աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացման, համագործակցային մթնոլորտի և ներքին հաղորդակցության բարելավման նպատակով առաջարկվում է ներդնել մի շարք ներքին կանոնակարգեր և փաստաթղթեր (պաշտոնի անձնագրեր, աշխատակիցների վարվեցողության և միջանձնային հարաբերությունները կարգավորող կանոններ, հանրային լողափերի վարձակալության պայմանների վերանայում, գոտիավորման պլան և այլն):

**3. ՅՈՒՆԵՍԿՕ կենտրոնային պահպանավայր նախաձեռնան ուղղված իրագործելիության գնահատում**

2019թ.-ին «Միխայիլ Չուկով» հիմնադրամը և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնն իրականացրել են «Կայուն տարածաշրջանային զարգացումը Հայաստանում՝ ՅՈՒՆԵՍԿՕ կենտրոնային պահպանավայրի հիմնման պոտենցիալի վերլուծություն» իրագործելիության հետազոտությունը, որում կարևոր նշանակություն և առաջնահերթություն է տրված «Սևան» ԱՊ-ի կենտրոնային պահպանավայրի վերածելու հնարավորությանը: Քանի որ նման գործընթացը պահանջում է մեծ ռեսուրսների ներդրում և ժամանակահատված, առաջնային փուլում առաջարկվում է «Սևան» ազգային պարկի և գործընկեր կառույցների համագործակցությամբ մեկնարկել հնարավոր դոնոր կազմակերպությունների քարտեզագրումը, առաջնային փուլի համար ֆինանսավորման հայթայթումը և կառավարման պլանում առանձնացված շահառուների հետ համատեղ կենտրոնային պահպանավայր հիմնելու նպատակով համագործակցային հարթակի ձևավորումը:

**4. Պահանջվող մարդկային ռեսուրսները, տեխնիկական միջոցները և ենթակառուցվածքները, դրանց սպասարկումը**

Առաջարկվող վարչական ծրագրի իրականացումն առաջին հերթին պահանջում է էական մարդկային ռեսուրսների ներդրում: Առաջարկվող հաստիքացուցակով առաջարկվում է ներդնել մի շարք վարչական և այլ բաժինների նոր հաստիքներ, որոնցից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ կլինի ապահովել աշխատանքային պայմաններ, այդ թվում աշխատասենյակ, կահույք՝ աթոռ, սեղան, պահարան, սարքեր՝ համակարգիչ, տպիչ: Բոլոր ավտոմեքենաների, նավի և այլ տրանսպորտային միջոցների տեղաշարժն ու վառելիքի ծախսի արդյունավետությունը մշտադիտարկելու համար առաջարկվում է տեղադրել GPS համակարգեր:

Ընդհանուր առմամբ, վարչական ծրագրի իրագործումը չունի ուղղակի ազդեցություն շրջակա միջավայրի վրա, այնուամենայնիվ նախատեսված աշխատակազմի մասնագիտական վերապատրաստումները, ատեստավորման կարգի ներդրումը, նոր հաստիքների ստեղծումը միանշանակ կնպաստեն ԱՊ-ի հիմնական գործառնությունների ավելի լիարժեք ու որակյալ կատարմանը, որն էլ իր հերթին կապահովի դրական ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Առավել թիրախային հաստիքների ներգրավումը և մասնագիտական կարողությունների զարգացումը թույլ կտա առավել արդյունավետ իրականացնել Կառավարման պլանով նախատեսված գործառնությունները՝ մասնավորապես Սևան ազգային պարկի պահպանությունը և կառավարումը, ինչը դրական ազդեցություն է ունենալու շրջակա միջավայրի

վրա՝ հատկապես պահպանության ենթակա էկոհամակարգերի և կենսաբազմազանության տեսանկյունից:

Միաժամանակ կարելի է նշել թվարկված միջոցառումներից ակնկալվող սոցիալ-տնտեսական դրական ազդեցությունը, քանի որ նախատեսվում է նոր աշխատատեղերի ստեղծում, ընդ որում դրանց մեծ մասը զբաղեցվելու են ազդակիր բնակավայրերի բնակիչների կողմից, ինչպես նաև բարելավված էկոհամակարգային ծառայություններից ստացվող օգուտների ձևով: Անուղղակիորեն, վարչական ծրագիրը դրական ազդեցություն է թողնում նաև զբոսաշրջության և էկո-կրթության բաղադրիչների զարգացման վրա:

## 6.2.2 Պահպանության ծրագիր

Ծրագիրը միտված է 1-ին, 4-րդ և 5-րդ ռազմավարական նպատակների (տես [Բաժին 3.3.3-ը](#)) իրագործմանը:

Պահպանության ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ էկոպարեկային ծառայության կողմից պարեկության և այլ կազմակերպչական, տեխնիկական գործիքակազմի կիրառմամբ կազմակերպել միջոցառումներ՝ միտված կանխելու և/կամ նվազեցնելու մարդկային ուղղակի բացասական գործունեության և աղետների ազդեցությունը տեսակների, կենսամիջավայրերի ու էկոհամակարգերի վրա:

Ծրագրի թիրախները/խնդիրները

- 1) Մինչև 2029 թվականը, հրդեհների թիվը նաև այրված մակերեսների հանրագումարը (վերջին հինգ տարվա միջինացված թվի համեմատ) նվազել են 10%-ով,
- 2) Մինչև 2029 թվականը, հիվանդություններով և վնասատուներով վարակված տարածքների մակերեսը չի աճել (վերջին հինգ տարվա միջինացված թվի համեմատ) կամ նվազել է,
- 3) Մինչև 2029 թվականը, թիրախային ձկնատեսակների (գեղարքունի և ամառային իշխան) ձկնապաշարները կրկնապատկվել են՝ 2022 թվականին գնահատված 4.51 տոննայի համեմատ,
- 4) Մինչև 2029 թվականը, պահպանվել են Սալիտակաաչք սուզաբաղի (*Aythya nyroca*) բնադրող զույգերի միջին թիվը 2-4, իսկ առավելագույնը հասել է 4-6-ի,
- 5) Մինչև 2029 թվականը, պահպանվել է Գիշանգդի (*Neophron percnopterus*) առկա մեկ զույգը,
- 6) Մինչև 2029 թվականը, պահպանվել է Ցախաքրորաքսի (*Accipiter gentilis*) մեկ փաստացի հայտնի բնադրող զույգը և մեկ պոտենցիալ զույգ,
- 7) Մինչև 2029 թվականը, պահպանվել է Սապսանի (*Falco peregrinus*) 3-4 բնադրող զույգերը,
- 8) Մինչև 2029 թվականը պահպանվել է Բալոբանի (*Falco cherrug*) 2 բնադրող զույգերը,
- 9) Մինչև 2029 թվականը, Մեծ ջրցուլի (*Botaurus stellaris*) բնադրող զույգերի բացահայտված թվաքանակը չի նվազել,
- 10) Մինչև 2029 թվականը, Քաջահավի (*Plegadis falcinellus*) բնադրող զույգերի վերագրանցված թվաքանակը պահպանվել է,
- 11) Մինչև 2029 թվականը, Ծովային քարադրի (*Charadrius alexandrinus*) բնադրող զույգերի բացահայտված թվաքանակը պահպանվել է,
- 12) Մինչև 2029 թվականը, Հայկական որորի (*Larus armenicus*) բնադրող զույգերի գույքագրված թվաքանակի պահպանվել է,
- 13) Մինչև 2029 թվականը, պահպանվել է Բվեճի (*Bubo bubo*) մեկ բնադրող զույգը և մեկ պոտենցիալ զույգը,
- 14) Մինչև 2029 թվականը, Մարգահավ (*Crex crex*) բնադրող զույգերի բացահայտված թվաքանակը պահպանվել է:

**Պահպանության առանձնացված թիրախները**

Համաձայն ընտրված «Բնապահպանական ստանդարտներ» (Conservation Standards) մեթոդաբանության պահպանության վիճակի և կազմակերպվող աշխատանքների արդյունավետության գնահատման նպատակով երկետային տվյալների հիման վրա առանձնացվել են պահպանության թիրախներ, որոնք այն թիրախային տեսակներ և/կամ կենսամիջավայրերն են, որոնք ուղղակիորեն կրում են հիմնական սպառնալիքների ազդեցությունը, դեռ ավելին՝ ծածկում են պահպանության խնդիրների լայն շրջանակը: Հետևապես դրանց վիճակի բարելավումն ուղղակիորեն նշանակում է սպառնալիքների կանխարգելում կամ մեղմում:

Թիրախային տեսակները միաժամանակ նաև իրենցից ենթադրում են ցուցիչ տեսակներ, որոնք ենթակա են մշտադիտարկման: Դրանք կարող են արտացոլել էկոհամակարգի առկա վիճակը, բայց և կարող են փոխկապակցված լինել էկոհամակարգի կամ հենց իրենց պոպուլյացիաների վիճակը նկարագրող այլ ցուցիչների հետ: Ցուցիչ այլ տեսակներն իրենց հերթին կարող են լինել թե՛ առանձին տեսակներ, թե՛ կենսամիջավայրեր:

«Սևան» ազգային պարկի պահպանության վիճակը բնութագրող բնապահպանական արժեք հանդիսացող թիրախներն ու դրանց ցուցիչները հետևյալն են.

- Պահպանության թիրախ 1 - Արտանիշի թերակղզի.
  - o Ցուցիչ 1 - *Adonis wolgensis*,
  - o Ցուցիչ 2 - *Dracocephalum austriacum*,
  - o Ցուցիչ 3 - *Cousinia fedorovii*,
  - o Ցուցիչ 4 - *Turdus torquatus* /գիհուտների համար/
  - o Ցուցիչ 5 - *Carpodacus erythrinus* /մարգագետինների դեպքում/
  - o Ցուցիչ 6 - *Saxicola rubetra* /մարգագետինների դեպքում/
- Պահպանության թիրախ 2 - Նորատուսի թերակղզի.
  - o Ցուցիչ 1 - *Phylloscopus sindianus* /ծառատային բուսականության դեպքում/
  - o Ցուցիչ 2 - *Alauda arvensis* /մարգագետինների դեպքում/
  - o Ցուցիչ 3 - *Saxicola rubetra* /մարգագետինների դեպքում/
- Պահպանության թիրախ 3 – Գեղարքունի իշխան (*Salmo ischchan gegarkuni*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 4 - Ամառային իշխան (*Salmo ischchan aestivalis*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 5 - Սևանի կողակ (*Capoeta capoeta sevangi*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 6 - Հայկական որոր (*Larus armenicus*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 7 - Peregrine Falcon (*Falco peregrinus*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 8 - Corn Crake (*Crex crex*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 9 - Saker Falcon (*Falco cherrug*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 10 - Egyptian Vulture (*Neophron percnopterus*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 11 - Great Bittern (*Botaurus stellaris*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 12 - Goshawk (*Accipiter gentilis*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 13 - Ferruginous Pochard (*Aythya nyroca*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- Պահպանության թիրախ 14 - Kentish Plover (*Charadrius alexandrinus*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 15 - Glossy Ibis (*Plegadis falcinellus*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 16 - Eagle Owl (*Bubo bubo*)
  - o Նույն ինքը՝ ցուցիչ
- Պահպանության թիրախ 17 - գետաբերանային անտառներ
  - o Ցուցիչ՝ Mountain Chiffchaff (*Phylloscopus sindianus*):

**Հիմնական սպառնալիքները և ազդեցությունները**

Պահպանության ծրագիրը բխում է նախ և առաջ առկա ուղղակի սպառնալիքներից, որոնց կանխարգելման կամ մեղմմանն են ուղղված առաջարկվող կառավարչական միջամտությունները, հետևապես, նախքան միջամտություններին անդրադառնալը ուսումնասիրվել են սպառնալիքների առկա վիճակը:

«Սևան» ազգային պարկի տարածքում առկա ուղղակի սպառնալիքները ներկայացված են **Աղյուսակ 12**-ում, որտեղ յուրաքանչյուր սպառնալիքի դեպքում ներկայացվում է ազդեցությունը և համապատասխան պահպանության թիրախը/թիրախային տարածքը: Սպառնալիքները դասակարգվել են ըստ մակարդակների՝ ցածրից շատ բարձր: Սպառնալիքները ներկայացված են՝ համաձայն «Բնապահպանական ստանդարտներ» մեթոդաբանությամբ առաջարկվող սպառնալիքների դասակարգման:

**Աղյուսակ 12. «Սևան» ԱՊ տարածքում առկա ուղղակի սպառնալիքները**

Սպառնալիքի անվանումը	Սպառնալիքի դասակարգումը	Ազդեցության տեսանելի հետևանքները	Թիրախային տարածքներ/ տեսակներ
Էկոհամակարգերի այլ ձևափոխումներ (անտառապատում)	Ցածր	Անտառատնկումն ունի երկկողմանի ազդեցություն՝ բացասական և դրական: Բացասական ազդեցությունը բնական էկոհամակարգերի փոփոխությունն է՝ իրենց սկզբնական կենսաբազմազանությամբ: Դրական է կենդանիների բազմաթիվ տեսակների համար նոր ապրելավայրերի ապահովումը	Նորատուսի թերակղզի
Էկոհամակարգերի այլ ձևափոխումներ (ջրածածկ տարածքների մաքրում)	Բարձր	Ջրածածկման ենթակա կամ ջրածածկ տարածքներում բնափայտի /բներ, արմատներ, բնի մնացորդներ/ թողնելու պարագայում սկսվում է բնափայտի փտում, որն էլ հանգեցնում է էվտրոֆիկացիայի գործընթացների ինտենսիվացման և ջրի որակի վատթարացման:	Ազգային պարկի ափամերձ անտառային տնկարկներով բոլոր տարածքները՝ ներառյալ Արտանիշի և Նորատուս թերակղզիները

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սպառնալիքի անվանումը	Սպառնալիքի դասակարգումը	Ազդեցության տեսանելի հետևանքները	Թիրախային տարածքներ/ տեսակներ
Հրդեհ և հրդեհաշիջման աշխատանքներ	Միջին	Հրդեհները հանգեցնում են էկոհամակարգերի զգալի փոփոխությունների, մինչև անգամ դրանց լիովին փոխարինման /երկարատև և ինտենսիվ հրդեհի դեպքում ծառաբուսային բուսականությունը կարող է փոխարինվել խոտաբուսային բուսականությամբ/: Ծատ հաճախ հրդեհները հանգեցնում են ինվազիվ բուսատեսակների ինտենսիվ տարածման, որն էլ իր հերթին դարձյալ բերում է էկոհամակարգերի փոխարինման: Չնայած բերքահավաքից հետո ցանքատարածությունները այրելը արգելված է տեղի բնակչությունը երբեմն այրում է դրանք: Իսկ վայրի հրդեհները Սևանի ավազանում չնայած մեծ տարածքներ սովորաբար չեն ընդգրկում, սակայն վերջին տարիներին բավականին հաճախակիացել են (2022 թվականին գրանցվել է 13 դեպք)	Ազգային պարկի ողջ տարածքը, ներառյալ Արտանիշի և Նորատուսի թերակղզիները
Ինվազիվ բնիկ և ներմուծված տեսակներ (հիվանդություններ և վնասատուներ)	Ծատ բարձր	Հիվանդությունների և վնասատուների բռնկումները կարող են մեծ վնաս հասցնել անտառային էկոհամակարգերին և տնկարկներին: Օրինակ՝ ներկայումս մեծ անհանգստության առիթ է ինվազիվ բզեզների տեղափոխած նեմատոդների պատճառով սոճու տնկարկների զանգվածային չորացումը: Մյուս ծառաբույսերի հիվանդություններով և վնասատուներով համատարած վարակման դեպքեր վերջին տարիներին չեն գրանցվել, սակայն չի կարելի բացառել դրանց հնարավորությունը ապագայում, հատկապես հաշվի առնելով կանխատեսվող կլիմայի փոփոխությունը	Ազգային պարկի ողջ տարածքը
Որսորդություն և որսագողություն	Բարձր	«Սևան» ազգային պարկի սահմաններում որսն արգելված է: Սակայն ազգային պարկի սահմաններում որսագողության նկատմամբ վերահսկողության մակարդակը գոհացուցիչ չէ: Մյուս կողմից որսորդների շրջանում առկա է կրթության և իրազեկվածության մակարդակի պակաս, ինչը նպաստում է անպատասխանատու վարքագիծը:	Ազգային պարկի ողջ տարածքը

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սպառնալիքի անվանումը	Սպառնալիքի դասակարգումը	Ազդեցության տեսանելի հետևանքները	Թիրախային տարածքներ/ տեսակներ
Զկնորություն և ձկնագողություն	<b>Շատ բարձր</b>	<p>Զկնորության հետ կապված առհասարակ առկա են մի շարք հիմնախնդիրներ ինչպիսին են արգելված սեզոնի ընթացքում ձկան որսը, մանրաձկան որսը գետերում, վերարտադրության խավայներից ավել որսը և այլն:</p> <p>Առավել բացասական ազդեցություն է հասցվում իշխան տեսակին, որը չնայած պոպուլյացիաների փոքր քանակին, մեծ արժեք է ներկայացնում ինչպես արտադրական որսի, այնպես էլ էկոհամակարգի կայունացման համար՝ պահելով բուսակեր և գիշատիչ ձկների հաշվեկշիռը:</p> <p>Միգի չկանոնակարգված որսը նպաստում է լճի էվորոֆիկացիայի ինտենսիվացմանը, քանի որ նվազում է ջրիմուռների աճի և զարգացման վերահսկումը:</p> <p>Ներկայումս լճում նկատելիորեն կրճատվել են խեցգետնի պաշարները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խեցգետնի պոպուլյացիան նպաստում է ջրի մաքրմանը օրգանական մնացորդներից, պետք է խստիվ արգելվի խեցգետնի որսը</p>	Իշխանի տարատեսակները
Ծառահատումներ և փայտանյութի հավաքություն	<b>Բարձր</b>	<p>Այօրինի ծառահատումների բացասական ազդեցությունը ավամերձ և գետաբերանային անտառներում հանգեցնում է ավերի լվացման, նվազեցնում է էրոզիայի հիմքը, ինչպես նաև գետերի ջրերի ինքնամաքրման ունակությունը:</p> <p>Հատումները մնացորդային կաղնուտներում և գիհուտներում հանգեցնում են էկոհամակարգերի կայունության խախտմանը, նպաստավոր պայմաններ է ստեղծում ինվազիվ տեսակների ներթափանցման և տարածման համար, նվազեցնում է բնական վերաճը և նպաստում է հիվանդությունների և վնասատուների տարածմանը</p>	Նորատուսի թերակղզի, գետաբերանային անտառներ, գիհու նոսրանտառներ
Բույսերի հավաքություն	<b>Միջին</b>	Սևանի ավազանում հավաքված ուտելի բույսերի, դեղաբույսերի և սնկերի քանակի վերաբերյալ տվյալներ չկան, քանի որ դրանք հավաքվում են անձնական կարիքների համար կամ տեղական շուկաներում վաճառելու նպատակով՝ առանց որևէ թույլտվության:	Նորատուսի թերակղզի, գետաբերանային անտառներ

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սպառնալիքի անվանումը	Սպառնալիքի դասակարգումը	Ազդեցության տեսանելի հետևանքները	Թիրախային տարածքներ/ տեսակներ
		Սպառնալիքի ազդեցությունը դժվար թե հնարավոր լինի գնահատել, սակայն չկանոնակարգված հավաքի արդյունքում շատ դեպքերում վնասվում են և առանձին տեսակների պոպուլյացիաները և ամբողջ Էկոհամակարգը, ինչպես օրինակ չիչխանի զանգվածային հավաքի ժամանակ հանախ մեծ վնաս է հասցվում թփուտներին	
Կոյուղի և կեղտաջրեր, գյուղատնտեսական աղտոտում	<b>Շատ բարձր</b>	Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացումը առանց ջրածածկման ենթակա տարածքների նախապես մաքրման հանգեցնում է մեծ տարածքների ջրածածկման, ինչի արդյունքում էլ ավելանում է ջրի աղտոտվածությունը օրգանական նյութերով և նիտրատներով: Սևանա լիճ թափվող գետերի մեծ մասը աղտոտված են նաև կոյուղաջրերով, որոնցում թույլատրելից էապես բարձր է ֆոսֆորի պարունակությունը: Էական է նաև լճի ափին հարակից տարածքներում սպասարկման ծառայություններ մատուցողների կողմից աղբոտման ու կոյուղաջրերով աղտոտման ազդեցությունը: Գյուղատնտեսական գործունեության արդյունքում գետերը աղտոտվում են ազոտով և ֆոսֆորով:	Ազգային պարկի ողջ ջրային տարածքը
Կենցաղային թափոններ, շինարարական և այլ աղբ	<b>Բարձր</b>	Կենցաղային աղբը սովորական հիմնախնդիր է քաղաքային և այլ բնակավայրերի ծայրամասերի համար: Կենցաղային աղբում առանձակի լուրջ հիմնախնդիր են քիմիական մնացորդները և պլաստիկը: Կոշտ կենցաղային աղբը հատկապես վտանգավոր է գետերի հուններում՝ խոչընդոտելով ձկների տեղաշարժին դեպի վեր է ձվադրման, ինչպես նաև մանրաձկան տեղաշարժը դեպի լիճ: Սևանա լճի ավազանում գոյություն ունեն բազմաթիվ պաշտոնական և անօրինական տարբեր տիպի աղբավայրեր:	Նորատուսի թերակղզին և բոլոր գետերի հունները

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սպառնալիքի անվանումը	Սպառնալիքի դասակարգումը	Ազդեցության տեսանելի հետևանքները	Թիրախային տարածքներ/ տեսակներ
Անասնաբուծություն (գերարածեցում, խոտհարքեր)	Միջին	<p>Ազգային պարկի տարածքի արոտավայրերի զգալի մասը գերարածեցված են, խոտհարքները՝ գերօգտագործված, ինչն էլ հանգեցնում է կենսաբազմազանության և էկոհամակարգերի կառուցվածքի փոփոխության, հողի էրոզիայի և այլ բացասական ազդեցությունների: Խմոցների բացակայության պայմաններում անասունները ջուր խմելու նպատակով հաճախ մոտենում են լճին:</p> <p>Անասնապահությունը ազգային պարկի տարածքում էապես վնասում է անտառային էկոհամակարգերին: Արածեցումը, խոտհարքերի օգտագործումը ուղղակիորեն վնասում են անտառի բնական վերածին: Հովիվների շները շատ դեպքերում անհանգստացնում են մի շարք թռչնատեսակների, իսկ հովիվների տեղակայման վայրերը երբեմն դառնում են հրդեհի օջախ:</p>	Ազգային պարկի ողջ տարածքը
Ձկնաբուծություն	Ցածր	Ներկայումս լճում բաց ցանցավանդակներով ձկնաբուծությունը մեծ վտանգ չի ներկայացնում: Հնարավոր է կերի և պրոֆիլակտիկ միջոցների չափաբաժինների գերազանցումը հանգեցնել ջրի աղտոտման օրգանական նյութերով:	Լճի ողջ ջրային տարածք, հատկապես որտեղ տեղակայված են ցանցավանդակային տնտեսությունները
Զբոսաշրջություն և հանգստի կազմակերպում	Միջին	<p>Զրային տրանսպորտը ներկայացված է ձկնորսական նավակներով, զբոսաշրջիկների համար նախատեսված փոքր նավակներով և ջրային մոտոցիկլետներով:</p> <p>Նրանց անմիջական ազդեցությունը ջրային էկոհամակարգերի վրա ցածր է, սակայն դրանք պատճառ են աղմուկի, աղտոտման և լին է լցվում դրանց վառելիքի մնացորդները:</p>	Լճի ողջ ջրային տարածք

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սպառնալիքի անվանումը	Սպառնալիքի դասակարգումը	Ազդեցության տեսանելի հետևանքները	Թիրախային տարածքներ/ տեսակներ
Ավտոճանապարհներ (արտաճանապարհային երթևեկություն)	Միջին	Արտաճանապարհային երթևեկությունը խախտում է առանձին էկոհամակարգերի կայունությունը և վնասում է կենսաբազմազանությանը: Հողի տեղաշարժի արդյունքում ոչ միայն ուղղակի վնաս է հասցվում բուսականությանը, այլ նաև երթևեկության արդյունքում տարածվում են ինվազիվ բուսատեսակները: Առաջացրած աղմուկը անհանգստացնում է կենդանիներին և բներում գտնվող թռչուններին: Հողատարածքներով երթևեկությունը ավելի պինդ է դարձնում հողը և քանդում է հողում գտնվող բները: Արտաճանապարհային երթևեկությունը ազգային պարկի տարածքում դեռևս շատ տարածված երևույթ չէ:	Արտանիշի և Նորատուսի թերակղզիներ
Ավտոճանապարհներ	Միջին	Ազգային պարկի տարածքում կան բազմաթիվ գրունտային ներքին օգտագործման ճանապարհներ, որոնք տարերայնորեն են բացվել: Դրանց ազդեցությունը էկոհամակարգերի վրա փոքր է, սակայն հանգեցնում է էկոհամակարգերի կտրտվածության, որն էլ իր հետ բերում է բազմաթիվ այլ բացասական հետևանքների: Սակայն ճանապարհների այս ցանցը կարող է ծառայել հրդեհների մարման համար:	Արտանիշի և Նորատուսի թերակղզիներ, ավամերձ գոտիներ
Զայնային, լուսային և ջերմային աղտոտիչներ	Միջին	Ներկայում ազգային պարկի տարածքում աղմուկի մակարդակի և կենսաբազմազանության վրա դրա ազդեցության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:	Պահպանության բոլոր թիրախները
Հանքարդյունաբերություն	Միջին	Ներկայում բացակայում են ազգային պարկի տարածքում կենսաբազմազանության և բնական էկոհամակարգերի վրա հանքարդյունաբերական գործունեության ազդեցության վերաբերյալ հավաստի տեղեկությունները, հաշվի առնելով, որ այն բացառապես ապօրինի է, այդուհանդերձ առկա են փաստեր ավազի արդյունահանման դեպքերի վերաբերյալ, որոնք հղի են ուղղակիորեն խախտելու բնական լանդշաֆտները:	Ճամբարակի տարածք

**Պահպանության կազմակերպումը**

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը նախաձեռնել է անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության կազմակերպման համակարգի բարեփոխում: «Սևան» ազգային պարկի պահպանման ծառայությունը վերակազմակերպել է: Ըստ նորաստեղծ պահպանության համակարգի՝ պահպանությունը ԲՀԴՏ-ների պահպանության բաժնի փոխարեն արդեն իրականացվելու է Էկոպարեկային ծառայության և Գեղարքունիքի մարզի պարեկային ծառայության ստորաբաժանման ենթակայությամբ գործող նորաստեղծ ջրային պարեկային ծառայության ստորաբաժանման միջոցով: Ներքին գործերի նախարարության Ջրային պարեկային ծառայության հիմնական ֆունկցիոնալ բազան լինելու է ջրային ավազաններում և առափնյա հատվածներում՝ լողափներում, հանգստյան գոտիներում հասարակական կարգի և հովեկների ու մնացյալ քաղաքացիների անվտանգության ապահովումը, արձագանքը իրավախախտումներին ու պատահարներին, ապօրինի ձկնորսության ու որսի դեմ կանխարգելիչ պայքարը, ջրային ավազաններում դժբախտ պատահարների կանխարգելումն ու խեղդվողներին փրկելը:

Պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակի Ջրային պարեկների վաշտի գործառույթները մանրամասն թվարկված են ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի 20.07.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 25-Լ հրամանով հաստատված հավելվածում:

Էկոպարեկային ծառայության մասին ՀՀ օրենքի<sup>51</sup> ընդունումից հետո, համակարգի ամբողջական ստեղծումն ընթացքի մեջ է: Ինչպես նշվել է վերը, պահպանության ծառայությունն այսուհետ չի կազմակերպվելու «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից: Այսպիսով, պահպանության ծառայության աշխատակիցը պատասխանատու է իրավախախտումների հայտնաբերման, դրանց կանխման ու կանխարգելման համար, սակայն «ռենջեր»/անտառապահի այլ գործառույթներ չի փոխանցվում պահպանության ծառայության աշխատակցին և արդյունքում առաջանում է բաց: Այդ գործառույթներից առանձնացնենք քայլարշավային արահետների, տարաբնույթ ենթակառուցվածքների վիճակի ստուգումը, Էկոհամակարգում հիվանդությունների օջախների բացահայտումն ու մշտադիտարկումը, աջակցությունը գրոսաշրջային և կրթական ծառայությունների ու միջոցառումների իրականացմանը, աջակցությունը հակահրդեհային միջոցառումներին և հրդեհաշիջման աշխատանքներին, համայնքների հետ տեղում կապի ու համագործակցության ապահովումը, կենսաբազմազանության մշտադիտարկման նպատակով տվյալների հավաքագրումը և այլն:

Դրանք ապահովելու նպատակով առաջարկվում է հզորացնել և ընդլայնել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ մշտադիտարկման բաժնի գործառույթները, որոնք ներկայացված են կառավարման պլանի մշտադիտարկման և վարչական ծրագրերում:

Նաև առաջարկվում է սերտ փոխգործակցություն պահպանության գործառույթն իրականացնող կառույցների միջև՝ ի նպաստ կառավարման պլանի և ազգային պարկի պահպանության գործողությունների արդյունավետ իրականացման:

**Ազդեցության գնահատումը**

Պահպանության ծրագիրը կունենա առանցքային դրական ազդեցություն պահպանման առարկա ֆլորայի և ֆաունայի ընդհանուր և թիրախային տեսակների և կենսամիջավայրերի նկատմամբ սպառնալիքների կանխման և մեղմման, կենսաբազմազանության, լանդշաֆտների պահպանման իմաստով: Այս դրական ազդեցությունը կզենեցվի խախտումների հայտնաբերման, կանխման, հրդեհային անվտանգության նկատմամբ հսկողության իրականացման և հրդեհների կանխարգելման, ինչպես նաև հրդեհների և արտակարգ այլ պատահարների ժամանակ անհետաձգելի միջոցառումների իրականացման, պահպանության կանոնների ու նորմերի պահպանման նկատմամբ հսկողության, խախտումների արձանագրման կիրառմամբ: Այս բոլոր գործառույթները կիրականացվեն ի շահ

<sup>51</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186692>

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Էկոհամակարգերի բնականոն գոյության և կենսագործունեության: Սա էլ իր հերթին դրական ազդեցություն կունենա «Սևան» ազգային պարկին հարող տարածքներում բնակվող, կենսագործունեություն ծավալող և այցելող մարդկանց կողմից Էկոժառայություններից կայուն օգտագործման, առողջության, էսթետիկ-հուզական, հանգստի ապահով և արդյունավետ կազմակերպման վրա:

Ի լրումն շրջակա միջավայրի վրա աներկբա դրական ազդեցության, նաև կարևոր է դիտարկել մի շարք տարաբնույթ ազդեցություններ բուն պահպանման ծառայություն իրականացնողների սոցիալ-տնտեսական-հոգեբանական բարեկեցության տեսանկյունից: Այս ազդեցությունների շարքում, անշուշտ, կարելի է բնորոշել թե դրական, այնպես էլ որոշ ոչ դրական ներգործություններ: Դրանց թվում են.

№	Պահպանություն իրականացնողների համար ազդեցություններ	
	կողմ	դեմ
1	Աշխատանքի հնարավորություն	Աշխատանք հանգստյան օրերին
2	Կրթումների հնարավորություններ	Կադրերի և ֆինանսավորման պակաս
3	Մասնագիտական և անձնական շարունակական զարգացում	Մեզոնային ազդեցություն աշխատանքային միջավայրի վրա
4	Աշխատանքային բավարարվածություն	Ցածր վճարներ
5	Դրական ազդեցություն համայնքների համար	Վայրի բնության և շրջակա միջավայրի հնարավոր վտանգների ազդեցություն
6	Արտաքին աշխատանքային միջավայր, մշտական առնչություն բնության հետ	Ֆիզիկական ծանրաբեռնվածություն և վտանգ, հատկապես փրկարարական միջոցառումների դեպքում
7	Անձնական առողջական օգուտ	
8	Կայուն աշխատանք	

Պահպանության ծառայությունը ստեղծում է դրական արդյունքներ նաև հարակից համայնքների բնակչության, այցելուների և ԱՊ-ի ռեսուրսներից օգտվող այլ անձերի համար ողջ երկրում, ինչպես օրինակ՝ բնական ռեսուրսների պաշտպանություն, բնության և մարդկանց համար վտանգների կանխում կամ կառավարում, առողջության համար նպաստավոր պայմանների ապահովում, տարաբնույթ էկոժառայությունների տրամադրում: Հնարավոր է բացասական ազդեցություն շարունակվող խախտումներով բնական ռեսուրսների օգտագործումը կամ բնապահպանական վտանգներ կայացնող գործունեությունը արգելելու հետևանքով: Կարգազանց անձերը կկրեն իրավական, ֆինանսական, բարոյական վնաս: Անհրաժեշտ է մշակված ունենալ և առաջարկել այլընտրանքային լուծումներ, սխեմաներ, ժամանակացույցեր պահանջված կարգերին համապատասխանություն ապահովելու համար, միաժամանակ շարունակելով մոնիթորինգի իրականացումը՝ ցանկալի արդյունքին հասնելու և խախտումները հիմնովին վերացնելու նպատակով:

Այսպիսով, պահպանման ծրագիրը կապահովի աներկբա դրական ազդեցություն շրջակա միջավայրի բնականոն կենսագործության վրա, նաև՝ տարաբնույթ դրական սոցիալ-տնտեսական-հուզական ազդեցություններ ծրագրի իրականացմանը նպաստող անձնակազմի, հարակից համայնքների բնակչության և այցելուների համար: Վերը թվարկված որոշ բացասական ազդեցություններ հնարավոր են, սակայն դրանք ժամանակով սահմանափակ են, իսկ ազդեցությամբ՝ ոչ նշանակալի:

**6.2.3 Ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման ծրագիր**

Ծրագիրը միտված է 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ռազմավարական նպատակների (տես **Բաժին 3.3.3-ը**) իրագործմանը:



Ծրագրի հիմնական նպատակն է վերհանել մարդածին բացասական ազդեցության հետևանքները լանդշաֆտների վրա, առաջարկել լուծումներ, որոնք թույլ կտան կանխել հետագա դեգրադացիան, բարելավել ներկա վիճակը և ապագայում ունենալ կայուն և կառավարելի էկոհամակարգ:

Մասնավորապես, «Սևան» ԱՊ-ի ռազմավարական թիրախները լանդշաֆտների վերականգնման տեսանկյունից կարող են սահմանվել հետևյալ կերպ՝

- 1) Մինչև 2028թ.-ը մաքրել 1109.7 հա ջրածածկման ենթակա տարածքները,
- 2) Մինչև 2028թ.-ը անտառապատել առնվազն 250 հա հողերը,
- 3) Մինչև 2028թ.-ը վերակառուցել առնվազն 200 հա սոճու մոնոկուլտուրաներ,
- 4) Մինչև 2025թ.-ը «Սևան» ԱՊ ՊՈԱԿ-ի տնկարանային տնտեսության տարեկան արտադրողականությունը հասցնել առնվազն 100000 հատի:

**Ծրագիրը հիմնական բաղադրիչները՝**

- Ջրածածկման ենթակա տարածքների մաքրման աշխատանքներ,
- Անտառապատման և անտառվերականգնման աշխատանքներ,
- Դեգրադացված բնական կերտահանդակների (արոտավայրեր և խոտհարքեր) վերականգնում:

**Ծրագրի էությունը**

Յուրաքանչյուր տարի Սևանա լճի մակարդակի տարբերությունը տարվա ընթացքում կարող է հասնել 30-50 սմ-ի: Նմանօրինակ մեծ տատանումները բերում են Սևանա լճի ափամերձ հատվածների էկոհամակարգի անկայուն վիճակի: Դժվարացնում են մաքրման ենթակա տարածքների քարտեզագրման և մաքրման գործընթացների պլանավորումն ու իրականացումը:

Վերջին երկու տասնամյակում Սևանա լճի մակարդակը ձեռնարկված միջոցառումների արդյունքում բարձրացել է ավելի քան 3 մետրով: Ցավոք, ջրածածկ տարածքները ժամանակին չեն մաքրվել և նախապատրաստվել ջրածածկմանը, այդ պատճառով ջրածածկ են եղել հազարավոր հեկտար ափամերձ անտառներ և թփուտներ: Ներկայումս նշված ջրածածկ անտառները դարձել են Սևանա լճի էկոհամակարգի վրա ազդող բացասական էական գործոն: Ջրածածկ անտառների կենսազանգվածից (քայքայման, լուծահանման, տարալուծման հետևանքով) լճի ջրեր են լուծահանվում մեծ քանակությամբ կենսածին նյութեր՝ օրգանական ածխածին, ազոտ, ֆոսֆոր և այլն, որոնք խթանում են լճի ճահնացման գործընթացը: Ջրասուզված անտառանյութի երկարատև քայքայումը կդառնա լճի ջրի աղտոտման աղբյուր:

**Կլիմայական բնութագիրը և դրա փոփոխության արդյունքում անտառային էկոհամակարգերին սպառնացող վտանգները և հարմարվողականության ուղիները**

Հայաստանում 1935-2020 թվականներին գրանցված ջերմաստիճանային անը կազմում է 1.38°C: Վերջին 25 տարիներին տարեկան միջին ջերմաստիճանի շեղումները եղել են միայն դրական (բացառությամբ 2011թ.): Սեզոնային կտրվածքով տեղումների քանակի ամենամեծ նվազումը դիտվում է առանց այն էլ չորային ամռանը:

«Սևան» ազգային պարկի անտառածածկ տարածքներում գերակշռող ծառատեսակներն են սոճին և բարդին, որոնք արհեստական տնկարկներ են և գտնվում են խոցելի վիճակում: Որոշակի մակերես են զբաղեցնում գիհու և կաղնու բնական անտառները, որոնք ավելի կենսունակ են: Ջրածածկման ենթակա տարածքների մաքրման արդյունքում վերանալու են նախկինում տնկված, վերը նշված մոնոկուլտուրաների գրեթե կեսը: Բացի դրանից՝ ջերմաստիճանի բարձրացումն ավելացնում է վնասատու միջատների քանակը և տարածումը (օրինակ՝ կեղևակեր):

Կլիմայի փոփոխության հետևանքով կարող է գրանցվել ծառատեսակների կազմի փոփոխություն, իսկ բազմաթիվ տարածքներում չորադիմացկուն ծառատեսակների համար ստեղծվում են ավելի բարենպաստ պայմաններ: Այդ իսկ պատճառով անտառվերականգնման և անտառապատման

աշխատանքներ իրականացնելիս հարկավոր է հաշվի առնել ներկայիս անտառների վիճակը և դրանց ճիշտ տրանսֆորմացիայի ուղիները, որպեսզի քիչ խոցելի լինեն:

### **Ազդեցության գնահատումը**

Ընդհանուր առմամբ, Ծրագրի իրականացումը կթողնի դրական ազդեցություն շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, մասնավորապես՝ մթնոլորտային օդի, դիտապատկերի, անտառային ծածկույթի, կենդանական և բուսական տեսակների կենսամիջավայրի բարելավման, ջրային և հողային ռեսուրսների աղտոտման նվազեցման տեսանկյունից, ինչը նաև դրական կազդի շրջակա համայնքների բնակչության և այցելուների առողջության վրա:

Ծրագրի իրականացման փուլում կանխատեսվում է որոշակի կարճաժամկետ բացասական ազդեցություն պայմանավորված շինարարական տեխնիկայի աշխատանքով, ինչը կարելի է մեղմել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից մշակված բնապահպանական կառավարման պլանի՝ աշխատանքներն իրականացնողի կողմից արդյունավետ իրագործմամբ: Տարածքների մաքրման արդյունքում կառաջանա նյութական օգուտ՝ ջրածածկ տարածքներից հանված ծառակոճղերը, արմատները և այլ կենսաբանական զանգվածները չորանալուց հետո առնվազն կծառայեն որպես վառելանյութ մոտակա բնակչության համար:

Ծրագիրը դրական է նաև սոցիալ-տնտեսական զարգացման առումով՝ տվյալ աշխատանքների ընթացքում շրջակա համայնքների բնակիչների ներգրավման տեսանկյունից նաև բարելավված շրջակա միջավայրը կունենա դրական ազդեցություն այցելուների ավելացման վրա՝ ինչը իր հերթին կմեծացնի շրջակա համայնքների եկամուտները:

Ինչպես նշված է վերը, միաժամանակ կարող է բացասական ազդեցություն դիտվել ազդակիր բնակավայրերի որոշ բնակիչների և ֆերմերների ապրելակերպի և տնտեսվարման գործունեության վրա: Նրանք օգտագործում են «Սևան» ԱՊ-ի տնտեսական գոտու դեզրադասված բնական կերահանդակները (արոտավայրերը և խոտհարքերը), որոնք Ծրագրով ենթակա են վերականգնման, ինչը՝ այլընտանքային արոտավայրերի և խոտհարքերի բացակայության պարագայում, կարող է հանգեցնել ապրուստի միջոցների կորստի: Նշված խնդրի լուծումը պահանջում է ազդակիր համայնքներում այլ գործունեություններով չծանրաբեռնված, հիմնականում համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքերի առկայության գնահատում, և այդ տարածքներից այլընտրանքային տարածքների առաջարկ, նախկին տարածքներից օգտվելը արգելելու պարագայում: Ստորև աղյուսակով ներկայացված են «Սևան» ազգային պարկին հարակից համայնքներում առկա բնական կերահանդակների տարածքները, ինչն, անշուշտ, տալիս է հնարավորություն անասնապահություն իրականացնել այլ՝ չարգելված տարածքներում: Դեզրադասված արոտավայրերի և խոտհարքերի օգտագործումը նվազեցնում է ստացվող արդյունքը անասնապահությունից նաև բացասական է ազդում շրջակա միջավայրի վրա և չվերականգնելու դեպքում կհանգեցնի տվյալ արոտավայրերի և բնակմիջավայրերի կորստի հետևաբար նաև համապատասխան ծառայությունների և դրանցից ստացվող եկամուտների նվազման: Վերականգնված առողջ արոտային էկոհամակարգը կարող է տրամադրել ավելի շատ և արդյունավետ կերպով էկոհամակարգային ծառայությունները՝ աշխածնի ու աղտոտիչների կյանում, ջրի ֆիլտրում և պաշարում, առավել հարուստ կենսաբազմազանություն՝ ներառյալ ուտելի բույսեր և դեղաբույսեր, արածեցման դեպքում ավելի շատ կաթ և առողջ կենդանի՝ հետևաբար առավել մեծ եկամուտներ համայնքների բնակիչների համար: Նշված տվյալները վերցված <sup>[52]</sup> աղբյուրից ամփոփված են **Աղյուսակ 13**-ում:

### **Աղյուսակ 13. Գեղարքունիքի մարզի համայնքների արոտավայրերը և խոտհարքերը**

<sup>52</sup>UNCCD-ի (Միավորված ազգերի կազմակերպության անապատացման դեմ պայքարի կոնվենցիա) հողածածկման դասակարգման տվյալների համաձայն

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

№	Համայնք	Արտավայր և խոտհարք, հա
1	Ճամբարակ	19,661.6
2	Սևան	27,707.0
3	Գավառ	40,645.5
4	Մարտունի	72,537.0
5	Վարդենիս	63,972.7

Ինչպես երևում է **Աղյուսակ 13**-ից, ընդհանուր առմամբ, Գեղարքունիքի մարզի համայնքներում կան այլընտրանքային արտավայրեր ու խոտհարքեր և դեգրադացված հողերի վերականգնումը չի հանգեցնի գյուղատնտեսությանը զբաղվողների ապրուստի միջոցների կորստի այլ նաև երկարաժամկետ կտրվածքով բարելավված արտավայրը/խոտհարքը կտա առավել մեծ օգուտներ: Մյուս կողմից, Ծրագրի իրականացման համար կպահանջվի աշխատուժ, որը մի մասը կներգրավվի ազդակիր բնակավայրերից, ինչը դրական ազդեցություն կթողնի դրանցում զբաղվածության ցուցանիշների վրա:

Ավելացված և բարելավված անտառային միջավայրերը դրական կազդեն տարածքի էկոհամակարգային ծառայությունների և դրանցից ստացվող օգուտների վրա, ներառյալ հետագայում անտառից հավաքվող պտուղների և բույսերի տեսքով: Այս գործունեության արդյունքում առաջացող հնարավոր բացասական արդյունք կարող է լինել բնական էկոհամակարգերի փոփոխությունը իրենց սկզբնական կենսաբազմազանության արժեքից, ինվազիվ տեսակների տարածք ներմուծումն առաջացնող, որը նույնպես կփոխի բնական էկոհամակարգերը: Այս միջոցառումները պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցման լուծումները: Այս ռիսկերի կանխարգելման նպատակով կառավարման պլանում առաջարկվում են համապատասխան տեսակների ցանկը անտառտնկման և բարելավման աշխատանքների համար, որոնք տեղական են և առավել հարմարված ներկա պայմաններին, ինչպես նաև անտառվերականգնման և տնկման աշխատանքներից առաջ գիտահեն պլանավորման միջոցառումներ:

Ջրածածկ տարածքների մաքրումը դրական կազդի նաև բնակչության առողջության վրա, քանի որ կվերացնի հնարավոր ճահճացումը, ինչն էլ իր հերթին կարող է դառնալ թե մարդկանց թե կենդանիների համար տարաբնույթ հիվանդածին մանրէների առաջացման աղբյուր: Լճի կոնդաձածկ ավերից օգտվելու դեպքում, կարող են առաջանալ մարդկանց ֆիզիկական վնասվածքներ: Այսպիսով, այդ տարածքների մաքրումը ունի բազմակի դրական ազդեցություններ:

**6.2.4 Հետազոտությունների և կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագիր**

Ծրագիրը միտված է 1-ին, 2-րդ և 4-րդ ռազմավարական նպատակների (տես **Բաժին 3.3.3-ը**) իրագործմանը:

Կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագրի նպատակն է պահպանության թիրախների ու այլ գիտական հետաքրքրություն ներկայացնող տեսակների վիճակի մշտական հետևումը և գնահատումը: Ստացված տվյալների վերլուծության արդյունքում կատարվում է փոփոխությունների հիմնական միտումների գնահատում, որն էլ հիմք է ծառայելու որոշումների կայացման համար:

Մշտադիտարկման ծրագիրը կազմվել է պահպանող տարածքներում կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագրերի հայեցակարգային շրջանակին համապատասխան:

Կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագրի թիրախներն են՝

- 1) Մինչև 2029 թվականը հրատարակված է առնվազն 5 գիտական հոդված՝ մասնագետների և ազգային պարկի համապատասխան բաժնի աշխատակիցների համահեղինակությամբ,

- 2) Մինչև 2027 թվականը պահպանության բոլոր թիրախներն ապահովված են վիճակի վերաբերյալ ելակետային տվյալներով,
- 3) Մինչև 2026 թվականը պահպանության թիրախների և ցուցիչ տեսակների մշտադիտարկման համակարգը ներդրված է,
- 4) Մինչև 2026 թվականը կառավարման արդյունավետության մշտադիտարկման համակարգը ներդրված է, իսկ տվյալները հավաքագրվում են SMART կամ համարժեք ծրագրային ապահովման միջոցով:

Առաջարկվող ծրագիրը հնարավորություն է ստեղծելու կառավարել սպառնալիքները և հիմք ապահովել կառավարման պլանի տեսլականի, նպատակների իրականացման համար:

**Ծրագիրը հիմնական բաղադրիչները՝**

- Պահպանության թիրախների և ցուցիչ տեսակների մշտադիտարկում  
*Որպես պահպանության թիրախներ ընտրվել են 2 տարածք, 14 տեսակ և 1 էկոհամակարգ: Թիրախային տարածքներում ուսումնասիրվելու են հիմնական էկոհամակարգերը և ցուցիչ հանդիսացող հազվագյուտ և անհետացող, ինվազիվ և էքսպանսիվ տեսակների սրտայուլացիաները:*
- Բուսական կենսաբազմազանության մշտադիտարկում, ներառյալ.
  - ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված և որպես ցուցիչ տեսակներ առանձնացված հազվագյուտ բուսատեսակների պոպուլյացիաների վիճակի մշտադիտարկումը,
  - Հիմնական պահպանության թիրախ էկոհամակարգերում բուսատեսակների և վիճակի/արդյունավետության գնահատումը - կաղնուտներ, գիհուտներ և լայնատերև նոսրանտառներ, մերձալպյան մարգագետնատափաստաններ և մարգագետիններ,
  - Որպես ցուցիչ տեսակներ (էկոհամակարգերի խախտված լինելու ցուցիչներ) առանձնացված ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածման մշտադիտարկումը:
- Կենդանական աշխարհի մշտադիտարկում, ներառյալ.
  - Թիրախային ձկնատեսակների մշտադիտարկումը  
*Իխտիոֆաունայի մշտադիտարկման համար օրյելյո են համարվում իշխանի 2 ենթատեսակ՝ Գեղարքունի և Ամառային իշխան:*
  - Կաթնասունների մշտադիտարկումը  
*Ազգային պարկի տարածքում իրականացվելու է նաև լրացուցիչ գիտական մշտադիտարկում, որը ընդգրկելու է չղջիկների և գորշ արջի մշտադիտարկումներ:*
  - Թռչնատեսակների մշտադիտարկումը:

**Ծրագրի էությունը**

Կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագրի կարևորագույն մաս են կազմում գիտական ուսումնասիրությունները, որոնց հիմնական նպատակն է հազվագյուտ կենդանատեսակների և բուսատեսակների պոպուլյացիաների, ինչպես նաև էկոհամակարգերի վիճակի գնահատումը: Բացի դրանից՝ գիտական ուսումնասիրությունների ընթացքում կատարվում է տարբեր էկոլոգիական գործոնների և առաջնահերթ կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում կենսաբազմազանության ու էկոհամակարգերի վրա:

Ծրագիրը իրականացվելու է գիտական հաստատությունների հետ համագործակցությամբ, ընդ որում՝ գիտական հաստատությունների ցանկում պետք է ընդգրկվեն ինչպես գիտակրթական հաստատությունները, այնպես էլ բնապահպանական համապատասխան գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, մասնավոր ընկերությունները: Գիտական հաստատությունների հետ համագործակցության գործընթացը կառավարող գլխավոր հաստատություն կարող է

լինել ՀՀ ՇՄՆ հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոնը, որտեղ կարող են հավաքագրվել մշտադիտարկման տվյալները:

Որպես պահպանության թիրախներ ընտրվել են 2 տարածք, 14 տեսակ և 1 էկոհամակարգ: Թիրախային տարածքներում ուսումնասիրվելու են հիմնական էկոհամակարգերը և ցուցիչ հանդիսացող հազվագյուտ և անհետացող, ինվազիվ և էքսպանսիվ տեսակների պոպուլյացիաները:

Թիրախների մշտադիտարկումը ծառայելու է միայն պահպանության արդյունավետության մշտադիտարկման համար, իսկ մշտադիտարկման մաս կազմող մնացած բոլոր ուսումնասիրությունները ծառայելու են գիտական ուսումնասիրության համար:

**Ազդեցության գնահատումը**

Կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագրի իրականացումը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կթողնի կարևոր դրական ազդեցություն: Հետազոտությունները և կենսաբազմազանության մշտադիտարկումը կհասցեագրեն էկոհամակարգերի բաղադրիչների կարգավիճակը (քանակներ, տարածվածություն, կենսապահովման բարենպաստ պայմաններ և անվտանգ/անվնաս գոյություն), նաև՝ ճնշումները դրանց վրա և նախատեսված կարգերի խախտումները: Մշտադիտարկումը կօգնի կարճաժամկետ կտրվածքով օպերատիվ գործողությունների պլանավորմանն ու իրականացմանը, իսկ երկարաժամկետ էկոլոգիական մշտադիտարկումը կգեներացնի արժեքավոր տեղեկատվություն ԱՊ-ի զարգացման հնարավորությունների պլանավորման, անհրաժեշտ ռեսուրսների ապահովման և արդյունավետ կառավարման հնարավորությունների համար: Որոշ բարձր որակավորում չպահանջվող աշխատանքների կատարման համար կարող է պահանջվել աշխատուժ, որը կներգրավվի ազդակիր բնակավայրերից:

Մյուս կողմից, մշտադիտարման ծրագրի արդյունքները դրական ազդեցություն կթողնեն «Սևան» ազգային պարկի տեսլականի և ռազմավարական նպատակների իրականացման գործում:

Գիտական ոլորտից ներգրավված մասնագետների հետ աշխատանքը թույլ կտա զարգացնել ազգային պարկի մասնագետների կարողությունները տվյալ բնագավառում համապատասխան ռացիոնալ տնտեսական և բնապահպանական դրական ազդեցություններով: Մշտադիտարկման արդյունքների հիման վրա ձեռք բերված տվյալները կնպաստեն գիտահեն և հիմնավորված որոշումների կայացմանը և առավել արդյունավետ պլանավորման և պահպանության միջոցառումների իրականացմանը:

Մշտադիտարկման ծրագիրը կնպաստի ազգային պարկի և այլ առնչվող գիտական-մասնագիտական անձնակազմերի գիտելիքների և, առհասարակ, երկրում գիտական պոտենցիալի շարունակական զարգացմանը:

Մարդկանց առողջության և սոցիալ-տնտեսական բարեկեցության վրա ուղղակի ազդեցություն չի դիտվի, սակայն էկոլոգիական բարենպաստ հավասարակշռության պահպանումը և էկոհամակարգերի բնականոն կենսագործունեությունը, անշուշտ, կունենա մեծ դրական ազդեցություն առողջության, սոցիալ-տնտեսական-հոգեբանական բարեկեցության վրա:

«Սևան» ազգային պարկի մանրամասն էկոլոգիական մշտադիտարման ծրագիրը բերված է սույն ՌԷԳ հաշվետվության [Հավելված 1](#)-ում:

**6.2.5 Այցելությունների կազմակերպման ծրագիր**

Ծրագիրը միտված է 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ռազմավարական նպատակների (տես [Բաժին 3.3.3](#)-ը) իրագործմանը:

Այցելությունների կազմակերպման ծրագրի նպատակն է խելամիտ ձևաչափով ներքին և ներգնա գրոսաշրջիկներին հաղորդակից դարձնել ազգային պարկի ռեսուրսներով կազմակերպվող էկոլոգոսաշրջության փորձառություններին, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են շրջակա

միջավայրի պահպանությանը, լուծումներ առաջարկել անխոչընդոտ այցելությունների համար և ներկայացնել միջոցառումների իրականացման իրատեսական մոտեցումներ:

Ծրագրի թիրախներն են՝

- 1) Մինչև 2025թ. վերանայվել, թարմացվել, բարեկարգվել են ԲՀՊՏ-ների առկա հիմնական զբոսաշրջային երթուղիները,
- 2) Մինչև 2026թ. ուսումնասիրվել են ԲՀՊՏ-ների հիմնական գրավչությունները միավորող նոր զբոսաշրջային երթուղիներ,
- 3) Մինչև 2026թ. հանրային լողափերում այցելությունների հաշվառման մեխանիզմը ներդրված է,
- 4) Մինչև 2026թ. ներկայացվել է բնության հետ ներդաշնակ զբոսաշրջային առնվազն 10 ծառայության առաջարկներ / փաթեթներ,
- 5) Մինչև 2029թ. «Սևան» ԱՊ-ի զբոսաշրջային ծառայություններից օգտվողների ընդհանուր թիվը հասել է 10000-ի շեմը:

**Ծրագիրը զարգացման հիմնական հեռանկարներն են՝**

- Բնական, մշակութային ժառանգությունը և դրանց վրա հիմնված զբոսաշրջության զարգացման հեռանկարները  
*«Սևան» ազգային պարկում զբոսաշրջային գործունեության համար առանցքային բնական ժառանգություն են համարվում Սևանա լիճը, լողափերը, լիճը եզերող Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռնաշղթաները, Նորաշենի արգելափայրի սահմաններում գտնվող «Որորների կղզին», Սևանի և Արտանիշի թերակղզիները, ռելիեֆային գիհու նոսրանտառները և կաղնու մնացորդային անտառները, ինչպես նաև պատմամշակութային հուշարձանները:*
- Վերականգնողական ռեսուրսները և դրանց վրա հիմնված զբոսաշրջության զարգացման հեռանկարները  
*Ազգային պարկի վերականգնողական ռեսուրսներն են Սևանա լճի ավազանի բարձր լեռնային կլիման, օդը, խոնավությունը, սեզոնային ջերմաստիճանների փոփոխությունները, անզուգական լանդշաֆտները, հանքային բուժիչ ջրերը՝ «Լիճքը», «Սևանը» օգտակար են աղեստամոքսային տրակտի բուժման համար:*
- Էկոզբոսաշրջային ռեսուրսները և դրանց վրա հիմնված զբոսաշրջության զարգացման հեռանկարները  
*«Սևան» ԱՊ-ում հնարավոր է կազմակերպել զբոսաշրջության բազմաթիվ ձևեր, սակայն առանցքային է էկոզբոսաշրջությունը, որի գլխավոր նպատակը բնության պահպանությունն է՝ բնական ռեսուրսների տնտեսական արժևորման միջոցով, ինչը կարող է նպաստել նաև տեղական բնակչության կայուն եկամուտներ սպաստվելուն: Որպես էկոզբոսաշրջային արդյունք ներքին և ներգնա զբոսաշրջության կողմից մեծ պահանջարկ են վայելում քայլարշավային 7 արահետները:*
- Զբոսաշրջային այլ ռեսուրսները և դրանց վրա հիմնված զբոսաշրջության զարգացման հեռանկարները  
*Ազգային պարկի հիմնական առավելություններից մեկը բազմաբնույթ հյուրանոցային տնտեսության օբյեկտների առկայությունն է, որը ներառում է վրանային հանգստավայրերից, հյուրատներից մինչև բարձրակարգ հյուրանոցային համալիրներ՝ տարբեր մակարդակի ծառայությունների մատուցմամբ:*

**Ծրագրի էությունը**

Բնության հատուկ պահպանվող տարածքներում զբոսաշրջային այցելությունները խելամիտ կանոնակարգված կառավարելու պայմաններում անուղղակի ձևով նպաստում են կենսաբազմազանության, լանդշաֆտների, պատմամշակութային ժառանգության պահպանությանը,

համայնքների իրազեկվածության բարձրացմանը, նաև հանգեցնում են լողափերի, հանգստյան գոտիների կառավարման կանոնակարգումների ձևավորմանը:

**Ազդեցության գնահատումը**

Շրջակա միջավայրի վրա զբոսաշրջային և ռեկրեացիոն գործունեության տարբեր ձևերի ազդեցության չափորոշիչները (ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական, մշակութային, տնտեսական) անհրաժեշտ են միջավայրի վրա ազդեցությունը գնահատելու, տարածքի ծանրաբեռնվածությունը որոշելու և սահմանափակումներ կիրառելու, մոնիթորինգի ու վիճակագրական տվյալների հավաքագրման համար: Քանի որ «Սևան» ԱՊ-ի կառավարման հիմնական նպատակը նրա էկոհամակարգերի պահպանությունն է, անհրաժեշտ է գնահատել զբոսաշրջային թողունակությունը, հնարավոր հետևանքներն ու էկոլոգիական ռիսկերը, մշտադիտարկումների միջոցով կազմակերպել ազդեցությունների մեղմացման միջոցառումներ: Այցելությունների որոշակի քանակի գերազանցումը բացասական հետևանքներ է ունենում տեղի մշակութային և բնական լանդշաֆտների վրա, և դրա ոչ պատշաճ կարգավորումը կարող է հանգեցնել երբեմն անդառնալի հետևանքների:

ԱՊ-ի զբոսաշրջային հատվածի աշխատակազմից հարկավոր է պարբերաբար պահանջել զբոսաշրջության հետ կապված ազդեցությունների գնահատում և կառավարում, որի արդյունքում կորոշվեն և կալանավորվեն խնդիրների, տեղանքի սպառնալիքների լուծմանն ուղղված անհրաժեշտ գործողություններ: ԿՊ-ում ներառված մոնիտորինգի ծրագրի արդյունքները կկիրառվեն նաև տուրիզմի ազդեցությունների ժամանակին բացահայտման և հնարավոր միջոցառումների ձեռնարկման համար:

ԱՊ-ի վարձակալությամբ տրված տարածքներում զբոսաշրջության կազմակերպման համար բնական ռեսուրսների մեծածավալ շահագործումը, հյուրընկալության համար անհրաժեշտ շինությունների կառուցումը և զբոսաշրջության հետ կապված այլ գործունեությունների կազմակերպումը որոշ չափով բացասական ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի վրա, մասնավորապես՝ կենցաղային աղբով, կոյուղաջրերով աղտոտում, ձայնային ու լուսային աղտոտում, լանդշաֆտների խախտում և այլն: Այդպիսի ազդեցության աստիճանը կախված է զբոսաշրջիկների քանակից և կազմակերպիչների վարպետությունից, որոնք, հանգստի կազմակերպմանը զուգահեռ, հոգածություն պետք է դրսևորեն բնության հանդեպ:

Սևանա լիճը հանդիսանում է ՀՀ զբոսաշրջության հիմնական ուղղություններից մեկը և դրական ազդեցություն է թողնում տարածաշրջանի տնտեսական զարգացման վրա: Սևանա լիճ այցելություններից օգտվում են տեղի առևտրի և սպասարկման ծառայություններ մատուցողները, իսկ դրանց գործունեությունից անուղղակիորեն անասնապահները, գյուղմթերք անձեղնողները և այլն:

Սակայն, քանի որ ազգային պարկի կառավարման հիմնական նպատակը նրա էկոհամակարգերի պահպանությունն է, անհրաժեշտ է գնահատել զբոսաշրջային թողունակությունը, հնարավոր հետևանքներն ու էկոլոգիական ռիսկերը, մշտադիտարկումների միջոցով կազմակերպել ազդեցությունների մեղմացման միջոցառումներ: Այցելությունների որոշակի քանակի գերազանցումը բացասական հետևանքներ է ունենում տեղի մշակութային և բնական լանդշաֆտների վրա և դրա ոչ պատշաճ կարգավորումը կարող է հանգեցնել երբեմն անդառնալի հետևանքների:

Պատշաճ և կայուն հիմունքների վրա կազմակերպված զբոսաշրջությունը կունենա դրական ազդեցություն այցելուների առողջության, բարոյահոգեբանական-զգայական, էսթետիկ, սպորտային, ճանաչողական բնութագրերի վրա, ինչն էլ հրապուրում է տվյալ այցելության իրականացմանը: Սոցիալ-տնտեսական և ճանաչողական դրական ազդեցություն կառաջանա նաև տեղաբնակների համար, ովքեր մասնակցություն կունենան այցելուների ընդունման, սպասարկման, բարիքների տրամադրման գործում:

## 6.2.6 Էկոլոգիական կրթության, հանրային մասնակցության և հաղորդակցության ծրագիր

Ծրագիրը միտված է 7-րդ ռազմավարական նպատակի (տես **Բաժին 3.3.3-ը**) իրագործմանը:

Ծրագրի նպատակն է «Սևան» ԱՊ-ի էկոլոգիական կրթության, հանրային մասնակցության և հաղորդակցության գործիքակազմերի ձևավորման, զարգացման և գործարկման միջոցով նպաստել ազգային պարկի կառավարման կանոնադրական նպատակների արդյունավետ իրականացմանը:

Ծրագրի թիրախներն են՝

- 1) Հանրային հաղորդակցության և իրազեկության մակարդակը բարձրացել է. մինչև 2029թ. Ազգային պարկի հաղորդակցման պաշտոնական խողովակների տեսանելիությունը ներկայիս մակարդակի համեմատ բարձրացել է 50%-ով,
- 2) Մինչև 2026թ. փոխվել է «Սևան» ԱՊ Խորհուրդի անդամների ընտրության սկզբունքը, ապահովվել է կազմում առնվազն 1 հասարակական ոլորտի, 1 գիտական և 2 ՏԻՄ ներկայացուցիչների մասնակցություն,
- 3) Մինչև 2029թ. մարզի առնվազն 20 կրթական հաստատության հետ իրականացվել են առնվազն 80 էկոկրթական միջոցառում,
- 4) Մինչև 2026թ. ներդրվել է ազգային պարկի շահագրգիռ կողմերի ցանկի մշակման և թարմացման մեխանիզմ, և ըստ այդ ցանկի՝ 2027 թվականից եռամսյակային կտրվածքով տարածվում է ԱՊ-ի ընթացիկ գործունեության մասին էլեկտրոնային տեղեկագիր:

### Ծրագրի էությունը

Էկոլոգիական կրթությունը, հանրային մասնակցությունն ու հաղորդակցումը ոչ միայն կարևորվում են «Սևան» ԱՊ-ի կառավարման արդյունավետության տեսանկյունից, այլ նաև սույն Ծրագրի իրականացումը պարտադիր է ոլորտային մի շարք իրավական ակտերի կատարման տեսանկյունից:

Հետևապես Ծրագրի կազմման համար հիմք են հանդիսացել Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ մասնակցային որոշումների կայացման, էկոլոգիական իրազեկման ու կրթության ոլորտը կարգավորող այն հիմնական իրավական փաստաթղթերը, որոնք սահմանում են Ծրագրի երեք հիմնասյուների ուղղությամբ իրավունքների ու պարտականությունների շրջանակը (ցանկը սպառիչ չէ)<sup>53</sup>: Ոլորտի իրավական շրջանակի անբաժան մաս են կազմում նաև ՀՀ վավերացրած միջազգային համաձայնագրերը<sup>54</sup>:

### Ազդեցության գնահատումը

Ծրագրի իրականացումը կունենա էական դրական ազդեցություն շրջակա միջավայրի վրա՝ քանի որ բնակչության տեղեկացվածության և գիտելիքների բարելավումը կնպաստի բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը, վնասակար գործունեությունների կրճատմանը կամ դրանցից հրաժարվելուն: Սոցիալական միջավայրերի վրա ևս կլինի դրական ազդեցություն՝ իրենց շրջապատող բնական միջավայրի, պատմական գիտելիքների բարձրացում, աշխարհայացքի զարգացում՝ հատկապես երեխաների և երիտասարդների համար հետագա գործունեության համար բարենպաստ բազայի հիմնում:

<sup>53</sup> ՀՀ Սահմանադրություն <https://www.primeminister.am/hy/constitution/> (2015 թ.), «Կրթության մասին» ՀՀ օրենք. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1494&lang=arm>, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908>, «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենք. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1006>

<sup>54</sup> «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելու և հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=77849>, «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա. <https://www.e-draft.am/projects/4533/justification>



Այսպիսով, երկարաժամկետ կտրվածքով կնպաստի հանրության տարբեր շերտերի էկոլոգիական կրթության և իրազեկության մակարդակի բարձրացմանը, բնապահպանության հարցերի քննարկմանը հանրության լայն զանգվածների մասնակցությանը և այլն: Սա էլ իր հերթին կձևավորի ավելի պատասխանատու հասարակություն՝ առավել ճիշտ վարքագիծ և դրական ազդեցություն Սևան ազգային պարկի հետ կապված քաղաքացիների կենսակերպից եկող բացասական դրսևորումների: Արդյունքում, կնպաստի նաև առողջ կենսակերպով ապրելու և բնության հետ հարմոնիկ կենսագործունեության այլընտրանքների ձևավորմանը: Բացասական ազդեցություն չի ակնկալվում:

### 6.2.7 Ֆինանսական և մարքեթինգային ծրագիր

Ծրագիրը միտված է 8-րդ ռազմավարական նպատակի (տես [Բաժին 3.3.3-ը](#)) իրագործմանը:

Ֆինանսական և մարքեթինգային ծրագիրը միտված է «Սևան» ԱՊ ՊՈԱԿ-ի գործունեության ֆինանսական արդյունավետության և կայունության բարելավմանը: Մասնավորապես, Ծրագրի նպատակն է ՊՈԱԿ-ի ֆինանսական կայունության և անկախության ձևավորման համար նախադրյալների բացահայտումը, հետագա կարողությունների զարգացման համար հնարավոր ուղիների և մեխանիզմների մշակումը, որոնք կարող են դրսևորվել կազմակերպության հասույթների և դրամական հոսքերի դիվերսիֆիկացիայի, դոնոր կազմակերպությունների ներգրավման, վերջիններիս հետ համատեղ ծրագրերի իրականացման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության միջոցով սեփական եկամուտների աղբյուրների ձևավորման, զարգացման և ընդլայնման միջոցով (ներառյալ՝ վարձակալությունից ստացված հասույթները):

«Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի թիրախները ֆինանսական կառավարման տեսանկյունից կարող են սահմանվել հետևյալ կերպ՝

- 1) Մինչև 2029թ. ՊՈԱԿ-ի եկամուտներն ընթացիկ մակարդակի համեմատ ավելացել են առնվազն 10%-ով՝ 2018-2022 թթ. փաստացի աճի տեմպի շրջանակում<sup>55</sup>:
- 2) Մինչև 2029թ. ՊՈԱԿ-ի եկամուտների կառուցվածքում այլընտրանքային՝ ՊՈԱԿ-ի կողմից գեներացվող, հասույթների տեսակարար կշիռը ներկայիս մակարդակի համեմատ ավելացել է 10%-ով<sup>56</sup>:
- 3) Մինչև 2029թ. Իրականացնել առնվազն երկու համատեղ ծրագիր միջազգային դոնոր կազմակերպության ներգրավմամբ:
- 4) Մինչև 2029թ. ՊՈԱԿ-ը երեք տնտեսվարողի հետ ներդրել է ԷՀԾ վճարների սխեմա<sup>57</sup>:

«Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի ֆինանսական կայունության, պետական բյուջեից կախվածության համեմատական նվազեցման, ինչպես նաև եկամուտների այլընտրանքային աղբյուրների ձևավորման նպատակով վերջինս պետք է իրականացնի համապարփակ շուկայավարման միջոցառումներ, որոնք սերտորեն ինտեգրված կլինեն կազմակերպության ընդհանուր կառավարման ծրագրին:

***Ծրագրի շրջանակում դիտարկվող մեխանիզմների իրագործման նպատակով, անհրաժեշտ է առաջիկա տարիներին ապահովել հետևյալ միջոցառումները՝***

- «Պետություն-մասնավոր հատված» ձևաչափով համագործակցություն

<sup>55</sup> Հարկ է նշել, որ 2018-2022 թթ. տարեկան միջին աճի տեմպը կազմել է 11%:

<sup>56</sup> 2020-2022 թթ. այլընտրանքային աղբյուրներից ստացվող եկամուտները կազմել են հասույթների մինչև 43 %-ը: Առաջիկա տարիների ընթացքում առաջարկվում է հասույթների կազմում այլընտրանքային աղբյուրներից ստացվող եկամուտների մասնաբաժնի ավելացում՝ հասնելով փաստացի առավելագույն մակարդակին: Բացի դրանից՝ ՊՈԱԿ-ի եկամուտների ավելացմանը գուժահեռ առաջարկվող տեսակարար կշիռ մակարդակը կապահովի լրացուցիչ եկամուտներ:

<sup>57</sup> ՍԱՊ ՊՈԱԿ-ը ԷՀԾ-ների մեխանիզմի պիլոտային փուլում կարող է ներգրավել այնպիսի տնտեսվարողների, որոնք ներկա պահին ծավալում են ակտիվ գործունեություն, ունեն զարգացման տեսկայան և, ըստ երևույթին, համեմատաբար բարձր են գնահատում ՍԱՊ ՊՈԱԿ-ի գործունեությունն ու Սևանա լճի ամկայությունը: Որպես այդպիսիք դիտարկվում են Թուֆենկյան Ավան Մարակ Ծափաթաղ հյուրանոցը, Ստարտափ Արմենիա հիմնադրամը, Հայկական ճամբար հանգստի գոտին:

Իրատեսակյան ծրագրերի մշակում և հնարավոր գործընկերների ներգրավում ուղղակի հարողողակցության միջոցով քննարկումներ, շրջայցեր, փաստացի տվյալների և իրավիճակի ուսումնասիրության միջոցով գործընկերների ներգրավում կոնկրետ ծրագրերում:

- Ափամերձ տարածքների կառավարման մեխանիզմի բարելավում  
Լողափերի կառավարման և շահագործման հանձնման մեխանիզմների բարելավման միջոցով ապահովել լողափերի արդյունավետ կառավարում, վերջիններս շահագործող սուբյեկտների հետ արդյունավետ համագործակցության միջոցով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման ապահովում, տարածքների վարձակալության պայմանագրերի ու մեխանիզմների բարելավման միջոցով ազգային պարկի հատույթների հավաքագրման ապահովում:
- Տարածքների վարձակալության մեխանիզմի բարելավում  
Վարձակալական վճարների կիրառման և հավաքագրման մեխանիզմների բարելավման նպատակով հարկավոր է մշակել առավել զարգացած և ճկուն սխեմա՝ հիմնված ազգային պարկի՝ տարածքների գոտիավորման և պլանավորման վրա, որը թույլ կտա առանձնացնել առավել արժեքավոր տեղամասերն ու համապատասխանաբար ապահովել ավելի շատ եկամտի զեներացում:
- Տեղեկատվական տաղավարի ստեղծում  
Սևանի թերակղզու հատվածում ձևավորված տոնավանառային հատվածում ՊՈԱԿ-ը կարող է կազմակերպել տեղեկատվական տաղավար, որը այցելուներին կներկայացնի առկա ծառայությունների, տեսարժան վայրերի, թանգարանի կողմից ներկայացվող հետաքրքրության և այլ ծառայությունների մասով:
- Զբոսաշրջիկների համար ժամանցի վայրերի դիվերսիֆիկացման ընդլայնում  
Հնարավոր է Սևանա լճում ձկնորսության համար նախատեսված արհեստական «տաղավարի» ստեղծման ծրագրի իրականացում: Արդյունքում՝ Սևանա լճում կստեղծվի սիրողական ձկնորսության համար հարմարեցված վայր, որտեղ կգործեն վճարման պայմաններ (ժամավճար, որսված ձկան համար վճարում՝ ըստ վերջինիս քաշի), և հատուկ վերահսկողություն կիրականացվի, որպեսզի հնարավոր լինի բացառել ձկնագողությունը: Արդյունքում՝ կձևավորվեն հաճախորդների հոսքեր և եկամուտների աղբյուրներ:
- Նվիրատվության տուփեր  
ՊՈԱԿ-ի կառավարման ներքո գտնվող տարածքի տարբեր հատվածներում՝ ներառյալ վարձակալությամբ տրամադրված տարածքներում, կարելի է դիտարկել նվիրատվության տուփերի տեղակայման տարբերակ, որոնց ամբողջ գումարը կուղղվի ազգային պարկի պահպանությանն ու բարեկեցության ապահովմանը և հանրության՝ բնապահպանության նկատմամբ կրթամշակութային մտածելակերպի ձևավորմանը:
- «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի վեբ կայքի զարգացում  
Անհրաժեշտ է «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի վեբ կայքի զարգացում, ինտերնետային տիրույթում ՊՈԱԿ-ի տեսանելիության բարձր մակարդակի ապահովում, որտեղ հանրությանը հասանելի կլինեն նվիրաբերությունների, նվիրատվությունների, ֆինանսական և այլ տեսակի ծառայությունների համար համապատասխան գործիքներ ու մեխանիզմներ, որի միջոցով էլ հնարավորություն կընձեռվի տարբեր շահագրգիռ կողմերից ստանալու ֆինանսական ու տեխնիկական աջակցություն շարունակական զարգացման համար:
- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր  
ՊՈԱԿ-ը պետք է մշակի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր իրականացնող կազմակերպությունների տվյալների բազա, վերջիններսու հետ համագործակցողական տարբեր միջոցառումների ու ծրագրերի իրականացման նպատակով:
- Տնկարանային տնտեսության բարելավում

Պտղատու տնկիների տեսակների, բույսերի, ծառերի վանառքից ստացված եկամուտների բարելավում: Այս համատեքստում առաջարկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության աջակցությամբ կազմակերպել ամենամյա ծառատունկեր «Սևան» ազգային պարկի ՊՈԱԿ-ի տարածքում, որոնց կներգրավվեն բնապահպանության հետ առնչվող տեղական կառույցները:

- Գովազդային ենթակառուցվածքի զարգացում  
ՊՈԱԿ-ին պատկանող ցամաքային բանուկ հատվածներում՝ մասնավորապես Երևան-Թբիլիսի մայրուղու երկայնքով, կարելի է տեղադրել գովազդային վահանակներ, որոնցից կգոյանան մշտական եկամուտներ, քանի որ գովազդային կարիքները տնտեսվարողների կողմից առկա են մշտապես՝ առանց սեզոնայնության կտրուկ տատանումների:
- Արշավների կազմակերպում  
ՊՈԱԿ-ը սեփական կադրերի, ինչպես նաև պրոֆեսիոնալ գիդերի ներգրավման միջոցով կարող է կազմակերպել ազգային պարկի և հարակից տարածքում արշավների (լեռնային, լճային) կազմակերպում, որը հնարավորություն կընձեռնի կարևոր դերակատարություն ունենալու հանրապետության զբոսաշրջային ոլորտում:
- Էկո կրթություն  
ՊՈԱԿ-ը կարող է մասնագետների և ոլորտի փորձագետների ներգրավմամբ բնապահպանական և կենսաբազմազանությանը նվիրված կրթական միջոցառումներ իրականացնել, որտեղ կներգրավվեն դպրոցականներ, երիտասարդներ և բնապահպանության ու կենսաբազմազանության ոլորտներով հետաքրքրվող անձինք:

Առանձնակի ուշադրության է արժանի «Սևան» ազգային պարկի տարածքում Էկոհամակարգային ծառայության (ԷՀԾ) վճարի փորձնական սխեման, որի իրագործելիությունը հասկանալու համար անհրաժեշտ է բացահայտել վերջիններիս հնարավորությունները, այդ թվում՝ ներուժը, որոշել աշխարհագրական սահմանները, բացահայտել Էկոհամակարգի պոտենցիալ օգտագործողին, որոշել մոնիթորինգի, ստուգման և հաշվետվություններ կազմելու մեխանիզմներ, բացահայտել ֆինանսավորման և շահույթի փոխանակման մեխանիզմներ (տնտեսական և սոցիալական կայունություն): ԷՀԾ-ների դիմաց վճարումները կարող են ունենալ հետևյալ դրսևորումները՝

- Վարձակալական վճարներ տարածքների օգտագործման համար,
- Վճարումներ ռեսուրսների օգտագործման համար,
- Փայտանյութի մթերումից և/կամ իրացումից մուտքեր,
- Ձկնատեսակի օգտագործման և իրացման պայմանագրեր,
- Խոտհունձի և արոտավայրերում արածեցման պայմանագրեր:

**Ազդեցության գնահատումը**

Ծրագրի իրականացումը ուղղակիորեն ազդեցություն չի թողնում շրջակա կամ սոցիալական միջավայրերի վրա: Անուղղակիորեն, երկարաժամկետ կտրվածքով, դիտարկվող մշակութային և կենսաբազմազանության տեսակի<sup>58</sup> Էկոհամակարգային ծառայությունների իրականացման գործիքների արդյունավետ ներդրումը և կիրառումը կարող է նշանակալի դրական ազդեցություն թողնել թե կենսառեսուրսների ռացիոնալ օգտագործման և թե սոցիալ-տնտեսական տեսանկյունից, պայմանով, որ դրանք հիմնված են լինելու գիտականորեն հիմնավորված նորմերի/սահմանաքանակների և դրանց գործուն վերահսկման մեխանիզմների վրա:

Կառավարման պլանի իրականացման և «Սևան» ազգային պարկի ՊՈԱԿ-ի կառավարման արդյունավետության մշտադիտարկման ծրագիրը ամփոփված է **Բաժին 10**-ում:

<sup>58</sup>Ecosystem Services for Implementing Environmental Policies - Guide for Policy Makers, National Institute of Ecology and Ecosystem Services Partnership, 2019 ([https://www.es-partnership.org/wp-content/uploads/2020/01/ES-guidebook.eng\\_.pdf](https://www.es-partnership.org/wp-content/uploads/2020/01/ES-guidebook.eng_.pdf))

## 7. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Միջազգային և հանրապետական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ըստ ՀՀ կառավարության հաստատած՝ բնության հատուկ պահպանվող տարածքների կանոնադրությունների և կառավարման պլանների, որտեղ **կառավարման պլանը**՝ տվյալ տարածքի զարգացման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործունեությունը կարգավորող պաշտոնական փաստաթուղթն է:

Հաշվի առնելով, որ բնության հատուկ պահպանվող տարածքների, ներառյալ «Սևան» ազգային պարկի համար կառավարման պլանի առկայությունը օրենսդրական պահանջ է, կարելի է փաստել, որ այն չունի այլընտրանք և հանդիսանում է ազգային պարկի պահպանման, վերականգնման, կայուն զարգացման և արդյունավետ կառավարման շրջանակները սահմանող հիմնական փաստաթուղթը:

«Սևան» ազգային պարկի սույն կառավարման պլանը մշակված է լիազորված պետական մարմնի հաստատած մեթոդական ցուցումների համաձայն և միտված է փոխարինել 2007 թվականի հունվարի 18-ի ՀՀ կառավարության №205-Ն որոշմամբ հաստատված «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանը:

Վերոնշյալի ենթատեքստում, զրոյական տարբերակը տեսականորեն կնշանակի «Սևան» ազգային պարկի առանց կառավարման պլանի գործունեություն, քանի որ նախկինը՝ հաստատվել է 2007 թվականի հունվարի 18-ի ՀՀ կառավարության №205-Ն որոշմամբ, նախատեսված է եղել 2007-2011 թվականների համար և չնայած այն հանգամանքին, որ դեռևս de-facto գործում է, կորցրել է իր արդիականությունը և հաշվի չի առնում առկա բնապահպանական վտանգները, մարտահրավերները և զարգացման միտումները:

«Սևան» ազգային պարկի նոր արդի կառավարման պլան չունենալու պարագայում, դրա նախորդ՝ 2007-2011 թվականների տարբերակը վաղ թե ուշ de jure չեղարկվելու է, ինչը հանգեցնելու է իրավական խնդիրների, ինչպես նաև Ազգային պարկի պահպանության նպատակների անարդյունավետ իրականացման և բացասական ազդեցությունների՝ ազգային պարկի պահպանության օբյեկտների տեսանկյունից:

## 8. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 8.1 Կառավարման պլանի կապը այլ հիմնադրույթային և ռազմավարական փաստաթղթերի հետ

«Սևան» ԱՊ-ի կառավարման պլանով սահմանված ազգային պարկի տեսլականը և երկարաժամկետ 8 ռազմավարական նպատակները հիմնականում համահունչ են Սևանա լճի մասին ՀՀ օրենքում ներկայացված Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման պետական քաղաքականության սկզբունքներին, հիմունքներին և ռազմավարությանը:

Կառավարման պլանը չի հակասում նաև 2023 թվականի սեպտեմբերի 28-ի ՀՀ Կառավարության «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2024 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» №1656-Ն որոշմամբ<sup>59</sup> հաստատված 2024 թվականի տարեկան ծրագրով նախատեսված Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումներին: Մասնավորապես՝

<sup>59</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=183175>

2024 թվականի տարեկան ծրագրում ներառված ստորև թվարկված միջոցառումները միտված են «Սևան» ազգային պարկի կառավարման պլանով սահմանված ռազմավարական նպատակներին՝

- Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի մոնիթորինգի իրականացում,
- Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրում,
- Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնում,
- Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների մաքրման աշխատանքների իրականացում,
- «Սևան» ազգային պարկի և համայնքների միջև սահմանների ճշգրտում,
- Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման գիտահետազոտական աշխատանքների համապարփակ ծրագրերի մշակում:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանը չի հակասում 2022 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՀ կառավարության «Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» №1912-Ն որաշմանը, իսկ առնվազն կլիմայական փոփոխությունների ազդեցության գնահատման մոտեցումների տեսանկյունից նաև համահունչ է:

ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության<sup>60</sup> Գլուխ 7-ում ներկայացված են ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025թթ. ռազմավարական ծրագրերը, որոնք չեն հակասում «Սևան» ազգային պարկի կառավարման պլանում բերված ծրագրերին, իսկ մի քանիսը նաև համահունչ են, մասնավորապես՝

- Սևանա լճի էկոհամակարգի վերականգնումը, պահպանումը և օգտագործումը,
- Սևանի իշխանի պաշարների վերականգնումը,
- Սևանա լճի ձկնատեսակների գույքագրումը, հաշվառումը, օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանումը և պահպանության միջոցառումների իրականացումը,
- Տեղական համայնքների կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուտները ցուցաբերելու նպատակով անտառների և արոտավայրերի կայուն կառավարում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության Գերակա խնդիր 2-ը միտված է Սևանա լճի էկոհամակարգի պահպանմանը և տուրիզմի զարգացմանը՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա: Որպես հիմնավորում նշվում է, որ Սևանա լիճը և դրա ջրհավաք ավազանը համարվում են Հայաստանի բնակչության հանգստի կարևորագույն բազաներից մեկը, որը ունի նաև միջազգային տուրիզմի զարգացման մեծ հեռանկարներ: Ավանդական պատմամշակութային զբոսաշրջային ձևերից բացի, շատ օտարերկրյա զբոսաշրջիկներ նախընտրում են մեր երկիր այցելել ուսումնասիրելու մեր գյուղական համայնքները, վայելելու բնությունը և ծանոթանալու տեղաբնակների սպրեյակերպին ու ավանդույթներին, որը կնպաստի գյուղական տուրիզմի զարգացմանը: Մինչև 2025 թվականը Սևանա լճի ավազանի տարածքում կիրականացվի էկոհամակարգի վերականգնման ու պահպանման, բնական պաշարների վերականգնման և օգտագործման միջոցառումների համալիր ծրագիր, որը նման է «Սևան» ազգային պարկի Այցելությունների կազմակերպման ծրագրի սկզբունքներին:

Ամփոփելով, կարելի է փաստել, որ «Սևան» ԱՊ-ի տեսլականը, ռազմավարական նպատակները, թիրախները և առաջարկվող ծրագրերը չեն հակասում Սևանա լճի մասին ՀՀ օրենքի, Սևանա լճին առնչվող ենթաօրենսդրական ակտերին, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությանը: Կառավարման պլանը համահունչ է նաև ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրին, մասնավորապես 3.3 «Զրային տնտեսություն» և 4.10 «Ծրջակա միջավայրի պահպանություն» բաժինների դրույթներին, ինչպես նաև նպաստում է ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը:

<sup>60</sup><https://www.arlis.am/Annexes/4/4.GEGHARQUNIQI-Sevan-4.doc>

## 8.2 Ազդեցությունը հանրության առողջության վրա

Սևանա լիճը Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունի իր քաղցրահամ ջրի պաշարներով և բացառիկ էկոհամակարգով: Սևանա լիճը իր բնակլիմայական պայմաններով նաև ամենապահանջված հանգստավայրերից մեկն է, ոչ միայն ՀՀ բնակիչների, այլ նաև այլ երկրներից այցելուների համար: Ակնհայտ է լճի ազդեցությունը ոչ միայն Գեղարքունիքի մարզի, այլ նաև ողջ հանրապետության բնակչության հանրային առողջության վրա:

Այդ տեսանկյունից, Սևանա լճում և իր էկոհամակարգում տեղի ունեցող ցանկացած փոփոխություն անուղղակիորեն կարող է ազդեցություն թողնում Հայաստանի Հանրապետության ցանկացած բնակչի վրա:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանով սահմանված ռազմավարական նպատակները և դրանց իրագործմանը միտված ծրագրերը մեծամասամբ ունեն դրական բնապահպանական կողմնորոշում, ինչը անուղղակիորեն կհանգեցնի նաև հանրային առողջության վրա որևէ բացասական ազդեցության կանխմանը, այդպիսով՝ դրական ազդեցությունների: Ակնառու է, որ ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման միջոցառումների, կենսաբազմազանության մշտադիտարկումների, էկոլոգիական կրթության, հանրային մասնակցության և հաղորդակցության ծրագրերի բարեհաջող իրագործումը կհանգեցնի՝

- Սևանա լճում ջրի որակական հատկանիշների բարելավմանը,
- Ափամերձ տարածքների մաքրմանը և անտառային տարածքների ընդլայնմանը, լանդշաֆտների վերականգնմանը,
- Կլիմայի փոփոխության հարմարվողականությանը,
- Սևանա լճում ձկնատեսակների ավելացմանը,
- Հանրության էկոլոգիական գիտելիքների մակարդակի և գիտակցության բարձրացմանը և այլն:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի իրագործումը դրական ազդեցություն կթողնի հանրային առողջության վրա, թե մարզային (Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ համայնքներ) և թե հանրապետության կտրվածքով:

## 8.3 Ազդեցությունը բնության և պատմամշակութային հուշարձանների վրա

«Սևան» ԱՊ-ի և նրա պահպանական գոտում հաշվառված են բնական և պատմամշակութային 1489 անշարժ հուշարձաններ, այդ թվում՝ 4 բնական հուշարձան, 5 քարե դարի բնակատեղի, 19 քարայր կացարան, 1 քաղաքատեղի, 31 բնակատեղի, 94 գյուղատեղի, 8 ազգագրական տուն, 78 ամրոց, 2 աշտարակ, 6 կամուրջ, 2 քարավանատուն, 9 ջրաղացի համալիր, 17 առանձին ջրաղաց, 11 ձիթհան, 3 ջրանցք և ջրաբաշխական համակարգ, 2 ժայռապատկերների խումբ, 3 սեպագիր արձանագրություն, 1 ժայռակերտ պաշտանմունքային համալիր, 135 եկեղեցի, 8 վանական համալիր, 89 մատուռ, 5 վիշապ-քարակոթող, 1 մենհիր, 6 կոթող, 279 խաչքարների խումբ, 159 առանձին խաչքար, 2 հուշադրյուր-կոթող, 25 երկրորդ աշխարհամարտին նվիրված հուշարձան, 2 անվանի գործիչների նվիրված հուշարձան, 107 դամբարանադաշտ, 14 առանձին պահպանված դամբարան, 252 գերեզմանոց, 71 տապանաքարերի խումբ, 33 առանձին պահպանված տապանաքար:

Տեղանքի հնագիտական և պատմամշակութային հուշարձանների հիմնական մասը կարևոր դերակատարում են ունեցել հայ ժողովրդի պատմության էջերում, որոնք մեծ հնարավորություն են ընձեռնում պատմամշակութային, գիտաճանաչողական, հնագիտական, երկրաբանական, էթնո և էկոլոգիական զբոսաշրջության այցելություններ իրականացնելու համար: Դրանց մի մասը ընդգրկված է զբոսաշրջային շրջայցների ցանկում:

Կառավարման պլանի այցելությունների կազմակերպման ծրագիրը միտված է բնության և պատմամշակութային հուշարձանների նկատմամբ զբոսաշրջիկների ուշադրության ավելացմանը, իսկ ֆինանսական և մարքեթինգային ծրագիրը՝ նշված հուշարձանները այցելելու և դիտարկելու արդյունքում «Սևան» ազգային պարկի ֆինանսական կայունության բարձրացմանը:

Զբոսաշրջության զարգացմանը զուգահեռ հնարավորություն է ստեղծվում նաև զարգացնել ոչ նյութական մշակութային ժառանգության, թե ՅՈՒՆԵՍԿՕ-ի և, թե ազգային ցանկում ներառված արժեքները:

#### **8.4 Ազգային պարկի կառավարման պլանի իրագործման գումարային ազդեցությունը և ազդեցությունների անդրահամայնային բնույթը**

«Սևան» ազգային պարկի ռազմավարական նպատակների իրագործմանը միտված ծրագրերը չեն նախատեսում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող լայնածավալ հողային, շին. մոնտաժային և այլ աշխատանքներ: Հետևաբար, դրանց միաժամանակյա կամ որոշակի զուգակցմամբ իրականացումը չի առաջացնի գումարային ազդեցություններ: Գումարային ազդեցություններ չեն ակնկալվում նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության մեջ տեղ գտած միջոցառումների և «Սևան» ազգային պարկի կառավարման պլանով նախատեսված ծրագրերի զուգահեռ իրականացնելու դեպքերում:

Մյուս կողմից, «Սևան» ԱՊ կառավարման պլանով նախատեսված ծրագրերի իրականացմանը զուգընթաց Սևանա լճի տարածաշրջանային ազդեցության գոտում՝ Գեղարքունիքի մարզում (տես **Բաժին 8.5**-ը) կարելի է առանձնացնել 3 ոլորտներ՝ հանքարդյունաբերություն, հանրության սպասարկում (HoReCa<sup>61</sup>) և գյուղատնտեսություն, որոնք կարող են գումարային ազդեցություն ունենալ Սևանա լճի վրա:

Գեղարքունիքի մարզում առկա են 22 հանքարդյունաբերական ձեռնարկություններ<sup>62</sup>, որոնցից 1-ը մետաղական («Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ, ոսկու հանքանյութի արդյունահանում), իսկ 21-ը ոչ մետաղական՝ հիմնականում արդյունահանվում են բազալտ, մարմար, տուֆ, պեռլիտ, ավազակոպչային խառնուրդ և այլն: Սոթքում՝ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ հանքարդյունաբերական աշխատանքներից տեղի է ունենում ինչպես կետային, այնպես էլ ոչ կետային աղտոտվածություն: Հանքավայրի ջրերում ծանր մետաղների բարձր կոնցենտրացիաները բացասաբար են անդրադառնում Սոթք և Մասրիկ գետերի ջրի որակի վրա՝ ի վերջո ազդելով Սևանա լճի վրա:

Տարածաշրջանում ինչպես մետաղական, այնպես էլ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը իրականացվում է բաց եղանակով, բնութագրվում է ցածր արդյունավետությամբ, ինչը հանգեցնում է մեծ կորուստների և օգտակար ակտիվության ցածր գործակիցների: Սա ոչ միայն սպառում է ընդերքի ռացիոնալ օգտագործմանը, այլև զգալի վնաս է հասցնում շրջակա միջավայրին, ներառյալ օդի և մակերևութային ջրերի աղտոտումը, հողի մակերեսին փոշու նստեցումը, ընդերք-օգտագործման թափոնների կուտակումը, լքված բաց հանքերի առկայությունը, ստորերկրյա ջրերի աղտոտումը և կենսաբազմազանության կորուստը:

Սևանա լճի շրջակայքում առկա են 57 հյուրանոցառեստորանային համալիրներ, որոնք տարեկան կտրվածքով սպասարկում են ավելի քան 1.5 մլն. այցելու<sup>63</sup>: Չնայած տեսականորեն բոլոր համալիրները պետք է հագեցած լինեն կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման կայաններով, գործնականում դրանցում առաջացող կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաժամասամբ առանց մաքրման լցվում են Սևանա լիճ: Հյուրանոցառեստորանային համալիրների գործունեությունը զուգակցվում է կոշտ կենցաղային թափոնների առաջացմամբ, որոնց ոչ պատշաճ կառավարումը՝ հավաքումը, կուտակումը և տեղափոխումը աղբավայր, նույնպես կարող է հանգեցնել Սևանա լճի

<sup>61</sup>HoReCa - hotels/հյուրանոցներ, restaurants/ռեստորաններ, catering/հանրային սնունդ

<sup>62</sup>EU4Sevan, Assessment of the consequences/impact of raising the level of water in Lake Sevan, Impact Assessment Report, 2024

<sup>63</sup>նույնը

աղտոտմանը, հատկապես անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում: Ակնկալվում է, որ Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկի կողմից ֆինանսավորվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի իրականացման արդյունքում հյուրանոցատեստորանային համալիրներում առաջացող կենցաղային աղբը նույնպես կառավարելի եղանակով կտեղափոխվի աղբավայրի տարածք:

Թե Գեղարքունիքի մարզում գործող հանքաարդյունաբերության և, թե Սևանա լճի ափամերձ գոտում առկա հանրության սպասարկման ոլորտների ձեռնարկությունները կարող են բացասական բնապահպանական ազդեցություններ ունենալ «Սևան» ազգային պարկի կառավարման պլանով նախատեսված ծրագրերի, այդ թվում Ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման ծրագրի արդյունավետության վրա: Այնուամենայնիվ, վերոնշյալ ոլորտների ազդեցությունները Սևանա լճի վրա հնարավոր չէ սահմանափակել կամ կառավարել «Սևան» ԱՊ-ի կառավարման պլանի շրջանակներում:

Սևանա լճի մերձափնյա տարածքները՝ հատկապես Վարդենիս և Մարտունի հանայնքներում, շատ հաճախ օգտագործվում են հարակից գյուղական բնակավայրերի բնակիչների կողմից որպես խոշոր եղջերավոր անասունների արոտավայրեր՝ դրանով իսկ աղտոտելով թե Սևանա լիճը և թե հարակից տարածքները: Որոշ դեպքերում գյուղացիները օգտագործում են նաև Սևանա լճի արգելոցային գատիները որպես արոտներ: Նշված խնդրի լուծմանը նպաստում է Կառավարման պլանի Ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման ծրագիրը, որի շրջանակներում նախատեսված է դեգրադացված բնական կերտահանդակների (արոտավայրեր և խոտհարքեր) վերականգնում: Այս դեպքում գումարային ազդեցությունը դրական է, քանի որ դեգրադացված հողերը վերականգնումը բացառում է դրանց հետագա օգտագործումը որպես արոտավայր կամ խոտհարք:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանի իրագործումը չի թողնում անդրսահմանային ազդեցություն:

### **8.5 Ազգային պարկի կառավարման պլանի իրագործման ազդեցությունների շրջանակները և ազդեցությունների ամփոփումը**

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանի իրագործումը պայմանականորեն կունենա հետևյալ ազդեցության շրջանակները (ընդգրկույթը)՝

- 1) Ուղիղ ազդեցության շրջանակ  
*«Սևան» ազգային պարկի 147.3 հա վարչական տարածքը, որը ներառում է ջրային մակերեսը և Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ հանայնքներից ընդգրկված հատվածներ,*
- 2) Տարածաշրջանային ազդեցության շրջանակ  
*Գեղարքունիքի մարզը ամբողջությամբ,*
- 3) Անուղղակի ազդեցության շրջանակ  
*Հայաստանի Հանրապետության տարածքը ամբողջությամբ:*

Ուղիղ ազդեցության շրջանակում կանխատեսվում են ուղղակի ազդեցություններ շրջակա միջավայրի բաղադրիչների, մասնավորապես՝ մթնոլորտային օդի, «Սևան» ազգային պարկի ընդգրկույթում ջրային և հողային ռեսուրսների, անտառային ծածկույթի, լանդշաֆտների, լճում բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա: Ազդեցություն ունեցող հիմնական ծրագիրը՝ Ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման ծրագիրն է, որի իրագործումը ակնհայտորեն դրական ազդեցություն է թողնելու շրջակա միջավայրի վրա:

Տարածաշրջանային ազդեցության շրջանակում մասամբ ակնկալվում են դրական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա, սակայն շատ ավելի ուղիղ են ազդեցությունները սոցիալ-տնտեսական



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

բաղադրիչների վրա: Մասնավորապես, նախատեսված ծրագրերը դրական ազդեցություն են թողնում զբոսաշրջության, սպասարկման և առևտրի ոլորտների, ինչպես նաև աշխատաշուկայի (նոր աշխատատեղերի ստեղծում) վրա: Դրական ազդեցություն է դիտվում նաև մարզի պատմամշակութային և բնական հուշարձանների նկատմամբ զբոսաշրջիկների հետաքրքրության մեծացման տեսանկյունից:

Հաշվի առնելով Սևանա լճի բացառիկ դերը ողջ հանրապետության համար, անուղղակի ազդեցության շրջանակում/ընդգրկությամբ դիտվում են դրական ազդեցություններ կապված Սևանա լճի կենսաբազմազանության վիճակի և լճի կողմից ձևավորվող բնակլիմայական պայմանների բարելավումից:

Սոցիալ-տնտեսական և հանրային առողջության տեսանկյունից, միանշանակ է, որ «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի իրագործումը դրական ազդեցություն է թողնելու հանրապետությունում զբոսաշրջության, հարակից ոլորտների և ընդհանուր առմամբ տնտեսական զարգացման միտումների վրա: «Սևան» ազգային պարկի էկոհամակարգի բարելավումը դրականորեն կազդի հանրային առողջության վրա՝ մարզային և երկրի մակարդակով:

Ինչպես նշվել է **Բաժին 4.2**-ում, «Սևան» ԱՊ կառավարման պլանի մշակման աշխատանքների պլանավորման կարևոր և առաջնային բաղադրիչներից է ազգային պարկի և հարակից համայնքների միջև սահմանային անճշտությունների և խնդիրների քննարկումն ու անդրադարձը: Հավաքագրված տարաբնույթ տարածական տվյալների համադրման միջոցով վերանայվել են ազգային պարկի սահմանները և որպես առաջարկ ներկայացվել է շահագրգիռ կողմերին, մասնավորապես «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ին և համապատասխան համայնքներին: ԿՊ-ով նախատեսված են աշխատանքներ սահմանազատումը ավարտին հասցնելու և կադաստրով ամրագրելու համար:

Արգելավայրային գոտու պարագայում նախորդ կառավարման պլանով (2007-2011թթ.) առաջարկվել էր 2 արգելավայր, որոնց մակերեսը կազմում էր 2652 հա, մինչդեռ սույն ԿՊ-ով առաջարկվում է արգելավայրային գոտին ավելացնել 4181.1 հեկտարով, որի արդյունքում այն կկազմի 6833.1 հեկտար: Սույն ԿՊ-ով առաջարկվում է արգելոցային գոտու ցամաքային տարածքը հասցնել 16244.62 հեկտարի, որից ցամաքային տարածքը՝ 9536.51 հա, իսկ ջրայինը՝ 6708.11 հա: Արդյունքում, ընդլայնվելու են առկա բոլոր 5 արգելոցային հատվածները: Վերոնշյալը միանշանակ դրական ազդեցություն կթողնի «Սևան» ազգային պարկի բնապահպանության առումով պահպանության մակարդակի բարձրացման և առավել արդյունավետ իրականացման վրա: Սա դրական է նաև շրջակա համայնքների համար, քանի որ կհաղթահարվեն առկա անորոշությունները ինչպես սահմանային այնպես էլ գոտիավորման տեսանկյունից, ինչը թույլ կտա առավել արդյունավետ պլանավորել և իրականացնել համայնքային զարգացման ծրագրերը և հարթել համայնք-ազգային պարկ կոնֆլիկտները:

Ըստ «Սևան» ԱՊ-ի կառավարման պլանի, ճշգրտվող սահմանները ուղղակի ազդեցություն են թողնում ապօրինի կամ օրինական հողօգտագործման տեսանկյունից, ինչպես նաև ԱՊ-ի կանոնադրական գործունեությունը խախտող շինությունների գույության և գործունեության վրա: Այս խնդիրը պետք է լուծվի բանակցությունների միջոցով, հակառակ դեպքում՝ դատական ընթացակարգով:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Աղյուսակ 14. Ազգային պարկի կառավարման պլանի իրագործման ազդեցությունների շրջանակները և ազդեցությունների ամփոփումը**

№	Ծրագրեր	Ծրագրի շրջանակում առաջարկված խնդիրներ	Ազդեցություն					
			Շրջակա միջավայր		Հանրային առողջություն		Սոցիալ-տնտեսական	
			դրական	բացասական	դրական	բացասական	դրական	բացասական
1	Վարչական ծրագիր	Մինչ 2025 թվականը ՊՈԱԿ-ը հաստատել է առաջարկվող նոր կառուցվածքն ու հաստիքացուցակը, որտեղ ավելացել են առնվազն նոր հաստիքներ՝ ներառյալ կառավարման արդյունավետության և կենսաբազմազանության	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչ 2026 թվականն աշխատակազմի առնվազն 30 տոկոսը մասնակցել է անձնակազմի մասնագիտական վերապատրաստման դասընթացի կամ փորձի փոխանակման առնվազն մեկ դասընթացի/ծրագրի	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչ 2029 թվականը կառավարման արդյունավետության գնահատման գործիքի (METT) կիրառման արդյունքում բազային տվյալների համեմատությամբ գրանցվել է 20% աճ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2029 թվականը կառավարման պլանի ծրագրերի և գործողությունների պլանի տարեկան մշտադիտարկման հաշվետվություններն առկա են և հաստատված են ՍԱՊ կառավարման խորհրդի և ՀՀ ՇՄՆ կողմից	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2027 թվականը իրականացվել են ՅՈՒՆԵՍԿՕ կենսոլորտային պահպանվայր ճանաչմանն ուղղված իրագործելիության գնահատում	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
2	Պահպանության ծրագրի	Մինչև 2029 թվականը, հրդեհների թիվը նաև այրված մակերեսների հանրագումարը (վերջին հինգ տարվա միջինացված թվի համեմատ) նվազել են 10%-ով	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2029 թվականը, հիվանդություններով և վնասատուներով վարակված տարածքների մակերեսը չի աճել (վերջին հինգ տարվա միջինացված թվի համեմատ) կամ նվազել է	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2029 թվականը, թիրախային ձկնատեսակների (գեղարքունի և ամառային իշխան) ձկնապաշարները կրկնապատկվել են՝ 2022 թվականին գնահատված 4.51 տոննայի համեմատ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>
		Մինչև 2029 թվականը պահպանվել են սպիտակաաչք սուզաբադի, գիշանգղի, ցախաքլորաորսի, սապսանի, բալոբանի, մեծ ջրցուլի, քաջահավի, ծովային քարադրի, հայկական որորի, բվենի, մարգահավի համապատասխան բնադրող զույգերի քանակներ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
3	Ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների	Մինչև 2028թ.-ը մաքրել 1109.7 հա ջրածածկման ենթակա տարածքները	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>
		Մինչև 2028թ.-ը անտառապատել առնվազն 250 հա հողերը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

№	Ծրագրեր	Ծրագրի շրջանակում առաջարկված խնդիրներ	Ազդեցություն					
			Ծրջակա միջավայր		Հանրային առողջություն		Սոցիալ-տնտեսական	
			դրական	բացասական	դրական	բացասական	դրական	բացասական
	մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման ծրագիր	Մինչև 2028թ.-ը վերակառուցել առնվազն 200 հա սոճու մոնոկուլտուրաներ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2025թ.-ը «Սևան» ԱՊ ՊՈԱԿ-ի տնկարանային տնտեսության տարեկան արտադրողականությունը հասցնել առնվազն 100000 հատի	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
4	Հետազոտությունների և կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագիր	Մինչև 2029 թվականը հրատարակված է առնվազն 5 գիտական հոդված՝ մասնագետների և ազգային պարկի համապատասխան բաժնի աշխատակիցների համահեղինակությամբ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2027 թվականը պահպանության բոլոր թիրախներն ապահովված են վիճակի վերաբերյալ ելակետային տվյալներով	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2026 թվականը պահպանության թիրախների և ցուցիչ տեսակների մշտադիտարկման համակարգը ներդրված է	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2026 թվականը կառավարման արդյունավետության մշտադիտարկման համակարգը ներդրված է, իսկ տվյալները հավաքագրվում են SMART կամ համարժեք ծրագրային ապահովման միջոցով	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
5	Այցելությունների կազմակերպման ծրագիր	Մինչև 2025թ. վերանայվել, թարմացվել, բարեկարգվել են ԲՀՊՏ-ների առկա հիմնական զբոսաշրջային երթուղիները	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2026թ. ուսումնասիրվել են ԲՀՊՏ-ների հիմնական գրավչությունները միավորող նոր զբոսաշրջային երթուղիներ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2026թ. հանրային լողափերում այցելությունների հաշվառման մեխանիզմը ներդրված է	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2026թ. ներկայացվել է բնության հետ ներդաշնակ զբոսաշրջային առնվազն 10 ծառայության առաջարկներ / փաթեթներ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2029թ. «Սևան» ԱՊ-ի զբոսաշրջային ծառայություններից օգտվողների ընդհանուր թիվը հատել է 10000-ի շեմը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
6	Էկոլոգիական կրթության, հանրային մասնակցության և	Հանրային հաղորդակցության և իրազեկության մակարդակը բարձրացել է. մինչև 2029թ. Ազգային պարկի հաղորդակցման պաշտոնական խոդովակների տեսանելիությունը ներկայիս մակարդակի համեմատ բարձրացել է 50%-ով	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

№	Ծրագրեր	Ծրագրի շրջանակում առաջարկված խնդիրներ	Ազդեցություն					
			Ծրջակա միջավայր		Հանրային առողջություն		Սոցիալ-տնտեսական	
			դրական	բացասական	դրական	բացասական	դրական	բացասական
	հաղորդակցության ծրագիր	Մինչև 2026թ. փոխվել է «Սևան» ԱՊ Խորհուրդի անդամների ընտրության սկզբունքը, ապահովվել է կազմում առնվազն 1 հասարակական ոլորտի, 1 գիտական և 2 ՏԻՄ ներկայացուցիչների մասնակցություն	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2029թ. մարզի առնվազն 20 կրթական հաստատության հետ իրականացվել են առնվազն 80 էկոկրթական միջոցառում	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2026թ. ներդրվել է ազգային պարկի շահագրգիռ կողմերի ցանկի մշակման և թարմացման մեխանիզմ, և ըստ այդ ցանկի՝ 2027 թվականից եռամսյակային կտրվածքով տարածվում է ԱՊ-ի ընթացիկ գործունեության մասին էլեկտրոնային տեղեկագիր	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
7	Ֆինանսական և մարքեթինգային ծրագիր	Մինչև 2029թ. ՊՈԱԿ-ի եկամուտներն ընթացիկ մակարդակի համեմատ ավելացել են առնվազն 10%-ով՝ 2018-2022 թթ. փաստացի աճի տեմպի շրջանակում	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2029թ. ՊՈԱԿ-ի եկամուտների կառուցվածքում այլընտրանքային՝ ՊՈԱԿ-ի կողմից գներացվող, հասույթների տեսակարար կշիռը ներկայիս մակարդակի համեմատ ավելացել է 10%-ով	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2029թ. Իրականացնել առնվազն երկու համատեղ ծրագիր միջազգային դոնոր կազմակերպության ներգրավմամբ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		Մինչև 2029թ. ՊՈԱԿ-ը երեք տնտեսվարողի հետ ներդրել է ԷՀԾ վճարների սխեմա	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Սահմանազատում							
	Գոտիավորում							
	Գումարային							

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**9. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Ծրագրային խնդիր/թիրախ	Մշտադիտարկման նպատակը	Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցիչներ	Վերջնարդյունքի ցուցիչներ	Մշտադիտարկման մեթոդաբանություն
<b>ՎԱՐՉԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ</b>				
Մինչ 2025 թվականը ՊՈԱԿ-ը հաստատել է առաջարկվող նոր կառուցվածքն ու հաստիքացուցակը, որտեղ ավելացել են առնվազն նոր հաստիքներ՝ ներառյալ կառավարման արդյունավետության և կենսաբազմազանության մշտադիտարկման մասնագետներ, էկոտուրիզմի, ֆոնդիայթիայթման, համայնքների հետ կապի և հաղորդակցության մասնագետներ և այլն:	ՍԱՊ ՊՈԱԿ նոր հաստիքացուցակի և կառուցվածքի ներդրման գնահատում:	1. ՀՀ ՇՄՆ կողմից քննարկված ՍԱՊ ՊՈԱԿ նոր կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատող որոշում: 2. Նորաստեղծ պաշտոնների համար պաշտոնի անձնագրեր: 3. Նոր հաստիքների համար հայտարարված մրցույթները:	Մրցույթների արդյունքներով նոր աշխատակիցների հետ կնքված պայմանագրերը: ՍԱՊ ՊՈԱԿ տնօրենի կողմից հաստատված նոր կառուցվածքը և հաստիքացուցակ:	Նորաստեղծ հաստիքների պաշտոնի անձնագրերի ստուգում: Նոր կառուցվածքի և հաստիքացուցակի համադրում ԿՊ-ով առաջարկվող տարբերակի հետ: Նոր աշխատակիցների աշխատանքային պայմանագրերի առկայության ստուգում:
Մինչ 2029 թվականը կառավարման արդյունավետության գնահատման գործիքի (METT) կիրառման արդյունքում բազային տվյալների համեմատությամբ գրանցվել է 20% աճ:	Կառավարման արդյունավետության գնահատում:	1. Կառավարման արդյունավետության գնահատման ադապտացված գործիք (METT), գնահատումն իրականացնող կողմի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագիր: 2. Իրականացված հարցազրույցներ, հանդիպումներ, տարբեր շահագրգիռ կողմից հետ, միջանկյալ հաշվետվություն: 3. Վերջնական հաշվետվությունը:	Կառավարման արդյունավետության գնահատման (METT) արդյունքներով հաշվետվություն հաստատված ՀՀ ՇՄՆ և ՍԱՊ կառավարման խորհրդի կողմից:	Կառավարման արդյունավետության գնահատումն (METT) իրականացված իրավաբանական կամ ֆիզիկական անձի հետ կնքված պայմանագրի ստուգում: Հարցմանը մասնակցած շահառուների ցանկերի ստուգում: ՀՀ ՇՄՆ և կառավարման խորհրդի եզրակացության և հաստատված հաշվետվության ստուգում:
Մինչ 2026 թվականը աշխատակազմի առնվազն 30 տոկոսը մասնակցել է անձնակազմի մասնագիտական վերապատրաստման դասընթացի կամ փորձի փոխանակման առնվազն մեկ դասընթացի/ծրագրի:	Անձնակազմի մասնագիտական վերապատրաստման գնահատում:	1. Անձնակազմի վերհանված կարիքների հիման վրա մշակված ծրագրերը: 2. Մասնագիտական վերապատրաստման նպատակով իրավաբանական /ֆիզիկական անձանց հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրեր: 3. Իրականացված վերապատրաստման դասընթացներն, հանձման-ընդունման ակտեր:	Անձնակազմի առնվազն 30%-ի մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությունը հաստատող վկայական:	Կքնված պայմանագրերի ու հանձման-ընդունման ակտերի առկայության ստուգում: Մասնակիցների ցանկի և ավարտական վկայականների առկայության ստուգում:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային խնդիր/թիրախ	Մշտադիտարկման նպատակը	Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցիչներ	Վերջնարդյունքի ցուցիչներ	Մշտադիտարկման մեթոդաբանություն
Մինչև 2027 թվականը իրականացվել են ՅՈՒՆԵՍԿՕ կենսոլորտային պահպանավայր ճանաչմանն ուղղված իրագործելիության գնահատում:	Իրագործելիության հետազոտության գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>1. Իրագործելիության գնահատման տեխնիկական առաջադրանք, պայմանագիր գնահատումն իրականացնող իրավաբանական անձի հետ:</li> <li>2. Նախնական հաշվետվություն քննարկված տարբեր շահառուների հետ:</li> <li>3. Իրագործելիության գնահատման հաշվետվություն:</li> </ol>	ՀՀ ՇՄՆ կողմից հաստատված ավարտական հաշվետվություն:	Տեխնիկական առաջադրանքի և պայմանագրի առկայության ստուգում (հնարավոր է կնքված լինի դոնոր կազմակերպության և իրականացնողի միջև) Ավարտական հաշվետվության ստուգում:
Մինչև 2029 թվականը, կառավարման պլանի ծրագրերի և գործողությունների պլանի տարեկան մշտադիտարկման հաշվետվություններն առկա են և հաստատված են ՄԱՊ կառավարման խորհրդի և ՀՀ ՇՄՆ կողմից:	Կառավարման պլանի մշտադիտարկման գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>1. Տեխնիկական առաջադրանք, հայտարարված մրցույթ:</li> <li>2. Տարեկան հաշվետվություն:</li> </ol>	ՀՀ ՇՄՆ և ՄԱՊ կառավարման խորհրդի կողմից կառավարման պլանի տարեկան հաշվետվություն:	Տեխնիկական առաջադրանքի ստուգում, պայմանագրերի և հանձման ընդունման ակտերի ստուգում: ՀՀ ՇՄՆ և ՄԱՊ կառավարման խորհրդի կողմից արված դիտարկումների և առաջարկությունների իրականացման ստուգում:
<b>ԶՐԱԾԱԾԿ ԵՎ ԶՐԱԾԱԾԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՈՒ ԱՅԼ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ</b>				
Մինչև 2028 թ. 1109.7 հա ջրածածկման ենթակա տարածքների մաքրվել է:	Ջրածածկման ենթակա տարածքների մաքրման աշխատանքների գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>1. Ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների տարեկան ծրագիր:</li> <li>2. Իրականացված մաքրման աշխատանքների մշտադիտարկման արդյունքներ/ հանձման ընդունման ակտեր:</li> </ol>	Ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների տարեկան հաշվետվություն հաստատված ՇՄՆ կողմից:	Ջրածածկ տարածքների տարեկան մաքրման ծրագրի, հանձման ընդունման ակտերի, մշտադիտարկման արդյունքների ստուգում: Տարեկան հաստատված հաշվետվությունների ստուգում:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային խնդիր/թիրախ	Մշտադիտարկման նպատակը	Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցիչներ	Վերջնարդյունքի ցուցիչներ	Մշտադիտարկման մեթոդաբանություն
Մինչև 2028 թ. առնվազն 250 հա հողեր անտառապատվել են:	Անտառապատման աշխատանքների գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>1. Անտառապատման նախագիծ:</li> <li>2. Անտառապատման աշխատանքների արտապատվիրական կամ սեփական ուժերով իրականացման վերաբերյալ փաստաթղթեր:</li> <li>3. Մշտադիտարկման արդյունքներ/հանձման ընդունման ակտեր:</li> </ol>	250 հա հողերի անտառապատումը հաստատող ամփոփ հաշվետվություններ:	<p>Անտառապատման նախագծի ստուգում:</p> <p>Անտառապատման աշխատանքների արտապատվիրական կամ սեփական ուժերով իրականացման վերաբերյալ փաստաթղթերի ստուգում:</p> <p>Մշտադիտարկման արդյունքներ/հանձման ընդունման ակտերի ստուգում:</p> <p>Ամփոփ հաշվետվությունների ստուգում:</p>
Մինչև 2028 թ. առնվազն 200 հա սոճու մոնոկուլտուրաներ վերակառուցվել են:	Սոճու մոնոկուլտուրաների վերակառուցման գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>1. Սոճու մոնոկուլտուր տնկարքի վերակառուցման նախագիծ:</li> <li>2. Սոճու մոնոկուլտուր տնկարքի վերակառուցման աշխատանքների արտապատվիրական կամ սեփական ուժերով իրականացման վերաբերյալ փաստաթղթեր:</li> <li>3. Մշտադիտարկման արդյունքներ/հանձման ընդունման ակտեր:</li> </ol>	200 հա սոճու մոնոկուլտուր տնկարքի վերակառուցումը հաստատող ամփոփ հաշվետվություններ:	<p>Սոճու մոնոկուլտուր տնկարքի վերակառուցման նախագծի ստուգում:</p> <p>Սոճու մոնոկուլտուր տնկարքի վերակառուցման աշխատանքների արտապատվիրական կամ սեփական ուժերով իրականացման վերաբերյալ փաստաթղթերի ստուգում:</p> <p>Մշտադիտարկման արդյունքներ/հանձման ընդունման ակտերի ստուգում:</p> <p>Ամփոփ հաշվետվությունների ստուգում:</p>

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային խնդիր/թիրախ	Մշտադիտարկման նպատակը	Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցիչներ	Վերջնարդյունքի ցուցիչներ	Մշտադիտարկման մեթոդաբանություն
Մինչև 2025 թ. ՊՈԱԿ տնկարանային տնտեսության տարեկան արտադրողականությունը հասցվել է առնվազն 100000 հատի:	Տնկարանային տնտեսության արտադրողականության գնահատում:	1. Տնկարանային տնտեսության զարգացման նախագիծ: 2. Տնկարանային տնտեսության արդիականացման աշխատանքների իրականացման պայմանագրեր, հանձման ընդունման ակտեր:	Արտադրողականության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ:	Տնկարանային տնտեսության զարգացման նախագծի ստուգում: Տնկարանային տնտեսության արդիականացման աշխատանքների իրականացման պայմանագրերի, հանձման ընդունման ակտերի ստուգում: Տարեկան հաշվետվությունների ստուգում:
<b>ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԳԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ</b>				
Մինչև 2029 թվականը հրատարակված է առնվազն 5 գիտական հոդված՝ մասնագետների և ազգային պարկի համապատասխան բաժնի աշխատակիցների համահեղինակությամբ:	Գիտահետազոտական տպագրությունների գնահատում	1. Գիտահետազոտական մասնագիտացված կառույցների հետ կնքված համագործակցության հուշագրեր / պայմանագրեր: 2. Իրականացված հետազոտությունների վերաբերյալ հաշվետվություններ: 3. Միջազգային գրախոսվող ամսագրերում տպագրության հանձնված հոդվածներ:	ՄԱՊ մասնագետների համահեղինակությամբ տպագրված գիտահետազոտական աշխատանքներ:	Տպագրված գիտահետազոտական աշխատանքների առկայության ստուգում:
Մինչև 2027 թվականը պահպանության բոլոր թիրախներն ապահովված են վիճակի վերաբերյալ ելակետային տվյալներով:	Կենսաբազմազանության վերաբերյալ ելակետային տվյալների գնահատում:	1. Ելակետային տվյալների հավաքագրման նպատակով մասնագիտացված կառույցների հետ կնքված պայմանագրեր: 2. Աշխատանքների արդյունքներով միջանկյալ հաշվետվություն:	Բնապահպանական թիրախների ելակետային տվյալների վերաբերյալ վերջնական հաշվետվություն	Պահպանության թիրախների ելակետային տվյալների վերաբերյալ վերջնական հաշվետվության ստուգում:
Մինչև 2026 թվականը պահպանության թիրախների և ցուցիչ տեսակների մշտադիտարկման համակարգը ներդրված է:	Պահպանության թիրախների և ցուցիչ տեսակների մշտադիտարկման համակարգի գնահատում:	1. Մշտադիտարկման մշակված տեխնիկական առաջադրանք: 2. Մշտադիտարկման արտապատվիրակված պայմանագիր:	Մշտադիտարկման ավարտական հաշվետվություն հաստատված ՀՀ ՇՄՆ և ՄԱՊ կառավարման խորհրդի կողմից:	Տեխնիկական առաջադրանքի և հաշվետվությունների ստուգում, ՀՀ ՇՄՆ և ՄԱՊ կառավարման խորհրդի եզրակացությունների ստուգում:



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային խնդիր/թիրախ	Մշտադիտարկման նպատակը	Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցիչներ	Վերջնարդյունքի ցուցիչներ	Մշտադիտարկման մեթոդաբանություն
Մինչև 2026 թվականը կառավարման արդյունավետության մշտադիտարկման համակարգը ներդրված է, իսկ տվյալները հավաքագրվում են SMART կամ համարժեք ծրագրային ապահովման միջոցով:	Կառավարման արդյունավետության մշտադիտարկման համակարգի գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>1. SMART կամ համարժեք ծրագրային ապահովման տվյալների բազա</li> <li>2. Կառավարման արդյունավետության մշտադիտարկման հավաքագրված անձնակազմ:</li> <li>3. Միջանկյալ հաշվետվություններ:</li> </ol>	Տարեկան հաշվետվություն հաստատված ՀՀ ԾՄՆ և ՍԱՊ կառավարման խորհրդի կողմից:	SMART կամ համարժեք ծրագրային ապահովման տվյալների բազայի ստուգում: Հաշվետվությունների ստուգում: Մտացված տվյալների վրա կառավարչական միջամտությունները փաստող փաստաթղթերի ստուգում:
<b>ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ</b>				
Մինչև 2025թ. վերանայվել, թարմացվել, բարեկարգվել են ԲՀՊՏ-ների առկա հիմնական զբոսաշրջային երթուղիները:	Առկա հիմնական զբոսաշրջային երթուղիների գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>1. Երթուղիների վիճակի գնահատման հաշվետվություն:</li> <li>2. Երթուղիների բարեկարգման աշխատանքների հաշվետվություն:</li> </ol>	ՍԱՊ ՊՈԱԿ տնօրենի կողմից հաստատված երթուղիների թարմացված ցանկ:	Երթուղիների հաստատված ցանկը ստուգում: Բարեկարգման հաշվետվությունների ստուգում: Առնվազն 2 երթուղու մոնիթորինգային այցելություն՝ անհրաժեշտ ցուցանակների, գծանշումների և անվտանգության նվազագույն նորմերի տեսանկյունից:
Մինչև 2026թ. ուսումնասիրվել են ԲՀՊՏ-ների հիմնական գրավչությունները միավորող նոր զբոսաշրջային երթուղիները:	Նոր զբոսաշրջային երթուղիների գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>1. Նոր զբոսաշրջային երթուղիների գնահատման ծառայության տեխնիկական առաջադրանք:</li> <li>2. Նոր զբոսաշրջային երթուղիների գնահատման մրցույթի հայտարարություն:</li> <li>3. Ծառայությունների մատուցման պայմանագիր:</li> </ol>	Ավարտական հաշվետվություն հաստատված տնօրենի կողմից:	Տեխնիկական առաջադրանքի ստուգում: Հանձման-ընդունման ակտերի ստուգում: Ավարտական հաշվետվության ստուգում:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային խնդիր/թիրախ	Մշտադիտարկման նպատակը	Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցիչներ	Վերջնարդյունքի ցուցիչներ	Մշտադիտարկման մեթոդաբանություն
Մինչև 2026թ. հանրային լողափերում այցելությունների հաշվառման մեխանիզմը ներդրված է:	Հաշվառման մեխանիզմի գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>Հանրային լողափերում այցելությունների հաշվառման մեխանիզմի ներդրման ծառայության տեխնիկական առաջադրանք</li> <li>Հանրային լողափերում այցելությունների հաշվառման մեխանիզմի գնահատման մրցույթի հայտարարություն:</li> <li>Ծառայությունների մատուցման պայմանագիր:</li> </ol>	Ավարտական հաշվետվություն հաստատված տնօրենի կողմից, տնօրենի որոշում մեխանիզմի ներդրման վերաբերյալ:	Տեխնիկական առաջադրանքի ստուգում: Ծառայությունների մատուցման պայմանագրի և հանձման ընդունման ակտերի ստուգում: Ավարտական հաշվետվության և տնօրենի որոշման ստուգում: Հաշվառման արդյունքների տարեկան հաշվետվության ստուգում:
Մինչև 2026թ.-ը ներկայացվել է բնության հետ ներդաշնակ զբոսաշրջային առնվազն 10 ծառայության առաջարկներ / փաթեթներ:	Զբոսաշրջային փաթեթների գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>Զբոսաշրջային փաթեթների նախնական տարբերակներ:</li> <li>Մասնակցության լրացված թերթիկներ զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչների և այլ շահառուների մասնակցությամբ:</li> </ol>	Տնօրենի կողմից հաստատված և պաշտոնապես հայտարարված զբոսաշրջային փաթեթներ:	Մասնակցության թերթիկների ստուգում: Զբոսաշրջային փաթեթների ստուգում: Տնօրենի որոշում և հայտարարություն:
Մինչև 2029թ.-ը ՄԱՊ-ի զբոսաշրջային ծառայություններից օգտվողների ընդհանուր թիվը հատել է 10.000-ի շեմը:	Զբոսաշրջային ծառայություններից օգտվողների գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>Զբոսաշրջային ծառայությունների օգտվողների հաշվառման համակարգ:</li> <li>Զբոսաշրջային ծառայությունների հաշվառման մատյան:</li> </ol>	Զբոսաշրջային ծառայությունների հաշվառման արդյունքների հաշվետվություն հաստատված տնօրենի կողմից:	Տնօրենի կողմից հաստատված հաշվետվության ստուգում: Զբոսաշրջային ծառայությունների հաշվառման մատյանի ստուգում:
<b>ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ</b>				
Մինչև 2029թ. ՄԱՊ հաղորդակցման պաշտոնական խոդովակների տեսանելիությունը ներկայիս մակարդակի համեմատ բարձրացել է 50 տոկոսով:	ՄԱՊ հաղորդակցման պաշտոնական խոդովակների տեսանելիության մակարդակի գնահատում:	<ol style="list-style-type: none"> <li>ՄԱՊ հաղորդակցման պաշտոնական խոդովակների տեսանելիության վերաբերյալ տվյալներ:</li> <li>Տարեկան հաշվետվություն հաստատված տնօրենի կողմից:</li> </ol>	Ավարտական հաշվետվություն ԿՊ գործունեության ժամանակահատվածի ամփոփ տվյալներով հաստատված տնօրենի կողմից:	Հաշվետվությունների ստուգում:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային խնդիր/թիրախ	Մշտադիտարկման նպատակը	Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցիչներ	Վերջնարդյունքի ցուցիչներ	Մշտադիտարկման մեթոդաբանություն
Մինչև 2026թ. փոխվել է ՍԱՊ Խորհուրդի անդամների ընտրության սկզբունքը, ապահովվել է կազմում առնվազն 1 հասարակական ոլորտի, 1 գիտական և 2 ՏԻՄ ներկայացուցիչների մասնակցություն	ՍԱՊ Խորհուրդի անդամների ընտրության սկզբունքի և Խորհրդի գործունեության գնահատում:	1. ՍԱՊ Խորհրդի ընտրության նոր կարգը ներառող կանոնադրություն: 2. ՍԱՊ տնօրենի որոշում Խորհրդի ձևավորման հաստատման: վերաբերյալ:	ՍԱՊ Խորհրդի կողմից հաստատված տարեկան հաշվետվություն:	Կանոնադրության ստուգում: Խորհրդի ձևավորման վերաբերյալ տնօրենի հրամանի ստուգում: Խորհրդի հանդիպումների արձանագրությունների ստուգում: Տարեկան հաշվետվությունների և այլ հաստատված փաստաթղթերի վերաբերյալ եզրակացությունների ստուգում:
Մինչև 2026թ. ներդրվել է ՍԱՊ շահագրգիռ կողմերի ցանկի մշակման և թարմացման մեխանիզմ և ըստ այդ ցանկի 2027թ.-ից եռամսյակային կտրվածքով տարածվում է ՍԱՊ ընթացիկ գործունեության մասին էլեկտրոնային տեղեկագիր:	ՍԱՊ շահագրգիռ կողմից հետ հաղորդակցության ստուգում:	1. Շահագրգիռ կողմերի տարեկան թարմացվող ցանկ: 2. Էլեկտրոնային տեղեկագիր	Շահագրգիռ կողմերին ուղարկված էլեկտրոնային տեղեկագիր:	Շահագրգիռ կողմերի ցանկի ստուգում: Էլեկտրոնային տեղեկագրերի ստուգում:
Մինչև 2029թ. մարզի առնվազն 20 կրթական հաստատության հետ իրականացվել են առնվազն 80 էկոկրթական միջոցառում	Էկոկրթական գործունեության գնահատում:	1. Էկոկրթական կազմակերպությունների ցանկ, որոնք պատրաստական են համագործակցել ՍԱՊ-ի հետ: 2. Տարեկան էկոկրթական միջոցառումների ծրագիր:	Տարեկան հաշվետվություն հաստատված ՍԱՊ տնօրենի կողմից առնվազն 20 էկոկրթական միջոցառման վերաբերյալ:	Հաշվետվության ստուգում: Իրականացված միջոցառումների վերաբերյալ հարցումների իրականացում շահառու կրթական միջոցառումների շրջանում:
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԵԹԻՆԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ</b>				
Մինչև 2029թ. ՍԱՊ ՊՈԱԿ-ի եկամուտներն ընթացիկ մակարդակի համեմատ ավելացել են առնվազն 10 տոկոսով 2018-2022 թթ. փաստացի աճի տեմպի շրջանակում:	ՍԱՊ ՊՈԱԿ եկամուտների գնահատում:	1. Տարեկան եկամուտների ավելացմանն ուղղված միջոցառումների հաստատված ծրագիր: 2. Եկամուտների աճին միտված միջոցառումներ:	ՍԱՊ եկամուտների վերաբերյալ տարեկան հաշվետվություն:	Միջոցառումների ծրագրի ստուգում: Տարեկան հաշվետվության ստուգում:
Մինչև 2029թ. ՍԱՊ ՊՈԱԿ-ի եկամուտների կառուցվածքում այլընտրանքային ՊՈԱԿ-ի կողմից գեներացվող, հասույթների տեսակարար կշիռը ներկայիս մակարդակի համեմատ ավելացել է 10%-ով:	ՍԱՊ ՊՈԱԿ-ի կողմից գեներացվող, հասույթների տեսակարար կշիռի գնահատում:	1. Այլընտրանքային եկամուտների ավելացմանն ուղղված միջոցառումների հաստատված ծրագիր: 2. Եկամուտների աճին միտված միջոցառումներ:	ՍԱՊ եկամուտների վերաբերյալ տարեկան հաշվետվություն:	Միջոցառումների ծրագրի ստուգում: Տարեկան հաշվետվության ստուգում:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային խնդիր/թիրախ	Մշտադիտարկման նպատակը	Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցիչներ	Վերջնարդյունքի ցուցիչներ	Մշտադիտարկման մեթոդաբանություն
Մինչև 2029 թ. ՍԱՊ ՊՈԱԿ-ն իրականացրել է առնվազն երկու համատեղ ծրագիր միջազգային դոնոր կազմակերպության ներգրավմամբ:	Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ ծրագրերի իրականացման գնահատում:	1. Ծրագրերի հայեցակարգեր: 2. Ծրագրային հայտեր ներկայացված ֆինանսավորման:	Հաստատված և/կամ իրականացվող ծրագրեր միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ:	Ծրագրային հայտերի ստուգում: Հաստատված ծրագրերի փաստաթղթերի ստուգում: Ընթացիկ/ավարտական հաշվետվությունների ստուգում:
Մինչև 2029 թ. ՍԱՊ ՊՈԱԿ-ը երեք տնտեսավարողի հետ ներդրել է ԷՀԾ վճարների սխեմա:	ԷՀԾ վճարների սխեմայի գնահատում:	1. ԷՀԾ վերաբերյալ իրազեկման միջոցառումներ և շահառուների հետ քննարկումներ: 2. ԷՀԾ սխեմաների ներդրման նպատակով արտապատվիրակված ծառայությունների մատուցման պայմանագիր: 3. Պայմանագիր ՍԱՊ և մասնավոր կազմակերպությունների միջև ԷՀԾ վճարների սխեմայի ներդրման վերաբերյալ:	Տարեկան հաշվետվություն ԷՀԾ սխեմաների արդյունավետության վերաբերյալ:	Իրազեկման միջոցառումների և քննարկումների արձանագրությունների ստուգում: Ծառայությունների մատուցման պայմանագրի, հաշիվ-ապրանքագրերի և ամփոփ հաշվետվության ստուգում: ՍԱՊ և մասնավոր կազմակերպությունների միջև ԷՀԾ վճարների սխեմաների ներդրման վերաբերյալ պայմանագրերի ստուգում: Տարեկան հաշվետվությունների ստուգում:
<b>ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ</b>				
Մինչև 2025 թ. շուրջօրյա պահպանության ծառայությունը ներդրված է:	Առկա չէ, քանի որ գործառնությունը փոխանցվել է էկոպարեկային ծառայությանը և գտնվում է ՍԱՊ ենթակայությունից դուրս:			

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային խնդիր/թիրախ	Մշտադիտարկման նպատակը	Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցիչներ	Վերջնարդյունքի ցուցիչներ	Մշտադիտարկման մեթոդաբանություն
Մինչև 2029 թվականը հրդեհների թիվը նաև այրված մակերեսների հանրագումարը /վերջին հինգ տարվա միջինացված թվի համեմատ/ նվազել են 10 տոկոսով:	Առկա չէ, քանի որ գործառույթը փոխանցվել է էկոպարեկային ծառայությանը և գտնվում է ՍԱՊ ենթակայությունից դուրս:			
Մինչև 2026 թվականը, հիվանդություններով և վնասատուներով վարակված սոճուտների (առանձին ծառերի) մակերեսը հաշվառվել է և մինչև 2029 թվականը այդ ծառուտները / առանձին ծառերը առնվազն 30%-ով հեռացվել են:	Հիվանդություններով և վնասատուներով վարակված սոճուտների հաշվառման և հեռացման միջոցառումների գնահատում:	1. Տեխնիկական առաջադրանքի հիման վրա ընտրված մասնագիտացված կազմակերպություն ընտրված և կնքված պայմանագիր: 2. Ավարտական հաշվետվություն հատման ենթակա սոճուտների ժամանակացույցով:	Վարակված սոճուտների հեռացվելու վերաբերյալ հանձման-ընդունման ակտ:	Տեխնիկական առաջադրանքի և պայմանագրերի ստուգում: Հաշվետվությունների ստուգում:
Մինչև 2029 թվականը, թիրախային ձկնատեսակների /գեղարքունի և ամառային իշխան/ ձկնապաշարները ավելացել են 50 տոկոսով՝ 2022 թվականին գնահատված 4.51 տոննայի դիմաց:	Առկա չէ, քանի որ գործառույթը փոխանցվել է էկոպարեկային ծառայությանը, Ջրային պարեկային ծառայությանը և գտնվում է ՍԱՊ ենթակայությունից դուրս:			

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային խնդիր/թիրախ	Մշտադիտարկման նպատակը	Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցիչներ	Վերջնարդյունքի ցուցիչներ	Մշտադիտարկման մեթոդաբանություն
<p>Մինչև 2029 թվականը, պահպանվել են Սպիտակաաչք սուգաբադի (<i>Aythya nyroca</i>) բնադրող զույգերի միջին թիվը 2-4, իսկ առավելագույնը հասել է 4-6-ի:</p> <p>Մինչև 2029 թվականը, պահպանվել է Գիշանգդի (<i>Neophron percnopterus</i>) առկա մեկ զույգը:</p> <p>Մինչև 2029 թվականը պահպանվել է Ցախաքլորաորսի (<i>Accipiter gentilis</i>) մեկ փաստացի հայտնի բնադրող զույգը և մեկ պոտենցիալ զույգը:</p> <p>Մինչև 2029 թվականը պահպանվել է Սապսանի (<i>Falco peregrinus</i>) 3-4 բնադրող զույգերը:</p> <p>Մինչև 2029 թվականը պահպանվել է Բալոբանի (<i>Falco cherrug</i>) 2 բնադրող զույգերը:</p> <p>Մինչև 2029 թվականը Մեծ ջրցուլի (<i>Botaurus stellaris</i>) բնադրող զույգերի բացահայտված թվաքանակը չի նվազել:</p> <p>Մինչև 2029 թվականը Քաջահավի (<i>Plegadis falcinellus</i>) բնադրող զույգերի վերագրանցված թվաքանակը պահպանվել է:</p> <p>Մինչև 2029 թվականը Ծովային քարադրի (<i>Charadrius alexandrinus</i>) բնադրող զույգերի բացահայտված թվաքանակը պահպանվել է:</p> <p>Մինչև 2029 թվականը Հայկական որորի (<i>Larus armenicus</i>) բնադրող զույգերի զույքագրված թվաքանակի պահպանվել է:</p> <p>Մինչև 2029 թվականը պահպանվել է Բվեճի (<i>Bubo bubo</i>) մեկ բնադրող զույգը և մեկ պոտենցիալ զույգը:</p> <p>Մինչև 2029 թվականը Մարգահավ (<i>Crex crex</i>) բնադրող զույգերի բացահայտված թվաքանակը պահպանվել է:</p>	<p>Առկա չէ, քանի որ գործառնությունը փոխանցվել է էկոպարեկային ծառայությանը և գտնվում է ՍԱՊ ենթակայությունից դուրս:</p>			

### Հավելված 1. Էկոլոգիական մշտադիտարկման ծրագիր

Մոնիթորինգի/մշտադիտարկման իրականացման նպատակն է, մշտապես գնահատելով Էկոհամակարգերի ու դրանց բաղադրիչների վիճակի փոփոխությունները և կանխատեսելով բնական ու մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործընթացների զարգացումը, բարելավել բնության հատուկ պահպանվող տարածքների շարունակական կայուն կառավարումը՝ ներառյալ կենսաբազմազանության պահպանությունը և կենսաբանական պաշարների օգտագործումը:

Մոնիթորինգի խնդիրներն են՝

- 1) Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնողների անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումը՝ համապատասխան որոշումների ընդունման համար,
- 2) Կենսաբանական բազմազանության տարածվածության, տեսակային կազմի, քանակի, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակի բացահայտումը,
- 3) Էկոհամակարգերի ու դրանց բաղադրիչների քանակական և որակական փոփոխությունների ընթացքի գնահատումը և կանխատեսումը,
- 4) Էկոհամակարգերին ու դրանց բաղադրիչներին սպառնացող մարդածին գործոնների բացասական ազդեցության բացահայտումը և դրա կանխարգելման միջոցների մշակումը,
- 5) Բնական պաշարների օգտագործման նորմավորման հիմնավորմանը նպաստելը՝ ըստ ծավալների և ժամկետների,
- 6) Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին տեղեկատվական համակարգի ստեղծմանը և դրա անխափան գործունեությանը նպաստելը.
- 7) բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակմանը նպաստելը:

Էկոլոգիական մշտադիտարկումն ԱՊ տարածքում իրականացվելու է՝ հիմք ընդունելով Սևանա լճի Էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2024 թվականի տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումները (հիմք՝ Կառավարության 28.09.2023թ.-ի №1656-Ն որոշում<sup>64</sup>):

Մոնիթորինգի օբյեկտներն են՝

1. Բուսական և կենդանական տեսակների բնակության վայրերը, կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները, տեսակների գոյության համար առանձնահատուկ դեր խաղացող Էկոհամակարգերը,
2. Կենսաբանական բազմազանությունը՝ առաջնահերթ նշանակություն տալով՝
  - ա. բույսերի ու կենդանիների այն տեսակներին, ցեղերին, ընտանիքներին կամ այլ կարգաբանական միավորներին, որոնց տարածվածությունը սահմանափակվում է հարաբերականորեն ոչ մեծ աշխարհագրական շրջանով (էնդեմիկներ),
  - բ. բույսերի ու կենդանիների այն տեսակներին, ցեղերին, ընտանիքներին կամ այլ կարգաբանական միավորներին, որոնք պահպանվել են անցած երկրաբանական ժամանակաշրջաններից և ներկայումս հազվագյուտ են հանդիպում (ռելիկտներ),
  - գ. Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի համար օտարածին այն տեսակներին, որոնց ներթափանցումը բնական Էկոհամակարգեր և արագ բազմացումը սպառնում է Էկոհամակարգերի կայունությանը (ինվազիվ տեսակներ).
3. Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակները, ինչպես նաև դրանց համակենցություններն ու պոպուլյացիաները,
4. Տնտեսական արժեք ներկայացնող և արդյունագործական նշանակություն ունեցող բուսական ու կենդանական տեսակները,

<sup>64</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189591>

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

5. Բուսական ու կենդանական համակեցություններն ու պոպուլյացիաները և դրանց գերիշխող (դոմինանտ) տեսակները,
6. Բնության հատուկ պահպանվող տարածքների հողերի, մակերևութային ջրերի, մթնոլորտի աղտոտվածությունը,
7. Անօրինական տնտեսական գործունեությունը (տնտեսական և բնակելի օբյեկտների, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և հաղորդակցության այլ ուղիների ապօրինի շինարարությունն ու շահագործումը, ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության ու շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը և պահեստավորումը, օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների ապօրինի շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը և այլն), բնական ռեսուրսների ապօրինի օգտագործումը (ապօրինի անտառահատումներ, որս, ձկնորսություն, հողօգտագործում և այլն),
8. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի այլ խախտումներ:

Ըստ ԱՊ-ի կանոնադրության, մոնիթորինգը.

- Կազմակերպվում և իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեությունից առաջացած միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին,
- Նպատակաուղղված է կենսաբանական բազմազանության տարածվածության, տեսակային կազմի, քանակի, բնակության վայրերի, կենդանիների միգրացիայի ուղիների առկա վիճակի բացահայտմանը, ինվազիվ՝ օտարածին (ներմուծված) տեսակների տարածվածության ուսումնասիրությանը, էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների քանակական և որակական փոփոխությունների գնահատմանն ու կանխատեսմանը, բնական և մարդածին գործոնների ազդեցության բացահայտմանը,
- Իրականացվում է ելակետային տվյալների ստացման և հավաքագրման նպատակով ստեղծված դիտարկման ցանցում, որը ներառում է մշտական կամ ժամանակավոր (սեզոնային) դիտակետեր, փորձահրապարակներ, երթուղիներ: Դիտարկման ցանցի տեղաբաշխման նախագիծը մշակում է կազմակերպությունը և ներկայացնում լիազորված պետական մարմնի հաստատմանը:

Ստորև բերված են մշտադիտարկմանը վերաբերող հիմնական միջոցառումների ցանկը և նկարագիրը:

**Աղյուսակ 1.1. Մշտադիտարկմանը վերաբերող հիմնական միջոցառումների ամփոփագիր**

Միջոցառման անվանումը	Հանձնարարականի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը
Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի մոնիթորինգի իրականացում	1) Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության, այդ թվում՝ ռադիոակտիվ աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, միջոցառումների մշակում, 2) Սևանա լճում և լճի ջրհավաք ավազանում հիդրոոլերևութաբանական մոնիթորինգի իրականացում, 3) Սևանա լճի ջրհավաք ավազանում ստորերկրյա ջրերի մոնիթորինգի իրականացում, 4) Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանի գետերում հիդրոկենսաբանական մոնիթորինգի իրականացում



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Միջոցառման անվանումը	Հանձնարարականի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը
Ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսության ազդեցության գնահատում Սևանա լճի էկոհամակարգի վրա	Ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսության գործունեության հետևանքով կենսածին տարրերի (ֆոսֆոր, ազոտ) քանակի հաշվարկում և Սևանա լճի էկոհամակարգի վրա ազդեցության գնահատում
Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում, օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում	Կենդանական ռեսուրսների, այդ թվում՝ ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում և օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում
«Սևան» ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ	Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահ պահպանություն, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի իրականացում
Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման գիտահետազոտական աշխատանքների համապարփակ ծրագրերի մշակում	Էկոհամակարգի վերականգնման և կայուն օգտագործման գիտական հիմունքների մշակում՝ «Սևանա լճի էվորոֆագման մեխանիզմների գնահատում և «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակում» ծրագիր

Բացի վերը նշված միջոցառումներից՝ տարբեր իրավական փաստաթղթերով, ազգային և միջազգային ծրագրերով, տարբեր կազմակերպությունների կողմից ազգային պարկի տարածքում նախատեսվում կամ արդեն իսկ իրականացվում են մշտադիտարկման տարբեր տեսակներ:

Այսպես, համաձայն Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանի՝ նախատեսվում է մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտացանցի և մոնիթորինգի ծրագրերի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացնում է պարբերական մշտադիտարկման հետևյալ տեսակները՝

1. Մթնոլորտային օդի մոնիթորինգ,
2. Անտառային մոնիթորինգ (այդ թվում՝ ազգային անտառային մշտադիտարկում և գույքագրում 2022-2029),
3. Մակերևութային ջրերի հիդրոլոգիական մոնիթորինգ,
4. Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ,
5. Թափոնների, աղբավայրերի, հողային ծածկույթի մոնիթորինգ:

Նշենք նաև, որ մի շարք գիտակրթական, ինչպես նաև բնապահպանական հասարակական կազմակերպությունների կողմից կարող է իրականացվել մշտադիտարկում, որոնք արտացոլված չլինեն այս բաժնում, քանի որ կարող են ունենալ բացառապես գիտական նշանակություն, չլինեն համընդհանուր և/կամ չկրեն պարբերական բնույթ:

**Կառավարման արդյունավետության մշտադիտարկում**

Պահպանվող տարածքներում մշտադիտարկման նպատակով հիմնականում առանձնացնում են բնական արժեքների վիճակի մշտադիտարկում (ազդեցության մշտադիտարկում), որը ներկայացված է կառավարման պլանի կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագրում, ինչպես նաև

սպառնալիքների մակարդակի փոփոխության մշտադիտարկում (արդյունքի մշտադիտարկում) և կառավարչական միջամտությունների մշտադիտարկում (կատարողականի մշտադիտարկում): Մեր կողմից առաջարկվում է ընդլայնել ՊՏ մշտադիտարկման բաժինը՝ ընդգրկելով կառավարման արդյունավետության մշտադիտարկման գործառույթ:

Կառավարման արդյունավետության մշտադիտարկման կազմակերպումը կապահովի ՊՏ համար կենսաբազմազանության սպառնալիքների և կառավարչական միջամտությունների/իրականացվող ծրագրերի մշտադիտարկումը: Այն կարևոր է ՊՏ կառավարման, էկոպարեկային ծառայության, էկոզբոսաշրջության, նպատակային ծրագրերի արդյունավետության ընթացիկ վիճակի գնահատման տեսանկյունից:

Անձնակազմի շրջայցերի միջոցով, նախապես մշակված երթուղիների հիման վրա, անհրաժեշտ է հավաքագրվի տեղեկատվություն տարածքում որսագողության, ձկնագողության, ծառահատումների, գերարածեցման և այս ծրագրով ներկայացված այլ սպառնալիքների առկայությունը հաստատող կամ հերքող փաստերի հավաքագրման նպատակով: Կարևոր է նաև զբոսաշրջային ակտիվ սեզոնի ընթացքում մշտադիտարկել քայլարշավային արահետների վիճակը, հարակից ենթակառուցվածքների անվտանգությունը և արահետների հասանելիությունը:

Բացի դրանից՝ անձնակազմը կհավաքագրի տեղեկատվություն հիվանդությունների ու վնասատուների օջախների, ինվազիվ տեսակների և դրանց տարածվածության վերաբերյալ: Անձնակազմի կողմից հավաքագրվող տեղեկատվության հիման վրա մասնագիտացված գիտական կառույցների հետ համագործակցությամբ կիրականացվի վնասատուների և հիվանդությունների, ինվազիվ տեսակների նույնականացում, լաբորատոր ուսումնասիրությունների իրականացում, վարակված տարածքների քարտեզագրում, և պայքարի արդյունավետ միջոցառումների մշակում:

Յուրաքանչյուր տարի ՊՈԱԿ-ի և ՆԳՆ փրկարարական ծառայության մարզային ստորաբաժանման միջև ստորագրվում է բնության հատուկ պահպանվող տարածքներում հակահրդեհային միջոցառումների պլան, որում նշվում է մասնաճյուղերի բնութագրի, նյութատեխնիկական հագեցվածության, ՊՏ-ների և հարակից բնակավայրերում գտնվող ջրաղբյուրների կորոզիաների և դրանցից օգտվելու հնարավորությունների, շրջայցերի և այլնի վերաբերյալ տեղեկատվություն: Կառավարման արդյունավետության մշտադիտարկման անձնակազմի կողմից համաձայն առանձնացված առավել հրդեհավտանգ տարածքների քարտեզի և առաջարկվող երթուղիների պետք է իրականացվեն շրջայցեր հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությունը գնահատելու և հարակից համայնքների բնակչության հետ իրագրվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հանդիպումներ իրականացնելու նպատակով: Առաջարկվում է նաև մշտադիտարկման և վարչական բաժինների աշխատակիցների հենքի վրա ստեղծել հրշեջ-փրկարարական ջոկատ ՆԳՆ կողմից հրդեհաշիջման և/կամ փրկարարական աշխատանքների իրականացման ընթացքում ՊՏ տարածքում աջակցելու նպատակով:

Առաջարկվում է անձնակազմի կողմից տեղեկատվության հավաքագրվման համար կիրառել SMART Spatial Monitoring and Reporting Tool ծրագրային ապահովումը կամ համարժեք:

**Կառավարման արդյունավետության գնահատման գործիք՝ ԿԱԳԳ / METT**

Կառավարման արդյունավետության գնահատման գործիքը (ԿԱԳԳ/METT) միջազգային բնապահպանական կազմակերպությունների, Կենսաբանական բազմազանության և Ռամսարի միջազգային կոնվենցիաների շրջանակում, պահպանվող տարածքների/ռամսար տարածքների կառավարման արդյունավետության արագ գնահատման գործիք է:

Այն ստեղծվել է 2002 թվականին Համաշխարհային բանկի և Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հանուն անտառների պահպանության և կայուն օգտագործման դաշինքի շրջանակում և լայնորեն կիրառվում է ամբողջ աշխարհում: ԿԱԳԳ/METT-ը հնարավորություն է

ընձեռում գնահատել պահպանվող տարածքներում իրականացվող ծրագրերի ազդեցությունը կառավարման արդյունավետության փոփոխության տեսանկյունից:

«Սևան» ազգային պարկի անձնակազմի հետ համատեղ ՄԱԶԾ-ի կողմից 2021 թ. լրացվել է ԱՊ-ի ԿԱԳԳ, և կառավարման կարողությունները ընդհանրական գնահատվել են 37 միավոր, թիրախավորելով 5-ամյա ժամկետում այն բարելավել 20%-ով՝ տարաբնույթ կարողությունների զարգացման միջոցառումներով աջակցելու արդյունքում հասցնել 44 միավորի:

**Պահանջվող մարդկային ռեսուրսները, տեխնիկական միջոցները և ենթակառուցվածքները, դրանց սպասարկումը**

Մշտադիտարկման իրականացման տարբեր փուլերում տարբեր օբյեկտների համար անհրաժեշտ են տարբեր քանակի և որակավորմամբ մարդկային ռեսուրսներ և նյութատեխնիկական բազա:

Հարկ է շեշտել, որ ազգային պարկի աշխատակիցները համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար պետք է անցնեն վերապատրաստում մասնագետների կողմից և սերտորեն համագործակցեն մասնագետների հետ մշտադիտարկման ողջ գործընթացում:

Իսկ նյութատեխնիկական բազան ամբողջությամբ ցանկալի է հասանելի լինի ազգային պարկում:

**Մարդկային ռեսուրսներ**

Մշտադիտարկման սկզբնական փուլում՝ մշտական փորձահրապարակների տեղադրման համար անհրաժեշտ է 5 հոգանոց խումբ, որից 2-ը մասնագետներ և 3 ազգային պարկի աշխատակիցներ, այդ թվում 1-ը պետք է լինի մշտադիտարկման աշխատանքների համար պատասխանատուն, իսկ 2-ը՝ պահպանության պատասխանատուներ:

Տվյալների ամենամյա հավաքագրման համար անհրաժեշտ է 2-3 հոգանոց խմբեր՝ կազմված ազգային պարկի աշխատակիցներից:

Տվյալների մուտքագրման համար անհրաժեշտ է 1-2 աշխատակից, որոնք ունեն տվյալների բազայի հետ աշխատելու համապատասխան հմտություններ:

Տվյալների վերլուծությունն իրականացվելու է մասնագետների խմբի կողմից:

**Նյութատեխնիկական բազա**

Փորձահրապարակների տեղադրման և տվյալների հավաքագրման համար անհրաժեշտ են 40-50 սմ երկարությամբ մետաղական ձողեր (յուրաքանչյուր փորձահրապարակի համար 4 հատ), փորձահրապարակի եզրերը նշելու համար թել, մետրեր, նախապես մշակված տվյալների հավաքագրման ձևաթղթեր, տեսախցիկ, GPS, մուրճ: Որպես լրացուցիչ նյութ՝ կարող է անհրաժեշտ լինել ուղենիշներ փորձահրապարակները հեշտ գտնելու համար:

Սենյակային աշխատանքների համար անհրաժեշտ են համակարգիչ իր սերվերով, սկանավորող սարք, թղթային ձևաթղթերի պահոց:

**Կենդանատեսակների մշտադիտարկում: Թռչնատեսակների մշտադիտարկում**

**Մարդկային ռեսուրսներ**

Այս մշտադիտարկման դաշտային աշխատանքների համար անհրաժեշտ է երեք հետազոտական խմբեր, որոնք ինքնուրույն կգործեն լճի արևմտյան, հարավային և հյուսիսարևելյան ափերում: Յուրաքանչյուր հետազոտական խումբ պետք է բաղկացած լինի առնվազն մեկ ազգային պարկի աշխատակցից, ով լավ պատրաստված է տեսակների նույնականացման և տվյալների հավաքագրման մեջ և մեկ օգնականից:

Գրասենյակային աշխատանքների համար անհրաժեշտ է 1 աշխատակից, որն ունի տվյալների բազայի հետ աշխատելու համապատասխան հմտություններ:

Տվյալների վերլուծությունն իրականացվելու է մասնագետների խմբի կողմից:

### **Նյութատեխնիկական բազա**

Տվյալների հավաքագրման խումբը պետք է ունենա երկու հեռադիտակ, մեկ GPS, մեկ դիտակ իր եռոտանիով, մեկ լազերային տարածություն չափող սարք, լավ օպտիկական խոշորացումով մեկ ֆոտոխցիկ և մեկ 4WD մեքենա, ինչպես նաև տվյալների հավաքագրման համար պատրաստված ձևաթղթեր:

Դաշտում տեղական ենթակառուցվածքը պետք է ներառի հաշվառման կետերի ուղենիշները, որոնք պետք է ցույց տան տրանսեկտների սկիզբը և վերջը, ինչպես նաև կետային հաշվառման կետերը:

Գրասենյակային մասը պետք է հագեցած լինի տվյալների բազայի պահպանման համար հզոր համակարգչով, հավաքագրված տվյալների կրկնօրինակման համար առանձին կոշտ սկավառակով և տվյալների հավաքագրման ձևաթղթերի թղթային տարբերակների պահեստով:

ՄԱԶԾ-ԳԷՀ «Սևանա լճի ավազանում հողային ռեսուրսների և արժեքավոր էկոհամակարգերի պահպանում և կայուն կառավարում՝ ուղղված բազմակի օգուտների» ծրագրի շրջանակում աջակցություն է ակնկալվում ազգային պարկը մշտադիտարկման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և ենթակառուցվածքներով հարստացնելու և թարմացնելու առումով:

### ***Կենդանատեսակների մշտադիտարկում: Կայունատունների մշտադիտարկում***

#### **Մարդկային ռեսուրսներ**

Ձեռքաթևավորների դաշտային աշխատանքների համար անհրաժեշտ են երեք հետազոտական խմբեր, որոնք առանձին և միաժամանակ լճի արևմտյան, հարավային և հյուսիսարևելյան ափերում կտեղադրեն ստացիոնար ձայնագրող սարքերը և հարակից տարածքներում մասնագետների հետ համատեղ քարտեզագրված երթուղիներով անցնել ձեռքի ձայնագրող սարքերով: Ձայնագրությունները կհավաքագրվեն ազգային պարկի գրասենյակում:

Արջի մշտադիտարկման համար անհրաժեշտ են 2 աշխատակից, որոնք արդեն իսկ քարտեզագրված հատվածներում կտեղադրեն լուսանկարող թակարդները: Այնուհետև այդ նույն աշխատակիցները 1-2 ամիսը մեկ կփոխեն մարտկոցներն ու հիշողության քարտերը: Այդ նույն աշխատակիցները կարող են իրականացնել նաև հեռադիտակով դիտարկումները և իրականացնել գրանցումներ ձևանմուշում: Գրասենյակային աշխատանքների համար անհրաժեշտ է 1 աշխատակից, որն ունի տվյալների բազայի հետ աշխատելու համապատասխան հմտություններ: Տվյալների վերլուծությունն իրականացվելու է մասնագետների խմբի կողմից:

### **Նյութատեխնիկական բազա**

Ձեռքաթևավորների մշտադիտարկման համար անհրաժեշտ է ունենալ 3 ստացիոնար ձայնագրող սարքեր, որոնք կտեղադրվեն «Սևան» ազգային պարկի Նորատուս, Ծովագյուղ և Արտանիշի հատվածներում: Բացի դրանից՝ հարկավոր է ունենալ ձեռքի ձայնագրող 6 սարքեր, որոնց օգնությամբ աշխատակիցները երթուղին անցնելիս կձայնագրեն տարածքի ձեռքաթևավորներին:

Արջերի մշտադիտարկման աշխատանքների համար հարկավոր են լուսանկարող թակարդներ 20 հատ, երկու հեռադիտակ, մեկ GPS, օպտիկական խոշորացումով մեկ ֆոտոխցիկ և մեկ 4WD մեքենա, ինչպես նաև տվյալների հավաքագրման համար պատրաստված ձևաթղթեր:

Գրասենյակային աշխատանքների համար հարկավոր է համակարգիչ, որտեղ կհավաքագրվեն տվյալները, իսկ տվյալների անվտանգ պահպանության համար արտաքին կոշտ սկավառակ:

Կառավարման արդյունավետության մշտադիտարկման կազմակերպման նպատակով առաջարկվում է ապահովել ՊՏ մշտադիտարկման մասնագետի համար նույն հազվեցվածությունն, ինչ էկոպարեկային ծառայության ծառայողի համար, բացառությամբ ձեռնաշղթան, մահակը, ատրճանակը:

Ի լրումն առաջարկվում է ներդնել SMART Spatial Monitoring and Reporting Tool ծրագրային ապահովումը: SMART-ը բաղկացած է ծրագրային ապահովման և վերլուծության գործիքներից, որոնք նախատեսված են օգնելու կառավարել և պահպանել բնությունը: SMART-ը ստանդարտացնում և պարզեցնում է տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և հաշվետվողականությունը: SMART-ն կիրառությունը չի սահմանափակվում միայն պահպանությամբ, այն կիրառելի է կենսաբազմազանության մշտադիտարկման, պահպանության մակարդակի արդյունավետության գնահատման, զբոսաշրջության և այցելուների կառավարման, բնական ռեսուրսների օգտագործման և այլն:

SMART-ի կամ համարժեք ծրագրային ապահովման ներդրումը առաջարկվում է վերոհիշյալ գործառնությունները կազմակերպելու նպատակով, որի արդյունքում հավաքագրված տվյալները հնարավորություն կտան տրամադրելու որոշում կայացնողներին վերլուծություն պահպանության արդյունավետության, կենսաբազմազանության, բնապահպանական սպառնալիքների, կլիմայի փոփոխության հարմարվողականության ուղղված միջոցառումների արդյունավետության վերաբերյալ:

### Պահպանության թիրախների և ցուցիչ տեսակների մշտադիտարկումը

Որպես պահպանության թիրախներ ընտրվել են 2 տարածք, 14 տեսակ և 1 էկոհամակարգ: Թիրախային տարածքներում ուսումնասիրվելու են հիմնական էկոհամակարգերը և ցուցիչ հանդիսացող հազվագյուտ և անհետացող, ինվազիվ և էքսպանսիվ տեսակների պոպուլյացիաները:

Թիրախների մշտադիտարկումը ծառայելու է միայն պահպանության արդյունավետության մշտադիտարկման համար, իսկ մշտադիտարկման մաս կազմող մնացած բոլոր ուսումնասիրությունները ծառայելու են գիտական ուսումնասիրության համար:

### Մշտադիտարկման պլանը ու դրա իրագործման մեթոդաբանությունը

**1. Բուսական կենսաբազմազանության մշտադիտարկումն** իր մեջ պետք է ներառի հետևյալ բաղադրիչները.

1. ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված և որպես ցուցիչ տեսակներ առանձնացված հազվագյուտ բուսատեսակների պոպուլյացիաների վիճակի մշտադիտարկում,
2. Հիմնական պահպանության թիրախ էկոհամակարգերում բուսատեսակների և վիճակի/արդյունավետության գնահատում մշտադիտարկում (Արտանիշ և Նորատուս տարածքներ, գետաբերանային անտառներ) - կաղնուտներ, գիհուտներ և լայնատերև նոսրանտառներ, մերձալպյան մարգագետնատափաստաններ և մարգագետիններ,
3. Որպես ցուցիչ տեսակներ (էկոհամակարգերի խախտված լինելու ցուցիչներ) առանձնացված ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածման մշտադիտարկում:

Մշտադիտարկումը սկսվում է մշտական փորձահրապարակների տեղադրումից և տեղադրված փորձահրապարակների համար պատրաստվում է մանրակրկիտ երկրաբուսաբանական նկարագիր: Մշտադիտարկումը պետք է իրականացնել յուրաքանչյուր տարի նույն ժամանակահատվածում առաջին տարում հիմնված նույն փորձահրապարակներում:

Ընտրված տեսակներից Արտանիշ թերակղզում ուսումնասիրվելու է հազվագյուտ տեսակների (*Adonis wolgensis*, *Dracocephalum austriacum*, *Cousinia fedorovii*) պոպուլյացիաների վիճակը: Այս տեսակները, խոցելի լինելով շրջակա միջավայրի փոփոխություններին, լավ ցուցիչներ են էկոհամակարգերի վիճակի գնահատման համար, կարող են ցույց տալ ինչպես դրական, այնպես էլ բացասական փոփոխությունները:

Ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների դեպքում պոպուլյացիաների ընդլայնումը վկայելու է Էկոհամակարգերի խախտման և տեսակային հարստության նվազման մասին:

Առանձնացված բուսատեսակների փոփոխության գնահատումն իրականացվելու է փորձահրապարակների համապատասխան ենթամիավորներում դրանց քանակական հաշվարկի հիման վրա:

Հիմնական Էկոհամակարգերի փոփոխության գնահատման համար կատարվելու է փորձահրապարակների համապատասխան ենթամիավորներում տեսակային հարստության հաշվարկ:

Արտանիշ թերակղզում *Adonis wolgensis*, *Dracocephalum austriacum*, *Cousinia fedorovii* հազվագյուտ և անհետացող բուսատեսակների ուսումնասիրության համար տեղադրվում են 3×3 մ չափի փորձահրապարակներ:

	A (1մ)	B (1մ)	C (1մ)
1 (1մ)			
2 (1մ)			
3 (1մ)			

**Նկար 1.1.** 3×3 մ չափերի փորձահրապարակի տեսքը և բաշխվածությունը՝ ըստ ենթամիավորների

Այս տեսակների քանակական հաշվարկները կատարվում են 1×1 մ չափերի A1, C1, A3 և C3 քառակուսիներում, իսկ կենտրոնական B2 քառակուսում կատարվում է տեսակային հարստության հաշվարկ:

Ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների համար տեղադրվում են 10×1 մ չափերի տրանսեկտների տեսքով:

1	2	3	4	5	6	7	8	9	10

**Նկար 1.2.** 10×1 մ չափերի տրանսեկտ փորձահրապարակի տեսքը և բաշխվածությունը ենթամիավորների

Քանի որ տրանսեկտը տեղադրվում է ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրության համար, ապա պարտադիր է ընտրել այնպիսի տրանսեկտ, որի 1×1 մ չափերի 1-ից 4 քառակուսիներում առկա լինեն ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակները, իսկ 1×1 մ չափերի մյուս քառակուսիներում բացակայեն: Այսինքն՝ տրանսեկտը պետք է ընդգրկի ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների պոպուլյացիաների եզրային հատվածը, ինչը թույլ կտա հետևել ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածման ինտենսիվությանը հաջորդ տարիներին 5-10 քառակուսիներում: Այս տեսակների հաշվարկը կատարվելու է միայն 1 և 4 քառակուսիներում: Տեսակային հարստությունը հաշվարկվում է 1×1 մ չափերի 2, 5, 9 քառակուսիներում:

Հիմնական Էկոհամակարգերի ուսումնասիրության համար ընտրված տարածքներում տեղադրվում են պատահականության սկզբունքով ընտրված և 1x1 մ չափերի փորձահրապարակներ, որտեղ գնահատվում է միայն տեսակային հարստությունը: Յուրաքանչյուր Էկոհամակարգի համար անհրաժեշտ է տեղադրել 2-4 մշտական փորձահրապարակ՝ կախված Էկոհամակարգի տարածվածությունից մշտադիտարկման օբյեկտում:

Ափամերձ գետաբերանային հատվածներում ծառաբուսային բուսականության մշտադիտարկման համար, որտեղ հիմնական սպառնալիքն ապօրինի հատումներն են, նույնպես պետք է տեղադրվեն մշտական փորձահրապարակներ՝ Սևանա լիճ թափվող հիմնական գետերի ափերի երկայնքով, երկու կողմից ձգվող տրանսեկտների տեսքով: 50-200 մ երկարությամբ այս տրանսեկտներում առաջին տարում պետք է հաշվարկել 7 մ և ավելի բարձրություն ունեցող ծառերի թիվը, իսկ հետագա տարի-

ներին ստուգել դրանց առկայությունը կամ բացակայությունը: Ուսումնասիրությունը կարելի է կատարել նաև հեռավար եղանակով՝ օգտագործելով արբանյակային լուսանկարները:

Քանի որ տվյալների հավաքագրումը պետք է իրականացվի ամեն տարի նույն ժամանակահատվածում և նույն փորձահրապարակներում, դրանց տեղադրման ժամանակ պետք է պարտադիր գրանցել կորորդինատները, ֆիքսել հատուկ միջոցներով, ինչպիսին են, օրինակ, հողի մեջ խրված մետաղական ձողերը, որոնց վրա պետք է ամրացված լինեն վառ պիտակներ: Այս տարբերակի անհնարինության դեպքում անհրաժեշտ է ուղենիշ հանդիսացող օբյեկտի (մեծ քար, առանձին ծառ և այլն) վրա ներկով նշում անել՝ հետագա տարիներին փորձահրապարակները հեշտ և արագ գտնելու նպատակով: Սա հատկապես կարևոր է հիմնական էկոհամակարգերի ուսումնասիրության համար տեղադրված փոքր՝ 1x1 մ չափերի փորձահրապարակների համար: Դաշտային բոլոր ուսումնասիրությունները տեսա և լուսանկարահանվում են՝ հնարավորության դեպքում օգտագործելով նաև կվադրոկոպերներ:


Դաշտային ուսումնասիրությունների տվյալները հավաքագրվում են նախապես մշակված ձևաթղթերում, որոնց մուտքագրումը և վերլուծությունը պետք է իրականացնել ամեն տարի անմիջապես դաշտային ուսումնասիրություններից հետո:

Ստացված տվյալների հիման վրա ստեղծվելու է էլեկտրոնային տվյալների բազա, որը հետագայում ենթարկվելու է վիճակագրական վերլուծության և կարող է օգտագործվել տարբեր նպատակներով:

Էկոհամակարգերի և տեսակների տարածվածության վերաբերյալ տվյալները թվայնացվելու են և պատրաստվելու են դրանց տարածվածության քարտեզներ:

**Կենդանական աշխարհի մշտադիտարկում**

**Թռչունների մշտադիտարկման գործընթացը** բաղկացած է տվյալների հավաքագրումից, տվյալների մշակումից և տվյալների վերծանումից ու եզրակացությունների մշակումից:



**Նկար 1.3. Թռչունների մշտադիտարկման սխեման**

Մշտադիտարկման սխեման (**Նկար 1.3**) ներդնելու և յուրաքանչյուր տարի իրականացնելու համար անհրաժեշտ է առաջին տարում իրականացնել մասնագետների ներգրավմամբ՝ միաժամանակ վերապատրաստելով ռենջերներին հետագա տարիներին տվյալների հավաքագրման համար: Հավաքագրված տվյալների վերլուծությունն ու մեկնաբանությունը պետք է կատարվեն բացառապես մասնագետների կողմից:

**Տվյալների հավաքագրումը**

Տվյալների հավաքագրումը թռչունների մշտադիտարկման համար նշանակում է թռչունների քանակի հաշվառում:

Թռչունների հաշվարկը սկսելուց առաջ անհրաժեշտ է սահմանել երթուղիները և կետերը, որտեղ յուրաքանչյուր տարի պետք է իրականացվի հաշվարկը:

Թռչունների հաշվարկի մեթոդները տարբեր են բնադրող թռչունների տարբեր տեսակների համար:

- 1. Բնադրող զույգերի բացարձակ հաշվարկի մեթոդը** կիրառվում է գաղութային թռչուններ կամ բնադրման մեծ տիրույթ ունեցող թռչունների համար՝ հիմնականում ձվերի ինկուբացիայի շրջանում: Հաշվառողն օպտիկական սարքով անցնում է (տվորաբար մենադիտակով) գաղութով և հաշվում է բնի վրա նստած և ինկուբացնող յուրաքանչյուր թռչունի: Եթե գաղութը խիտ է, ապա հաշվառողը լուսանկարահանում է այն և հաշվում թռչուններին արդեն՝ ըստ լուսանկարների: Մեծ տարածք ունեցող տեսակների համար, ինչպիսիք են գիշատիչները, հաշվառողը յուրաքանչյուր տարի պարզապես ստուգում է բների զբաղվածությունը: Այս հաշվարկի մեթոդի համար իրականացման ժամն էական չէ:
- 2. Տրանսեկտների կամ կետերի վրա հաշվարկն** իրականացվում է միատեսակ բաշխված տեսակների համար: Տրանսեկտների երկարությունը սովորաբար կազմում է 500 մ-ից մինչև 1 կմ, իսկ լայնությունը հաշվարկվում է կենտրոնական գծի յուրաքանչյուր կողմից 50-100 մ: Հաշվառողը դանդաղ քայլելով տրանսեկտի կենտրոնական գծի երկայնքով անցնելով հաշվում է տրանսեկտի լայնությամբ հանդիպող թիրախային տեսակների բոլոր առանձնյակներին: Այս հաշվարկը պետք է իրականացվի բնադրման սեզոնի սկզբին՝ մայիսի 10-25-ը՝ առավոտյան ժամը 06:00- 10:00-ը: Այս շրջանում թռչունները զբաղեցնում են իրենց բազմացման տարածքները, ուստի կրկնակի հաշվարկի հնարավորությունը նվազագույնի է հասցվում:
- 3. Կետային հաշվարկը** կատարվում է կլաստերային բաշխվածությամբ տեսակների համար: Սովորաբար սրանք տեսակներ են, որոնք հանդիպում են ճահիճների, լճերի և լճակների վրա, որտեղ բնադրման տարածքներն իրար մոտ են (բայց գաղութներ չեն կազմում), իսկ թռչուններն իրար հանդիպում են կեր փնտրելու վայրերում: Նմանօրինակ սոցիալական վարքագիծը պաշտպանում է նրանց տարբեր գիշատիչներից:

Այս մեթոդի դեպքում հաշվառողը մնում է ավին: Նա, սկսելով մինչև 400 մ հեռավորության որևէ կետից, մենադիտակը կամաց-կամաց ձախից աջ տեղափոխելով, գրանցում է մինչև 400 մ շառավղով հատվածում հանդիպող բոլոր առանձնյակներին: Սովորաբար հաշվարկը կատարվում է 15 րոպեի ընթացքում: 15 րոպեից հետո տեսած կամ լսված տեսակները չեն հաշվվում:

Այս հաշվարկը պետք է իրականացնել բազմացման սեզոնի սկզբին՝ մայիսի 10-25-ը, առավոտյան լավ լուսավորությամբ՝ ժամը 08:00-12:00-ը:

Բոլոր հաշվարկները պահանջում են տեսակների նույնականացման և տվյալների հավաքագրման ուսուցում, սակայն ընտրվել են հեշտ նույնականացվող տեսակներ: Տվյալների հավաքագրման մեթոդները ստանդարտ են և տրամադրվում են տվյալների հավաքագրման համապատասխան արձանագրությամբ:

Բոլոր նշված հաշվարկները կարող են իրականացվել ազգային պարկի ռենջերների կողմից՝ անցելով կարճաժամկետ վերապատրաստում: Մշտադիտարկման որակը բարելավելու համար ցանկալի է տվյալների հավաքագրման ժամանակ իրականացնել նաև 15 րոպեանոց ձայնագրություններ, որոնք հետագայում կարող են վերծանվել մասնագետների կողմից, դրանք կօգնեն նշելու հանդիպող բոլոր թռչուններին և դրանց քանակը:

### **Տվյալների մշակում**

Այս փուլը սկսվում է հավաքագրված տվյալների պահպանմամբ: Տվյալները պետք է մուտքագրվեն տվյալների բազա՝ դաշտային փուլի անմիջապես հետո, իսկ տվյալների հավաքագրման արձանագրության թղթային պատճենը պետք է արխիվացնել:



Տվյալների մշակումը ներառում է թիրախային տեսակների ընդհանուր թվի և յուրաքանչյուր ինդիկատոր տեսակի խտության հաշվարկներ:

Խտության հաշվարկից հետո կատարվում է խտության էքստրապոլյացիա տեսակի բոլոր համապատասխան միջավայրերի համար պահպանության գոտիներում և պահպանության գոտիներից դուրս:

Ունենալով մի քանի տարվա տվյալներ՝ հնարավոր է հաշվարկել տեսակի պոպուլյացիայի միտումը: Պոպուլյացիայի միտումի հաշվարկը սովորաբար իրականացվում է «Log-linear Poisson» ռեգրեսիայի միջոցով՝ օգտագործելով ժամանակային շարքերը: Աշխատանքը սովորաբար իրականացվում է «TRIM» կամ «R» ծրագրային փաթեթներով:

### **Տվյալների վերծանում և եզրակացություններ**

Տվյալների մշակման վերջին փուլը ստացված արդյունքների մեկնաբանումն է, դրանց վիզուալացումը և եզրակացությունների մշակումը: Կատարվում է հնարավոր պատճառների վերլուծություն, որոնք կարող են հանգեցնել պահպանվող թիրախային տեսակների կամ ինդիկատոր տեսակների թվի նվազեցմանը կամ ավելացմանը, ինչպես նաև այդ փոփոխությունների ազդեցության գնահատում էկոհամակարգերի առողջության և կառավարման արդյունավետության վրա: Տվյալների վիզուալիզացիան ենթադրում է գրաֆիկների և թեմատիկ քարտեզների պատրաստում:

Մշտադիտարկման արդյունքները յուրաքանչյուր տարի պետք է ներկայացվեն տարեկան հաշվետվությամբ, որը պետք է ներառի կատարված ուսումնասիրություններից բխող եզրակացությունները:


### ***Թիրախային ձկնատեսակների մշտադիտարկում***

Իխտիոֆաունայի մշտադիտարկման համար օբյեկտ են համարվում իշխանի 2 ենթատեսակ՝ Գեղարքունի և Ամառային իշխան: Ձկների պոպուլյացիաների վիճակի մշտադիտարկումը պետք է իրականացվի մասնագետների կողմից (ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի աշխատակիցներ)՝ ըստ համապատասխան գործող մեթոդաբանության: Մշտադիտարկումը կատարվում է հուլիս և հոկտեմբեր ամիսներին:

### ***Կաթնասունների մշտադիտարկում***


Բացի վերը նշված մշտադիտարկման տեսակներից՝ ազգային պարկի տարածքում իրականացվելու է նաև լրացուցիչ գիտական մշտադիտարկում, որը ընդգրկելու է ազգային պարկի տարածքում չղջիկների և գորշ արջի մշտադիտարկումներ: Մշտադիտարկման այս տեսակներն իրականացվելու են մասնագետների կողմից: Գիտական մշտադիտարկումը կարող է պարբերաբար համալրվել գիտական հետաքրքրություն ներկայացնող այլ օբյեկտների մշտադիտարկմամբ:

Մշտադիտարկումը կազմված է իրար հաջորդող մի շարք քայլերից՝



Կաթնասունների մշտադիտարկման աշխատանքները բաղկացած են մի շարք գործողություններից՝ տվյալների հավաքագրումից, տվյալների վերլուծությունից և դրանց հիման վրա կատարված առաջարկություններից: Կաթնասուններից առաջարկվել է իրականացնել չղջիկների և արջերի մշտադիտարկում: Չղջիկների մշտադիտարկումը նպատակահարմար է իրականացնել «Սևան»

ազգային պարկի ողջ տարածքում, իսկ արջերի մշտադիտարկումը՝ Ծովագյուղից Դրախտիկ ընկած հատվածում:



**Նկար 1.4. Կաթնասունների մշտադիտարկման գործողությունների պլան**

**Տվյալների հավաքագրում**

*Չղջիկների (Ձեռքաթափախորհների)* մշտադիտարկման համար տվյալների հավաքն իրականացվելու է 2 ձևով, ստացիոնար ձայնագրող սարքերի միջոցով չղջիկների ուլտրաձայների գրանցում և երթուղային մեթոդով ձեռքի ձայնագրող սարքերով գրանցում: Իրականացվելու է նաև բնակատեղերի՝ ազգային պարկի տարածքում առկա լքված /կիսաքանդ շինությունների և քարայրների ստուգում:

Խոշոր կաթնասունների համար դիտարկումները կիրականացվեն նախօրոք որոշված դիտակետերում և երթուղիներում: Դիտարկումների համար օգտագործվելու են հեռադիտակներ և լուսանկարող թակարդներ: Վերջիններիս տեղադրման համար կպատրաստվեն հատուկ քարտեզներ և դրանց կողմից ստացված լուսանկարները կհավաքագրվեն յուրաքանչյուր ամիս: Լուսանկարող թակարդները կաշիատեն տարին կյոր հավաքագրելով կենդանիների բոլոր սեզոնների ակտիվությունը:

**Տվյալների վերլուծություն**

Տվյալների վերլուծությունն իրականացվելու են «Bat explorer», «Kaleidoskop» համակարգչային ծրագրերով, որոնք կօգնեն ուլտրաձայների միջոցով տեսակորոշումն իրականացնել: Բացի դրանից՝ հաշվարկվելու է այդ տարածքում տեսակների ակտիվության ինդեքսը և պոպուլյացիոն միտումները: Կգրանցվեն նաև միգրացիա կատարող տեսակները:

**Առաջարկություններ**

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկման արդյունքները յուրաքանչյուր տարի պետք է ներկայացվեն տարեկան հաշվետվությամբ, որը պետք է ներառի կատարված ուսումնասիրություններից բխող եզրակացություններն ու առաջարկությունները:

Լուսանկարող սարքերից հավաքագրված նկարները կվերլուծվեն: Կիրականացվի կենդանիների նույնականացում և կհաշվարկվի նրանց քանակն՝ ըստ թակարդների քանակի և փորձադաշտերի մակերեսի:

**Մշտադիտարկման պլան-ժամանակացույց**

Ստորև բերված աղյուսակներում նկարագրված է մշտադիտարկման համար ընտրված բուսական կենսաբազմազանության և թռչնատեսակներից ընտրված օբյեկտների մշտադիտարկում պլան-ժամանակացույցը:

**Աղյուսակ 1.2. Բուսական կենսաբազմազանության մշտադիտարկման օբյեկտները, մեթոդաբանությունը, ժամանակացույցը**

Օբյեկտ	Ցուցիչ	Մշտադիտարկման մեթոդ	Մշտական փորձահրապարակների քանակ	Մշտադիտարկման ժամանակացույց				
				1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.	
<b>Արտանիշ թերակղզի</b>	Կուժկոտրուկ Վոլգայի / <i>Adonis wolgensis</i> /	3×3 մ	2		✓			
	Խոզանափուշ Ֆյոդորովի / <i>Cousinia fedorovi</i> /	3×3 մ	2		✓			
	Վիշապագլուխ ավստրիական / <i>Dracocephalum austriacum</i> /	3×3 մ	1		✓			
	<b>Էկոհամակարգեր</b>							
	Կաղնուտներ	10×1 մ	1		✓	✓		
	Մերձալպյան մարգագետիններ	1×1 մ	3		✓	✓		
	Մարգագետնատափաստաններ	1×1 մ	3		✓	✓		
	Գիհուտներ	10×1 մ	2		✓	✓		
Լայնատերև նոսրանտառներ	10×1 մ	2		✓	✓			
Ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակներ	10×1 մ	3			✓			
<b>Նորատուս թերակղզի</b>	<b>Էկոհամակարգեր</b>							
	Գիհուտներ	10×1 մ	3		✓	✓		
	Անտառտնկարկներ	10×1 մ	2		✓	✓		
	Մարգագետնատափաստաններ	1×1 մ	3		✓	✓		
<b>Ափամերձ գետաբերանային ծառաբուսային բուսականություն</b>	Էկոհամակարգ	50-200 մ	5	✓	✓	✓	✓	

**Աղյուսակ 1.3. Թռչնատեսակների մշտադիտարկման օբյեկտները, մեթոդաբանությունը**

Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	Թիրախ / Ինդիկատոր	Հաշվառման մեթոդը
--------------------------	----------------------------	-------------------	------------------

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սպիտակաաչք սուզաբադ	<i>Aythya nyroca</i>	CT	Կետային հաշվարկ, Որորների կղզի, Լիճք
Քաջահավ	<i>Plegadis falcinellus</i>	CT	Բնադրող զույգերի հաշվարկ, Որորների կղզի, Մասրիկ
Մեծ ջրցուլ	<i>Botaurus stellaris</i>	CT	Կետային հաշվարկ, Որորների կղզի, Լիճք
Գիշանգղ	<i>Neophron percnopterus</i>	CT	Բնադրող զույգերի հաշվարկ, Նորատուսի թերակղզի
Ցախաքլորաորս	<i>Accipiter gentilis</i>	CT	Բնադրող զույգերի հաշվարկ, Լիճք
Սապսան	<i>Falco peregrinus</i>	CT	Բնադրող զույգերի հաշվարկ, Արտանիշի թերակղզի
Բալոբան	<i>Falco cherrug</i>	CT	Բնադրող զույգերի հաշվարկ, Նորատուսի թերակղզի
Ծովային քաարդ	<i>Charadrius alexandrinus</i>	CT	Կետային հաշվարկ, Որորների կղզի, Մասրիկ
Հայկական որոր	<i>Larus armenicus</i>	CT	Բնադրող զույգերի հաշվարկ, Որորների կղզի
Մարգահավ	<i>Crex crex</i>	CT	Կետային հաշվարկ, Արտանիշի թերակղզի, Հյուսիս-արևմտյան Արեգունի
Մեծ տատրակ	<i>Streptopelia turtur</i>	CT	Տրանսեկտային հաշվարկ, Մասրիկ
Բվեճ	<i>Bubo bubo</i>	CT	Բնադրող զույգերի հաշվարկ, Լիճքի հարակից հատվածը, Հյուսիս-արևմտյան Արեգունի

**Կաթնասունների մշտադիտարկման պլան-ժամանակացույց**

Չղջիկների մշտադիտարկումը հարկավոր է իրականացնել ապրիլ-հոկտեմբեր ամիսներին: Ստացիոնար ձայնագրող սարքերը հարկավոր է տեղադրել ապրիլ ամսից հոկտեմբեր ամիսները, իսկ երթուղային մեթոդով ձայնագրումները պետք իրականացնել մայիսի կեսերին 4-5 օր, հուլիսին՝ 4-5 օր և սեպտեմբերին՝ 4-5 օր:

Արջի մշտադիտարկման համար հարկավոր է լուսանկարող թակարդները տեղադրել փետրվարին և մինչև դեկտեմբեր հավաքագրել տվյալները: Դիտարկումներն իրականացնել ապրիլ, հոկտեմբեր ամիսներին:

Ի լրումն, անհրաժեշտ է ապահովել բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի իրականացման մեթոդական ցուցումների մշակումը, ինչպես նաև անհրաժեշտ տիպային ձևատեսքերի՝ մոնիթորինգային արձանագրությունների կազմման և դաշտային ձևերի մշակումն ու հաստատումը:

## Հավելված 2. Սևանի ավազանի էկոհամակարգերը և բնակմիջավայրերը

### C. Ներցամաքային մակերեսային ջրեր

C1 - Մակերեսային կանգնած ջրեր

- C1.2 - Մշտական մեզոտրոֆ լճեր, լճակներ և ավազաններ

Ընդգրկում է լճեր և ջրավազաններ, որոնց ջրերը բավականին հարուստ են սննդանյութերով (ազոտ և ֆոսֆոր) և լուծված հիմքերով (pH հաճախ 6-7): Շատ չաղտոտված հարթավայրային լճեր և լճակներ, բնականաբար, մեզոտրոֆ են և ապահովում են մակրոֆիտների խիտ կուտակումներ: Աշխարհագրական տեսանկյունից բնակմիջավայրերի այս կատեգորիան լայնորեն տարածված է Հայաստանի հարթավայրային և միջին բարձրության լճերում: Սևանա լիճը ներկայումս ևս դարձել է մեզոտրոֆ:

Նկատի ունենալով Սևանա լճի ջրային հարուստ պաշարները՝ դեռևս երեսունական թվականներից հանրապետության տնտեսության համար էներգետիկ բազա ստեղծելու, ինչպես նաև Արարատյան գոգավորության անջրդի հողերի յուրացման (մոտ 100 հազ. հա) նպատակով մշակվեց Սևանա լճի ջրերի օգտագործման համալիր սխեման, որի հիմքում դրված էր Սևանա լճի ջրի դարավոր պաշարների ինտենսիվ օգտագործումն էներգետիկ և գյուղատնտեսական նպատակներով, լճի մակարդակի իջեցմամբ նրա հայելակրճատումը և հատակից (գրունտից) ազատված հողատարածքների ներառումը տնտեսության ոլորտ: Լճի ջրերի այդպիսի ոչ հիմնավորված շահագործումը բերեց բնապահպանական տեսակետից մի շարք բացասական երևույթների և գործընթացների զարգացմանը: Դա վերաբերում է լճում ընթացող մի շարք անցանկալի ջրակենսաբանական, ջրաֆիզիկական և ջրաքիմիական պրոցեսներին, որոնց հետևանքով լճում, սկսած 60-ական թվականներից, սկսվեցին էվտրոֆիկացիայի երևույթներ, որոնց արդյունքում 80-ական թվականներից արդեն նկատվում էր լճի օլիգոտրոֆ վիճակից անցումը դեպի էվտոտրոֆ վիճակի:

- C1.21 - Մեզոտրոֆ ջրային մարմինների բենթոսային համակեցություններ

Չորբենթոսը ջրային էկոհամակարգերի հատակին և հատակամերձ շերտերում բնակվող կենդանիների համակեցություն է: Սևանա լճում հատակային անողնաշարները հանդիպում են ինչպես լիթորալ, այնպես էլ պելագիալ գոտիների հատակին և զբաղեցնում են տարբեր սուբստրատներ՝ գետաբերուկներ, քարեր և դրանց վրա գոյացություններ, ավազ և մակրոֆիտ, մաքուր ավազ, տղմավազ, օքսիդացած տիղմ, վերականգնված տիղմ և բյուրեղացված հատակ: Լճում ներկայացված են մեյոբենթոսային (*Cnidaria*, *Turbellaria*, *Nematoda*, *Tardigrada*, *Ostracoda*, *Cladocera*, *Cyclopoida*, *Harpacticoida*, *Hydracarina*), մակրոբենթոսային (*Oligochaeta*, *Hirudinea*, *Gastropoda*, *Bivalvia*, *Amphipoda*, *Odonata*, *Ephemeroptera*, *Trichoptera*, *Hemiptera*, *Chironomidae*) և մեզաբենթոսային (*Decapoda*) համակեցություններով: Լճում ամենատարածված մեյոբենթոսային անողնաշարներից կարելի է նշել *Tobrillus gracilis*, *Daptonema dubium*, *Monhystera paludicola*, *Hofmaenneria brachystoma*, *Punctodora ratzeburgensis*, *Chromadorita leuckarti*, *Paraplectonema pedunculatum*, *Candona neglecta*, *C. caucasica*, *Ilyocryptus sordidus*, *Alona quadrangularis*, *Cyclops vicinus*, *Eucyclops serrulatus*, *Nitocrella hibernica*, *Canthocamptus staphylinus*, իսկ մակրոբենթոսայիններից՝ *Nais elinguis*, *Uncinaxis uncinata*, *Amphichaeta leydigi*, *Rhyacodrilus coccineus*, *Limnodrilus hoffmeisteri*, *Limnodrilus claparedeanus*, *Potamothrix alatus paravanicus*, *Tubifex tubifex*, *Glossiphonia complanata*, *Helobdella stagnalis*, *Herpobdella octoculata*, *Lymnaea stagnalis*, *Radix ovata*, *R. Lagotis*, *Euglesa nitida*, *Gammarus lacustris*, *Baetis* sp., *Procladius culiciformis*, *Cladopelma armenica*, *C. fridmanae*, *Cryptochironomus redekei*, *Polypedilum scalaenum*, *Tanytarsus sevanicus* տեսակները: Մեզաբենթոսային կենդանիներից հանդիպում է միայն երկարաչանչ խեցգետինը (*Pontastacus leptodactylus* Eschscholtz, 1823), որը լճում լայն տարածում է ստացել 1980-ական թվականների սկզբին, սակայն ներկայումս վերջինիս պաշարները լճում նկատելիորեն խզված են:

- C1.22 - Մեզոտրոֆ ջրային մարմինների ազատ լողացող բուսականություն

Մակրոֆիտները ջրային բարձրակարգ բույսեր են, որոնք լինում են ազատ լողացող, արմատավորված լողացող կամ արմատավորված սուզվող: Սևանա լճի մակրոֆիտային գոտին տարածվում է հիմնականում մինչև 13 մ խորությունը: Լճի մակրոֆիտային համակեցության լայնորեն

տարածված ներկայացուցիչներից են *Chara fragilis*, *Potamogeton perfoliatus*, *P. pectinatus*, *Myriophyllum spicatum* և *Ceratophyllum demersum* տեսակները: Սակայն արդի ժամանակաշրջանում այս ցանկը համարվել է նախկինում չարձանագրված ներկայացուցչով՝ *Ruppiaceae* ընտանիք, *Ruppia* ցեղ, *Ruppia maritima* տեսակ, որը նոր ընտանիք, ցեղ և տեսակ է ոչ միայն լճի, այլ նաև Հայաստանի Հանրապետության ֆլորայի համար:

- C1.23 - Մեզոտրոֆ ջրային մարմինների արմատավորված սուզվող բուսականություն

Պլանկտոնն ընդգրկում է ջրաշերտում բնակվող բույսեր և կենդանիներ, որոնք կամ պասիվորեն են լողում ջրում կամ տեղափոխվում են ջրի հոսքի միջոցով: Սևանա լճում ֆիտոպլանկտոնային համակեցությունը ներկայացված է դիատոմային (*Bacillariophyta*), կանաչ (*Chlorophyta*), կապտականաչ (*Cyanophyta*), ոսկեգույն (*Chrysophyta*), էվգլենային (*Euglenophyta*), դինոֆիտային (*Dinophyta*), կրիպտոֆիտային (*Cryptophyta*) և դեղնականաչ (*Xanthophyta*) ջրիմուռներով: Պլանկտոնային ջրիմուռներից քանակական ցուցանիշներով աչքի են ընկնում հատկապես *Cyclotella meneghiniana*, *Stephanodiscus astraea*, *Oocystis lacustris*, *Dictyosphaerium pulchellum*, *D. ehrenbergianum*, *Carteria* spp., *C. klebsii*, *Sphaerocystis schroeteri*, *Westella botryoides*, *Ankistrodesmus angustus*, *Monoraphidium arcuatum*, *Ankyra* spp., *A. judayi*, *A. ancora*, *Kirchneriella obesa*, *Binuclearia lauterbornii*, *Dolichospermum flos-aquae*, *Aphanothece clathrata*, *A. stagnina*, *Microcystis aeruginosa*, *Aphanizomenon flos-aquae*, *Ochromonas danica*, *Trachelomonas hispida* և *Cryptomonas marssonii* տեսակները: Լճում պլանկտոնային անողնաշարները ներկայացված են անվակիրների (*Rotifera*), ճյուղաբեղավորների (*Cladocera*) և թիտանիների (*Copepoda*) խմբի ներկայացուցիչներով: Այս խեցգետնակերպերից քանակական ցուցանիշներով հատկապես աչքի են ընկնում *Polyarthra vulgaris*, *Filinia terminalis*, *Keratella quadrata*, *Arctodiaptomus bacillifer*, *Acanthodiaptomus denticornis*, *Cyclops abyssorum*, *C. strenuus*, *Daphnia longispina* և *Diaphanosoma lacustris* տեսակները:

- C2 - Մակերևութային հոսող ջրեր

- C2.1 - Աղբյուրներ, աղբյուրների առվակներ և գեյզերներ

Մրանք աղբյուրներ և գեյզերներ են, որոնք բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների հետ միասին ստեղծում են ինքնատիպ միկրոկլիմայական և հիդրոլոգիական միջավայր: Այս խմբին են պատկանում նաև աղբյուրներից և գեյզերներից սկիզբ առնող առվակները, որտեղ ջերմային ռեժիմը մոտ է աղբյուրի, գեյզերի ջերմային ռեժիմին և խիստ տարբերվում է շրջակա միջավայրի ջերմային ռեժիմից: Այս կատեգորիայի բնակմիջավայրերի տարածվածությունը սահմանափակ է, սակայն դրանց կարելի է հանդիպել Սևանա լճի ավազանում:

- C2.2 - Մշտական ոչ մակընթացային, արագ, փոթորկալից ջրահոսքեր

Մրանք մշտական ջրային հոսքեր են՝ արագ հոսող բուռն ջրով և դրանց հետ կապված կենդանական և մանրադիտակային ջրիմուռների պելագիկ և բենթոսային համակեցություններով: Ընդգրկում են գետերը, վտակները, առվակները, ջրվեժները, կասկադները և այլ: Այս դասին են պատկանում Սևանա լճի ավազանի գետերի և վտակների մեծ մասը: Մովորաբար, այս դասին են պատկանում նաև մեծ գետերը, որոնց հոսանքի վերին հատվածում երկարատև ջրհոսք կա:

- C2.3 - Մշտական ոչ մակընթացային, հարթ հոսող ջրահոսքեր

Մրանք մշտական ջրային հոսքեր են՝ ոչ տուրբուլենտ ջրերով և դրանց հետ կապված կենդանական ու մանրադիտակային ջրիմուռների պելագիկ և բենթոսային համակեցություններով: Ընդգրկում են դանդաղ հոսքով գետերը, վտակները, առվակները, ինչպես նաև շերտավոր հոսք ունեցող արագահոս գետերը:

Հայաստանի լեռնային տեղանքում այս բնակմիջավայրերը ընդգրկում են միայն փոքր տարածքներ և կարող են հանդիպել խոշոր գետերի (Արաքս, Ախուրյան, Արփա, Որոտան, Ողջի, Աղստև, Դեբեդ և այլն) ստորին հոսանքներում կամ լեռնային սարահարթով հոսող խոշոր գետերի (Արգիճի, Ախուրյան) միջին և վերին հոսանքներում:

Բացի դրանից՝ որոշ գետեր, որտեղ արագությունն արհեստականորեն նվազում է ամբարտակների պատճառով (օրինակ՝ Հրազդան գետը, Որոտան գետի միջին հոսանքը), նույնպես ներառված են այս կատեգորիայում: Վերջերս շատ փոքր և միջին գետեր, որոնց վրա կառուցվել են փոքր ՀԷԿ-եր, նույնպես սկսել են դասվել այս կատեգորիային: Այս կատեգորիային պատկանում են նաև բնական հունով և հարթ հոսքով որոշ խոշոր և միջին ջրանցքները:

● C2.5 - Ժամանակավոր հոսող ջրեր

Ջրահոսքեր, որոնք դադարում են հոսել տարվա մի մասում՝ թողնելով չորացած հուն և ջրափոսեր: Գարնանն այս ջրահոսքերն արագահոս են, տուրբուլենտ, հանգեցնում են հեղեղումների և սելավների: Սակայն ամռանն արագությունը նվազում է և մինչև ամառվա կեսերը դրանք չորանում են: Այնուամենայնիվ, ինտենսիվ անձրևներից հետո դրանց հոսքը կարող է վերակենդանանալ: Քանի որ հողի խոնավությունը մնում է բարձր, բուսական ծածկությունը գերակշռում են հիգրոֆիտները կամ խոր արմատային համակարգով բնափայտային բույսերը:

Այս բնակմիջավայրը, իհարկե, հանդիպում է Սևանա լճի ավազանում, սակայն ավելի քիչ է տարածված, քան Հայաստանի այլ շրջաններում: Ներկայում այս բոլոր Սևանա լիճ թափվող գետերից միայն 9-ն ունեն մշտական ամբողջ տարվա հոսք, մնացածն ամռանը ցամաքում են, հատկապես գետաբերանում:

C3 - Ներքին մակերևութային ջրային մարմինների ավամերձ գոտի

Իրենից ներկայացնում է ջրի նվազման պատճառով գետերի և լճերի մերկացած հատակին, ավազների, խճաքարերի վրա կամ գետի հունում հանդիպող եղեգի, կեռոնի և բոշխերի գերակշռությամբ կամ այլ ջուր ծածկող բուսականություն: Այս բնակմիջավայրերը լայնորեն տարածված են Սևանա լճի ավազանում:

**D - ճահիճներ և գերխոնավ բնակմիջավայրեր**

Ջրաճահճային բուսականությամբ բնակմիջավայրեր են, որոնց ջրի մակարդակը գտնվում է գետնի մակերևութին մոտ կամ տարվա առնվազն կեսին դրանից բարձր: Գերակշռում են խոտաբույսերը և Cyperaceae ընտանիքի ներկայացուցիչները:

D2 - Հովտային, աղքատ և անցումային ճահիճներ

Թույլից դեպի ուժեղ թթվայնությամբ տորֆային ճահիճներ են և բուսականությամբ ճահճացած տարածքներ, որտեղ դրանք ջուր են ստանում հարակից լանդշաֆտից կամ գրավում են միջանկյալ դիրք ջրի և ցամաքի միջև: Ընդգրկում են ոչ կրային բուսածածկ աղբյուրները և ցնցվող ճահիճները: Ընդհանուր առմամբ տորֆային ճահիճները Հայաստանում լայն տարածքում չունեն: Դրանք կարելի է գտնել Լոռվա սարահարթում՝ Փամբակի լեռնաշղթայում և Սևանա լճի ավազանում, որոնք վերջին շրջանում չորանում են:

● D2.2 - Աղքատ և փափուկ ջրով ճահիճներ

Տորֆային ճահիճներ, լվացված հողեր և բուսականությամբ ծածկված աղբյուրներ են հովտային ճահիճներում կամ բլուրներում: Ջրի մակարդակը սուբստրատի մակերեսին է կամ դրան մոտ, իսկ տորֆի ձևավորման գործընթացը կախված է գրունտային ջրերի մշտական բարձր մակարդակից: Աղքատ բուսածածկություն, որպես կանոն, գերակշռում են բոշխերը (*Carex canescens*, *C. transcaucasica*), մամուռների հետ միասին (*Calliergonella cuspidata*, *Calliergon sarmentosum*, *Calliergon stramineum*, *Drepanocladus exannulatus*, *Drepanocladus fluitans*, *Sphagnum cuspidatum*, *Sphagnum papillosum*, *Sphagnum recurvum* agg., *Sphagnum russowii*, *Sphagnum subsecundum* agg.). այլ բնութագրիչ անոթավոր բույսեր են *Agrostis canina*, *Juncus filiformis*. Այս էկոհամակարգը հատկապես լավ էր ներկայացված նախկին Գիլի լճի շրջակայքում, Տորֆավան բնակավայրի մոտ, իսկ ներկայումս այն պահպանվել է հատվածավորված՝ հիմնականում աղբյուրների ժայթքման մոտակայքում:

Նախորդ դարի 50-60-ական թթ. սկսած Սևանա լճի մակարդակի 19 մ իջեցումը, ինչպես նաև ավելի քան 10 հազ. հա ճահճուտների արհեստական չորացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն արտահայտված է թռչունների շրջանում:

● D2.3 - Անցումային և ցնցող ճահիճներ

Ոչ ցամաքային ջրածածկ բնակմիջավայրեր են՝ տորֆ առաջացնող բուսականությամբ և թթվային ստորերկրյա ջրերով կամ բուսական լողացող կղզիներով և թթվային լճային ջրերով: Բնութագրիչ տեսակներն են *Carex diandra*, *C. lasiocarpa*, *C. rostrata*, *Menyanthes trifoliata*. Այս կատեգորիային պատկանող բնակմիջավայրերը հանդիպում են ամենուր, այն իրենից ներկայացնում է անցումային բնակմիջավայր ջրի և ցամաքի միջև: Լինելով ջրածածկ բնակմիջավայր՝ բնութագրվում են տորֆի ձևավորման թույլ պրոցեսների առկայությամբ: Սևանա լճի ավազանում հանդիպում են ոչ մեծ հատվածներով Մեծ Սևանի ավերին:

**E. Խոտային բնակմիջավայրեր (բուսական ծածկույթում գերակշռում են խոտաբույսերը, մամուռները և քարաքոսերը)**

Ոչ ափամերձ տարածքների բնակմիջավայրեր են, որոնք հիմնականում չորային են կամ միայն սեզոնային խոնավ: Տարվա կեսից ավելին գրունտային ջրերի մակարդակը գետնի մակարդակի վրա կամ դրանից ցածր է: Բուսածածկը կազմում է 30 %-ից ավելի: Բուսականության մեջ գերակշռում են խոտաբույսերը, մամուռները, քարաքոսերը, պտերները, բոշխերը:

E1 - չոր խոտային բնակմիջավայրեր

Սրանք լավ ցամաքեցված կամ չոր հողեր են, որտեղ գերակշռում են խոտաբույսերը, հիմնականում չչարարտացված են և ցածր արտադրողականությամբ:

E1.2 - բազմամյա կրային խոտային բնակմիջավայրեր և հիմնական տափաստաններ

Բազմամյա խոտաբույսերով խոտային բնակմիջավայրեր են, աղքատ սննդանյութերով: Սակայն նեմորալ և տափաստանային, դրանց հարող տարածքներում, ենթաբորելա և ենթամիջերկրածովյան գոտիների կրային և այլ հիմնական հողերում ունենում են հարուստ տեսակային կազմ: Այս կատեգորիայի էկոհամակարգերը լայնորեն տարածված են Հայաստանի ողջ տարածքում: Տարբերվում են ըստ 2 ցուցանիշի՝ տեսակային բազմազանություն և գերակշռող տեսակներ: Իսկ դասակարգվում են՝ ըստ գերակշռող բուսատեսակների:

• E1.22 - Չորային ենթամայրցամաքային տափաստանային բնակմիջավայրեր

Չոր ենթամայրցամաքային տափաստանախոտային համակեցություններ են: Բաց կամ փակ, ֆլորիստիկ հարուստ կազմով այս տափաստաններում գերակշռում են *Stipa spp.*, *Festuca valesiaca*, *Poa badensis*, *Carex humilis*, *Ononis pusilla*, *Helianthemum canum*, *Fumana procumbens* տեսակները: Հայաստանում և մասնավորապես Սևանա լճի ավազանում զբաղեցնում են ոչ մեծ տարածքներ, հանդիպում են հատվածավորված: Այս էկոհամակարգերում գերակշռում են *Bothriochloa ischaemum* տեսակը և *Agropyron*, *Elytrigia* ցեղերի մի շարք տեսակներ:

• E1.2E - Իրանաանատոլիական տափաստաններ

Իրանաանատոլիական տափաստանները տարածված են Անատոլիական սարահարթում, Անդրկովկասում, Արևելյան Նախակովկասում, Դաղստանում, Իրանական սարահարթում, Թերեք գետի ավազանում, Կոպետդաղում, Պամիր-Ալայում, Արևմտյան Տյան Շանում և մինչև Հյուսիսային Մեզոպոտամիա: Հայաստանին խիստ բնորոշ բնակմիջավայրեր են: Մինչև գյուղատնտեսության մեջ օգտագործելու նպատակով տարածքները վարելը եղել են առավել տարածված և ամենամեծ տարածք ունեցող բնակավայրերը: Այս կատեգորիային են պատկանում փետրաշուղախոտային տափաստանները: Սևանա լճի ավազանում ներկայացված են ծովի մակերևույթից 2000-2100 մ բարձրությունների վրա, մեզոֆիլ տարատեսակներով, որտեղ գերակշռում են *Stipa* ցեղի տարբեր տեսակներ:

E1.C - Ուտելու համար ոչ պիտանի, ոչ զարնանային խոտային բուսականությամբ ծածկված չոր միջերկրածովյան տարածքներ

Չորային տարածքներ են, որոնք ծածկված են 10 %-ից պակաս թփային բուսականությամբ և մեծ թվով ուտելու համար ու որպես կերաբույս ոչ պիտանի, ոչ զարնանային փշերով, ինչպիսիք են *Carthamus*, *Carlina*, *Centaurea*, *Onopordum* ցեղերի ներկայացուցիչները: Հայաստանում լայնորեն տարածված բնակմիջավայր է, որը հիմնականում ստորին և միջին լեռնային գոտիների արոտավայրերի գերարածեցման արդյունք է: Այս բնակմիջավայրերը հաստատուն ընդարձակվում են էկոհամակարգերի ընթացիկ դեգրադացիայի և քայքայման արդյունքում: Այս կատեգորիայի ենթակատեգորիաները դասակարգվում են՝ ըստ բուսական համակեցությունում գերակշռող տեսակների, որոնք մեծամասամբ իրենցից ներկայացնում են Հայաստանի ֆլորայի ինվազիվ և էքսպանսիվ խոտաբույսերը՝ *Cirsium spp.*, *Onopordum spp.*, *Carthamus spp.*, *Centaurea spp.*, *Carduus spp.*, *Astrodaucus orientalis*, *Conium maculatum*, *Achillea filipendulina*, *Conyza canadensis*, *Tanacetum vulgare*, *Sambucus ebulus*:

E2 - խոնավ խոտային բնակմիջավայրեր

Ցածրադիր լեռնային մեզոտրոֆ և էուտրոֆ մարգագետիններ են՝ բորեալ, նեմորալ, տաք բարեխառն խոնավ և միջերկրածովյան գոտիների արոտավայրեր ու խոտհարքներ են: Որպես կանոն ավելի բերրի են, քան չոր խոտային բնակմիջավայրերը:



- E2.1 - Մշտական մեզոտրոֆ արոտավայրեր և արածեցված մարգագետիններ

Կանոնավոր արածեցվող մեզոտրոֆ արոտավայրեր. ի տարբերություն Եվրոպայի՝ Հայաստանում դրանք բնորոշ են միջին և վերին լեռնային գոտիներին, որտեղ զարգանում է մարգագետնատափաստանային բուսականությունը: Այս կատեգորիայի մեջ են մտնում մարգագետնատափաստանային արոտավայրերի տարբեր էկոհամակարգեր: Էկոհամակարգերը լավ են ներկայացված Սևանա լճի ավազանում: Այստեղ արոտավայրերի մեծ մասը պատկանում է այս բնակմիջավայրին:

- E2.3 - Լեռնային խոտհարքներ

Հաճախ բարձր լեռնային և մերձալպյան գոտու տեսակային հարուստ կազմով խոտհարքներ են: Հայաստանում լայնորեն տարածված էկոհամակարգեր են: Սևանա լճի ավազանում շատ է հանդիպում, մասնավորապես լավ է ներկայացված Արզիճի, Գավառագետ և այլ գետերի միջին հոսանքներում:

- E2.8 - միամյա խոտաբույսերի տրոփվազ մեզոֆիլ խոտային բնակմիջավայրեր

Ոչ բարձր միամյա խոտաբույսերի մեզոֆիլ, մեծապես արմատախիլ արված բնակմիջավայրեր են: Տնտեսական ճգնաժամի և անասնապահության կառավարման մոտեցումների փոփոխությանը զուգընթաց այս կատեգորիայի բնակմիջավայրերը դարձել են շատ տարածված Հայաստանում, հատկապես բնակավայրերի անմիջական հարևանությամբ և անասունների ջրոցների շրջակայքում: Բուսականության ինտենսիվ գերարածեցման և տրոփման հետևանքով տեղի է ունենում հողերի էրոզիա, տեսակային կազմի փոփոխություններ, որի արդյունքում բազմամյա կերային բույսերը փոխարինվում են միամյա ցածր արտադրողականությամբ տեսակներով:

E4 - Ալպյան և մերձալպյան խոտային բնակմիջավայրեր

Ալպյան և ենթալպյան գոտիների առաջնային և երկրորդային խոտաբույսերի կամ բոշխերի գերակշռությամբ համակեցություններ են:

- E4.1 - Բուսականությամբ ձնապատ հատված

Բուսածածկ տարածքներ, որոնք պահպանում են ուշ ձյան շերտը: Գերակշռող տեսակներ կարող են լինել մամուռները, հացազգիները, պտերները, փոքր խոտաբույսերը: Հայաստանի բարձրադիր վայրերում ձյունակույտերը կարող են երկար մնալ, որոշ տարիներին պահպանվել անգամ ողջ ամառվա ընթացքում: Այստեղ ձնհալքներից ազատված հատվածներում սովորաբար ձևավորվում են շատ բնորոշ բաց համակեցություններ, որտեղ գերակշռում են սոխուկավոր գեոֆիտները (*Puschkinia scilloides*, *Gagea glacialis*, *G. caroli-kochii*, *G. anisanthos*, *Merendera raddeana*, *Scilla armena*, *Colchicum szovitsii*, և այլն) կամ *Brassicaceae* և *Caryophyllaceae* ընտանիքների ներկայացուցիչները (*Draba brunifolia*, *D. araratica*, *Cerastium cerastoides* և այլն), ինչպես նաև *Primula algida*, *Gentiana verna ssp. pontica*, և այլն: Ժամանակի ընթացքում ազատված տարածքներում բուսածածկի ձևավորման արդյունքում ձևավորվում են ալպյան գորգեր: Էկոհամակարգը հարաբերականորեն լավ է ներկայացված Վարդենիսի և Գեղամա լեռնաշղթաներում:

- E4.3 - Ալպյան և մերձալպյան թթվային խոտային բնակմիջավայրեր

Սրանք իրենցից ներկայացնում են ալպյան և մերձալպյան խոտային էկոհամակարգեր, որոնք ձևավորվում են բյուրեղային ապարների և կրաքարի պակաս ունեցող այլ սուբստրատների կամ լեռնային կալցիումից զուրկ հողերի վրա: Հայաստանում այս բնակմիջավայրերը զբաղեցնում են հրաբխային ծաղման բարձր լեռնաշղթաները և լեռնազանգվածները: Այս կատեգորիան աչքի է ընկնում ենթակատեգորիաների մեծ բազմազանությամբ՝ հրաբխային սուբստրատների վրա ձևավորվող ալպյան մարգագետիններ և ալպյան գորգեր: Այս բնակմիջավայրերը շատ լավ ներկայացված են լիճը շրջապատող բարձրլեռնային լեռնաշղթաներում:

F. Թփային բուսականություն և տուռեր

Ոչ ավամերձ տարածքներ են, որոնք չոր են կամ միայն սեզոնային հեղեղված (տարվա կեսից ավելին ջրի մակարդակը գետնի մակարդակից ցածր է), ծածկված են 30 %-ից ավելի բուսական ծածկույթով: Անախտան տարածքները, թփային բուսականությունը և տուռերի բնութագրվում են որպես էկոհամակարգեր, որոնց բուսականության կազմում գերակշռում են 5 մ առավելագույն բարձրությամբ թփերը կամ ցածրան ծառերը:

**F2 - Արկտիկական, ալպյան և ենթալպյան թփուտներ**

Թփուտներ, որոնք հանդիպում են ծառերի վերին կլիմայական սահմանից հյուսիս կամ դրանից վեր, սակայն ոչ մշտական սառնամանիքների գոտում:

Թփուտներ, որոնք հանդիպում են ծառերի վերին կլիմայական սահմանին մոտ կամ դրանից ներքև, երբ ճնշվում են կամ ուշ ձյան տեղումներով, կամ քամուց կամ բազմակի կերված լինելու պատճառով:

- F2.2 - Մշտադալար ալպյան և ենթալպյան բացատներ և թփուտներ

Լեռնային ալպյան և ենթալպյան գոտիների փոքր, գանձ կամ թեքված թփուտներ են, որտեղ գերակշռում են *Ericaceae* ընտանիքի, *Cytisus* ցեղի տեսակները, գանձ գիհիները (*Juniperus*) և դեղնաձաղիկները (*Genista*): Հայաստանում բավականին տարածված բնակմիջավայր է, չնայած *Ericaceae* ընտանիքի տեսակների գերակշռության, բնակմիջավայրերը բավականին քիչ հանդիպող են, սակայն փոփոգ գիհիներով բնակմիջավայրերը շատ տարածված են: Սևանա լճի ավազանում այս էկոհամակարգը ոչ մեծ տարածքներ է զբաղեցնում Վարդենիսի լեռնաշղթայում, որտեղ գերակշռում է *Vaccinium myrtillus* տեսակը: Այս կատեգորիան ներառում է նաև Հարավային Պալեարկտիկական լեռնային գանձ գիհու մացառուտներ, որոնք ներկայացված են *Juniperus sabina* և *Juniperus hemisphaerica* (*Juniperus depressa*) գերակշռությամբ էկոհամակարգերով:

- F2.23 - Հարավային Պալեարկտիկական լեռնային ցածրանոց գիհու մացառուտներ

Հարավային պալեարկտիկական լեռնային ցածրանոց գիհու մացառուտները հիմնականում փոփոգ գիհիների նոսր համակեցություններ են, որոնք հանդիպում են վերին և ավելի բարձր լեռնային գոտիներում: Հայաստանում այս բնակմիջավայրերը հանդիպում են մերձալպյան գոտում երբեմն հասնելով ալպյան գոտի: Հայաստանում տարածված են *Juniperus hemisphaerica* (*J. depressa*) տեսակի մացառուտները՝ ձևավորելով լեռնաշղթաների մեծ մասի հարավային լանջերին լայն շերտեր: Բուսական ծածկույթը հիմնականում կազմում են մարգագետնային տեսակները՝ *Bromopsis variegata*, *Trisetum flavescens*, *Betonica macrantha*, *Campanula stevenii*, *Elytrigia intermedia* ssp. *trichophora*, *Galium verum*, *Ziziphora serpyllacea* և այլն: Այս էկոհամակարգը լավ է ներկայացված Սևանա լիճը շրջապատող բոլոր լեռնաշղթաներում՝ ծովի մակերևույթից 2300-2500 մ բարձրության վրա: Հայաստանի համար հազվագյուտ *Juniperus sabina* բուսատեսակի գերակշռությամբ էկոհամակարգը զբաղեցնում է ոչ մեծ հատվածներ Արեգունու լեռնաշղթայում:

- F2.3 - Մերձալպյան լայնատերև թփուտներ

Մերձալպյան թփուտներ, որտեղ գերակշռում են *Alnus*, *Betula*, *Salix* և Վարդագիների որոշ ցեղերի (*Amelanchier*, *Rubus*, *Sorbus*, *Rosa*, *Spiraea*), 5մ-ից ցածր բարձրությամբ տեսակները, որոնց հաճախ ուղեկցում են բարձր խոտաբույսերը: Այս կատեգորիայի մեջ ներառված են նաև տափաստանային թփուտները, որոնք լայնորեն տարածված են Հայաստանում և լավ ներկայացված են Սևանա լճի ավազանում, հատկապես *Spiraea crenata* և *S. hypericifolia* տեսակների գերակշռությամբ թփուտները, հանդիպում է լիճը շրջապատող գրեթե բոլոր լեռնաշղթաներում: Առավել լավ ներկայացված է Սևանի լեռնաշղթայում: Մերձալպյան կորաբուն անտառները ևս պատկանում են այս կատեգորիային: Սևանա լճի ավազանում այս էկոհամակարգը հատկապես լավ է ներկայացված Արտանիշի թերակղզում և Սևանի ու Արեգունու լեռնաշղթաների մնացորդային կաղնուտների վերին սահմանին:

- F3 - Բարեխառն և միջերկրածովյան-լեռնային թփուտներ

Նեմորալ նմանություններով թփային համակեցություններ են: Ընդգրկում են նեմորալ, ինչպես նաև ենթամիջերկրածովյան եւ վերամիջերկրածովյան գոտիների լայնատերև և մշտադալար թփեր:

- F3.1 - Բարեխառն գոտու թփուտներ և մացառուտներ

Սուկսեցիոն և պլագիոկլիմաքսային մացառուտներ են՝ հիմնականում ատլանտյան, ենթատլանտյան կամ ենթամայրցամաքային տերևաթափ, որոնք բնորոշ են նեմորալ գոտուն, բայց գրավում են նաև միջերկրածովյան մշտադալար անտառային գոտու սառը, խոնավ կամ խախտված հատվածները:

Ընդհանրապես, այս բնակմիջավայրերը բնորոշ չեն Հայաստանին, մենք ընդգրկել ենք միայն *Hippophae rhamnoides* տեսակի համակեցությունները, որոնք Սևանի ավազանում արհեստական

համակեցություններ են, ստեղծվել են ավելի քան 60 տարի առաջ, իսկ այժմ դարձել են շատ խիտ, երբեմն անանցանելի: Շատ լավ ներկայացված են Սևանա լճի ամբողջ ափամերձ գոտում:

F7 - Փշոտ միջերկրածովյան մացառուտներ (Ֆրիզանա, *Erinacea* ցեղի տեսակների մացառուտներ, հարակից ափամերձ ժայռերի բուսականություն)

Թփուտներ են, որտեղ գերակշռում են ցածրածառ փշոտ թփերը: Լայնորեն տարածված են ամառային չոր կլիմայով Միջերկրածովյան և Անատոլիական շրջաններում՝ ծովի մակարդակից մինչև բարձր չոր լեռների բարձր բարձրությունների վրա:

- F7.4 - Բարձիկանման մացառուտներ

Միջերկրածովյան և անատոլիական չոր բարձրլեռնային առաջնային բարձիկանման բուսականություն է, որը շատ հաճախ ձևավորում են ցածր բարձիկանման փշոտ թփերը, ինչպիսին են *Acantholimon*, *Astragalus*, *Onobrychis* ցեղերի և բարդածաղկավորների և շրթնածաղկավորների ընտանիքների ներկայացուցիչները: Հայաստանում այս բնակմիջավայրերը շատ տարածված են միջին լեռնային գոտուց մինչև մերձալպյան գոտի, հանդիպում են բոլոր ֆլորիստիկ շրջաններում: Հայաստանի դասական երկրաբուսաբանական աշխատանքներում նշվում են որպես տրագականտներ: Սևանա լճի ավազանում լայնորեն տարածված են համակեցություններ, որտեղ գերակշռում են *Astragalus microcephalus*, *A. lagurus*, *A. aureus*, *Onobrychis cornuta*, *Acantholimon takhtadjanii* տեսակները:

F9 - գետային և ջրահանային թփուտներ

Գետերի ափերը, լճափերը, հովիտները և ճահճային ջրածածկ տարածքները զբաղեցնող բնակմիջավայրեր են, որոնց կազմում գերակշռում են 5 մ-ից ցածր բարձրությամբ բնափայտային բուսատեսակները:

- F9.1 - գետային թփուտներ

Սրանք իրենցից ներկայացնում են գետերի մոտ լայնատերև ծառատեսակների հատկապես մինչև 5 մ բարձրությամբ ուռենիների (օրինակ *Salix caprea*, *S. pentandroides*, *S. triandra*, *S. wilhelmsiana*) գերակշռությամբ թփուտներ: Այս կատեգորիային են պատկանում նաև *Hippophae rhamnoides* և *Myricaria germanica* տեսակների ձևավորած թփուտները: Սևանա լճի ավազանում այս էկոհամակարգը հանդիպում է բավականին շատ, լիճ թափվող գետերի երկայնքով, հիմնականում ձախակողմյան հոսանքում:

### **G. Անտառներ և անտառապատված տարածքներ**

Անտառային և վերջերս մաքրված կամ այրված հողատարածքներ, որտեղ գերակշռում է կամ մինչև վերջերս եղել է ծածկված ծառերի առնվազն 10% ծառերի ծածկույթ ունեցող բուսականությամբ:

Սևանի ջրհավաք ավազանում (Գեղարքունիքի մարզի սահմաններում) անտառները կազմում են շուրջ 17 հազ. հա, որից 12 հազ. հա-ն արհեստական անտառտնկարկներ են և իրենցից ներկայացնում են սոճու, բարդենու, փշատենու, չիչխանի և մի շարք այլ ծառերի ու թփերի համակեցություններ: Առավել խոցելի են բնական անտառկոյակները, որոնք ապօրինի ծառահատումների հետևանքով խիստ վնասվել են:

Վերջին 50-60 տարիների ընթացքում Սևանա լճի ափամերձ գոտում (լճի նախկին հատակ հանդիսացող հողագրունտներում) կատարվել են անտառապատման լայն միջոցառումներ՝ հիմնվել է շուրջ 13 հազ. հա անտառ:

G1 - Լայնատերև տերևաթափ անտառ

Անտառներ և անտառնշակույթներ, որոնցում գերակշռում են լայնատերև տերևաթափ ծառերը:

- G1.1 - լաստենու, կեչու, բարդու կամ ուռենու գերակշռությամբ ափամերձ անտառներ

Բորեալ, բորեալ-նեմորալ, նեմորալ, ենթամիջերկրածովային և տափաստանային գոտիների ափամերձ անտառներ են, որտեղ գերակշռում են մեկ կամ մի քանի տեսակներ՝ սովորաբար *Populus* և *Salix* ցեղի ներկայացուցիչներ: Ընդգրկում են *Salix alba*, *Salix excelsa* տեսակների գերակշռությամբ բուսական համակեցությունները, որոնք հանդիպում են բոլոր գոտիներում: Հայաստանում այս կատեգորիան ներկայացված է ուռենու հայկական ափամերձ անտառների ենթակատեգորիայով, որոնք շատ տարածված են ստորին և միջին լեռնային գոտիների գրեթե բոլոր մեծ գետերի ափերին: Գերակշռող տեսակներն են՝ *Salix alba*, *S. excelsa*, *S. armeno-rossica*, *S. pseudomedemii*: Սևանա լճի

ավազանում այս էկոհամակարգը հանդիպում է լին թափվող գրեթե բոլոր գետերի ափերին, սակայն զբաղեցնում է հարաբերականորեն փոքր տարածքներ:

● G1.A - Մեզո և էուտրոֆ կաղնու, բոխու, թխկու, սոսու, լորենու, թեղու և հարակից այլ տեսակների անտառներ

Այս կատեգորիան ընդգրկում է Հայաստանի հիմնական անտառային էկոհամակարգերը, մասնավորապես կաղնու անտառները, որոնք առաջին հերթին դասակարգվում են ըստ կաղնու գերակշռող տեսակների՝ *Quercus iberica*, *Q. macranthera*, այն ընդգրկում է նաև բոխու (*Carpinus betulus*), լորենու (*Tilia caucasica*, *T. cordata*), կովկասյան կաղնեբոխային անտառների ենթակատեգորիաները: Սևանա լճի ավազանում հանդիպում են միայն կաղնու անտառներ:

● G1.A1 - Կաղնե-հացե-բոխային անտառներ էուտրոֆ և մեզոտրոֆ հողերում

Հարուստ ենթանտառով և խոտածածկով կաղնու անտառներ են: Սովորաբար ձևավորվում են որտեղ կլիման խիստ չորային է, իսկ հողերը կամ շատ չորային են կամ շատ խոնավ հաճարկուտների համար:

● G1.A1D - Հայկական կաղնու անտառներ

Սևանա լճի ավազանում հանդիպում են միայն *Quercus macranthera* տեսակի գերակշռությամբ կաղնուտներ: Սևանա լճի ավազանում հանդիպում են Սևանի և Արեգունու լեռնաշղթաների կիրճերի լանջերին և Արտանիշի թերակղզում մնացորդային անտառների տեսքով:

G3 - Ասեղնատերև անտառներ

Փշատերև ծառերի գերակշռությամբ անտառներ և անտառմշակույթներ

● G3.9 - *Cupressaceae* և *Taxaceae* ընտանիքների ներկայացուցիչների գերակշռությամբ ասեղնատերև անտառներ

Հայաստանում հանդիպում են միայն *Juniperus* ցեղի և *Taxus baccata* տեսակների գերակշռությամբ բնակմիջավայրեր: Սևանա լճի ավազանում հանդիպում է միայն *Juniperus excelsa* (*J. polycarpus*) տեսակի գերակշռությամբ էկոհամակարգ: Այս էկոհամակարգը հատկապես լավ է ներկայացված Արեգունի լեռնաշղթայի լանջերին և Արտանիշի թերակղզում:

● G3.F - Խիստ արհեստական փշատերև տնկարկներ

Հայաստանում այս բնակմիջավայրերը լայնորեն տարածված են, քանի որ սոճու թե՛ արքրիզեն, թե՛ ներմուծված տեսակները լայնորեն օգտագործվել և օգտագործվում են անտառապատման և պաշտպանական անտառաշերտերի ստեղծման համար: Սևանա լճի ավազանում լճից ազատված գրունտի անտառապատման համար հաճախ օգտագործվել է *Pinus kochiana* տեսակը ոչ մեծ հատվածներում հանդիպում է նաև *Pinus pallasiana* տեսակը:

**H. Բուսականությամբ չծածկված կամ հազվադեպ բուսականությամբ ծածկված ներմայրցամաքային բնակմիջավայրեր**

Ոչ ափամերձ բնակավայրեր են, որոնց բուսածածկույթը 30 %-ից պակաս է (բացի այն վայրերից, որտեղ բուսականությունը խոմոֆիտ է կամ աճում է ժայռերի, քարացրոնների վրա): Չորային բնակմիջավայրեր են, խոնավ են լինում միայն սեզոնային:

H2 - քարացրոններ

Գլաքարերի, քարերի, ժայռերի բեկորների, խճաքարերի կամ ոչ էոլյան նստվածքային ծագման այլ ավելի մանր կտորների կուտակումներ են, որոնք հիմնականում բուսականությամբ ծածկված չեն կամ ծածկված են լինում մամուռներով և քարաքոսերով, երբեմն էլ նոսր խոտաբույսերով կամ թփերով: Այս էկոհամակարգերը լավ են ներկայացված Սևանա լիճը շրջապատող բարձրլեռնային լեռնաշղթաներում:

H3 - ներցամաքային ժայռեր և ժայռային մերկացումներ

Բուսականությունից զուրկ, նոսր բուսականությամբ ծածկված և մատուռներով ու քարաքոսերով ծածկված ժայռերն ու ժայռային մերկացումները ներկայումս ծովի հարևանությամբ չեն և վերջին հրաբխային ակտիվության հետևանք չեն: Այս բնակմիջավայրերը շատ բնորոշ են Հայաստանի նման լեռնային երկրի համար: Դրանք հանդիպում են ամենուր: Եթե անտառային տարածքներում այդ բնակմիջավայրերը ներկայացված են հիմնականում առանձին ժայռերով կամ լեռնային գետերի կիրճերում գտնվող ժայռային լանջերով, ապա հանրապետության մյուս հատվածներում տարածված են մեծ ժայռային զանգվածներ: Ժայռային լանջերը լեռնային գետերի

կիրճերին շատ բնորոշ են: Այս բնակմիջավայրերը բավականին տարածված են Սևանա լճի ավազանում ժայռային մերկացումների և լեռնային գետերի կիրճերի ժայռային ավերի տեսքով:

**I. Պարբերաբար կամ վերջին ժամանակներս որպես գյուղատնտեսական հողեր օգտագործվող հողեր, ինչպես նաև տնամերձ տարածքներ**

Բնակմիջավայրեր, որոնք մշտապես գտնվում են մշակման տակ: Ընդգրկում են վարելահողերը, այգիները, ինչպես նաև ջրածածկման ենթակա վարելահողերը:

I1 -Վարելահողեր և բանջարանոցներ

Վարելահողեր, որտեղ մշակվում են խոտաբուսային մշակաբույսեր: Այս մշակաբույսերի թվին են պատկանում հացահատիկային մշակաբույսերը, արևածաղիկը, այլ յուղատու մշակաբույսեր, կերային բույսեր, կարտոֆիլ, հատիկազնդեղեն և այլն:

• I1.1 - Ինտենսիվ չխառնված մշակաբույսերի/մոնոկուլտուրաների վարելահողեր

• I1.3 - չխառնված մշակաբույսերի/մոնոկուլտուրաների վարելահողեր, որոնց համար կիրառվում է ցածր ինտենսիվության ագրոտեխնիկական մեթոդներ

• I1.5 -մերկ վարելահողեր, հողակույտեր կամ նոր լքված վարելահողեր

I2 - Այգիների և պուրակների մշակովի տարածքներ

Մեծամասշտաբ և փոքրամասշտաբ այգիների մշակովի տարածքներ, ներառյալ տնամերձ, դեկորատիվ և քաղաքային փոքր այգիները:

• I2.1 - Մեծամասշտաբ դեկորատիվ այգիների տարածքներ

Օրինակ I2.123 -Երևանի բուսաբանական այգու Սևանի մասնաճյուղը

• I2.2 -Փոքրամասշտաբ դեկորատիվ և տնամերձ այգիների տարածքներ

**J. Բնակավայրեր, շինություններ, արտադրական կառույցներ, տրասնպորտային ցանց, թափոնների լցակույտեր**

J1 - Քաղաքների, ավանների և գյուղերի շինություններ

Կառուցապատված տարածքների շինություններ, որտեղ շինությունները, ճանապարհները և այլ մակերեսները, որոնք զբաղեցնում են տարածքի առնվազն 30 %:

J2 - Ցածր խտության շենքեր

Գյուղական և կառուցապատված տարածքներում գտնվող շենքերը, ճանապարհները և այլ անթափանց մակերեսները ցածր խտությամբ են և սովորաբար զբաղեցնում են 30 %-ից տարածք:

J3 -Արդյունահանող արդյունաբերական տեղամասեր

Տեղամասեր, որտեղ արդյունահանվում են հանքանյութեր: Ներառում է քարհանքեր, բաց հանքեր և ակտիվ ստորգետնյա հանքեր:

J4 - Տրանսպորտային ցանցեր և կոշտ մակերեսով այլ կառուցված տարածքներ

Ներառում է ճանապարհներ, ավտոկայանատեղեր, երկաթուղիներ, ասֆալտապատ արահետներ և օդանավակայանների, ջրային նավահանգիստների և հանգստի գոտիների կոշտ մակերեսով տարածքներ:

J5 -Խիստ արհեստական տեխնածին ջրեր և հարակից կառույցներ

Ներքին արհեստական ջրային մարմիններ՝ ամբողջությամբ կառուցված հատակով կամ խիստ աղտոտված ջրերով, ինչպես նաև դրանց հարակից խողովակներով և տարաներով:

J6 - Թափոնների կուտակումներ

Աղբավայրեր և լցակույտեր, որոնք ձևավորվում են որպես մարդու գործունեության կողմնակի անցանկալի արդյունք:

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Հավելված 3. «Սևան» ազգային պարկի հիմնական գոտիների ու դրանց կազմում գտնվող առանձին հատվածների նկարագիրը**

Համարը քարտեզում	Տարածքագործարանական գոտին	Անվանումը	Մակերես, հա			Տեղանքի նկարագրությունը	Արգելոցային և արգելավայրային գոտիների Էկոհամակարգերը
			Ցամաքային	Զրային	Ընդամենը		
1	Արգելոցային	«Նորաշենի»	199.43	649.74	849.17	Գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում, Նորաշեն բնակավայրից արևելք, սահմանի ընդհանուր երկարությունը 11.5 կմ է: Արգելոցի տարածքը լճի ափագծով ձգվում է մոտ 11,3 կմ, տարածվում ցամաքի խորք մինչև 1,3 կմ, իսկ դեպի լիճ՝ մինչև 1,6 կմ: Ընկած է լճի ափից մինչև 1918 մետր բարձրությունը: Արգելոցի տարածքում առկա են երեք կղզակներ ընդհանուր 6,93 հա տարածքով:	C3.64 – Քաղցրահամ լճերի մերկ ավազները E2.16 – Մարգագետնատափաստաններ F3.19 – Սևանա լճի ավազանում չիչխանի թավուտները H3.1B – Թթվային սիլիցիումային ապարներ, ժայռեր G3.F12 – Տեղական սոճու տնկարկներ C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր
2	Արգելոցային	«Գավառագետ-Նորատուսի»	2103.34	694.82	2798.16	Գտնվում է ազգային պարկի արևմտյան հատվածում, Նորատուս բնակավայրից հյուսիս և արևելք, սահմանի ընդհանուր երկարությունը 56 կմ է: Արգելոցի տարածքը լճի ափագծով ձգվում է մոտ 23,0 կմ, տարածվում ցամաքի խորք մինչև 3,3 կմ, իսկ դեպի լիճ՝ մինչև 0.4 կմ: Ընկած է լճի ափից մինչև 1982 մետր բարձրությունը: Արգելոցի տարածքում է գնտվում Գավառագետի գետաբերանային հատվածը, ինչպես նաև առկա են ջրանահնային տարածքներ:	G3.F12 – Տեղական սոճու տնկարկներ G1.C – Լայնատերև ծառերի լրիվ արհեստական անտառային տնկարկներ F3.19 – Սևանա լճի ավազանում չիչխանի թավուտները E2.16 – Մարգագետնատափաստաններ C3.64 – Քաղցրահամ լճերի մերկ ավազները H3.1B – Թթվային սիլիցիումային ապարներ, ժայռեր I1.5 – Մերկ հողեր C2.2 – Մշտական ջրահոսքեր C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր
3	Արգելոցային	«Լիճք-Արգիճի»	3968.99	2320.61	6289.60	Գտնվում է ազգային պարկի հարավ-արևմտյան և հարավային հատվածներում, Մարտունի քաղաքից հյուսիս-արևմուտք, հյուսիս և հյուսիս-արևելք, սահմանի ընդհանուր երկարությունը 91.7 կմ է: Արգելոցի տարածքը լճի ափագծով ձգվում է մոտ 36.2 կմ, տարածվում ցամաքի խորք մինչև 2.6 կմ, իսկ դեպի լիճ՝ մինչև 1.5 կմ: Ընկած է լճի ափից մինչև 1925 մետր բարձրությունը: Արգելոցի տարածքում են	G1.C – Լայնատերև ծառերի լրիվ արհեստական անտառային տնկարկներ G3.F12 – Տեղական սոճու տնկարկներ F3.19 – Սևանա լճի ավազանում չիչխանի թավուտները E2.16 – Մարգագետնատափաստաններ C3.64 – Քաղցրահամ լճերի մերկ ավազները I1.5 – Մերկ հողեր H3.1B – Թթվային սիլիցիումային ապարներ, ժայռեր

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համարը քարտեզում	Տարածքագործառնական գոտին	Անվանումը	Մակերեսը, հա			Տեղանքի նկարագրությունը	Արգելոցային և արգելավայրային գոտիների Էկոհամակարգերը
			Ցամաքային	Զրային	Ընդամենը		
						գնտվում Երանոս, Բախտակ, Ծակքար, Լիճք, Արգիճի, Մարտունի, Աստղունք, Աստղաձոր, Չոլաքար, Սելավագետակ և Վարդենիկ գետերի գետաբերանային հատվածները, ինչպես նաև առկա են ջրաճահճային տարածքներ:	C2.2 – Մշտական ջրահոսքեր C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր
4	Արգելոցային	«Գիլլի»	1120.09	577.94	1698.03	Գտնվում է ազգային պարկի հարավ-արևելյան հատվածում, Ծովակ բնակավայրից հյուսիս, սահմանի ընդհանուր երկարությունը 27,0 կմ է: Արգելոցի տարածքը լճի ավազոձով ձգվում է մոտ 12,4 կմ, տարածվում ցամաքի խորք մինչև 1,4 կմ, իսկ դեպի լիճ մինչև 0,5 կմ: Ընկած է լճի ավից մինչև 1924 մետր բարձրությունը: Արգելոցի տարածքում են գտնվում Մասրիկ, Փոքր Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածները:	G1.C – Լայնատերև ծառերի լրիվ արհեստական անտառային տնկարկներ G3.F12 – Տեղական սոճու տնկարկներ E2.16 – Մարգագետնատափաստաններ F3.19 – Սևանա լճի ավազանում չիչխանի թավուտները C3.64 – Քաղցրահամ լճերի մերկ ավազները H3.1B – Թթվային սիլիցիումային ապարներ, ժայռեր C2.2 – Մշտական ջրահոսքեր C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր
5	Արգելոցային	«Արտանիշի»	2144.66	2465.0	4609.66	Գտնվում է ազգային պարկի արևելյան հատվածում, Արտանիշ բնակավայրից հարավ-արևելք, հարավ, հարավ-արևմուտք և արևմուտք, սահմանի ընդհանուր երկարությունը 35,0 կմ է: Արգելոցի ցամաքային տարածքը լճի ավազոձով ձգվում է մոտ 11,6 կմ, տարածվում ցամաքի խորք մինչև 7,7 կմ, իսկ դեպի լիճ մինչև 3,4 կմ: Ընկած է լճի ավից մինչև Արջաքարի լեռների Արտանիշ լեռնագագաթը՝ 2461 մետր բարձրությունը:	E2.16 – Մարգագետնատափաստաններ G3.935 – Բազմապտուղ գիհու նոսրանտառներ G1.A1D2 – Հայաստանի կաղնու անտառները արևելյան կաղնու գերակշռությամբ H3.1B – Թթվային սիլիցիումային ապարներ, ժայռեր F3.19 – Սևանա լճի ավազանում չիչխանի թավուտները G1.C – Լայնատերև ծառերի լրիվ արհեստական անտառային տնկարկներ G3.F12 – Տեղական սոճու տնկարկներ C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր
<b>Ընդամենը արգելոցային գոտի</b>			<b>9536.1</b>	<b>6708.11</b>	<b>16244.62</b>		
1	Արգելավայրային	«Արեգունու»	2064.42	-	2064.42	Գտնվում է ազգային պարկի հյուսիսային հատվածում, Ծովագյուղ բնակավայրից դեպի Շողակաթ բնակավայր ընկած	E2.16 – Մարգագետնատափաստաններ H3.1B – Թթվային սիլիցիումային ապարներ, ժայռեր

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համարը քարտեզում	Տարածքագործառնական գոտին	Անվանումը	Մակերեսը, հա			Տեղանքի նկարագրությունը	Արգելոցային և արգելավայրային գոտիների Էկոհամակարգերը
			Ցամաքային	Զրային	Ընդամենը		
						ավտոճանապարհի ձախակողմյան հատվածում, զբաղեցնում է Արեգունի լեռների հարավ-արևմտյան լանջերը, սահմանի ընդհանուր երկարությունը 39,5 կմ: Հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ձգվածությունը մոտ 17,0 կմ է, տարածվում է ծովի մակերևույթից 1994 մետրից մինչև 2673 մետր բարձրության հասնող Սառնուտ լեռնագագաթը, իսկ Ցիցսար լեռնագագաթի (2354 մ) հատվածում 4,2 կմ երկարությամբ սահմանակցում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքին:	G1.A1D2 – Հայաստանի կաղնու անտառները արևելյան կաղնու գերակշռությամբ G3.F12 – Տեղական տճուռ տնկարկներ F2.337 – Տափաստանային թփուտներ
2	Արգելավայրային	«Զկնագետի»	-	172.93	172.93	Գտնվում է ազգային պարկի հյուսիսային հատվածում, Ծովագյուղ բնակավայրից հարավ-արևելք, ընդգրկում է Զկնագետ գետի ստորին հոսանքն ու գետաբերանային հատվածը, ինչպես նաև լճի ափագծից 100 մետր հեռավորությունից սկսած 300 մետրանոց ջրային շերտը, որը ձգվում է ափագծին զուգահեռ մոտ 5.3 կմ:	C2.2 – Մշտական ջրահոսքեր C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր
3	Արգելավայրային	«Հրազդանի»	-	181.03	181.03	Գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում, Սևան քաղաքից արևելք, ընդգրկում է Հրազդանի գետի ակունքն ու լճի ափագծից 100 մետր հեռավորությունից սկսած 300 մետրանոց ջրային շերտը, որը ձգվում է ափագծին զուգահեռ մոտ 5.6 կմ:	C2.2 – Մշտական ջրահոսքեր C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր
4	Արգելավայրային	«Լճաշենի»	-	61.81	61.81	Գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում, Լճաշեն բնակավայրից արևելք, ընդգրկում է լճի ափագծից 100 մետր հեռավորությունից սկսած 300 մետրանոց ջրային շերտը, որը ձգվում է ափագծին զուգահեռ մոտ 2.0 կմ:	C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համարը քարտեզում	Տարածա-գործառնական գոտին	Անվանումը	Մակերեսը, հա			Տեղանքի նկարագրությունը	Արգելոցային և արգելավայրային գոտիների Էկոհամակարգերը
			Ցամաքային	Զրային	Ընդամենը		
5	Արգելավայրային	«Չկալովկայի»	0.16	-	0.16	Գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում, Չկալովկա բնակավայրից հյուսիս-արևելք: Ընդգրկում է լճի մակարդակի բարձրագույն հետևանքով առաջացած 3 առանձին փոքր կղզակներ:	H3.1B – Թթվային սիլիցիումային ապարներ, ժայռեր C3.64 – Քաղցրահամ լճերի մերկ ավազները
6	Արգելավայրային	«Գավառագետի»	-	17.11	17.11	Գտնվում է ազգային պարկի արևմտյան հատվածում, ընդգրկում է Գավառագետ գետի միջին հոսանքները՝ ներառյալ տվյալ հատվածի ողողատը: Սկսվում է Գավառ քաղաքի բարձրադիր գոտիներից և հասնում «Գավառագետ-Նորատուս» արգելոցի սահման: Երկարությունը 10,7 կմ է:	C2.2 – Մշտական ջրահոսքեր
7	Արգելավայրային	«Ծակքար-Բախտակի»	-	1.73	1.73	Գտնվում է ազգային պարկի հարավ-արևմտյան հատվածում, ընդգրկում է Ծակքար և Բախտակ գետերի միջին հոսանքների ստորին հատվածները՝ ներառյալ դրանց ողողատները: Սկսվում է Ձորագյուղ և Ծակքար բնակավայրերի ցածրադիր հատվածներից և հասնում «Լիճք-Արգիճի» արգելոցային գոտու սահման: Երկարությունը շուրջ 1.4 կմ է:	C2.2 – Մշտական ջրահոսքեր
8	Արգելավայրային	«Կարճաղբյուրի»	353.32	237.96	591.28	Գտնվում է ազգային պարկի հարավ-արևելյան հատվածում, Կարճաղբյուր բնակավայրից հյուսիս-արևելք, սահմանի երկարությունն առանց Կարճաղբյուր գետի ստորին և մասամբ միջին հոսանքի 16,5 կմ է: Արգելավայրի տարածքը լճի ափագծով ձգվում է մոտ 5,0 կմ, տարածվում ցամաքի խորք մինչև 1.5 կմ, իսկ դեպի լիճ՝ մինչև 0,5 կմ: Արգելավայրը ներառում է նաև Կարճաղբյուր գետի ստորին և մասամբ միջին հոսանքները՝ ներառյալ տվյալ հատվածի ողողատը, որի երկարությունը 4,5 կմ է:	G1.C – Լայնատերև ծառերի լրիվ արհեստական անտառային տնկարկներ G3.F12 – Տեղական սոճու տնկարկներ E2.16 – Մարգագետնատափաստաններ F3.19 – Սևանա լճի ավազանում չիչխանի թավուտները C3.64 – Քաղցրահամ լճերի մերկ ավազները I1.5 – Մերկ հողեր C2.2 – Մշտական ջրահոսքեր C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համարը քարտեզում	Տարածքագործառնական գոտին	Անվանումը	Մակերեսը, հա			Տեղանքի նկարագրությունը	Արգելոցային և արգելավայրային գոտիների Էկոհամակարգերը
			Ցամաքային	Զրային	Ընդամենը		
9	Արգելավայրային	«Մասրիկի»	-	39.21	39.21	Գտնվում է ազգային պարկի հարավ-արևելյան հատվածում, ընգրկում է Մասրիկ գետի միջին և ստորին հոսանքները՝ ներառյալ ողողատները ու ձախակողմյան ջրանցքները: Սկսվում է Մեծ Մասրիկ բնակավայրից 2,6 կմ դեպի արևելք ընկած հատվածից և շարունակվում մինչև «Գիլի» արգելոցային գոտու սահման: Երկարությունը շուրջ 32,0 կմ է:	C2.2 – Մշտական ջրահոսքեր
10	Արգելավայրային	«Դարանակի»	-	134.90	134.90	Գտնվում է ազգային պարկի արևելյան հատվածում, Դարանակ բնակավայրից հարավ-արևմուտք, ընդգրկում է լճի ափագծից 100 մետր հեռավորությունից սկսած 300 մետրանոց ջրային շերտը, որը ձգվում է ափագծին զուգահեռ մոտ 4,4 կմ:	C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր
11	Արգելավայրային	«Գիհիկաղնուտային ռելիկտային»	3312.0	-	3312.0	Գտնվում է ազգային պարկի արևելյան հատվածում, Մ-14 Շողակաթ-Վարդենիս ավտոճանապարհի ձախակողմյան հատվածում, զբաղեցնում է Սևանի լեռների հարավ-արևմտյան լանջերը, տարածվում է 1910–2583 մետր բարձրություններում: Չզվածությունը հյուսիս-արևմուտքից կամ Ջիլ բնակավայրից դեպի հարավ-արևելք՝ ընդհուպ Արեգունի բնակավայր մոտ 18,4 կմ է: Տարածքը կազմված է տարբեր չափերի 8 հատվածներից, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 107 կմ է:	G3.935 – Բազմապտուղ գիհու նոսրանտառներ G1.A1D2 – Հայաստանի կաղնու անտառները արևելյան կաղնու գերակշռությամբ F2.337 – Տափաստանային թփուտներ E2.16 – Մարգագետնատափաստաններ H3.1B – Թթվային սիլիցիումային ապարներ, ժայռեր G3.F12 – Տեղական սոճու տնկարկներ I1.5 – Մերկ հողեր
12	Արգելավայրային	«Շողակաթի»	-	256.52	256.52	Գտնվում է ազգային պարկի արևելյան հատվածում, Շողակաթ բնակավայրից արևմուտք, ընդգրկում է լճի ափագծից 100 մետր հեռավորությունից սկսած 300 մետրանոց ջրային շերտը, որը ձգվում է ափագծին զուգահեռ մոտ 8,3 կմ:	C1.2 – Մշտական մեզոտրոֆ լճեր
<b>Ընդամենը արգելավայրային գոտի</b>			<b>5729.90</b>	<b>1103.20</b>	<b>6833.10</b>		

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համարը քարտե- զում	Տարածա- գործառ- նական գոտին	Անվանումը	Մակերեսը, հա			Տեղանքի նկարագրությունը	Արգելոցային և արգելավայրային գոտիների Էկոհամակարգերը
			Ցամա- քային	Չրային	Ընդամենը		
1	Ռեկրեացիոն	«Ռեկրացիոն գոտի 1»	964.14	-	964.14	Գտնվում է ազգային պարկի հյուսիսային և հյուսիս-արևմտյան հատվածում, Սևան բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում, լճի առափնյա հատվածում: Ափագծի հետ սահմանի երկարությունը կազմում է 47,0 կմ, դեպի ցամաքի խորք տարածվում է մինչև 1,5 կմ: Ընկած է լճի ափից մինչև 1974 մետր բարձրությունը:	
2	Ռեկրեացիոն	«Ռեկրացիոն գոտի 2»	478.53	-	478.53	Գտնվում է ազգային պարկի արևմտյան հատվածում, Գավառ բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում: Կազմված է 3 հատվածներից, որից 2-ը առափնյա տարածքներ են, իսկ մյուսը գտնվում է Գավառ քաղաքում՝ հիմնականում Գավառագետ գետի աջակողմյան հատվածում: Առափնյա հատվածների ափագծի հետ սահմանի երկարությունը կազմում է 23,4 կմ, դեպի ցամաքի խորք տարածվում է մինչև 0,72 կմ, ընկած են լճի ափից մինչև 1947 մետր բարձրությունները: Գավառ քաղաքում ընկած տարածքը հիմնականում կազմված է սոճու անտառտնկարկներից, ձգվում է Գավառագետ գետ երկայնքով շուրջ 2,3 կմ, տարածվում է 1929-ից մինչև 1989 մետր բարձրությունների վրա:	
3	Ռեկրեացիոն	«Ռեկրացիոն գոտի 3»	528.76	-	528.76	Գտնվում է ազգային պարկի հարավային հատվածում, Մարտունի բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում: Տարածքը կտրտված է, կազմված է տարբեր չափերի 17 հատվածներից, որոնցից միայն երեքն ունեն լճի հետ սահման, որի ընդհանուր երկարությունը կազմում է 7.5 կմ: Գոտու տարածքն ընկած է լճի ափից մինչև 1925 մետր բարձրությունը, լճի հետ սահման	

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համարը բարտե- զում	Տարածա- գործառ- նական գոտին	Անվանումը	Մակերեսը, հա			Տեղանքի նկարագրությունը	Արգելոցային և արգելավայրային գոտիների Էկոհամակարգերը
			Ցամա- բային	Չրային	Ընդամենը		
						ունեցող հատվածները դեպի ցամաքի խորք տարածվում են մինչև 1.2 կմ:	
4	Ռեկրեացիոն	«Ռեկրացիոն գոտի 4»	738.75	-	738.75	Գտնվում է ազգային պարկի հարավ-արևելյան հատվածում, Վարդենիս բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում: Տարածքը համեմատաբար քիչ է կտրտված, կազմված է տարբեր չափերի 4 հատվածներից, որոնցից միայն երկուսն ունեն լճի հետ սահման, որի ընդհանուր երկարությունը կազմում է 19,0 կմ: Գոտու տարածքն ընկած է լճի ափից մինչև 1925 մետր բարձրությունը, լճի հետ սահման ունեցող հատվածները դեպի ցամաքի խորք տարածվում են մինչև 0,6 կմ:	
5	Ռեկրեացիոն	«Ռեկրացիոն գոտի 5»	948.41	-	948.41	Գտնվում է ազգային պարկի արևելյան և հյուսիս-արևելյան հատվածներում, Ճամբարակ բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում: Տարածքը կազմված է երկու առափնյա հատվածներից, որոնց երկարությունը ափագծի հետ կազմում է 47.9 կմ, դեպի ցամաքի խորք տարածվում է մինչև 0,9 կմ:	
<b>Ընդամենը ռեկրեացիոն գոտի</b>			<b>3658.59</b>	<b>-</b>	<b>3658.59</b>		
1	Տնտեսական	«Տնտեսա- կան գոտի 1»	1354.29	-	1354.29	Գտնվում է ազգային պարկի հյուսիսային և հյուսիս-արևմտյան հատվածում, Սևան բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում: Տարածքը կազմված է տարբեր չափերի 16 հատվածներից, որոնցից ամենամեծը 483,7, իսկ փոքրը՝ 0,38 հա է: Ընկած է լճի ափից մինչև 2378 մետր բարձրությունը:	
2	Տնտեսական	«Տնտեսա- կան գոտի 2»	1067.44	-	1067.44	Գտնվում է ազգային պարկի արևմտյան հատվածում, Գավառ բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում:	

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**


ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համարը քարտե- զում	Տարածքա- գործառ- նական գոտին	Անվանումը	Մակերեսը, հա			Տեղանքի նկարագրությունը	Արգելոցային և արգելավայրային գոտիների Էկոհամակարգերը
			Ցամա- քային	Չրային	Ընդամենը		
						Տարածքը կազմված է տարբեր չափերի 20 հատվածներից, որոնցից ամենամեծը 718,47, իսկ փոքրը՝ 0,11 հա է: Ընկած է լճի ափից մինչև 2055 մետր բարձրությունը:	
3	Տնտեսական	«Տնտեսա- կան գոտի 3»	372.61	-	372.61	Գտնվում է ազգային պարկի հարավային հատվածում, Մարտունի բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում: Տարածքը կազմված է տարբեր չափերի 7 հատվածներից, որոնցից ամենամեծը 157,21, իսկ փոքրը՝ 0,58 հա է: Տարածվում է ծովի մակերևույթից 1906 մետրից մինչև 2250 մետր բարձրություններում:	
4	Տնտեսական	«Տնտեսա- կան գոտի 4»	1596.93	-	1596.93	Գտնվում է ազգային պարկի հարավ-արևելյան հատվածում, Վարդենիս բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում: Տարածքը կազմված է տարբեր չափերի 25 հատվածներից, որոնցից ամենամեծը 367,69, իսկ փոքրը՝ 0,37 հա է: Տարածվում է ծովի մակերևույթից 1902 մետրից մինչև 2457 մետր բարձրություններում:	
5	Տնտեսական	«Տնտեսա- կան գոտի 5»	1166.24	-	1166.24	Գտնվում է ազգային պարկի արևելյան և հյուսիս-արևելյան հատվածներում, Ճամբարակ բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում: Տարածքը կազմված է տարբեր չափերի 10 հատվածներից, որոնցից ամենամեծը 742,52, իսկ փոքրը՝ 2,15 հա է: Տարածվում է ծովի մակերևույթից 1904 մետրից մինչև 2614 մետր բարձրություններում:	
<b>Ընդամենը տնտեսական գոտի</b>			<b>5557.51</b>	<b>-</b>	<b>5557.51</b>		

«Սևան» ազգային պարկի կառավարման պլան

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


«Սևան» ԱՊ տարածքագործառնական գոտիների առաջարկը՝ առաջին փուլով



«Սևան» ազգային պարկի կառավարման պլան

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Սևան» ԱԳ տարածքագործառնական գոտիների առաջարկը՝ երկրորդ փուլով



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Հավելված 4**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



giz  
International Center for  
Cooperation and  
Sustainable Development



**«Սևան ազգային պարկի կառավարման պլանի անհրաժեշտ վերլուծության և մշակման իրականացում» ծրագրի երկրորդ խորհրդակցական ընդլայնված աշխատաժողով:**

23-ը նոյեմբերի, 2023թ

**ՕՐԱԿԱՐԳ**

Ամսաթիվը՝ նոյեմբերի 23, 2023թ		
Վայրը՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, նիստերի դահլիճ, Պետրոս Ադամյան փ.14, ք.Երևան		
Ժամը	Միջոցառման բաղադրիչը	Խոսնակները/Վարողները
10:00-10:30	Մասնակիցների գրանցում	
10:30-10:45	Ողջույնի խոսք	<b>Արամ Մեյմարյան</b> , ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, նախարարի տեղակալ <b>Ֆրենկ Հեսս</b> , Հայաստանում ԵՄ պատվիրակություն, Համագործակցության բաժնի ղեկավար <b>Հովհաննես Ղազարյան</b> , «ՄԱԶՄ Կլիմա. շրջակա միջավայր, դիմադրողականություն» բաժնի ղեկավար
10:45-10:50	Ծրագրի ընթացիկ վիճակի ներկայացում: Աշխատաժողովի նպատակը և խնդիրները, օրակարգը	<b>Արսեն Գասպարյան</b> , ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ, տնօրեն
10:50-11:10	Կառավարման պլանի ծրագրերի կառուցվածքի և դրանց մշակման մեթոդաբանության ներկայացում  Հարց/պատասխան	<b>Արեգ Կարապետյան</b> , Պահպանվող տարածքների փորձագետ  <b>Արման Կանդարյան</b> , ԱՏՀ փորձագետ
11:10-11:30 Սուրճի ընդմիջում		



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<p><b>11:30-12:30</b></p>	<p>Կատավարման ծրագրերի ներկայացում Հարց/պատասխան</p>	<p><b>Արեգ Կարապետյան,</b> Պահպանվող տարածքների փորձագետ</p> <p><b>Գեորգի Ֆայվուշ,</b> Էկոհամակարգերի և կենսաբազմազանության փորձագետ.</p> <p><b>Անահիտ Ոսկանյան,</b> Զբոսաշրջության փորձագետ,</p> <p><b>Մարի Զաքրյան,</b> Էկոլոգիայի, հանրային մասնակցության և հաղորդակցության փորձագետ</p> <p><b>Դավիթ Իսկանդարյան,</b> Ֆինանսների կառավարման փորձագետ</p>
<p><b>12:30-12:45</b></p>	<p>Պլենար քննարկում հաջորդ քայլերը</p>	<p><b>Արսեն Գասպարյան,</b> ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ, տնօրեն</p>
<p><b>12:45-13:00</b></p>	<p>Աշխատաժողովի արդյունքների գնահատում և ամփոփիչ խոսք</p>	<p><b>Աստղիկ Դանիելյան</b> EU4Sevan ՄԱԶԾ ծրագրի համակարգող</p>

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Մասնակիցների ցուցակ**

	<b>Կառույցի անվանում</b>	<b>Պաշտոն</b>	<b>Անուն</b>
1	Շրջակա միջավայրի նախարարություն	Նախարարի տեղակալ	Արամ Մելմարյան
2	Շրջակա միջավայրի նախարարություն	Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետ	Ոսկեհատ Գրիգորյան
3	Շրջակա միջավայրի նախարարություն	Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ	Հակոբ Մաթևոսյան
4	Շրջակա միջավայրի նախարարություն	Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ	Նորայր Աբրահամյան
5	«Սևան» ԱՊ	Գիտական հետազոտությունների մշտադիտարկման և կադաստրի վարման բաժնի ղեկավար	Արայիկ Հունանյան
6	«Սևան» ԱՊ	Հողաշինարար	Արտաշես Բաղայան
7	Անտառային կոմիտե	Անտառների և անտառային հողերի կառավարման վարչության պետ Էդուարդ Կարապետյան	Էդուարդ Կարապետյան
8	«Հայանտառ» ՊՈԱԿ	Տնօրենի տեղակալ	Վահրամ Մեղրակյան
9	Կադաստրի պետական կոմիտե	Գեոդեզիայի և հողաշինարարության վարչության գեոդեզիայի և քարտեզագրության բաժնի պետ	Արամայիս Պողոսյան
10	Ջրային կոմիտե		Մուրեն Նազարյան
11	Գեղարքունիքի մարզպետարան	Հողաշինության բաժնի պետ	Մարատ Ղուրջուղյան
12	Գեղարքունիքի մարզպետարան	Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի ավագ շինարար	Հակոբ Հարությունյան
13	ԳԱԱ «Գենդանարանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	Խորհրդի նախագահ	Էվելինա Ղուկասյան
14	ԳԱԱ Էկոլոգոսոսֆերային հետազոտությունների կենտրոն	Ինստիտուտի տնօրեն	Լիլիթ Մահակյան
15	Կովկասի բնության հիմնադրամ CNF	Ծրագրերի ղեկավար	Արման Ավագյան
16	WWF	Հայաստանյան գրասենյակի ղեկավար	Գարեն Մանվելյան
17	ԵՄ ԱյԳ ՔՀՖ ՀԱՊ 3-րդ խումբ	Ներկայացուցիչ	Լիանհա Ասոյան
18	Վարդենիսի համայնքապետարան	Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ	Վարդան Մանուկյան
19	Վարդենիսի համայնքապետարան	Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ	Գուրգեն Մնացականյան
20	Գավառի համայնքապետարան	Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ	Արծրուն Ղուրջուղյան
21	Գավառի համայնքապետարան	Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ	Դավիթ Մազմանյան

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

22	CIVITTA	Ռազմավարության/ազդեցության գնահատման թիմ	Գոռ Ղազարյան
23	CIVITTA	Ռազմավարության/ազդեցության գնահատման թիմ	Հովհաննես Աթաբեկյան
24	«Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ	Նախագահ	Արևիկ Հովսեփյան
25	ՄԱԶԾ	Գլխավոր, բնապահպանության և դիմակայունության բաժնի ղեկավար	Հովհաննես Ղազարյան
26	ՄԱԶԾ EU4Sevan	Ծրագրի համակարգող	Աստղիկ Դանիելյան
27	ՄԱԶԾ EU4Sevan	Ծրագրի օգնական	Լուսինե Սարգսյան
28	ՄԱԶԾ	Թիմի ղեկավար	Գայանե Ղարազեբակյան
29	Հայաստանում ԵՄ պատվիրակություն	Համագործակցության բաժնի ղեկավար	Ֆրենկ Հեսս
30	Հայաստանում ԵՄ պատվիրակություն	ԵՄ ծրագրի ղեկավար	Զուգանա Մոյրոցիևովա
31	ԳՄՀՀ EU4Sevan	Թիմի ղեկավար	Քրիստիան Հենշել
32	ԳՄՀՀ EU4Sevan	Խորհրդատու	Հովիկ Մայայյան
33	ԳՄՀՀ EU4Sevan	Խորհրդատու	Ալեքսանդր Առաքելյան
34	ԳՄՀՀ EU4Sevan	Խորհրդատու	Վարազդատ Սարգսյան
35	Շվեյցարիայի զարգացման համագործակցության գործակալություն	Ազգային ծրագրերի սվազ պատասխանատու	Համազասպ Դանիելյան
36	ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ	Ինստիտուտի տնօրեն	Արսեն Գասպարյան
37	Մոլուտոն ՍՊԸ	Տնօրեն	Արեգ Կարապետյան
38	Մարտունու համայնքապետարան	Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ	Հարությունյան Հարությունյան
39	Սևանի համայնքապետարան	Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ	Ռադիկ Մանուկյան
40	Սևանի համայնքապետարան	Քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ	Հայկ Ղուկասյան
41	Ճամբարակի համայնքապետարան	Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ	Կարեն Մխիտարյան
42	Ճամբարակի համայնքապետարան	Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ	Մուրեն Դեմրյան

**Արձանագրություն**

«Սևան ազգային պարկի կառավարման պլանի անհրաժեշտ վերլուծության և մշակման իրականացում» ծրագրի երկրորդ խորհրդակցական ընդլայնված աշխատաժողովին ողջույնի խոսքով հանդես եկան Ֆրենկ Հեսսը (Հայաստանում ԵՄ պատվիրակության Համագործակցության բաժնի ղեկավար)



Աստղիկ Դանիելյանը (EU4Sevan ծրագրի համակարգող), Ոսկեհատ Գրիգորյանը (ՇՄԼ բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետ) և Հովհաննես Ղազարյանը (ՄԱԶԾ «Գլխավոր, շրջակա միջավայր, դիմադրողականություն» բաժնի ղեկավար): Նրանք կարևորեցին նման հանդիպման բովանդակային և ձևաչափային մոտեցումը, երբ քննարկվում է երկրի համար կենսական նշանակություն ունեցող օբյեկտի էկոլոգիական, տնտեսական և բնապահպանական նշանակությունը: Ատանձնահույժ ուշադրություն դարձվեց նաև մասնակցային մոտեցմանը, ինչը թույլ է տալիս պետական մարմիններին, համայնքներին, կառավարությանը և դոնորներին անմիջական մասնակցություն ունենալ գործընթացին:

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Գասպարյանը հավելեց, որ կարևորում է մասնակցային գործընթացը, բայց նաև հատուկ պետք է նշել, որ ստեղծվել է մի ձևաչափ, որտեղ ներկայացված են ոչ միայն պետական, միջազգային և բնապահպանական կառույցները, այլ նաև գիտական հաստատություններն ու միջազգային փորձագետները: Այս փաստաթղթի վրա աշխատում է երկու միջազգային փորձագետ, որոնք օգնում են միջազգային ստանդարտներին համապատասխան փաստաթուղթ ստանալ:

Ըստ օրակարգի՝ խոսքը տրվեց Արսեն Գասպարյանին, ով ներկայացրեց ծրագրի ընթացիկ վիճակը և աշխատաժողովի նպատակն ու խնդիրները:

**Արսեն Գասպարյան (ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն)**

Արսեն Գասպարյանը ներկայացրեց մանրամասներ առաջին աշխատաժողովից և դրանից հետո արված աշխատանքներից: Առաջին աշխատաժողովը տեղի է ունեցել մայիսի 24-ին Բուսաբանության ինստիտուտում, որտեղ ընտրվել է նաև խորհրդի նախագահ: Առաջին հանդիպման ընթացքում քննարկվել է տեսլականը, երկարաժամկետ ռազմավարական նպատակները, պահպանության առանձնացված թիրախները: Այս երեք կետերի նկատմամբ հնչել են առաջարկներ, և կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Գարևոր էր նաև խմբի գործունեության ներկայացումը տարբեր հարթակներում. կենսաբազմազանության միջազգային օրվան նվիրված «Պատասխանատու եմ Սևանի համար»

**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

միջոցառման ընթացքում շահառուներին ներկայացվել են աշխատանքների կատարման մոտեցումները, խնդիրները և նորարարությունները: Գոնտորջիտովից Արեգ Գառապետյանը և Արսեն Գասպարյանը մասնակցել են Եվրոպայի պահպանվող տարածքների ֆեդերացիայի 50-ամյակին նվիրված կոնֆերանսին և արդեն միազգային մակարդակում ներկայացրել կատարված աշխատանքները:



Այնուհետև Արսեն Գասպարյանը ներկայացրեց, թե ինչ փուլում են գտնվում աշխատանքները, որը ներկայացվեց կառավարման պլանի բովանդակության ձևաչափով:

Պարոն Գասպարյանը նաև հավելեց, որ

կառավարման պլանի հիմնական երկու խնդիրներն են՝ «Սևան» ազգային պարկի սահմանների ճշգրտման գործընթացը, որն արդեն 4-5 ամիս է ընթացքի մեջ է ամենաբարձր մակարդակով՝ ՇՄՆ-ի, Կադաստրի կոմիտեի, Գեոարքոնիքի մարզպետարանի և տեղի համայնքների հետ սերտ համագործակցությամբ, և շրջակա միջավայրի պահպանության ծառայության ստեղծման գործընթացը, քանի որ պետք է հասկանալ՝ ինչպես համագործակցել և ինչպես է կատարվելու տեղեկատվության փոխանցումը:

**Արսեն Գառապետյան (USՀ խորհրդատու)**

Արսեն Գառապետյանը ներկայացրեց սահմանների վերանայման և սահմանագծման աշխատանքները: Ակնկալվող արդյունքն է՝ ստանալ ազգային պարկի սահմանների WGS-84 կոորդինատային համակարգում գեոկապակցված, շահագրգիռ կողմերի հետ քննարկված և համաձայնեցված թվային քարտեզ, որը հիմք կհանդիսանա ազգային պարկի առաջիկա 5 տարիների կառավարումը կազմակերպելու համար և որը կբավարարի ժամանակակից քարտեզագրական պահանջներին երկրատարածական



վերլուծություններում օգտագործելու համար: Օգտագործվել է նաև Կաղատրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակը, որտեղից վերցվել են հողակտորների որակական և քանակական բնութագրերը, ինչպես նաև դրանց գրանցման վերաբերյալ տեղեկատվություն: Հաջորդ քայլը համայնքների հետ հանդիպումներն ու քննարկումներն են՝ 5 համայնքներից երեքի հետ արդեն իրականացվել են սահմանների հստակեցումներ:

**Հարց.**

**Գեղարքունիքի մարզպետարանի հողաշինության բաժնի պետ Մարատ Ղուրջուդյան-** Սահմանագծման հարցերով նախատեսված բազմաթիվ քննարկումներ են եղել մարզպետարանում: Նախկին կառավարման պլանը բազմաթիվ բացթողումներ ուներ, ու նոր կառավարման պլանում այդ խնդիրները պետք է հաշվի առնել: Հիմնական հարցը համայնքները մասնակցությունն է «Սևան» ԱՊ կառավարման հարցերում: «Սևան» ԱՊ-ի տարածքում ընդգրկվել են նաև 2007-2011թթ այն տարածքները, որոնք ծառայատ չեն, համայնքների բնակավայրերին հարակից են, ու այս հողերում ոչ մի գործունեություն չի ծավալվել բացի տնտեսական վարձակալությունից: Այդ հողերը պետք է դուրս թողնել կառավարման պլանից և տալ համայնքներին: Այդ հարցը քննարկվել է պարոն նախարարի, համայնքների ղեկավարների և ԱՊ-ի աշխատակազմի հետ:

**Էվելինա Ղուկասյան (ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի Հիդրոէկոլոգիայի և բնաբանության ինստիտուտ)-** Ըստ քարտեզի՝ ջրային տարածքում արգելոց է հանդիսանում իշխան ձկան ձվադրավայրերը, բայց հայտնի է, որ իշխան ձկան ձվադրավայրերը Սևան թափվող գետերն են: Այդ դեպքում ի՞նչն է հաշվի առնվել ջրային տարածքի այդ հատվածը արգելոցային գոտի դարձնելիս:

**Արեգ Կարապետյան (Պահպանվող տարածքների փորձագետ)-** Փորձ է արվել համապարփակ մտնեցում ցուցաբերել, և հաշվի է առնվել այն տեղեկատվությունը, որ Սևանում կան որոշակի պոպուլյացիաներ, որոնք ձվադրում են ոչ թե գետերում, այլ հենց լճի ջրերում:

**Արեգ Կարապետյան «Կառավարման պլանի վերլուծական մասի մեթոդաբանական հիմքերը»**

Կառավարման պլանի վերլուծական մասը սկսվում է «Սևան» ԱՊ-ի տեղանի վերհանումով, որից բխում են նաև ռազմավարական նպատակները: Ռազմավարական նպատակներից բխում են ծրագրային խնդիրները: Ծրագրային խնդիրները կառավարման պլանի հենքն են, դրանք հիմնական ուղղություններն են, որոնք կառավարման գործունեության 5 տարիների ընթացքում ուղղորդում են կառավարիչին իր նպատակներին, խնդիրներին հասնելու գործում: Շատ կարևոր է, որ ծրագրային խնդիրները համապատասխանեն ընդունված SMART (չափելի, յուրաքանչյուր, իրատեսական և որոշակի ժամանակային սահմանափակումներով) սկզբունքին:

**Գեորգի Ֆայվուշ (կենսաբազմազանության և կենսամիջավայրերի գույքագրման փորձագետ) - Հետազոտությունների և կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագիր**

Գեորգի Ֆայվուշը ներկայացրեց կենսաբազմազանության և մոնիթորինգի հիմնական խնդիրնից առաջնայինները: Խնդիրներից կարևորագույնը թերևս հիմնական մասնագետների բացակայությունն է: Առանց այդ մասնագետների, ՀԿ-ների, գիտական կառույցների և համալսարանների՝ անհնար է ապահովել հետազոտություններ բարձր մակարդակ:

**Անահիտ Ոսկանյան (գրոսաշրջության խորհրդատու) - Այցելուների կառավարման ծրագիր**

«Սևան» ԱՊ-ն իր հարուստ կենսաբազմազանությամբ բացառիկ զբոսաշրջային վայր է Հայաստանի զբոսաշրջային շուկայի համար: Եվ հարկ է նշել, որ այդ հնարավորությունները շատ քիչ են օգտագործվում: Կառավարման պլանում առաջարկվել է շուրջ 20 ենթածրագիր, 16 ծրագրի համար



նախատեսվում է հինգ տարվա կտրվածքով 112 մլն դրամի բյուջե, իսկ մյուս 6 ծրագրերի համար բյուջե չի նախատեսվում: Այս վեց ծրագրերը հնարավոր է իրագործել «Սևան» ԱՊ-ի աշխատակազմի կողմից: Քանի որ Սևանում տուրիստական սեզոնը 2 ամիս է, առաջարկվում են ծրագրեր նաև մյուս

ամիսների համար, օրինակ՝ գաստրոնոմիական ուղղությունը: Ամենակարևոր առաջարկությունը այցելությունների կենտրոնի ստեղծումն է՝ 300 քմ մակերեսով: Մա այն կապող օղակն է, որի միջոցով զբոսաշրջիկը պիտի ծանոթա Սևանի հնարավորությունների հետ: Կարևոր է, օրինակ, թռչնադիտարկման ուղղության զարգացումը, որը հիմա գրեթե անհնար է իրականացնել:

**Մարի Զաքրյան, Մանե Մադոյան- Էկոլոգիական կրթության, հանրային մասնակցության և հաղորդակցության ծրագիր**

**Մարի Զաքրյան** -Այս ծրագրի նպատակը Սևանի հարակից տարածքի բնակիչների էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրագրեկման կանոնադրական իրավունքի իրագործման ապահովումն է: Հիմնական խնդիրն այն է, որ շատ հարցեր կարգավորվելիս մնում են ընդհանրական մակարդակի վրա և չեն փաստաթղթավորվում, այսինքն՝ հարցերի հիմնական լուծումը անձային կապերի վրա են հիմնված:

**Մանե Մադոյան**- Կարևոր է նշել, որ ծրագիրը և էկոլոգիական է, և հանրային մասնակցություն և հաղորդակցություն է ապահովում, և դրանք փոխկապակցված է: Այս ծրագիրը կարևոր է նրանով, որ սա նախաապայման է մյուս ծրագրերի արդյունավետ իրագործման համար:

**Դավիթ Իսկանդարյանը (Ֆինանսական խորհրդատու) - Ֆինանսների կառավարման և շուկայավարման ծրագիր**

Ծրագրի հիմնական նպատակը ֆինանսական միջոցների կառավարումն է: Առաջին հերթին պետք է վերլուծել ՊՈԱԳ-ի ֆինանսական հաշվետվությունները, պետական երկարաժամկետ և կարճաժամկետ ֆինանսական ծրագրերը, որպեսզի հասկանալ պետության կողմից ֆինանսավորման դինամիկան:

Վերլուծությունը գուցաիեռ կարևոր է նաև առաջարկը և դրանցից ամենակարևորներից է ֆունդահայթայթման կարողությունների զարգացումը:

**Պլենար քննարկում**

**Հարց. Մարտունու համայնքապետարան, Հարություն Հարությունյան-**

Ամբողջ քննարկումը ցամաքի մասին էր, և ջրային հայելու կամ օրինակ ձկնաբուծության մասին ոչինչ չկա կառավարման պլանում: Ինչու՞ ջրային ռեսուրսը ոչ մի տեղ ընդգրկված չէ:

**Պատասխան. Արսեն Գասպարյան (ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն**

Ազգային պարկի գործառնությունները և տնտեսվարող գործունեությունը պետք է իրարից տարանջատել: Այստեղ հիմնականը պահպանությունն է, կրթությունը և իրազեկումը: Եթե խոսքը տնտեսական գործունեության մասին է, դա «Սևան» ԱՊ-ի գործառնությունների մեջ առկա է:

**Արեգ Կարապետյան-** Կարևոր է հաշվի առնել, որ Ազգային պարկի հիմնական նպատակը կենսաբազմազանության պահպանումն է:

**Հարց. Կարեն Մանվելյան (WWF)**

Երկու կարևոր դիտարկում. մշտադիտարկման մասը եթե հանում ենք ԱՊ-ի աշխատակցների գործառնություններից ու տալիս ենք գիտական կառույցներին, որոշակի մասով կազմաքանդում ենք ԱՊ-ի գործունեությունը:

Այն երկու կետերը, որտեղ իշխան ձուկը գնում է ձվադրման, պարտադիր պետք է ներառել ԱՊ-ի տարածքում՝ հետագա պահպանության համար:

**Պատասխան. Արսեն Գասպարյան –** Այդ հարցը օրակարգում է:

**Հարց. Էդգար Փիրումյան- Գերմանական միջազգային համագործակցության կեղտաջրերի կառավարման խորհրդակա**

1. Հարցը ինդիկատորային նշանակություն ունի հասնելու ժամկետներին է վերաբերում: Արդյո՞ք կա վերլուծություն ազգային պարկի բյուջեի ծանրաբեռնվածության ավելացման մասով: Կա՞ հաշվարկ՝ ինչ չափով պետք է ավելանա բյուջեն, որ կարողանա հաղթահարել այս նշանակությունը:

2. Մինչև 2025թ. -ը նախատեսվում է 1019 հա անտառածածկ տարածք մաքրել: 2001թ. -ին ընդունված Սևանա լճի հիմնադրության երկու օրենքներով նախատեսվում է մինչև 2029թ. ավարտել Սևանա լճի մակարդակի բարձրացման գործընթացը և մաքրել մոտ 5000 հա տարածք: Այժմ մնացել է մաքրելու 2800 հա տարածք: Արդյոք հաշվարկվե՞լ է, թե զեկույցում նշված մաքրման ենթակա 1019 հա տարածքը որքան ժամանակում և քանի մետր Սևանի մակարդակի բարձրացման դեպքում է ծածկվելու, և ում կողմից են իրականացվելու մաքրման աշխատանքները:

**Պատասխան. Արեգ Կարապետյան**

1. Շատ գործառնություններ, որոնք առկա են կառավարման պլանում, նախատեսված չեն մեկ տարվա համար, հետևաբար դրանք ենթադրում են հավելյալ աղբյուրներից սնուցում: Գործողությունների տրամաբանությունը հետևյալն է՝ մի շարք գործողություններ իրականացվում են սեփական միջոցներով, որոշակի գործողություններ էլ՝ այլ միջոցների հաշվին: 2-րդ խումբը օրինակ կարող են լինել ՇՄՆ կամ Սոնիթորինգի կենտրոնը, որոնք ի սկզբանե կատարում են իրենց կանոնադրությամբ այդ տարածքում գործունեություն, և 3-րդ խումբը կարող է լինել դրամաշնորհային ծրագրերը:

Ամբողջական ճշգրիտ հաշվարկ հինգ տարվա կտրվածքով անհնար է անել, բայց կա նախնական հաշվարկ որոշակի դեֆիցիտով:



2. 2019թ-ի ժամանակացույցով նախատեսված մաքրման աշխատանքից հանվել է այն ծավալը, որն արվել է մինչև այժմ, իսկ մնացած մասի համար արվել են հաշվարկներ՝ վերլուծելով ջրի մակարդակի բարձրացման իրատեսական ծավալները:



**Պայանե Ղարազեբական (ՄԱԶԾ)**

Շուտով գործարկվելու է նոր ծրագիր, որն իրականացվելու է WWF-ի կողմից և իրենից ենթադրում է ԱՊ-ի կարողությունների բարելավում և հատկապես մոնիթորինգային կարողությունների բարելավում: Եթե գիտական հետազոտությունների և մոնիթորինգի աշխատանքները ամբողջությամբ արտապատվիրակվեն, այդ դեպքում հակաաղբյուրներ կլինեն առաջարկված ԱՊ կառավարման պլանի և այն ծրագրի միջև, որն իրականացնելու է WWF-ը:

**Պատասխան. Արսեն Գասպարյան**

Խոսքը ամբողջությամբ արտապատվիրակելու մասին չէ: Քանի որ մոնիթորինգը բազմակողմանի գործընթաց է, այն կարող է իրականացվել ՀԿ-ների, գիտական կենտրոնների, անհատ գիտնականների և ԱՊ աշխատակիցների համագործակցություն արդյունքում:



**Էվելինա Ղուկասյան**  
Վարչական ծրագրում պետք է լինի գիտական մասի հաստիքների ավելացում և գիտական մասի ավելացում:

Ձեկույցի 2-րդ կետում նշված է, որ առաջարկները պետք է չափելի լինեն, իսկ գործողությունների ժամանակահատվածը հստակ, բայց եթե քննարկենք, օրինակ, հիվանդություններով և վնասատուներով

տարածքների վարակումը, ապա կանխման ժամանակահատվածը հստակ նշելն իրատեսական չէ:

**Պատասխան. Արսեն Գասպարյան**

ԱՊ կառավարման պլանը դեռևս աշխատանքային փուլում է, և բոլոր առաջարկներն ու կարծիքները հաշվի կառնվեն: Տվյալների հավաքագրման գործընթացում հասարակության ներգրավվածությունը կարևորելով՝ պետք է հաշվի առնել, որ որակ ապահովելու են մասնագետները:

**Աստղիկ Դանիելյան (ՄԱԶՕ)**

Գնահատելով անկա իրավիճակը՝ կարևոր է դիտարկել տեղական և միջազգային փորձը: Առաջարկում եմ, որ մենք ունենանք գուզահետ տարվող կարողությունների զարգացման մեծ բլոկ, քանի որ սա պետք է լինի պահպանվող տարածքի հիմնական ֆունկցիաներից մեկը: Եթե ինստիտուտի գիտնականի հետ աշխատի ԱՊ-ն, դա ևս կլինի կարողությունների զարգացում:

**Արսեն Գասպարյան-** Կարևոր է, որ մասնագիտացված կառույցներն աջակցեն հենց տեղում կարողությունների զարգացմանը:

**Արամ Մեյմարյան (ՇՄՆ)**

Կառավարման պլանի թիմի հետ առաջին հանդիպմանը պարոն Գասպարյանը նշեց, որ ցանկությունն է կիրառելի և պրակտիկ կառավարման պլան ունենալը: Եվ ես ուրախ եմ, որ դա տեսնում եմ հստակ: Մի երկու կետ կա, որ ցանկությունս է՝ ավելի հավակնոտ լինելիք օրինակ անտառտնկումների մասով, կարծում եմ ավելի մեծ աշխատանք ունենք անելու այստեղ: Մյուսը՝ ֆինանսական մասով արդեն այս տարի բարելավում կա և այդ 10%-ը, որ դրել էք, կարելի է ասել արդեն հասել ենք: Եվ երկար տարիներից հետո այս տարին առաջինն է, որ ԱՊ-ն ֆինանսական պարտավորություններ չունի: «Սևան» ԱՊ-ն միակն է, որ վարձակալական վճարներից 30%-ը վճարում է հարակից համայնքներին, և այդ գումարներն օգտագործվում են բնապահպանական նպատակներով: Շատ կարևոր է այս բլոկը նույնպես ուժեղացնել: Համաձայն եմ, որ պետք է գիտական բլոկը ավելացնել: Պետք է գույքարեղ գործառույթներն ու հասկանալ՝ որ մասն է բաց մնում: Եվ օրինակ հաշվապահությունը ոչ թե արտապատվիրակեք, այլ՝ կենտրոնացնեք:

Բայց քանի որ կա ՊՈԱԿ-ների միացման գաղափարը, մենք ժամանակ ունենք այս հարցերի քննարկման համար, որտեղ ակնկալում եմ բոլորի ակտիվ մասնակցությունը:



Եկամուտների մասով արդեն փոփոխություններ կան: Օրինակ՝ Նորաշենի արգելոցից արդեն բավականին մուտքեր կան, և վարձակալական վճարներից բավականին լավ հավաքագրումներ կան: Եկամուտների մասով պետք է ավելի հավակնոտ թիրախներ դնել:

Տեսակների պահպանության մասով

կա կետ, որտեղ նշվում է մեկ գույգի պահպանություն: Ընդհանուր տեսակի պահպանություն կլինի, թե հենց գույգի:

**Արսեն Գասպարյան**

Մենք փորձել ենք մնալ իրատեսականի սահմաններում: Կարևոր է կարողությունների հզորացումը:

**Արեգ Կարապետյան**

Առաջարկում եմ նախարարության և ՊՈԱԿ-ի աշխատակիցների հետ հանդիպում՝ ավելի մանրամասն քննարկումների համար:

**Գայանե Ղարազեբալյան**

Առաջարկում եմ կառավարման պլանում ունենալ խախտումների հաշվառման և հանրայնացման բաժին:

**Ոսկեհատ Գրիգորյան**

Հաշվի առնելով նախատեսվող փոփոխությունները պահպանության ծառայության հետ կապված՝ առաջարկում եմ առանձնացնել այն գործառույթները, որոնք մնալու են ՊՈԱԿ-ին:

Գիտական մասում ներառված է հողվածների տպագրությունը, բայց առանցքային նպատակը պետք է լինի ոչ թե հողվածների տպագրությունը, այլ վերլուծական տվյալների ամփոփ ներկայացումը:

**Ամփոփիչ խոսք**

Աստղիկ Դանիելյանը շնորհակալություն հայտնեց թիմին կատարված աշխատանքի համար և գործընկերներին՝ մասնակցության և առաջարկությունների համար: Արսեն Գասպարյանը նշեց, որ փաստաթուղթը էլեկտրոնային փոստի միջոցով կուղարկվի գործընկերներին ծանոթանալու համար, նաև կլինի հանդիպում, որտեղ կներկայացվի ծրագիրը: Աստղիկ Դանիելյանն ավելացրեց, որ փաստաթուղթն անցնելու է Ռազմավարական Էկոլոգիական գնահատում, որը կաջակցի դրա հետագա հաստատմանը և ընդունմանը:


Հավելված 5

Գեղարքունիքի մարզի նշանակալի պատմամշակութային հուշարձանների տեղադիրքերը



Հավելված 6


«Սևան» ԱԴ կառավարման պլանով առաջարկվող սահմանները՝ ներառյալ առկա անհամաձայնությունները «Սևան» ԱԴ-ի և Ճամբարակ համայնքի առաջարկների միջև



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


«Սևան» ԱՊ կառավարման պլանով առաջարկվող սահմանները՝ ներառյալ առկա անհամաձայնությունները «Սևան» ԱՊ-ի և Վարդենիս համայնքի առաջարկների միջև



**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


«Սևան» ԱՊ կառավարման պլանով առաջարկվող սահմանները՝ ներառյալ առկա անհամաձայնությունները «Սևան» ԱՊ-ի և Մարտունի համայնքի առաջարկների միջև



«Սևան» ազգային պարկի կառավարման պլան

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Սևան» ԱՊ կառավարման պլանով առաջարկվող սահմանները՝ ներառյալ առկա անհամաձայնությունները «Սևան» ԱՊ-ի և Գավառ համայնքի առաջարկների միջև






**«Սևան» ազգային պարկի կառավարման պլան**


ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Սևան» ԱՊ կառավարման պլանով առաջարկվող սահմանները՝ ներառյալ առկա անհամաձայնությունները «Սևան» ԱՊ-ի և Սևան համայնքի առաջարկների միջև



Հավելված 7

«Մևան» ազգային պարկի էկոհամակարգերը և բնակմիջավայրերը



# «Մևան» ազգային պարկի կառավարման պլան


ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «Մևան» ազգային պարկի արգելոցային և արգելավայրային գոտիների Էկոհամակարգերը



Հավելված 8

«Սևան» ազգային պարկի տարածքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված ողնաշարավոր և անողնաշար կենդանիների ապրելավայրերն ու բազմազանությունը



# «Սևան» ազգային պարկի կառավարման պլան

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «Սևան» ազգային պարկի տարածքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և սնկերի աճելավայրերն ու բազմազանությունը

